ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
սովորող ուսանողների համար

ԻՋԵՎԱՆ – 2014

# ՆԱԽԱԲԱՆ

*Սիրելի՛ ուսանողներ*

*Հիմնադրման օրվանից ի վեր Երևանի պետական համալսարանի գործունեության ուղեգիծը եղել ու մնում է համալսարանական կրթության բովանդակության և ուսման բարձր որակի ապահովումը: Այսօր ԵՊՀ-ն համազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, զարգացումը և փոխանցումն է: Գլոբալացման արդի ժամանակաշրջանում քաղաքակրթության մարտահրավերները պահանջում են միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական պատրաստվածություն՝ կրթության որակի և բովանդակության անընդհատ կատարելագործում, բարձրագույն կրթության միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցում:*

*ԵՊՀ-ում 2007/08 ուստարվանից բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական ծրագրերը, իսկ 2008/09 ուստարվանից նաև բակալավրի ծրագրերն իրականացվում են կրեդիտային համակարգով: Ուսուցման նոր համակարգին անցնելը բխում է Բոլոնիայի գործընթացի պահանջներից և նպատակ ունի աստիճանական անցում կատարելու ուսման կազմակերպման ուսանողամետ համակարգին, որտեղ ուսման գործընթացի կենտրոնում ուսանողն է՝ իր անհատական կրթական կարիքներով, նախասիրություններով և ունակություններով, ապահովելով ուսումնառության ճկուն ձևերի և անհատական կրթական հետագծերի իրականացման լայն հնարավորություն:*

*Կրեդիտային համակարգի ներդրմամբ զգալիորեն բարելավվել է ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը և աշխատածավալը, հիմնավորված կերպով թեթևացվել լսարանային բեռնվածությունը, կրճատվել դասավանդվող առարկաների քանակը՝ իրատեսական նախադրյալներ ստեղծելով ձեր ինքնուրույն ուսումնական աշխատանքի հնարավորությունները մեծացնելու, ուսումնական ծրագրերը լավագույնս յուրացնելու և դրանցով սահմանված կրթական արդյունքները ձեռք բերելու համար:*

*Համալսարանում ներդրված կրեդիտային համակարգն ամբողջությամբ համատեղելի է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ, ինչը նորաստեղծ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ձեր ակադեմիական շարժունության (ուսանողական փոխանակումներ, ուսումնառության ժամանակահատվածներ օտարերկրյա բուհերում, կրթության շարունակում ավելի բարձր աստիճանում և այլն) ընդլայնման և որակավորումների ճանաչման դյուրացման գրավականն է: Իսկ դա կընդլայնի ձեր ապագա կարիերայի և*

*մասնագիտական աշխատուժի գլոբալ շուկայում աշխատանք գտնելու հնարավորությունները:*

*Կրեդիտային համակարգի ներդրումը համալսարանում մեկնարկած լայնամասշտաբ կրթական բարեփոխումների սկիզբն է միայն, բարեփոխումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն Բոլոնիայի գործընթացի պահանջների ձևական կատարմամբ, այլև համալսարանում ծրագրային բարձր չափորոշիչների պահպանման և ուսման որակի բարձրացման նպատակադրությամբ, ինչի հիմնական չափանիշը մեր շրջանավարտների մասնագիտական աշխատանքով ապահովվածությունն է: Համալսարանը տարեցտարի խորացնելու և ընդլայնելու է կրեդիտային համակարգի գործառույթները՝ ձեզ համար կրթական ընտրության առավել ընդլայնված հնարավորություններ ապահովելու նպատակով:*

*Կրեդիտային համակարգով ուսումնառության ներկա ուղեցույցը պարունակում է ձեզ համար օգտակար տեղեկատվություն կրեդիտային համակարգի հիմնադրույթների, ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների ստուգման ու գնահատման նոր կարգի, ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատածավալների, ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների վերաբերյալ:*

*Հաջողություն և ամենայն բարիք եմ մաղթում ձեզ:*

ՌԵԿՏՈՐ՝ Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

# I ԲԱԺԻՆ

## ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է Երևանի պետական համալսարանում բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի կրեդիտային հենքով ուսումնական գործընթացի կազմակերպման միասնական կանոնները:

1.2. Կարգը ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները, ինչպես նաև եզրափակիչ ատեստավորման կազմակերպման ընթացակարգը:

1.3. Կարգում տրված են նաև կրեդիտային համակարգում գործածվող առանձին տերմիններ, նկարագրված են համակարգի բնութագրիչները, բնորոշ գործառույթները և ընթացակարգերը:

# 2. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

## 2.1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները

Համաեվրոպական ECTS[1] կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և գործում են ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում:

1. ***Կարողությունը*** գիտելիքի, իմացության և ունակությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր:
2. ***Կրթական արդյունքն*** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողն ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման վերաբերյալ: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:
3. ***Կրթական (ուսումնական) մոդուլը*** ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն միավորն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները ուսանողին շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:
4. ***ECTS կրեդիտը*** դասընթացն (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:
5. ***ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.***

---

[1] Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ:

– ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,
– կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),
– կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին,
– ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
– կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),
– կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

6. ***Կրեդիտային համակարգը*** ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:
7. ***Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը*** միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:
8. ***ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.***

– կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
– կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,
– կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասըն-

թացների ելքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են դրանցից օգտվողներին (ուսանողներին և դասախոսներին):

## 2.2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները

***2.2.1. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են՝***

*ա) կրեդիտների փոխանցում.*

այս գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև,

*բ) կրեդիտների կուտակում.*

այս գործառույթի իրականացումը ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն, ինչն իրականացվում է ուսանողի անհատական ուսումնական ծրագրի օգնությամբ[2]:

Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

***2.2.2. Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշներն են.***

– գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալները տրված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,
– կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան:

***2.2.3. Կրեդիտների կուտակման գործառույթի հիմնական հատկանիշներն են.***

– պարտադիր և ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,
– ուսանողի կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,
– ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,
– դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ ելնելով դասընթացի կայացման ժամանակացույցից և (կամ) դասախոսի նախապատվությունից,

---
[2] Այս գործառույթի ներդրումը ԵՊՀ- ում իրականացվում է 2010/11 ուստարվանից:

– ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն:

### 2.3. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը

1. ԵՊՀ-ում բակալավրի կրթական աստիճաններում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:
2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:
3. Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 32-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Ըստ այդմ, կիսամյակի ուսումնական պարապմունքների տևողությունը սահմանվում է 16 շաբաթ, բացառությամբ բակալավրի կրթական ծրագրի 8-րդ կիսամյակի, որի տևողությունը 8 շաբաթ է:
4. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:
5. Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնըվածությունը կազմում է 24-30 ժամ[3]:
6. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:
7. Որոշ դեպքերում, ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:
8. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է, իսկ մագիստրոսի ծրագրինը՝ 120 կրեդիտ:

## 3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԸ

1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:
2. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:
3. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝

   ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,

[3] Առանց ֆիզդաստիարակության պարապմունքների:

բ) կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

## 4. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

1. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար ուսանողից պահանջվող միջին աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական կանխատեսումից:
2. Հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև միարժեք կապ չկա: Կրեդիտների թիվը, ինչպես արդեն նշվել է[4], կախված է նաև պարապմունքի ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդներից և այլն:
3. Դասընթացի ծրագիրը մշակող ուսումնական կառույցը (ամբիոնը) այնպես է պլանավորում ուսանողի ուսումնական աշխատանքը, որպեսզի դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին:
4. Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները պետք է ներկայացվեն ամբողջական թվերով:

## 5. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

### 5.1. Բակալավրի ծրագիր

1. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ԵՊՀ ուսանողը պետք է ծրագրի կատարման արդյունքում հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, որի համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ)[5] պետք է կազմի առնվազն 9,00:
2. Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանքի պաշտպանություն) ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 9,00: Հակառակ պարագայում, որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև սահմանված նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ:
3. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն մինչև 36 կրեդիտ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթաց-

[4] Տե՛ս, մասնավորապես, դասընթացների կրեդիտատարության հաշվարկի սխեմաները 2007 թ. ԵՊՀ «Կրեդիտային համակարգով բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթղթում:

[5] ՄՈԳ–ի վերաբերյալ տե՛ս սույն կարգի 6.5. կետը:

ների կրթամասից (այդ թվում՝ 4 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 10 կրեդիտ՝ մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից (ներառյալ 2 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների ցանկից) և առնվազն 20 կրեդիտ՝ պրակտիկայից և եզրափակիչ ատեստավորման ձևերից:

4. Մնացած առնվազն 174 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, և յուրաքանչյուր մասնագիտության համար տրվում է առանձին (ընդ որում, մինչև 24 կրեդիտ կարող է հատկացվել տվյալ մասնագիտության շրջանակներում որոշակի ուղղություններով մասնագիտացում իրականացնելու համար):

# 6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

## 6.1. Համակարգի հիմնադրույթները

1. ԵՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,

բ) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

2. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում դասահաճախումների հաշվառման օգնությամբ,

բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ և ստուգումներ),

գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, ինչը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,

դ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

3. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

*ա) եզրափակիչ գնահատումով դասընթացներ,*

*բ) առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ:*

## 6.2. Գնահատման մեթոդաբանությունը

### *6.2.1. Բակալավրի կրթական ծրագիր*

Բակալավրի կրթական ծրագրում յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում կարող է ներառվել եզրափակիչ գնահատումով առավելագույնը 4 մասնագիտական դասընթաց, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ այդ դասընթացների քանակը սահմանափակվում է 3-ով:

1. *Եզրափակիչ գնահատումով դասընթացը* քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն.
   ա) ընթացիկ քննությունները հիմնականում անցկացվում են գրավոր, իսկ որոշ դեպքերում նաև բանավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Քննության բանավոր անցկացումը պահանջում է համապատասխան հիմնավորում և թույլատրվում է ֆակուլտետի խորհրդի որոշմամբ,
   բ) եզրափակիչ քննությունը հիմնականում անցկացվում է բանավոր, իսկ որոշ դեպքերում նաև գրավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Քննության գրավոր անցկացումը պահանջում է համապատասխան հիմնավորում և թույլատրվում է ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:
2. *Եզրափակիչ գնահատումով դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը /միավորը ($Գ_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝
   ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 2 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության $Գ_{մաս.}$ միավորը որոշվում է *աղյուսակ 1-ում* բերված սանդղակի չափանիշներին համապատասխան.

*Աղյուսակ 1.*

| Մասնակցության աստիճանը(%) | Հատկացվող միավորը |
|---|---|
| 91-100 | 2 |
| 81-90 | 1 |
| ≤80 | 0 |

*Օրինակ 1. Եթե 32 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 15 ժամ բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝*

$\left(1-\frac{15}{32}\right)$ *x 100% = (1–0,47) x 100% = 53 %: Համաձայն աղյուսակի՝ Գ$_{մաս.}$= 0 միավոր:*

*Օրինակ 2. Եթե 64 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 10 ժամ անհարգելի և 4 ժամ հարգելի բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝* $\left(1-\frac{10}{64-4}\right)$ *x 100%* $=\left(1-\frac{1}{6}\right)$ x 100% = 83,3%: *Համաձայն աղյուսակի՝ Գ$_{մաս.}$= 1 միավոր:*

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների արդյունքներից ($\sum$Ք$_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 4 միավոր,

գ) եզրափակիչ քննության արդյունքից (Ք$_{եզր.}$), որը կարող է գնահատվել մինչև 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը /միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{արդ.} = Գ_{մաս.} + \sum Ք_{ընթ.} + Ք_{եզր.} :$$

Ըստ այդմ, եզրափակիչ գնահատումով դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով[6]).

*Աղյուսակ 2.*

| Գնահատման բաղադրամասը | Գ$_{մաս.}$ | Ք$_{ընթ.1}$ | Ք$_{ընթ.2}$ | Ք$_{եզր.}$ | Գ$_{արդ.}$ |
|---|---|---|---|---|---|
| Միավորը | 2 | 4 | 4 | 10 | 20 |

*Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 1 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 3 և 4 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 6 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝Գ$_{արդ.}$= 1 + 3 + 4 + 6 = 14 :*

[6] Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլը՝ առնվազն 0,5 է:

3. Լաբորատոր աշխատանքի ձևեր ունեցող *եզրափակիչ գնահատումով դասընթացի* ընթացիկ քննությանը ուսանողի մասնակցությունը թույլատրվում է նախորդող ժամանակահատվածում նախատեսված լաբորատոր աշխատանքների առնվազն 60% կատարողականի (փորձերի կատարում և հանձնում) դեպքում: Հակառակ պարագայում ուսանողին չի թույլատրվում մասնակցել ընթացիկ քննությանը, իսկ քննական ամփոփագրում նրա անվան դիմաց դրվում է «0» միավոր:
4. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը* գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների (գնահատումների) արդյունքներով: Ընթացիկ ստուգումներն անց են կացվում հարցումների, գրավոր /ստուգողական աշխատանքների, անհատական առաջադրանքների (ռեֆերատ, էսսե և այլն) և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականի ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևն ընտրում է դասընթացը կազմակերպող ամբիոնը:
5. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը-/միավորը ($Գ_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝
   ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ $Գ_{մաս.}$, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը կարող է վաստակել 2 միավոր: Մասնակցության աստիճանը գնահատվում է համաձայն *աղյուսակ 1*-ում բերված սանդղակի,
   բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ ստուգումների արդյունքներից ($\sum Ս_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 9 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{արդ.}= Գ_{մաս.} + \sum Ս_{ընթ.} :$$

Ըստ այդմ, *առանց եզրափակիչ գնահատման դասընթացն* ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով[7]).

*Աղյուսակ 3.*

| Գնահատման բաղադրամասը | $Գ_{մաս.}$ | $Ս_{ընթ1}$ | $Ս_{ընթ2}$ | $Գ_{արդ.}$ |
|---|---|---|---|---|
| Միավորը | 2 | 9 | 9 | 20 |

*Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից նա*

[7] Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլն առնվազն 0,5 է:

*վաստակել է համապատասխանաբար 5 և 7 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝* $Գ_{արդ.}$ *= 2 + 5 + 7 = 14 ։*

*6.* Գնահատման՝ վերը նկարագրված եղանակները կիրառվում են միայն *մասնագիտական կրթամասի* բաղկացուցիչ դասընթացների (ուսումնական մոդուլների) գնահատման համար: *Հումանիտար ու սոցիալ-տնտեսագիտական* և *մաթեմատիկական ու բնագիտական կրթամասերի* բաղկացուցիչ դասընթաց-ների գնահատումն իրականացվում է ավանդական եղանակով (ստուգարք կամ 20 միավորանոց սանդղակով գնահատվող եզրափակիչ քննություն): Պրակտիկաները գնահատվում են ստուգարքի ձևով: Ավարտական աշխատանքը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով՝ 11.1 կետի 6-րդ ենթակետում բերված գնահատման չափանիշներին համապատասխան:

## 6.3. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը

1. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների/ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):
2. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմում են ֆակուլտետները, և հաստատվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն:
3. Ընթացիկ ստուգումները և քննություններն անց են կացվում ուսումնառության կիսամյակի 7÷8-րդ և 15÷16-րդ շաբաթներում (8-րդ կիսամյակում՝ 4-րդ և 8-րդ շաբաթներում): Ընթացիկ ստուգումներն անցկացվում են առարկայի՝ դասացուցակով հատկացված ժամերին կամ դասերից հետո՝ ֆակուլտետի դեկանի որոշմամբ:
4. Եզրափակիչ քննություններն անց են կացվում կիսամյակային քննաշրջաններում՝ 17÷20-րդ շաբաթներում (8-րդ կիսամյակում՝ 9÷10-րդ շաբաթներում):
5. Քննության/ստուգման ավարտից հետո քննությունն ընդունած դասախոսը քննական ամփոփագիրը նույն օրը ներկայացնում է դեկանատ:
6. Բոլոր գրավոր քննությունները և ստուգումները գրանցվում են ուսանողներին տրամադրված սահմանված նմուշի տետրերում, իսկ գրավոր աշխատանքի ավարտը վավերացվում է դեկանատի կնիքով:
7. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների և ստուգումների գնահատականները հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն զանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև նաև ֆակուլտետի դեկանին:

## 6.4. Գնահատման սանդղակը և նշագրումը

1. ԵՊՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

*Աղյուսակ 4.*

| Գնահատման արդյունարար միավորը | Գնահատականը |
|---|---|
| 18-20 | «Գերազանց» |
| 13-17 | «Լավ» |
| 8-12 | «Բավարար» |
| 0-7 | «Անբավարար» |
| 0 | «Չներկայացած» |
| - | «Ստուգված» /«Չստուգված» |

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում գնահատման արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նըշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ 18 (գերազ.)):

2. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 8-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է *‚Չստուգված‛*, կրեդիտներ չեն տրվում: *‚Ստուգված»* գնահատման դեպքում ուսանողի օգտին *վարկանիշային միավորներ*[8] չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի *միջին որակական գնահատականի (ՄՈԳ)* վրա:

## 6.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԵՊՀ ԻՄ ֆակուլտետները և ԵՊՀ ԻՄ յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են *ակադեմիական տեղեկագիր*[9], որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

---

[8] Վարկանիշային միավորի վերաբերյալ տե՛ս սույն կարգի 6.5. կետը:

[9] Ակադեմիական տեղեկագրի օրինակները բակալավրի կրթական ծրագրերի համար կցված են սույն կարգին (հավելվածներ 1 և 2):

3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժա-մանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները[10]՝

- *գումարային կրեդիտների քանակը,*
- *գնահատված կրեդիտների քանակը,*
- *վարկանիշային միավորները,*
- *միջին որակական գնահատականը:*

4. *Գումարային կրեդիտը (Կ)* կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

5. *Գնահատված կրեդիտը (ԳԿ)* գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

$$\text{ԳԿ} = \sum \text{Կրեդիտ}_i :$$

6. *Վարկանիշային միավորը (ՎՄ)* յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$\text{ՎՄ} = \sum \text{Կրեդիտ}_i \times \text{Գ}_i ,$$

որտեղ $\text{Գ}_{\text{արդi}}$-ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

| |
|---|
| *Օրինակ, եթե ուսանողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից գնահատվել է (վաստակել է) համապատասխանաբար 12, 16 և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վաստակած վարկանիշային միավորը հավասար է՝* |
| *ՎՄ = 5 x 12 + 4 x 16 + 6 x 19 = 238՝ 300 հնարավորից (5 x 20 + 4 x 20 + 6 x 20):* |

7. *Միջին որակական գնահատականը (ՄՈԳ)* կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ԳԿ}} :$$

| |
|---|
| *Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝* |
| $\text{ՄՈԳ} = \frac{238}{15} = 15.87$ *՝ 20 հնարավորից:* |

8. *Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային* (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

[10] Տե՛ս ակադեմիական տեղեկագրին կից օրինակը:

## 6.6. Ուսման առաջադիմությունը

1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ *առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա*:

2. Ուսանողը համարվում է *առաջադիմող*, եթե՝

ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ ուսումնական միջին բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով),

բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների[11] կրեդիտները:

3. Ուսանողը համարվում է *փորձաշրջանի կարգավիճակում*, եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմաններից որևէ մեկը և տնօրինության կողմից նրան թույլատրվել է մասնակցել ակադեմիական պարտքերի մարմանը (լուծարքին):

4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:

5. Բակալավրի կրթական ծրագրի համար փորձաշրջանի տևողությունը համընկնում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանի հետ:

6. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից: Հեռացված ուսանողի վերականգնումը կատարվում է նույն կիսամյակում՝ ուսումնառության նախորդ ընթացքում վաստակած բոլոր կրեդիտ բոլոր կրեդիտների պահպանմամբ:

7. Նույն ուսումնական բեռնվածությամբ ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական, ներբուհական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց միջին որակական գնահատականներով, իսկ միևնույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողներինը՝ վարկանիշային միավորներով:

# 7. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԿՆՈՒՄԸ

1. Քննաշրջանի ընթացքում քննություններին չներկայացած ուսանողներին թույլատրվում է մինչև տվյալ կիսամյակի երրորդ շաբաթվա ավարտը անհատական ժամանակացույցով հանձնել ակադեմիական պարտքերը:

2. Ակադեմիական պարտքերի անվճար հիմունքներով մարումը իրականացվում է տնօրենի հրամանով ձևավորված քննական հանձնաժողովներում: Ակադեմիական պարտքերի մարման վերջնաժամկետ է սահմանվում ընթացիկ կիսամյակի երրորդ շաբաթվա վերջը:

3. Ընթացիկ անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունված ուսանողների, իրավունք է վերապահվում մինչև ավարտա-

[11] Տե՛ս դասընթացների ա) խումբը, բաժին 3, 3-րդ կետ:

կան ուսումնական տարվա սկիզբը լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը՝ վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով դրանք:

4. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի* գնահատման արդյունարար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի ամբողջ դասընթացը, սակայն նրա արդյունարար միավորը չի կարող գերազանցել անցողիկ 8-ը:

*Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 1 և 2 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունարար միավորը կլինի՝ Գարդ.= 2 + 1 + 2 = 5, որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է դասընթացը (2 ընթացիկ ստուգումներով գնահատվող ուսումնական նյութը) ամբողջությամբ, սակայն նրա արդյունարար միավորն այս դեպքում չի կարող գերազանցել անցողիկ 8-ը՝ Գարդ. <= 8:*

5. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատման արդյունարար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ:

*Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 1 և 2 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 2 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ Գարդ.= 2 + 1 + 2 + 2 = 7, որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ, իսկ արդյունարար գնահատականը փոխվում է եզրափակիչ քննության միավորների տարբերությամբ: Օրինակ, եթե եզրափակիչ քննության 2 միավորը լուծարքում բարձրացվել է մինչև 5, ապա՝*

***Գարդ. = 7 + (5-2) = 10:***

6. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

7. Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակն ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

## 8. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔԸ

1. Համալսարանը յուրաքանչյուր ուստարվա համար հրապարակում է ԵՊՀ դասընթացների տեղեկագիրք (տպագրված և/կամ կայքէջում տեղադրված էլեկտ-

րոնային տարբերակով), որը նաև կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց է:

2. Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է.

ա) ընդհանուր տեղեկություն Համալսարանի վերաբերյալ՝ տեսակը և կարգավիճակը, ուսումնական ստորաբաժանումները, առաջարկվող կրթական ծրագրերը, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ներբուհական հիմնական կանոնները (հատկապես կրեդիտների կուտակման, պաշտոնական ճանաչման և փոխանցման վերաբերյալ) և այլն,

բ) տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

– ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի ընդհանուր կառուցվածքը և բովանդակությունը, քննական կանոնները և գնահատման կարգը, ավարտական ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

– առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի գիտելիքներով ու կարողություններով, դասընթացի համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը/թեմաները), անհրաժեշտ նախապայմանները, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները, դասավանդման լեզուն և այլն,

գ) ընդհանուր տեղեկատվություն ուսանողների համար.

– նյութական օգնության հնարավորությունները, ուսման վարձերի զեղչման և փոխհատուցման պայմաններն ու կանոնները, գործող ուսանողական ծառայությունները, ուսանողներին հասանելի ուսումնական /լաբորատոր ենթակառուցվածքները և այլն:

# 9. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

## 9.1. Բակալավրի ծրագիր

1. Ուսանողի կողմից բակալավրի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ և ծրագրի ավարտից հետո կազմակերպվող մասնագիտական ամփոփիչ ավարտական քննությամբ, որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները:

2. Ավարտական աշխատանքի թեման և ղեկավարը ընտրվում և հաստատվում են ավարտական ուստարվա առաջին 2 շաբաթվա ընթացքում, իսկ աշխատանքը կատարվում է ավարտական ուստարվա ընթացքում:

3. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում է ուսումնառության վերջին 4 շաբաթը, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա) աշխատանքի ներկայացումը մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է ղեկավարի կարծիքը, որը ներառում է կատարված աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ) ավարտական աշխատանքի նախնական քննարկում մասնագիտացնող ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և այն ներկայացնել լրացուցիչ քննարկման: Դրական եզրակացության դեպքում մասնագիտացնող ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության,

գ) մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) կողմից աշխատանքը գրախոսության ուղարկելու կազմակերպում,

դ) ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և բակալավրի աստիճանի շնորհում:

4. Ավարտական աշխատանքի պաշտպանությունը և մասնագիտական ամփոփիչ ավարտական քննության անցկացումն իրականացվում են համաձայն ՀՀ ԿԳ նա-խարարության կողմից սահմանված կարգի:

5. Ավարտական աշխատանքի պաշտպանության և մասնագիտական ամփոփիչ ավարտական քննության գնահատումը կատարվում է աղյուսակ 4-ում ներկայացված 20 միավորանոց սանդղակով:

6. Ավարտական աշխատանքի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

*Աղյուսակ 5.*

| Թիվ | Չափանիշ | Առավելագույն միավորը |
|---|---|---|
| 1 | Ներկայացման որակը | 6 |
| 2 | Ձևակերպման որակը | 6 |
| 3 | Կատարման ինքնուրույնության աստիճանը | 6 |
| 4 | Արդիականությունը/նորույթը | 2 |
| | ***Ընդամենը՝*** | ***20*** |

7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների կողմից ավարտական աշխատանքի գնահատումները կատարվում են սահմանված նմուշի գնահատման ձևաթերթում (տե՛ս *հավելված 2*):

## 10. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

1. Այլ բուհերից ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրեր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության

որոշակի շրջանների (կիսամյակ, ուստարի) տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

2. Այլ կրթական ծրագրից ԵՊՀ կրթական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե դրանց բովանդակությունները միանման են, կամ առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

3. Այլ բուհում ԵՊՀ ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ԵՊՀ-ի և ընդունող բուհի միջև:

4. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար ԵՊՀ-ն նշանակում է *ECTS-ի բուհական համակարգող,* որի գործունեության հիմնական ոլորտները և պարտականությունների շրջանակները կանոնակարգվում են առանձին կարգով:

## 11. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետները կազմակերպում են ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:

2. Մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է ֆակուլտետը՝ ելնելով տարբեր կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների թվի և ֆակուլտետի դասախոսական ներուժի համադրումից:

3. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն ամրագրված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ շրջանում:

4. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ, օգնում դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

## 12. ՈՒՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*1. Ուսանողը պարտավոր է՝*

– ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խըստորեն հետևել դրա պահանջներին,

– կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահման-ված պահանջները,
– կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

*2. Ուսանողն իրավունք ունի՝*

– ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար Համալսարանի կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
– միջբուհական փոխանակման և (կամ) ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
– փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,
– ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու ուսումնառությունը ԵՊՀ-ում՝ համաձայն գործող կարգի,
– հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
– բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված՝ երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն:

## 13. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կարգը գործողության մեջ է դրվել 2010/11 ուստարվանից՝ ԵՊՀ ԻՄ բակալավրի կրթական ծրագրերում ընդգրկված I-IV կուրսերի ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու համար:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ** *Հավելված 1.*

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

**Բակալավրի կրթական ծրագիր**

| Անձնական համար | Ազգանուն անուն հայրանուն | Մասնագիտություն |
|---|---|---|
| **125001** | **Մաթևոսյան Աշոտ Կարենի** | **«Տնտեսագիտություն»** |

## 1-ին կիսամյակ

**Աշնանային կիսամյակ, 2008 թ.**

| Թվանիշ | Դասընթացի անվանումը | Կրեդիտ | Գնահատական | Թվային միավորներ |
|---|---|---|---|---|
| 1401/B01 | Հայոց լեզու և գրականություն-1 | 2 | Ստ. | - |
| 170X/B01 | Ռուսաց լեզու-1 | 4 | Ստ. | - |
| 160X/B01 | Օտար լեզու-1 | 4 | Ստ. | - |
| 1106/B01 | Հայոց պատմության հիմնահարցեր-1 | 2 | Ստ. | - |
| XX0X/B01 | Համակարգչից օգտվելու հմտություններ | 2 | Ստ. | - |
| 0X0X/B01 | Մաթեմատիկայի հիմունքներ | 2 | Ստ. | - |
| 0X0X/B01 | Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ | 2 | Ստ. | - |
| 0001/B01 | Ֆիզդաստիարակություն | - | Ստ. | - |
| XXX/ BXX | Դասընթաց-1 | 4 | Լավ | 17 |
| XXX/ BXX | Դասընթաց-2 | 4 | Լավ | 16 |
| XXX/ BXX | Դասընթաց-3 | 4 | Լավ | 16 |

| Գումարային կրեդիտներ | Գնահատված կրեդիտներ | Վարկանիշային միավորներ | Կիսամյակային ՄՈԳ |
|---|---|---|---|
| 30 | 12 | 196 | 16.33 |

**Ընդհանրացված արդյունքները 2008 թ. աշնանային կիսամյակից հետո**

| Լրացված գումարային կրեդիտներ | Լրացված գնահատված կրեդիտներ | Վարկանիշային միավորներ | Ամփոփիչ ՄՈԳ |
|---|---|---|---|
| **30** | **12** | **196** | **16.33** |

## 2-րդ կիսամյակ

**Գարնանային կիսամյակ, 2009 թ.**

| Թվանիշ | Դասընթացի անվանումը | Կրեդիտ | Գնահատական | Թվային միավորներ |
|---|---|---|---|---|
| 170X/B02 | Ռուսաց լեզու-2 | 4 | Ստ. | - |
| 160X/B02 | Օտար լեզու-2 | 4 | Ստ. | - |
| 0001/B01 | Ֆիզդաստիարակություն | - | Ստ. | - |
| 1401/B02 | Հայոց լեզու և գրականություն-2 | 2 | Լավ | 16 |
| 1106/B02 | Հայոց պատմության հիմնահարցեր-2 | 2 | Գեր. | 19 |
| XXX/BXX | Դասընթաց-4 | 6 | Բավ. | 12 |
| XXX/BXX | Դասընթաց-5 | 6 | Լավ | 16 |
| XXX/BXX | Դասընթաց-6 | 6 | Գեր. | 20 |

| Գումարային կրեդիտներ | Գնահատված կրեդիտներ | Վարկանիշային միավորներ | Կիսամյակային ՄՈԳ |
|---|---|---|---|
| 30 | 22 | 358 | 16.27 |

**Ընդհանրացված արդյունքները 2009 թ. գարնանային կիսամյակից հետո**

| Լրացված գումարային կրեդիտներ | Լրացված գնահատված կրեդիտներ | Վարկանիշային միավորներ | Ամփոփիչ ՄՈԳ |
|---|---|---|---|
| **60** | **34** | **554** | **16.29** |

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
## ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

**Բակալավրի կրթական ծրագիր**

| Անձնական համար | Ազգանուն անուն հայրանուն | Մասնագիտություն |
|---|---|---|
| **125001** | **Մաթևոսյան Աշոտ Կարենի** | **«Տնտեսագիտություն»** |

### 3-րդ կիսամյակ

**Աշնանային կիսամյակ, 2009 թ.**

| Թվանիշ | Դասընթացի անվանումը | Կրեդիտ | Գնահատական | Թվային միավորներ |
|---|---|---|---|---|
| 1107/B01 | Մշակութաբանություն | 2 | Ստ. | - |
| 0001/B01 | Ֆիզդաստիարակություն | - | Ստ. | - |
| XX0X/B03 | Օտար լեզու-3 | 4 | Գեր. | 19 |
| 130X/B01 | Փիլիսոփայության հիմունքներ | 4 | Լավ | 15 |
| XXX/BXX | Դասընթաց-7 | 5 | Բավ. | 11 |
| XXX/BXX | Դասընթաց-8 | 6 | Բավ. | 8 |
| XXX/BXX | Դասընթաց-9 | 6 | Գեր. | 20 |
| XXX/BXX | Դասընթաց-10 | 3 | Գեր. | 19 |

| Գումարային կրեդիտներ | Գնահատված կրեդիտներ | Վարկանիշային միավորներ | Կիսամյակային ՄՈԳ |
|---|---|---|---|
| 30 | 28 | 416 | 14.86 |

**Ընդհանրացված արդյունքները 2009 թ. աշնանային կիսամյակից հետո**

| Լրացված գումարային կրեդիտներ | Լրացված գնահատված կրեդիտներ | Վարկանիշային միավորներ | Ամփոփիչ ՄՈԳ |
|---|---|---|---|
| **90** | **62** | **970** | **15.65** |

### 4-րդ կիսամյակ

**Գարնանային կիսամյակ, 2010 թ.**

| Թվանիշ | Դասընթացի անվանումը | Կրեդիտ | Գնահատական | Թվային միավորներ |
|---|---|---|---|---|
| 1901/B01 | Իրավագիտություն | 2 | Ստ. | - |
| 0001/B01 | Ֆիզդաստիարակություն | - | Ստ. | - |
| XXX/BXX | Դասընթաց-11 | 5 | Բավ. | 9 |
| XXX/BXX | Դասընթաց-12 | 5 | Լավ | 16 |
| XXX/BXX | Դասընթաց-13 | 6 | Լավ | 17 |
| XXX/BXX | Դասընթաց-14 | 6 | Գեր. | 18 |
| XXX/BXX | Դասընթաց-15 | 6 | Գեր. | 20 |

| Գումարային կրեդիտներ | Գնահատված կրեդիտներ | Վարկանիշային միավորներ | Կիսամյակային ՄՈԳ |
|---|---|---|---|
| 30 | 28 | 455 | 16.25 |

**Ընդհանրացված արդյունքները 2010 թ. գարնանային կիսամյակից հետո**

| Լրացված գումարային կրեդիտներ | Լրացված գնահատված կրեդիտներ | Վարկանիշային միավորներ | Ամփոփիչ ՄՈԳ |
|---|---|---|---|
| **120** | **90** | **1425** | **15.83** |

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
### ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

**Բակալավրի կրթական ծրագիր**

| Անձնական համար | Ազգանուն անուն հայրանուն | Մասնագիտություն |
|---|---|---|
| **125001** | **Մաթևոսյան Աշոտ Կարենի** | **«Տնտեսագիտություն»** |

### 5-րդ կիսամյակ

**Աշնանային կիսամյակ, 2010 թ.**

| Թվանիշ | Դասընթացի անվանումը | Կրեդիտ | Գնահատական | Թվային միավորներ |
|---|---|---|---|---|
| 0002/B01 | Քաղաքացիական պաշտպանություն | 2 | Ստ. | - |
| 0002/B02 | Արտակ. իրավիճ. բնակչութ. առաջին բուժօգնություն | 2 | Ստ. | - |
| XXX/BXX | Դասընթաց-16 | 5 | Բավ. | 10 |
| XXX/BXX | Դասընթաց-17 | 5 | Գեր. | 20 |
| XXX/BXX | Դասընթաց-18 | 5 | Լավ | 18 |
| XXX/BXX | Դասընթաց-19 | 5 | Լավ | 17 |
| XXX/BXX | Դասընթաց-20 | 6 | Գեր. | 16 |

| Գումարային կրեդիտներ | Գնահատված կրեդիտներ | Վարկանիշային միավորներ | Կիսամյակային ՄՈԳ |
|---|---|---|---|
| 30 | 26 | 421 | 16.19 |

**Ընդհանրացված արդյունքները 2010 թ. աշնանային կիսամյակից հետո**

| Լրացված գումարային կրեդիտներ | Լրացված գնահատված կրեդիտներ | Վարկանիշային միավորներ | Ամփոփիչ ՄՈԳ |
|---|---|---|---|
| **150** | **116** | **1846** | **15.91** |

### 6-րդ կիսամյակ

**Գարնանային կիսամյակ, 2011 թ.**

| Թվանիշ | Դասընթացի անվանումը | Կրեդիտ | Գնահատական | Թվային միավորներ |
|---|---|---|---|---|
| XXX/BXX | Պրակտիկա | 4 | Ստ. | - |
| XXX/BXX | Դասընթաց-21 | 5 | Բավ. | 11 |
| XXX/BXX | Դասընթաց-22 | 5 | Բավ. | 12 |
| XXX/BXX | Դասընթաց-23 | 5 | Լավ | 16 |
| XXX/BXX | Դասընթաց-24 | 5 | Լավ | 17 |
| XXX/BXX | Դասընթաց-25 | 4 | Գեր. | 19 |
| XXX/BXX | Կուրսային աշխատանք-25 | 2 | Գեր. | 20 |

| Գումարային կրեդիտներ | Գնահատված կրեդիտներ | Վարկանիշային միավորներ | Կիսամյակային ՄՈԳ |
|---|---|---|---|
| 30 | 26 | 396 | 15.23 |

**Ընդհանրացված արդյունքները 2011 թ. գարնանային կիսամյակից հետո**

| Լրացված գումարային կրեդիտներ | Լրացված գնահատված կրեդիտներ | Վարկանիշային միավորներ | Ամփոփիչ ՄՈԳ |
|---|---|---|---|
| **180** | **142** | **2242** | **15.79** |

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
### ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

**Բակալավրի կրթական ծրագիր**

| Անձնական համար | Ազգանուն անուն հայրանուն | Մասնագիտություն |
|---|---|---|
| **125001** | **Մաթևոսյան Աշոտ Կարենի** | **«Տնտեսագիտություն»** |

### 7-րդ կիսամյակ

**Աշնանային կիսամյակ, 2011 թ.**

| Թվանիշ | Դասընթացի անվանումը | Կրեդիտ | Գնահատական | Թվային միավորներ |
|---|---|---|---|---|
| XXX/BXX | Դասընթաց-26 | 4 | Լավ | 13 |
| XXX/BXX | Դասընթաց-27 | 4 | Լավ | 14 |
| XXX/BXX | Կուրսային աշխատանք-27 | 2 | Բավ. | 12 |
| XXX/BXX | Դասընթաց-28 | 5 | Լավ | 16 |
| XXX/BXX | Դասընթաց-29 | 5 | Լավ | 17 |
5. կկարողանա թարգմանել մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Բառագիտություն. դարձվածներ և դարձվածների դասակարգումը: ***Թեմա 2՝*** Ձևաբանություն. խոսքի մասերի քերականական կարգերը: Բառակազմություն. բառի ձևաբանական կազմը: ***Թեմա 3՝*** Շարահյուսություն. միակազմ նախադասություն, միակազմ նախադասության դասակարգումը: Բարդ նախադասություն, բարդ նախադասության դասակարգումը: Ուրիշի ուղղակի և

անուղղակի խոսք: ***Թեմա 4՝*** Ուղղագրություն. ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: ***Թեմա 5՝*** Մասնագիտական տեքստի կառուցվածքը. տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

**0304/B04.** ***«ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ»*** **-1***(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(64 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1-ին, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել):

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա հարուստ ակտիվ և ներզոր բառապաշար,
2. կիմանա անգլերենի քերականության հատուկ բարդություն ունեցող երևույթները,
3. կունենա անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Արտասանություն, ուղղախոսություն. անգլերենի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: ***Թեմա 2՝*** Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): ***Թեմա 3՝*** Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջուն): ***Թեմա 4՝*** Առաջարկվող թեմաներ. «Ընտանիք», «Ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ», «Իմ հետաքրքրությունները», «Ճանապարհորդություն», «Երազանքներ», «Իմ ապագա մասնագիտությունը», «Շրջակա միջավայրը և նրա պահպանումը», «Հանրամշակութային երևույթներ» և այլն:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝նախապես տրամադրված հարցաշարից:

**0304/B01.** ***«ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ»*** **-1***(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(64 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1-ին, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է թարմացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապա-

շարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճիշտ արտասանել ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները,
2. կկարողանա ճիշտ հնչերանգով ձևակերպել հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները՝ դադար, շեշտ, հիմնական հնչերանգ, մեղեդային եզրափակում, տեմպ,
3. կիմանա ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծել բառը և նախադասությունը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. ***Թեմա 2՝*** Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: ***Թեմա 3՝*** Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: ***Թեմա 4՝*** Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: ***Թեմա 5՝*** Քանակական և դասական թվական: Քանակական թվականի գործածությունը: ***Թեմա 6՝*** Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ:

*Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

**0304/B05.** *«ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ»* **-2***(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(64 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընդհանուր մասնագիտական բառապաշարին:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա համակարգել նախորդ փուլում յուրացրած քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա,
2. կունենա անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ,
3. կկարողանա ընկալել ունկնդրված /կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից/,
4. կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինաբանական համակարգին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: ***Թեմա 2՝*** Բառապաշար, բառակազմություն. վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: ***Թեմա 3՝*** Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի (անվանական և բայական կարգերի) համակարգում հաղորդակցական սկզբունքի հիման վրա: ***Թեմա 4՝*** Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին: ***Թեմա 5՝*** Մասնագիտական լեզվի տերմինաբանական համակարգ:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**0304/B02.** ***«ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ»*** **-2** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(64 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ճիշտ արտասանել ֆրանսերենի հնչյունները, ճիշտ արտասանությամբ ձևակերպել նախադասությունը,
2. կկարողանա լսելով հասկանալ և վերաշարադրել տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անծանոթ բառ),
3. կկարողանա զրույց վարել անցած թեմաներով:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Գոյական անուն, միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Les funerailles, les entrailles. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը (des cour- fleurs, des casse–croute և այլն): ***Թեմա 2՝*** Ածականի իմաստի փոփոխությունը կախված նրա դիրքից՝un homme grand-un grand homme. Անորոշ դերանվանական ածականներ: ***Թեմա 3՝*** Հարաբերական դերանուններ, դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ՝ qui, que, dont, ou, lequel և այլն (դասակարգում): ***Թեմա 4՝*** Պայմանական եղանակ, կազմությունը և գործածությունը համադաս և ստորադասական նախադասություններում: Ըղձական եղանակ: Սահմանական եղանակը ուրիշի ուղղակի խոսքում:

*Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

**0304/B09.** *«ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ»* **-3** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(64 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ, հանրագումարային քննություն*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է՝ զարգացնելով ուսանողի լեզվային հմտությունները, ապահովել նրա տիրապետումը մասնագիտական լեզվին և ազատ օգտվելը մասնագիտական գրականությունից:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ազատ կտիրապետի մասնագիտական լեզվի տերմինաբանային համակարգին,
2. կկարողանա մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական տեքստեր,
3. կկարողանա ինքնուրույն կազմել կապակցված տեքստ մասնագիտական թեմայով,
4. կկարողանա կազմել զեկույցներ և ռեֆերատներ մասնագիտական թեմաներով,
5. կկարողանա թարգմանել տարբեր բարդության մասնագիտական տեքստեր:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ոճաբանություն. լեզվի գիտական ոճ, գիտական ոճին բնորոշ շարահյուսական կառուցվածքներ, գիտական կապակցված տեքստի կառուցման միջոցներ՝ բառային, ձևաբանական և շարահյուսական: ***Թեմա 2՝*** Ուղղագրություն. ուղղագրության հիմնական կանոնները: ***Թեմա 3՝*** Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանություն: ***Թեմա 4՝*** Գիտական զեկույցների, մասնագիտական ռեֆերատների, անոտացիաների, կոնսպեկտների կառուցման հիմնական սկզբունքներ: Դիմումների, գրությունների, արձանագրությունների, ինքնակենսագրությունների, բնութագրերի կառուցման հիմնական սկզբունքներ:

*Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 1-ին և 2-րդ հարցերը՝ 6-ական միավոր, 3-րդ հարցը /մասնագիտական տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն/՝ 8 միավոր:

**0304/B06.** *«ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ»* **-3** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(64 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ, հանրագումարային քննություն*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է նոր, առավել հագեցած բառապաշարի և գիտելիքների ներմուծումը, մասնագիտական բառապաշարի խորացված ուսումնասիրությունը և մասնագիտական գրականությունից օգտվելու հմտությունների զարգացումը՝ զուգահեռաբար խորացնելով ուսանողների լեզվական հմտությունները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա հասկանալ և ամբողջապես ըմբռնել լսված նյութի հիմնական բովանդակությունը,
2. կտիրապետի անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններին,
3. կկարողանա թարգմանել մասնագիտական տեքստը հայերենից անգլերեն և հակառակը,
4. կկարողանա ինքնուրույն կազմել կապակցված տեքստ մասնագիտական թեմայով:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Բառապաշար (ռեցեպտիվ և պրոդուկտիվ)՝ հոմանիշներ, հականիշներ, նոր բառակապակցություններ: ***Թեմա 2՝*** Քերականություն. բայի անդեմ ձևեր, մոդալ բայերի երանգավորված իմաստները և դրանց կիրառումը բանավոր և գրավոր խոսքում, բայի կրավորական սեռը: ***Թեմա 3՝*** Գործարար նամակագրություն՝ համառոտագրություն, ինքնակենսագրություն (CV), դիմում: ***Թեմա 4՝*** Առաջարկվող թեմաներ՝ «Սերունդների հակասություն», «Հոգևոր և մշակութային արժեքներ», «21-րդ դար՝ նոր մարտահրավերներ», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և նրանց դերը մեր կյանքում», «Հայրենիք և հայրենասիրություն» և այլն:

***Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 7, 6 և 7 միավոր:

**0304/B03.** ***« ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ»*** **-3** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(64 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ, հանրագումարային քննություն*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է հանրագումարի բերել նախորդ մակարդակներում ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա իր մասնագիտական հիմնական տերմինների նշանակությունը, ներառյալ երկրորդ կիսամյակում սովորած 300 միավոր տերմինոլոգիան,

2. կկարողանա առանց բառարանի կարդալ միջին բարդության մասնագիտական տեքստեր,
3. կկարողանա առանց բառարանի կարդալ և վերաշարադրել միջին բարդության հասարակական–քաղաքական տեքստեր:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում, քերականորեն (հոդի և այլ մասնիկների օգնությամբ), ձևաբանորեն (բառի ձևի փոփոխություն, ածանցներ), բառային (բառի տարբեր ձևեր): Երկու սեռ ունեցող գոյականներ: ***Թեմա 2՝*** Եղանակավորման քերականական արտահայտությունը, ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը՝ indicatif (սահմանական եղանակ), conditionnel (պայմանական եղանակ), subjonctif (ըղձական եղանակ), imperatif (հրամայական եղանակ): ***Թեմա 3՝*** Նախդիրների համակարգային դասակարգում, տարբեր հարաբերություններ արտահայտող նախդիրներ:

***Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց: Առաջին առաջադրանքն է՝ կարդալ, թարգմանել անծանոթ տեքստը մասնագիտական թեմայով, երկրորդը՝ մեկնաբանել ծանոթ մասնագիտական տեքստը. երրորդը՝ խոսել մասնագիտական ոլորտի վերաբերյալ:

**0301/B05.** ***«ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»*** *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակները՝ *3–րդ(4–րդ), հանրագումարային քննություն*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված մարդուն և մասնագետին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի մասին փիլիսոփայական հայեցակարգերի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները,
2. կհասկանա ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը,
3. կկարողանա վերլուծել և ամբողջական պատկերացում կազմել արդի քաղաքակրթական, քաղաքական-մշակութային և մարդաբանական պատկերացումների, տեխնածին քաղաքակրթության զլոբալ հիմնախնդիրների մասին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Փիլիսոփայության առարկան: ***Թեմա 2՝*** Կեցություն և մատերիա: ***Թեմա 3՝*** Դիալեկտիկա: ***Թեմա 4՝*** Բնություն: ***Թեմա 5՝*** Մարդ և պրակտիկա: ***Թեմա 6՝*** Գիտակցություն և ճանաչողություն: ***Թեմա 7՝*** Գիտություն: ***Թեմա 8՝*** Հասարակություն*:* ***Թեմա 9՝*** Մշակույթ: Անձ: Ապագա:

***Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 4 հարց:

**0301/B01.** *«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ»* -1*(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 դասախոսություն, 8 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1–ին, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի առաջին մասի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին հայոց պատմության հին շրջանի և միջնադարի պատմությանը, Հայկական լեռնաշխարհի աշխարհագրությանը և սեր առաջացնել մեր ժողովրդի բազմադարյան պատմության և նրա հերոսական անցյալի նկատմամբ՝ շեշտը դնելով հայոց պետականության պատմության ըստ ամենայնի լուսաբանման վրա:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի հայոց հին ու միջնադարյան պատմությանը,
2. կկարողանա քննադատական վերաբերմունք հանդես բերել հայոց պատմության հին ու միջին շրջանի կարևորագույն իրադարձություններին,
3. յուրացրած կլինի հայոց պետականությունների պատմությունը:

**Բովանդակությունը.**

***Ներածություն.*** Հայկական բնաշխարհը: Վարչական բաժանումները: ***Թեմա 1՝*** Հայաստանը հնագույն շրջանում: ***Թեմա 2՝*** Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը (Ք.ա. IX-VIդդ.): Համահայկական պետության ստեղծումը (Երվանդունիների թագավորությունը): Մեծ Հայքի պետության վերելքը (Արտաշեսյանների թագավորությունը): Արշակունիների թագավորությունը (I-Vդդ.): ***Թեմա 3՝*** Հայաստանը վաղ միջնադարում: ***Թեմա 4՝*** Հայաստանը զարգացած միջնադարում: ***Թեմա 5՝*** Հայաստանը ուշ միջնադարում:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**0301/B02.** *«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ»* -2*(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 դասախոսություն, 8 ժամ գործնական պարապմունք-ներ)*
Կիսամյակը՝ *2–րդ, հանրագումարային քննություն*

*Նպատակը.*

Դասընթացի երկրորդ մասի դասավանդումը նպատակ ունի ուսանողին մատուցել հայոց պատմության նոր և նորագույն շրջանը: Դասավանդման ըն-թացքում շեշտը դրվում է ազգային-ազատագրական շարժումների և Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ Հանրապետությունների պատմության վերլուծության վրա:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի հայ ժողովրդի նոր և նորագույն պատմությանը,
2. կկարողանա վերլուծել հայ ազգային-ազատագրական շարժման կարևորա-գույն իրադարձությունները, Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ Հանրապետութ-յունների պատմությանը և դասեր քաղել անցյալի սխալներից,
3. կկարողանա գիտելիքները լայնորեն օգտագործել իր աշխատանքային, հատ-կապես կրթական գործընթացներում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հայ ազատագրական շարժումները 17-18-րդ դդ.: Արևելյան Հա-յաստանի միացումը Ռուսաստանին: ***Թեմա 2՝*** Հայկական հարցի ծագումը և բո-վանդակությունը: Հայ ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը (1870-ա-կան թթ. - 20–րդ դ. սկիզբ): ***Թեմա 3՝*** Ազատագրական խմբակներն ու կազմա-կերպությունները: Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: Ազ-գային-ազատագրական զինված պայքարի փուլը: ***Թեմա 4՝*** Արևմտահայության Մեծ եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: ***Թեմա 5՝*** 1917թ. փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը: 1917թ հոկտեմբերյան հեղափոխությունը և Հայաստանը: ***Թեմա 6՝*** Հայաստանի առաջին հանրապետությունը (1918 -1920 թթ.): ***Թեմա 7՝*** Խորհրդային Հայաստանը (1920-1991 թթ.): ***Թեմա 8՝*** Հայաստանի երրորդ հանրապետությունը (1991-2000 թթ.): ***Թեմա 9՝*** Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը:

***Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 7, 7, 6 միավոր արժեքով:

**0201/B01.** ***«ԷԹԻԿԱ ԵՎ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ »*** *(0 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *2–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգված գիտելիքներ հաղորդել էթիկայի տեսության վերաբերյալ, առնչել բարոյագիտական ուսմունքների հակիրճ պատմությանն ու ներկա խնդիրներին, հաղորդակից դարձնել բարեկրթության նորմերին, հաղորդակցության ու հյուրասիրության կանոններին, խոսքի մշակույթի հիմունքներին:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա համապատասխան գիտելիքներ հայոց դիմելաձևերի և միջհաղորդակցության նորմերի վերաբերյալ,
2. ունակ կլինի հասու դարձնել հյուրընկալության և հասարակական վայրերում պահվածքի էթիկետին,
3. կկարողանա գործնական խորհուրդներով օգնել վարքի կանոնների հաստատմանը,
4. կկարողանա նպաստել նորաձևության այբուբենի յուրացմանն ու պատշաճ հագնելաձևին:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Էթիկայի առարկան և խնդիրները: ***Թեմա 2՝*** Հին Արևելքի և անտիկ աշխարհի բարոյագիտական ուսմունքների համառոտ պատմություն: ***Թեմա 3՝*** Միջնադարի և նոր ժամանակների բարոյագիտական ուսմունքների համառոտ պատմություն: ***Թեմա 4՝*** Բարոյագիտության կատեգորիաներն ու հիմնական հասկացությունները: ***Թեմա 5՝*** Վարվեցողության կուլտուրան և մարդու անհատականությունը: ***Թեմա 6՝*** Հայոց գաղափարաբանության բարոյական հիմքերը: ***Թեմա 7՝*** Հաղորդակցման կանոններ: Խոսքի կուլտուրա: ***Թեմա 8՝*** Դիվանագիտական էթիկետ: ***Թեմա 9՝*** Վարքի կանոններ: ***Թեմա 10՝*** Հյուրասիրության եւ հյուրընկալության կանոններ: ***Թեմա 11՝*** Մոդան որպես երևույթ. դրա էությունն ու զարգացման միտումները:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

## 2.2. Կամընտրական դասընթացներ

***0201/B01. «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)***

*Շաբաթական՝ 2 ժամ (32 ժամ դասախոսություն)*

*Կիսամյակը՝ 4 -րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ տնտեսագիտական ընդհանուր գիտելիքներ:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. յուրացրած կլինի տնտեսագիտության հիմունքները,

2. կկարողանա մեկնաբանել միկրո և մակրո տնտեսագիտության հիմնական ցուցանիշները

3. պատկերացում կունենա տնտեսության շուկայական համակարգի կենսագործունեության, հիմնական հասկացությունների, զարգացման օրինաչափությունների մասին
4. կունենա տնտեսական իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու հմտություններ:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը: ***Թեմա 2՝*** Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: ***Թեմա 3՝*** Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: ***Թեմա 4՝*** Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: ***Թեմա 5՝*** Սպառողի վարքի տեսություն: ***Թեմա 6՝*** Արտադրության ծախքերը: ***Թեմա 7՝*** Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: ***Թեմա 8՝*** Ձեռնարկությունների ու կազմակերպությունների տիպերը և տեսակները:***Թեմա 9՝*** Ռեսուրսների գների ձևավորումը: ***Թեմա 10՝*** Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների համակարգը: ***Թեմա 11՝*** Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: ***Թեմա 12՝*** Փողը և բանկային համակարգը, դրամավարկային քաղաքականություն: ***Թեմա 13՝*** Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: ***Թեմա 14՝*** Միջազգային առևտրի տեսություն:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**0301/B03.** *«ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *4–րդ( 3–րդ), ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա համապատասխան գիտելիքներ քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերի մասին.
2. պատկերացում կունենա քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին.
3. կունենա քաղաքագիտական վերլուծություններ կատարելու բավարար ունակություններ,
4. կկարողանա կողմնորոշվել գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Քաղաքագիտության ինստիտուցիոնալ կայացման գործընթացը: ***Թեմա 2՝*** Քաղաքականությունը որպես սոցիալական երևույթ. բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: ***Թեմա 3՝*** Քաղաքական իշխանության էությունն ու կառուցվածքը: ***Թեմա 4՝*** Հասարակության քաղաքական համակարգը: ***Թեմա 5՝*** Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: ***Թեմա 6՝*** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: ***Թեմա 7՝*** Ընտրություններ և ընտրական համակարգեր: ***Թեմա 8՝*** Քաղաքական գաղափարախոսություններ: ***Թեմա 9՝*** Կոռուպցիան և նրա դրսևորման տեսակները, նրա դեմ պայքարի ձևերն ու մեթոդները:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

**0301/B04.** *«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *4–րդ(3–րդ), ստուգարք*

*Նպատակը.*

Սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները: Նպատակներից է նաև ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների մշակումը, ինչպես նաև իրավական աշխարհայացքի ու մշակույթի ձևավորումը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա պետության և իրավունքի մասին հիմնական սկզբունքները, հայեցակարգերը,
2. կիմանա օրենսդրության առանձին ճյուղերի իրավական կարգավորման հիմունքները,
3. կիմանա կարևոր իրավական հասկացությունները, եզրույթները,
4. կունենա գիտելիքները գործնականում կիրառելու ունակություններ և հմտություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հասարակություն և պետություն: ***Թեմա 2՝*** Իրավունքի ձևերը: ***Թեմա 3՝*** Օրինականություն, իրավաչափ վարքագիծ, իրավախախտում: ***Թեմա 4՝*** Կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերը: ***Թեմա 5՝*** Սահմանադրական իրավունք: ***Թեմա 6՝*** Դատական իշխանություն և դատական համակարգ: ***Թեմա 7՝*** Քաղաքացիական իրավունք: ***Թեմա 8՝*** Աշխատանքային իրավունք: ***Թեմա 9՝*** Ընտանեկան իրավունք: ***Թեմա 10՝*** Էկոլոգիական իրավունք: ***Թեմա 11՝*** Քրեական իրավունք: ***Թեմա 12՝*** Դատավարական իրավունք: ***Թեմա 13՝*** Միջազգային իրավունք:

*Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց (նախապես տրամարդված հարցաշարից), որոնցից առնվազն երկուսին դրական պատասխանող ուսանողը ստանում է «ստուգված»:

**0202/B01.** *«ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *3-րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային և հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. համապարփակ գիտելիքներ կունենա գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումների և տեսությունների մասին,
2. ծանոթ կլինի մշակույթի կառուցվածքին, բաղադրիչներին, տիպաբանությանը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափություններին,
3. ընդհանուր գիտելիքներ կունենա համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: ***Թեմա 2՝*** Մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, գործառույթները և մեխանիզմները: Մշակութային գործընթացներ: ***Թեմա 3՝*** Մշակույթը «անհատ», «բնություն», «հասարակություն», «էթնոս», «քաղաքակրթություն» կատեգորիաների համատեքստում: ***Թեմա 4՝*** Համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումները՝ մոտեցումներ, հարցադրումներ, օրինաչափություններ: ***Թեմա 5՝*** Ժամանակակից մշակութային գործընթացները և գլոբալիզացիայի խնդիրը:

*Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**0301/B06.** *«ԿՐՈՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *3-րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա՝ ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնածիսական առանձնահատկություններ ունեն դրանք, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները և տոնածիսական համակարգը.
2. կիհասկանա ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները.
3. կկարողանա կատարել տարբեր կրոնների ու կրոնական ուղղությունների տարբերակում և քննական արժևորում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: ***Թեմա 2՝*** Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: ***Թեմա 3՝*** Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: ***Թեմա 4՝*** Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: ***Թեմա 5՝*** Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: ***Թեմա 6՝*** Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: ***Թեմա 7՝*** Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: ***Թեմա 8՝*** Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: ***Թեմա 9՝*** Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: ***Թեմա 10՝*** Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

# 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

## 3.1. Պարտադիր դասընթացներ

**0101/B02.** ***«ՀԱՄԱԿԱՐԳՉԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»*** *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակերը՝ *1–ին (2–րդ), ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ համակարգչների, դրանց տեխնիկական, ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա համակարգչի կառուցվածքի և աշխատանքի հիմնական սկզբունքները,
2. կիմանա, թե ինչ է օպերացիոն համակարգը, բազմախնդրայնությունը, որոնք են տեքստային և գրաֆիկական խմբագիրների աշխատանքների սկզբունքների տարբերությունը, Windows օպերացիոն համակարգի և Word, Excel, PowerPoint ծրագրերի հետ աշխատելու հիմնական սկզբունքները,
3. կկարողանա ինքնուրույն կատարել իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, զեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն):

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: ***Թեմա 2՝*** Microsoft Word փաստաթղթի ստեղծում և ձևավորում: ***Թեմա 3՝*** Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ: ***Թեմա 4՝*** Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ուսանողին տրվում են հանձնարարություններ, որոնք հիմնված են դասընթացի ընթացքում անցած թեմաների վրա:

**0001/B05.** *«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակները՝ *5–րդ (6–րդ), ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արտակարգ իրավիճակներում *(երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում և այլն)* և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությանը և կատարմանը:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ստեղծված արտակարգ իրավիճակներում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ պաշտպանվելու ձևերն ու մեթոդները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: ***Թեմա 2՝*** Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: ***Թեմա 3՝*** Բնակչության գործողությունները աղաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: ***Թեմա 4՝*** Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: ***Թեմա 5՝*** Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: ***Թեմա 6՝*** Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: ***Թեմա 7՝*** Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց. երկուսը՝ տեսական, մեկը՝ գործնական:

**0001/B06. *«ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակները՝ *5–րդ (6–րդ), ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացների նպատակն է ուսանողներին սովորեցնել էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահարում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) մինչբժշկական օգնության ցուցաբերում:

***<u>Կրթական արդյունքները</u>***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) ցուցաբերել առաջին և մինչբժշկական օգնություն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: ***Թեմա 2՝*** Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: ***Թեմա 3՝*** Սուր հիվանդություններ և թունավորումներ: ***Թեմա 4՝*** Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: ***Թեմա 5՝*** Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

*Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Ստուգարքը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց. երկուսը՝ տեսական, մեկը՝ գործնական:

**0103/B01.** *«ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»*
*(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակները՝ *1–ին (2–րդ), ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում էկոլոգիա գիտության տեսական հիմնահարցերի, բնապահպանության առկա խնդիրների և հիմնահարցերի լուծման առաջարկվող եղանակների և կիրառվող մեթոդների ու մոդելների մասին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կիմանա էկոլոգիա գիտության հիմնական տեսական մոտեցումները, օրենքները, հարցերը,
2. կկարողանա օգտագործել այդ գիտելիքները բնապահպանական հարցերի լուծման ոլորտում,
3. կկարողանա կատարել անհրաժեշտ վերլուծություն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** էկոլոգիայի զարգացման պատմական ուղին, տեղն ու դերը մյուս գիտությունների համակարգում: Օրգանիզմներ և էկոհամակարգ: Էկոլոգիական հիմնական օրենքները և կանոնները: ***Թեմա 2՝*** Էկոհամակարգի տարրերը և տրոֆիկ մակարդակները: ***Թեմա 3՝*** Օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունը, էկոգործոններ: ***Թեմա 4՝*** Էներգիան էկոհամակարգերում: Սննդային շղթաներ: Կենսաերկրաքիմիական ցիկլեր: ***Թեմա 5՝*** Մարդու էկոլոգիա: Շրջակա միջավայր: Մարդածին համակարգեր: ***Թեմա 6՝*** Բնական պաշարների դասակարգումը: Գլոբալ արտադրություն և քայքայում: ***Թեմա 7՝*** Շրջակա միջավայրի ոլորտների նկարագրություն: ***Թեմա 8՝*** Պոպուլյացիոն էկոլոգիա: ***Թեմա 9՝*** Շրջակա միջավայրի աղտոտվածության հիմնահարցերը: Գլոբալ էկոլոգիական պրոբլեմներ:

*Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

## 3.2. Կամընտրական դասընթացներ

**0101/B01** *«ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ( 2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *1–ին, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է՝ հումանիտար մասնագիտության ուսանողների մոտ ձևավորել մասնագիտական խնդիրների ճիշտ ձևակերպման մտածողության, այդ խնդիրների լուծման արդյունավետ և ռացիոնալ ճանապարհների ընտրության ճիշտ կողմորոշման մաթեմատիկական ունակություն: Հատակ ուշադրություն դարձնել մասնագիտական աշխատանքի հետ կապված անհրաժեշտ մաթեմատիկական հաշվարկներ կատարելու մաթեմատիկական մշակույթի ձևավորմանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի թվերի տեսության հիմունքներին և նրանց մաթեմատիկական հաշվարկներ կատարելու հնարքներին,
2. կհասկանա մաթեմատիկայի լեզուն և կկարողանա արդյունավետ կիրառել մասնագիտական ոլորտներում,
3. կկարողանա թվերով, գծապատկերներով, սանդղակներով ձևավորել վերջնարդյունք:

Բովանդակությունը.

***Թեմա 1՝*** Բնական, ամբողջ, ռացիոնալ, իռացիոնալ, իրական և կոմպլեքս թվեր, անվերջ փոքրեր և անվերջ մեծեր: ***Թեմա 2՝*** Անալիտիկ երկրաչափությունը հարթության վրա: Էվկլիդեսի եռաչափ տարածությունը: ***Թեմա 3՝*** Ֆունկցիա: Տարրական ֆունկցիաներ: Ֆունկցիայի անընդհատությունը և սահմանը: Դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվներ: Նրանց կիրառական նշանակությունը: ***Թեմա 4՝*** Բազմությունների տեսության տարրերը: Պատահույթների հավանականությունը: Վիճակագրության տարրերը: ***Թեմա 5՝*** Մաթեմատիկական մոդելավորում և հաշվողական էքսպերիմենտներ: Կերպարների մաթեմատիկական ընկալումներ: Համակարգիչը և կյանքը:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

0102/B01. *«ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՈՆՑԵՊՑԻԱՆԵՐ» (2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակները՝ *1–ին (3–րդ), ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ձևավորել բնագիտական աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց բնագիտության զարգացման պատմությանը, բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափություններին, բնագիտության զարգացման ներկա միտումներին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բնագիտության զարգացման հիմնական փուլերը, բնագիտության հիմնական սկզբունքները, բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները,
2. կիասկանա բնության համակարգերի կառուցվածքի և զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները,
3. կկարողանա կատարել համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Բնագիտության առարկան: Օրինաչափությունները և զարգացման հիմնական փուլերը: ***Թեմա 2՝*** Բնագիտական և հումանիտար մշակույթներ: ***Թեմա 3՝*** Աշխարհի մեխանիստական պատկերը: ***Թեմա 4՝*** Դասական թերմոդինամիկայի և վիճակագրական ֆիզիկայի կոնցեպցիաները: ***Թեմա 5՝*** Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: ***Թեմա 6՝*** Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկըզբունքները: ***Թեմա 7՝*** Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: ***Թեմա 8՝*** Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: ***Թեմա 9՝*** Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: ***Թեմա 10՝*** Աստղերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: ***Թեմա 11՝*** Մոլորակների կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: ***Թեմա 12՝*** Տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: ***Թեմա 13՝*** Քվանտային կոսմոլոգիա: Անթրոպային սկզբունք: ***Թեմա 14՝*** Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: ***Թեմա 15՝*** Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

# 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

## 4.1. «Պատմություն» մասնագիտություն

**0301/B09.** *«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»* -1 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *1–ին, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ համակողմանի և ամբողջական գիտելիքներ հայ ժողովրդի հին և միջին շրջանի քաղաքական, տնտեսական և մշակութային պատմության,վերաբերյալ:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձեռք կբերի հին և միջին դարերի շրջանների վերաբերյալ.
2. կկարողանա վերլուծաբար մոտենալ հայոց հին և միջին շրջանի պատմությանը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ներածական դասախոսություն և հնագույն պատմություն: ***Թեմա 2՝*** Հայկյանների և Վանյան թագավորություններ: Հայաստանի Երվանդական թագավորություն: ***Թեմա 3՝*** Հայաստանն Առաջավոր Ասիայի հզոր տերություն: ***Թեմա 4՝*** Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը: ***Թեմա 5՝*** Քրիստոնեության հռչակումը Հայաստանի պետական կրոն: ***Թեմա 6՝*** Մեծ Հայքի թագավորությունը 4–5-րդ դդ.: ***Թեմա 7՝*** Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը: ***Թեմա 8՝*** Հայաստանը 5–9-րդ դդ.: ***Թեմա 9՝*** Հայ ազատագրական պայքարը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B54** *«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 3 ժամ (*32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1-ին, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ համակողմանի և ամբողջական գիտելիքներ Հայաստանի պատմական աշխարհագրության՝ Հայկական լեռնաշխարհի, էթնիկ հիմնահարցերի, վարչական բաժանումների, քաղաքների մասին:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձեռք կբերի Հայկական լեռնաշխարհի և նրա ժողովրդագրության վերաբերյալ,
2. կայուն գիտելիքներ կունենա պատմական Հայաստանի պատմական աշխարհագրությունից,
3. կկարողանա տիրապետել պատմական Հայաստանի աշխարհագրությանը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հայկական լեռնաշխարհի բնական պայմանները: ***Թեմա 2՝*** Հին Հայաստանի բնակչությունը: ***Թեմա 3՝*** Հին Հայաստանի գլխավոր ճանապարհնե-

րը և նրանց քաղաքական ու տնտեսական նշանակությունը: ***Թեմա 4՝*** Հին Հայաստանի տերիտորիալ և վարչական բաժանումը Ք.ա. 5-րդ դարից մինչև 1-ին դարը: ***Թեմա 5՝*** Հին Հայաստանի պատմաշխարհագրական նկարագիրը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

**0301/B16.** *«ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1–ին, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին տեղեկություններ հաղորդել Հին արևելյան քաղաքակրթությունների ձևավորման, զարգացման միտումների մասին: Տալ գիտելիքներ այդ քաղաքակրթությունների տիպաբանության, հին արևելյան հասարակությունների կառուցվածքի, գաղափարախոսության, կրոնի և մշակույթի վերաբերյալ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հին արևելյան խոշոր քաղաքակրթությունների տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի առանձնահատկությունները,
2. կկարողանա նրանց պատմության կոնկրետ փաստերն ու իրողությունները բացահայտել ընդհանուր տեսությունների, գաղափարների դիտանկյունից:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հին Արևելք հասկացությունը: ***Թեմա 2՝*** Հին Եգիպտոս: ***Թեմա 3՝*** Հին Միջագետք (Շումեր, Աքադ, Բաբելոն): ***Թեմա 4՝*** Հին Ասորեստան: ***Թեմա 5՝*** Պաղեստին: ***Թեմա 6՝*** Փյունիկիա: ***Թեմա 7՝*** Խեթական թագավորություն: ***Թեմա 8՝*** Հին Հնդկաստան: ***Թեմա 9՝*** Հին Չինաստան:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B17. *«ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 3 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *1–ին, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ պատկերացում ձևավորել նախնադարյան հասարակության զարգացման հիմնական էտապների մասին, գիտելիքներ տալ հոմինիդների ընտանիքի զարգացման և ժամանակակից մարդու ձևավորման գործընթացի մասին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անտրոպոգենեզի հիմնական էտապները, գիտելիքներ կունենա հոմինիդների բրածո ներկայացուցիչների, նրանց տարածման տիրույթների և աշխատանքային գործունեության մասին,
2. պատկերացում կունենա սոցիո -, կուլտուրո -, պոլիտեգենեզի հիմնական էտապների զարգացման տրամաբանության մասին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Նախնադարի պատմության առարկան, նշանակությունը, պարբերացումն ու ժամանակագրությունը: ***Թեմա 2՝*** Նախնադարի դարաշրջանի պատմական աղբյուրները: ***Թեմա 3՝*** Նախնադարի պատմության պատմագրությունը: Հին մարդկանց պատկերացումները ժողովուրդների մասին: Ազգաբանական դիտարկումները միջնադարում: Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և ազգաբանական գիտելիքների ընդլայնումը: Նախնադարյան հասարակության մասին գիտելիքների կուտակումը և դրանց ընդհանրացումները XIX դարում: ***Թեմա 4՝*** Նախնադարի հասարակության կազմավորումը. նախահամայնքի դարաշրջանը՝ մարդու ծագումը: Մարդագոյացման պրոցեսի շարժիչ ուժերը: Մարդու մերձավոր նախնիները և մարդացման գործընթացի տեղն ու ժամանակը: Հնագույն և հին հոմինինները: ***Թեմա 5՝*** Մարդկային հասարակության ծագումը՝ նախահամայնք: Սեռական հարաբերությունները նախահամայնքում: Մտածողության և խոսքի ծագման խնդիրը: Գաղափարական պատկերացումների սաղմերը: ***Թեմա 6՝*** Մարդագոյացման պրոցեսի ավարտը, ժամանակակից տեսակի մարդու հանդես գալը, ռասաների ծագումը, համայնատոհմական կարգերի առաջացումը: ***Թեմա 7՝*** Վաղ նախնադարյան համայնքը: Սեռատարիքային խմբերը վաղ նախնադարյան համայնքում, ինիցիացիա: Ամուսնությունը և ընտանիքը, իշխանության կազմակերպումը և հոգևոր մշակույթը վաղ նախնադարյան համայնքում: ***Թեմա 8՝*** Ուշ նախնադարյան համայնք: Արտադրող տնտեսության առաջացումը, բնակչությունը և նրա վերարտադրությունը: Սեռատարիքային կազմակերպություններ: Ամուսնությունը և ընտանիքը: Իշխանության կազմակերպումը և հոգևոր մշակույթը: ***Թեմա 9՝*** Դասակարգային հասարակության հաստատությունների հանդես գալը: Ստրկությունը և նրա

ձևերը: Մենամուսնական ընտանիք: Դրացիական համայնքի ձևավորումը: Հոգևոր մշակույթի զարգացումը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0302/B27.** *«ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ 2*–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ,
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկրերի պատմական-հասարակական դերը,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հայ մշակույթը մինչև 5-րդ դար: Մեսրոպ Մաշտոցը և գրերի ստեղծումը. գրականության զարգացման հիմնական ուղղությունները: ***Թեմա 2՝*** Պատմագրություն: ***Թեմա 3՝*** Հայ միջնադարյան գրականությունը: ***Թեմա 4՝*** Հայ նոր գրականությունը: ***Թեմա 5՝*** Հայ նորագույն գրականությունը: ***Թեմա 6՝*** Արդի հայ գրականությունը և նրա զարգացման միտումները:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

**0301 /B 70.** *«ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական 2 ժամ՝ *( 24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ 1-ին, *առանց եզրափակիչ գնահատման*

**Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել իրենց ապագա մասնագիտության առանձնահատկություններին, պատմական գիտության դերին և նշանակությանը, պատմական սկզբնաղբյուրների տիպերին և դրանց հետ աշխատելու սկզբունքներին, գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմունքներին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա պատմական գիտության զարգացման ընթացքը և առանձնահատկությունները,
2. կհասկանա պատմական գիտելիքների առաջացման, կուտակման և համակարգման ընթացքը,
3. կիմանա պատմագիտության խնդիրները, գիտելիքներ ձեռք կբերի պատմական սկզբնաղբյուրների տարբեր խմբերի հետ աշխատելու սկզբունքների մասին,
4. Կկարողանա ընդլայնելու և ստեղծագործաբար կիրառելու ունեցած գիտելիքները, պատմականությանը հարազատորեն վերլուծելու փաստեր և անաչառ հետևություններ անել, օգտվելու տարաբնույթ և տարալեզու սկբնաղբյուրներից, տիրապետելու դրանց մեկնաբանման առանձնիատկություններին, կատարելագործելու զեկուցում պատրաստելու ու գիտական բանավեճ վարելու մշակույթը:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Դասընթացի նպատակը և խնդիրները: **Թեմա 2**՝ Պատմություն հասկացության բազմանշանակությունը: Պատմության բաժանումը բնական պատմության և հումանիտար պատմության: **Թեմա 3**՝ Պատմական գիտությունների համակարգը: Հնագիտությունը, ազգագրությունը և ազգաբանությունը պատմական գիտությունների համակարգում: Հատուկ (օժանդակ) պատմական գիտակարգեր: **Թեմա 4**՝ Պատմական սկզբնաղբյուրների տիպերը և դրանց հետ աշխատելու առանձնահատկությունները: **Թեմա 5**՝ <<Պատմական փաստ>> հասկացությունը: **Թեմա 6**՝ Գրադարանները, դրանց տեղեկատվական ապարատը, թեմատիկ, հեղինակային, մամուլի և շարունակվող հրատարակությունների կատալոգները: **Թեմա 7**՝ Ինտերնետ, որոնման համակարգերը, պատմական գրականության գլխավոր կայքերը: **Թեմա 8**՝ Ուսանողներից պահանջվող գիտահետազոտական աշխատանքները: Կուրսային, շրջանավարտի ավարտական աշխատանք: **Թեմա 9**՝ Պատմագրության առաջացումը և հետագա զարգացումը Հին Արևելքում և Հին Հունաստանում և Հռոմում: **Թեմա 10**՝ Միջնադարյան պատմագրություն: **Թեմա 11**՝ Պատմագիտության առաջընթացը, զարգացման հիմնական միտումները, նշանավոր դեմքերը 18-20-րդ դարում: **Թեմա 12**՝ Պատմագիտական գլխավոր դպրոցները և ուղղությունները մեր օրերում:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

**0301/B10.** *«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»* **-2** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնավոր գիտելիքներ հաղորդել միջնադարում հայոց պետականության գլխավոր փուլերի, հայոց բանակի ու հայ զինվորականության դերի, հայ եկեղեցու և պետության փոխհարաբերությունների, զարգացած ավատատիրության և ուշ միջնադարյան դարաշրջանների առանձնահատկությունների վերաբերյալ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. հստակ պատկերացում կունենա հայոց միջնադարյան պետականության առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին.
2. կպատկերացնի հայ իրականության մեջ զարգացած ավատատիրական հարաբերությունների օրինաչափություններն ու առանձնահատկությունները.
3. ձեռք կբերի պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հայաստանի անկախության վերականգնումը, Բագրատունիների թագավորության հռչակումը և ամրապնդումը: ***Թեմա 2՝*** Բագրատունիների թագավորությունը խաղաղ զարգացման և տնտեսական վերելքի ժամանակաշրջանում: ***Թեմա 3՝*** Բագրատունիների թագավորության թուլացումն ու անկումը: ***Թեմա 4՝*** Հասարակական-տնտեսական հարաբերությունները և պետական կարգը 9-11-րդ դարերում, թոնդրակյան շարժումը և գյուղացիական ելույթները Հայաստանում 9-11-րդ դարերում: ***Թեմա 5՝*** Հայ ժողովրդի պայքարը սելջուկ-թուրքերի դեմ, Զաքարյանների իշխանությունը, տնտեսական կյանքը, հայկական իշխանական տները 13-րդ դ.-14-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 6՝*** Կիլիկյան Հայաստանը 11-14-րդ դարերում: ***Թեմա 7՝*** Հայկական մշակույթը 9-րդ դարում-14-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 8՝*** Հայաստանը 14-րդ դարի երկրորդ կեսին-17-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 9՝*** Հայկական մշակույթը 14-րդ դարի երկրորդ կեսին-17- րդ դարի առաջին կեսին:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B18.** *«ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՎ ՀՌՈՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)*
Շաբաթական՝ 6 ժամ *(64 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *2–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պրակտիկ և տեսական գիտելիքներ անտիկ քաղաքակրթությունների առանձնահատկությունների մասին: Ներկայացնել քաղաք-պետությունների (պոլիսի) ձևավորումը, դրանց առաջացման առանձնահատկությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հին հունական քաղաքակրթության կոնկրետ պատմության փաստերը, իրողությունները և կկարողանա դրանք շարադրել իբրև միասնական պատմություն՝ միկենյան կենտրոններից մինչև դեմոկրատական պոլիս.
2. կկարողանա ճշգրիտ որոշել քաղաքացիական հասարակության հիմնարար չափումները և տեսնել դրա հեռանկարները միջնադարյան պատմության մեջ.
3. կկարողանա հասկանալ անտիկ մշակույթի առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը համաշխարհային պատմության վրա:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Անտիկ ժամանակաշրջան հասկացությունը: Հին Հունաստանի պատմության սկզբնաղբյուրները և պատմագրությունը: ***Թեմա 2՝*** Էգեյան կամ Կրետո-միկենյան ժամանակաշրջան /Ք.ա. 3-2-րդ հազարամյակ/: ***Թեմա 3՝*** Հունաստանը նախապոլիսյան դարաշրջանում /Ք.ա. 11-9-րդ դդ./: ***Թեմա 4՝*** Հունաստանը արխայիկ դարաշրջանում /Ք.ա. 8-6-րդ դդ./: ***Թեմա 5՝*** Դասական Հունաստանը /Ք.ա. 5-4-րդ դդ./: ***Թեմա 6՝*** Հելլենիզմի շրջան /Ք.ա. 4-1-ին դդ./: ***Թեմա 7՝*** Հին Հռոմի պատմության սկզբնաղբյուրները և պատմագրությունը: ***Թեմա 8՝*** Հռոմեական Հանրապետություն: ***Թեմա 9՝*** Հռոմեական Հանրապետության անկումը: ***Թեմա 10՝*** Կայսրության առաջացումը Հռոմում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0302/B13.** *«ԳՐԱԲԱՐ»* -1 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(64 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *3– րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի հնչյունական և բառային իրողությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրաբարի հնչյունական, ուղղագրական, հնչյունափոխական և բառային հատկանիշները.
2. կհասկանա գրաբար տեքստերը.
3. կկարողանա կատարել գրաբարյան բնագրերի հնչյունաբանական, բառապաշարային, վերլուծություններ:

**Բովանդակություն.**

***Թեմա 1՝*** Գրաբարը՝ որպես հայերենի զարգացման շրջան. գրաբարի ընդհանուր առանձնահատկությունները: ***Թեմա 2՝*** Գրաբարի հնչյունական համակարգը. երկբարբառներ և եռաբարբառներ: ***Թեմա 3՝*** Գրաբարի դերբայները: ***Թեմա 4՝*** Գրաբարի խոնարհման համակարգը. սահմանական, ստորադասական և հրամայական եղանակները: ***Թեմա 5՝*** Գրաբարի անկանոն բայերը: ***Թեմա 6՝*** Գրաբարի պակասավոր բայերը: Պատճառական բայեր. գրաբարի բաղադրյալ ժամանակները:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր կարճ հարցում (թեսթ): Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Գրավոր կարճ հարցում (թեսթ): Միավորների քայլը 0.5 է:

**0301/B24.** *«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»* -1 *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *2–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է գիտա-ճանաչողական գործընթացի միջոցով ուսանողներին քաջատեղյակ դարձնել Ռուսաստանի պատմության պատմական անցյալին:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. լիարժեք տեսական գիտելիքներ կունենա նշված ժամանակաշրջանի Ռուսաստանի պատմության մասին.
2. կհասկանա Ռուսաստանի խաղացած դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, ճիշտ պատկերացում կունենա ներկա զարգացումների մասին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Սլավոնական ցեղերից Արևելյան սլավոնների աշխարհագրական առանձնացումը: Ռյուրիկովյան դինաստիան և հին ռուսական Ռյուրիկյան պետություն՝ Կիևյան Ռուսիայի կազմավորումը: ***Թեմա 2՝*** Ռուս-բյուզանդական առաջին պայմանագիրը: Դրևլյանների ապստամբությունը և Օլգայի բարեփոխումները: Սվյատոսլավ մարտիկ-իշխանը և բալկանյան քաղաքականությունը: Կիևյան Ռուսիայի պետական կառուցվածքը: ***Թեմա 3՝*** Վլադիմիրը որպես մեծ իշխան. քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն: ***Թեմա 4՝*** Յարոսլավ Իմաստունի ժամանակաշրջանը (1019-1054թթ.): ***Թեմա 5՝*** Վլադիմիր Մոնոմախ (1113-1125թթ.): ***Թեմա 6՝*** Կիևյան Ռուսիայի քաղաքական մասնատումը: ***Թեմա 7՝*** Կիևյան Ռուսիայի կուլտուրան X – XIII դդ.: ***Թեմա 8՝*** Ռուսիան թաթար-մոնղոլական լծի տակ և դրա հետևանքները: ***Թեմա 9՝*** Հյուսիս-Արևելյան Ռուսիայի վերածնունդը և Մոսկովյան իշխանության ուժեղացումը (Իվան Կալիտա. 1325-1344թթ., Դմիտրի Դոնսկոյ. 1359-1389թթ., Վասիլի I. 1389-1425թթ., Վասիլի II. 1425-1462թթ.): ***Թեմա 10՝*** Իվան III. 1462-1505թթ.: Թաթար-մոնղոլական լծի թոթափումը և ռուսական կենտրոնացված պետության կազմավորումը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B25. *«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»* -2** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ,առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է գիտա-ճանաչողական գործընթացի միջոցով ուսանողներին քաջատեղյակ դարձնել Ռուսաստանի պատմության պատմական անցյալին:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. լիարժեք տեսական գիտելիքներ կունենա նշված ժամանակաշրջանի Ռուսաստանի պատմության մասին.

2. կհասկանա Ռուսաստանի խաղացած դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում.
3. հստակ պատկերացում կկունենա ներկա զարգացումների մասին, կկարողանա կատարել ճիշտ հետևություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Իվան IV-ի (Ահեղի) գահակալությունը և բարեփոխումները: Արտաքին քաղաքականությունը: ***Թեմա 2՝*** Ռյուրիկովյան դինաստիայի ընդհատումը և Բորիս Գոդունովի ներքին և արտաքին քաղաքականությունը: Խռովության և խառնակության շրջանը: Գյուղացիության ճորտացումը: Ռոմանովյան դինաստիայի գահակալումը: Ուկրաինայի միացումը Ռուսաստանին: ***Թեմա 3՝*** Պյոտր Մեծի ժամանակաշրջանը. 1689-1725թթ.: ***Թեմա 4՝*** Ռուսաստանը Եկատերինա Մեծի գահակալության շրջանում. 1762-1796թթ.: ***Թեմա 5՝*** Ալեքսանդր I. 1801-1825թթ.: 1812թ. հայրենական պատերազմը: ***Թեմա 6՝*** Դեկաբրիստների ապստամբությունը: ***Թեմա 7՝*** Ղրիմի պատերազմը և ճորտատիրական իրավունքի վերացումը: ***Թեմա 8՝*** Հետռեֆորմյան շրջանի բուրժուական բարեփոխումները:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր կարճ հարցում (թեսթ): Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Գրավոր կարճ հարցում (թեսթ): Միավորների քայլը 0.5 է:

**0301/B11.** *«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»* **-3***(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ,, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնավոր գիտելիքներ հաղորդել 17-րդ դարի կեսերից մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն ընդգրկող ժամանակաշրջանի հայոց պատմության առանձնահատկությունների, հայ ազգային-ազատագրական պայքարի, ինչպես նաև Հայաստանի հասարակական-տնտեսական ու մշակութային կյանքի վերաբերյալ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձեռք կբերի ազատագրական պայքարի, Հայկական հարցի առաջացման և բովանդակության, Հայաստանում ռուսական տիրապետություն հաստատելու վերաբերյալ.
2. ձեռք կբերի պատմական փաստերը համադրելու և ինքնուրույն վերլուծության ենթարկելու որոշակի հմտություն, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հայկական հարցի առաջացումը, բովանդակությունը: ***Թեմա 2՝*** Ազատագրական պայքարը (17-րդ դարի 2-րդ կես-18-րդ դարի առաջին կես): ***Թեմա 3՝*** Հայ ազատագրական շարժումները (18-րդ դարի երկրորդ կեսին): ***Թեմա 4՝*** Հայաստանի սոցիալ- տնտեսական կացությունը (17-րդ դարի կես-19-րդ դարի սկիզբ): ***Թեմա 5՝*** Ռուսաստանի տիրապետությունը Արևելյան Հայաստանում: ***Թեմա 6՝*** Հայաստանը 1830-60-ական թթ.: ***Թեմա 7՝*** Հայ հասարակական-քաղաքական միտքը և ազատագրական շարժումները: ***Թեմա 8՝*** Հայկական մշակույթը (17-րդ դարի երկրորդ կես-19-րդ դարի առաջին կես): ***Թեմա 9՝*** Հայկական գաղթավայրերը (17-րդ դարի երկրորդ կես-19-րդ դարի առաջին կես):

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0302/B15.** *«ԳՐԱԲԱՐ»* **-2** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(64 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի ձևաբանական և շարահյուսական իրողությունները:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրաբարի ձևաբանական և շարահյուսական հատկանիշները.
2. կհասկանա գրաբար տեքստերը.
3. կկարողանա կատարել գրաբարյան բնագրերի ձևաբանական և շարահյուսական վերլուծություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Գրաբարի անվանական հոլովումը: ***Թեմա 2՝*** Գրաբարի դերանվանական հոլովումը: Անձնական դերանունները և նրանց հոլովումը: ***Թեմա 3՝*** Ցուցական դերանունները և նրանց հոլովումը: ***Թեմա 4՝*** Ստացական և փոխադարձ դերանուններ: Հարցահարաբերական և անորոշ դերանուններ: Որոշյալ դերանուններ: ***Թեմա 5՝*** Ածական անուն. ածականների համեմատության աստիճանների կազմությունը: ***Թեմա 6՝*** Թվականը գրաբարում: ***Թեմա 7՝*** Գրաբարի նախդիրները և նախադրությունները: Գրաբարի հոդերը: Գրաբարի շաղկապները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B19.** *«ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»* -1 *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 3 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ձևավորել գիտելիքների համակարգ միջնադարի վերաբերյալ: Ցույց տալ անցումը դեպի միջնադար, ձևավորել միջնադարի հիմնարար առանձնահատկությունները՝ ֆեոդալական հասարակության գաղափարաբանությունը, մշակույթը: Ներկայացնել եվրոպական միջնադարյան հասարակությունների պատմությունը և տիպաբանությունը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա ճշգրիտ գիտելիքներ միջնադարյան հասարակության կառուցվածքի վերաբերյալ, կկարողանա համեմատել Եվրոպայի, Մերձավոր Արևելքի ֆեոդալական հասարակարգի զարգացման միտումները.
2. կկարողանա բացահայտել միջնադարյան քաղաքակրթության բովանդակությունը.
3. կկարողանա հասկանալ հասարակական կյանքի վրա համաշխարհային կրոնների՝ քրիստոնեության, իսլամի, բուդդայականության ազդեցությունը,
4. կկարողանա հասկանալ ժամանակակից ազգությունների և պետությունների ծագումն ու զարգացման տենդեցները.
5. կհասկանա հասարակական, մշակութային, քաղաքական ոլորտներում դեր ունեցած բարեփոխական–ռեֆորմիստական և հեղափոխական իրողությունները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ Միջին դարերի պարբերացումը և աղբյուրները: ***Թեմա 2***՝ Հռոմեական ստրկատիրական հասարակարգի ճգնաժամն ու փլուզումը: ***Թեմա 3***՝ Արևմտյան Հռոմեական կայսրության անկումը և բարբարոսական թագավորությունների կազմավորումը: ***Թեմա 4***՝ Մերովինգների ֆրանկական պետությունը: ***Թեմա 5***՝ Կարոլինգների ֆրանկական միապետությունը: ***Թեմա 6***՝ Բյուզանդիան 6-11-րդ դդ.: ***Թեմա 7***՝ Ֆեոդալիզմը Արևմտյան Եվրոպայում 9-11-րդ դդ.: ***Թեմա 8***՝ Խաչակրաց արշավանքները: ***Թեմա 9***՝ Ֆրանսիան 11-15-րդ դդ.: ***Թեմա 10***՝ Անգլիան 11-14-րդ դդ.: ***Թեմա 11***՝ Բյուզանդիան 14-15-րդ դդ.:

*Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B30.** *«ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 5ժամ *(56 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մեջ ձևավորել բազային գիտելիքներ հնագիտության դիսցիպլինի տեսության, տերմինաբանության, կարևորագույն հնագիտական մշակույթների և քաղաքակրթությունների ու մշակույթի հաջորդական զարգացման փուլերի և առանձնահատկությունների մասին: Տալ գիտելիքներ Հայաստանի հնագիտության կարևորագույն հնագիտական մշակույթների, փուլաբաժանումների և այլնի վերաբերյալ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի հնագիտության տեսության խնդրացանկը,
2. կընկալի հնագիտական պեղումների, պարբերացման և պատմա-մշակութային գործընթացների տրամաբանությունը,
3. կկարողանա կատարել վերլուծական բնույթի պատմա-հնագիտական աշխատանք, պատրաստ կլինի գիտելիքները կիրառել գործնականում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հնագիտություն առարկան, խնդիրները, տեղը պատմական գիտությունների համակարգում: Մշակույթի նյութական մնացորդները՝ որպես պատմականորեն ձևավորված համակարգ: ***Թեմա 2՝*** Հնագիտության փորձարարական հնարավորությունները և պատմական արժեքը: Միջավայր և մշակույթ, արտիֆակտ և էկոֆակտ: ***Թեմա 3՝*** Հնագիտական ուսումնասիրության աստիճանները: Հնագիտական հուշարձանների տեսականին: ***Թեմա 4՝*** Հայաստանի պատմության և մշակույթի պատմա-հնագիտական պարբերացումը: ***Թեմա 5՝*** Արտադրող տնտեսության ձևավորումը Հայկական լեռնաշխարհում և Մերձավոր Արևելքում: Կոմպլեքսային հասարակության կառուցվածքն ու գործունեության ոլորտները: ***Թեմա 6՝*** Հայաստանում վաղ դասակարգային հասարակության հնագիտական ուսումնասիրության նախնական արդյունքները: Հնագույն պետականության սաղմնավորումն ըստ Հայաստանի հնագիտության:***Թեմա 7՝*** Տավուշի մարզի հնագիտական հուշարձանները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B12.** *«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»* -4 *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել Հայոց պատմության նոր ժամանակաշրջանի՝ 1877-1878 թ. ռուս-թուրքական պատերազմից մինչև 1918թ. Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանն ընդգրկող հիմնախնդիրները, որը հնարավորություն կտա ձևավորել հայոց նոր պատմության իմացություն՝ բազմաթիվ նորահայտ նյութերի ներկայացման և մեկնաբանման միջոցով:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ներկայացվող ժամանակաշրջանի նոր պատմության հիմնախնդիրները,
2. ձեռք կբերի պատմական փաստերը համադրելու և ինքնուրույն վերլուծության ենթարկելու որոշակի հմտություն, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցի միջազգայնացումը: ***Թեմա 2՝*** Բեռլինի կոնգրեսի պատմական դասերը: ***Թեմա 3՝*** Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: ***Թեմա 4՝*** Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: ***Թեմա 5՝*** Արևմտահայերի ցեղասպանության թուրքական ծրագրի կենսագործման սկիզբը: ***Թեմա 6՝*** Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: ***Թեմա 7՝*** Հայկական հարցը և մեծ տերությունները 1890-ական թթ.: ***Թեմա 8՝*** Հայաստանը 20-դ դարի սկզբին. Հայոց Մեծ Եղեռնը: ***Թեմա 9՝*** Հայաստանը 1917թ. փետրվարյան հեղափոխության շրջանում: ***Թեմա 10՝*** Հոկտեմբերյան հեղափոխությունը և Հայաստանը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B20.** ***«ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** **-2** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է բացահայտել միջնադարյան առևտրատնտեսական բաղկացուցչի և կապիտալի համաշխարհային ընդլայնման գործընթացը: Ներկայացնել Եվրոպայում (Գերմանիա, Շվեյցարիա) հումանիստական և ռեֆորմիստական շարժումների զարգացումը և ընթացքը, դրանց ազդեցությունը հասարակական-քաղաքական պատմության վրա: Նշել վերածննդի օրինաչափությունները, վերածննդի իրողությունները և աշխարհի պատկերի ընդլայնման իրողությունը: Ներկայացնել առաջին բուրժուական հեղափոխությունը Եվրո-պայում (Նիդեռլանդներ) և նրա նշանակությունը: Ներկայացնել համաեվրոպական առաջին խոշոր հակամարտությունը (Երեսնամյա պատերազմ) և միջազգային հարաբերությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա վերածննդի արմատական փոփոխությունների քաղաքա-կրթական բովանդակությունը, քաղաքային կյանքը, աշխարհիկ գիտելիքները, ռեֆորմացիան.
2. կհասկանա նոր աշխարհընկալման ընդլայնումը.
3. կհասկանա նիդեռլանդական բուրժուական հեղափոխության նշանակությունը Եվրոպայում բուրժուա-դեմոկրատական կարգերի ձևավորման առումով.
4. կհասկանա միջազգային իրավիճակի սրումը Եվրոպայում, հակասությունների հետևանքները ուշ միջնադարում.
5. կկարողանա ցույց տալ միջնադարյան քաղաքակրթության աստիճանական քայքայումը և անցումը դեպի նոր արդյունաբերական հասարակության:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Կապիտալիստական հարաբերությունների առաջացումը Արևմտյան Եվրոպայի երկրներում: ***Թեմա 2՝*** Աշխարհագրական մեծ հայտնագործությունները 15-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին: ***Թեմա 3՝*** Գերմանիան 16-17-րդ դդ.: ***Թեմա 4՝*** Ռեֆորմացիան Շվեյցարիայում: Հակառեֆորմացիան Եվրոպայում: ***Թեմա 5՝*** Իսպանիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 6՝*** Նիդեռլանդական հեղափոխությունը: ***Թեմա 7՝*** Իտալիան 16-րդ դարում

և 17-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 8***՝ Անգլիան 16-րդ դարում: ***Թեմա 9***՝ Ֆրանսիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 10***՝ Սկանդինավիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 11***՝ Միջազգային հարաբերությունները 17-րդ դարի առաջին կեսին: Երեսնամյա պատերազմը (1618-1648թթ.):

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B31.** ***«ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ներկայացնել գիտության ուսումնասիրության օբյեկտը, առարկան, հիմնախնդիրները, աշխարհի ժողովուրդների էթնիկական, մարդաբանական, դավաբանական, էթնոլեզվական, աշխարհագրական, տնտեսամշակութային բնութագիրը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կծանոթանա աշխարհի ժողովուրդների էթնիկ գործընթացների, էթնոլեզվաբանական պատկանելիությանը, մարդաբանական, դավանաբանական, էթնոմշակութային հատկանիշներին:
2. Աշխարհի ժողովուրդների տեղին ու դերին, նրանց տարածքային , էթնիկական, լեզվական, մարդաբանական, դավանաբանական բնութագրություններին, էթնոմերձեցման և էթնոձուլման, էթնոանջատման գործընթացներին:

**Բովանդակություն.**

***Թեմա 1***՝ Ազգագրություն առարկան, նպատակը, խնդիրները, ուսումնասիրության կարևորությունը: ***Թեմա 2***՝ Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Գիտության հիմնական հասկացությունները /էթնիկ հանրություն, պատմական տիպերը (ցեղ, ժողովուրդ, ազգ), կառուցվածքային առումները/: «Մշակույթ» հասկացությունը, կառուցվածքը, քառամաս բաժանումը: «Կենցաղ» հասկացությունը, կառուցվածքը/: ***Թեմա 3***՝ Գիտության ուսումնասիրության հիմնախնդիրները: Ազգագրական գիտության կապը հարակից գիտությունների հետ: Ուսումնասիրության մեթոդները: ***Թեմա 4***՝ Աշխարհի բնակչության էթնոլեզվական դասակարգման սկզբունքները. /հնդեվրոպական լեզվաընտանիք սլավոնական, գերմանական, կելտական, ռոմանական, բալթյան, իրանական,

հնդիրանական: Մեկուսի ժողովուրդներ/: Աֆրոասիական/ սեմաքամական, ալթայան /թյուրքական, մոնղոլական, տունգուս-մանջուրական, կորեա-ճապոնական/, կովկասյան /աբխազա-ադաղական, վայնախա-դաղստանյան, քարթվելական/, ֆիննա-ուգրական, չին –տիբեթյան, ավստրոնեզական, պապուասական, թայական, ավստրոասիական, հնեասիական, էսկիմոսա-ալեության ավստրալական, նիգերկորդոֆանյան էթնոլեզվաընտանիքներ: ***Թեմա 5՝*** Աշխարհի ժողովուրդների մարդաբանական բնութագիրը /եվրոպոիդ, մոնղոլոիդ, նեգրոիդ, ավստրոլոիդ, խառը, մեկուսի/ ռասաներ: ***Թեմա 6՝*** Աշխարհի ժողովուրդների աշխարհագրական դասակարգումը: ***Թեմա 7՝*** Աշխարհի ժողովուրդների էթնոմշակութային և դավանաբանական դասակարգումը: Աշխարհի ժողովուրդների դավանաբանական քարտեզը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B26.** ***«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** **-3** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել Ռուսաստանի պատմության 19-րդ դ. ավարտի և 20-րդ դ. սկզբի, մինչև 1917թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության ժամանակաշրջանն ընդգրկող պատմական կարևոր իրադարձությունների մասին համապատասխան գիտելիքներ, տալ պատշաճ մասնագիտական պատկերացում:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-րդ դ. ավարտի և 20-րդ դ. սկզբի Ռուսաստանի պատմության տեսական խնդրացանկը.
2. կհասկանա Ռուսաստանի պատմության տվյալ ժամանակաշրջանի վերլուծական մեթոդի տրամաբանությունը.
3. կկարողանա յուրաքանչյուր թեմայի վերլուծության հիման վրա անել տեսական ընդհանրացումներ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հեղափոխական նարոդնիկությունը: Ալեքսանդր III-ը (1881-1894թթ.) և ռեակցիայի մոլեգնումը: ***Թեմա 2՝*** Ռուսաստանի տնտեսական և քա-

ղաքական դեմքը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին. Սերգեյ Վիտտե: 1897-ի մարդահամարը: ***Թեմա 3՝*** Մարքսիզմի տարածումը Ռուսաստանում: Քաղաքա-կան կուսակցությունների կազմավորումը: Ռուս-ճապոնական պատերազմը: ***Թեմա 4՝*** Ռուսական առաջին հեղափոխությունը: 1-ին, 2-րդ և 3-րդ Պետական Դումաները: ***Թեմա 5՝*** Ստոլիպինի ագրարային ռեֆորմը: ***Թեմա 6՝*** Ռուսաստանի արտաքին և ներքին քաղաքականությունը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: Ռասպուտին: ***Թեմա 7՝*** Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը Ռուսաստանում: Նիկոլայ II-ի հրաժարականը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B13.** *«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»* **-5** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 5 ժամ *(56 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակողմանի և ամբողջական գիտելիքներ Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքական, տնտեսական և մշակութային հիմնախնդիրների վերաբերյալ, ինչպես նաև պարզաբանել պատմագիտության մեջ գոյություն ունեցող իրարամերժ խնդիրները, ներկայացնել նորահայտ նյութերը և այլն:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձեռք կբերի Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնախնդիրների վերաբերյալ.
2. կկարողանա կատարել ճիշտ վերլուծություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ներածական դասախոսություն. Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.: ***Թեմա 2՝*** Անկախ պետականության ստեղծումը: ***Թեմա 3՝*** Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը: ***Թեմա 4՝*** Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը: ***Թեմա 5՝*** Հայկական հարցը 1919-1920թթ.: ***Թեմա 6՝*** Հայաստանի Հանրապետության անկումը: ***Թեմա 7՝*** Հայկական մշակույթը 1918-1920թթ. :

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B34.** ***«ԹԱՆԳԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԽԻՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»***

*(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *6-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողին հաղորդել տեսական գիտելիքներ թանգարանագիտության վերաբերյալ, ներկայացնել թանգարանագիտությունը որպես գիտություն, դրա ուսումնասիրության առարկան և օբյեկտը, թանգարանագիտական հիմնական հասակացությունները, թանգարանագիտության կապը և տեղը մյուս գիտությունների համակարգում: Ուսանողին ամբողջական գիտելիքներ է տրվում արխիվների, արխիվային գործի, արխիվային գործառույթների և արխիվային վավերագրերը մշակելու և օգտագործելու վերաբերյալ:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա թանգարանների ստեղծման պատմությունը և կծանոթանա թանգարանների կառուցվածքին,
2. կճանաչի ու նորովի կգնահատի մշակութային արժեքներն ու թանգարանների դերը դրանց պահպանման և սերունդներին փոխանցելու գործում,
3. ամբողջական գիտելիքներ կստանա արխիվային գործի սկզբնավորման, զարգացման և առաջիկա հեռանկարների վերաբերյալ,
4. կկարողանա մշակել վավերագրերը և օգտագործել իր գիտական հետազոտություններում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Թանգարանների ծագման պատմությունից: ***Թեմա 2՝*** Հայաստանի թանգարանների պատմությունից: ***Թեմա 3՝*** Թանգարանագիտությունը որպես գիտություն, ուսումնասիրության առարկան, օբյեկտը: ***Թեմա 4՝*** Թանգարանագիտական հիմանական հասկացությունները: ***Թեմա 5՝*** Թանգարանագիտության մեթոդը, կառուցվածքը, տեղը մյուս գիտությունների համակարգում: ***Թեմա 6՝*** Թանգարանների հիմնական սոցիալական խնդիրները: ***Թեմա 7՝*** Թանգարանային ֆոնդեր: ***Թեմա 8՝*** Թանգարանների կառավարում և մարքեթինգ: ***Թեմա 9՝*** Թանգարանների դասակարգումը ըստ տիպերի: ***Թեմա 10՝*** Ցուցադրություն, ցուցահանդես: ***Թեմա 11՝*** Ցուցադրության տեքստեր: ***Թեմա 12՝*** Թանգարանի հանրահռչակում, ինֆորմացիա և գովազդ: ***Թեմա 13՝*** ԻԿՈՄ-ի պատմությունը, թանգարանների բարեկամների ասոցիացիա: ***Թեմա 14՝*** Նոր ինֆորմացիոն տեխնոլո-

գիաների կիրառումը թանգարաններում: ***Թեմա 15՝*** Ներածական դասախոսություն: ***Թեմա 16՝*** Հին Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: ***Թեմա 17՝*** Վաղ միջնադարյան Հայաստանի սկզբնաղբյուրները: ***Թեմա 18՝*** Հայաստանի զարգացած միջնադարի սկզբնաղբյուրները: ***Թեմա 19՝*** Հայաստանի ուշ միջնադարի պատմության սկզբնաղբյուրները: ***Թեմա 20՝*** Հայոց նոր պատմության սկզբնաղբյուրները: ***Թեմա 21՝*** Հայոց նորագույն պատմության սկզբնաղբյուրները:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (ռեֆերատ): Միավորների քայլը 1 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

**0303/B04.** *«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդու հոգեկան երևույթների առանցքային օրինաչափություններին ու մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել իրենց ապագա մասնագիտական իրացման մեջ հոգեբանական գիտելիքների կիրառմանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեբանության ընդհանուր դրույթները, հոգեկան գործընթացների և վիճակների առանձնահատկությունները և ձևավորման հիմնական օրինաչափությունները,
2. կկարողանա կիրառել հոգեբանական իմացությունը մասնագիտական և մանկավարժական գործունեության մեջ, ինչպես նաև հասարակական կյանքում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հոգեբանության առարկան, խնդիրները, ոլորտները: Հասկացություն հոգեկանի մասին: Հոգեկանի կառուցվածքը և ֆունկցիաները: ***Թեմա 2՝*** Պերցեպտիվ պրոցեսների հոգեբանություն: ***Թեմա 3՝*** Կոգնիտիվ պրոցեսների հոգեբանություն: ***Թեմա 4՝*** Անձ, անհատ, անհատականություն հասկացությունները հոգեբանության մեջ: Խառնվածք, բնավորություն, ընդունակություններ: ***Թեմա 5՝*** Սոցիալական խմբեր: Առաջնորդություն: Շփում, հաղորդակցում: ***Թեմա 6՝*** Մանկավարժական և տարիքային հոգեբանության առարկան և խնդիրները: Տարիքային պարբերացում և ճգնաժամեր: Կրթության և դաստիարակության հոգեբանական առանձնահատկությունները:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում (թեսթ): Միավորների քայլը 0.5 է:

0301/B21. *«ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»* -1 *(6 կրեդիտ)*

Շաբաթական՝ 5 ժամ *(56 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է եվրոպական առաջատար երկրների պատմության մեկնությամբ ներկայացնել 17-ից 19-րդ դարերում արևմտյան աշխարհում լուսավորական գաղափարների ազդեցությամբ ընթացող սոցիալական, քաղաքական, մշակութային, տնտեսական նորացման գործընթացներին: Կքննարկվեն Վեսթֆալյան համակարգի ձևավորումը, առանձնահատկությունները և դերակատարները, քաղաքական-պետական միավորների տարատեսակները, ազգ-պետությունների ձևավորումն ու արդիականացման միտումները, բնութագրիչները, պետության գործառույթները և իշխանության իրականացման ոլորտները, ռազմական համակարգերի տարատեսակներն ու կազմակերպման փոփոխությունները, քաղաքական համակարգերի փոփոխման ձևերը, նոր ձևավորվող միջազգային հարաբերությունների համակարգում ուժերի հարաբերակցությունը, կոնֆլիկտների տարատեսակները, համագործակցության շրջանակներն ու մեխանիզմները:

***Կրթական արդյունքները***.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կըմբռնի արդիական պետության ձևավորման համատեքստը, ֆեոդալական հաստատություններից դեպի ներկայացուցչական հաստատություններ անցումը, հասարակության քաղաքական պասիվությունից անցումը դեպի ակտիվ մասնակցային նոր ձևերի և նորացման գործընթացի ծավալումը
2. կկարողանա ավելի խորը և համապարփակ ընկալել ու վերլուծել պատմական գործընթացները
3. կկարողանա արևմտյան պատմության հենքի վրա ըմբռնել արդի համաշխարհային քաղաքականության համատեքստում տեղի ունեցող քաղաքական և հասարակական փոփոխությունների տրամաբանությունը:

**Բովանդակություն.**

***Թեմա 1՝*** Վեսթֆալյան համակարգի ձևավորումը: ***Թեմա 2՝*** Անգլիայում միապետական հաստատության առանձնահատկությունները: ***Թեմա 3՝*** Սոցիալական շերտերը, քաղաքական մշակույթի առանձնահատկությունները, պետական կառավարման վերափոխումները: ***Թեմա 4՝*** Ֆրանսիական հասարակության սոցիալական կառուցվածքը և պետական կարգը: Հեղափոխություն տերմի-

նի ձևակերպումը, պետական-հասարակական ճգնաժամի խորացումը, հեղափոխական կառավարման համակարգը: ***Թեմա 5՝*** Բոնապարտի վարչակարգը, արտաքին քաղաքականությունը և պատերազմները, հետպատերազմյան կարգավորումները Եվրոպայում: ***Թեմա 6՝*** Բուրբոնների վերականգնումը, Հուլիսյան միապետությունը, Երկրորդ կայսրությունը: ***Թեմա 7՝*** ԱՄՆ-ի տարածքում գաղութների ձևավորումը և դրանց անկախացումը, ԱՄՆ-ում քաղաքական համակարգի ձևավորումը, դաշնային և նահանգային լիազորությունների սահմանազատման հիմնահարցերը: ***Թեմա 8՝*** Ավստրիական Հաբսբուրգների արտաքին քաղաքական առաջնայնությունները, Մարիա-Թերեզայի և Հովսեփ II-ի արդիականացման գործընթացը, կայսրության տնտեսական համապատկերը: ***Թեմա 9՝*** Ավստրո-հունգարական դուալիզմի ձևավորումը: ***Թեմա 10՝*** Պրուսիան և Գերմանիայի միավորումը: ***Թեմա 11՝*** Իտալիայի պետական-քաղաքական միավորները և միավորման գործընթացները, միավորված Իտալիայի պետական-քաղաքական կառուցվածքը: ***Թեմա 12՝*** Իսպանական կայսրության թուլացման ներքին պատճառներն ու աշխարհաքաղաքական իրողությունները: ***Թեմա 13՝*** Քաղաքական, սոցիալական, տնտեսական իրողություններն Իսպանիայում մինչ XIX դարի ութսունական թվականները: ***Թեմա 14՝*** Լեհաստանի պետական-քաղաքական կառուցվածքը, սոցիալ-տնտեսական իրողությունները, պետության թուլացման ներքին պատճառներն ու արտաքին քաղաքական միջավայրի փոփոխությունները, Լեհաստանի մասնատումները, լեհերի ազգային-քաղաքական կառույցներն ու ազատագրական պայքարը XIX դարում: ***Թեմա 15՝*** Արդյունաբերական հեղափոխության առաջնային ոլորտները, ֆինանսավորման աղբյուրները, քաղաքական վերնախավերի և սոցիալական շերտերի շահերը, մասնակցությունն ու շարժառիթները, ժողովրդագրական հիմնախնդիրները, գրագիտությունը, հանրային առողջապահությունը, գյուղատնտեսությունը, քաղաքային միջավայրի փոփոխությունները, հարկադրանքի և կապիտալի համահարաբերակցության մոդելները Եվրոպայում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B27.** ***«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** - 4 *(5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է գիտա-ճանաչողական գործընթացի միջոցով ուսանողներին քաջատեղյակ դարձնել Ռուսաստանի պատմության պատմական անցյալին:

*Կրթական արդյունքները.*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. լիարժեք տեսական գիտելիքներ կունենա նշված ժամանակաշրջանի Ռուսաստանի պատմության մասին.
2. կհասկանա Ռուսաստանի խաղացած դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում.
3. հստակ պատկերացում կկազմի ներկա զարգացումների մասին, կկարողանա կատարել ճիշտ հետևություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** 1917-ի հոկտեմբերը և բոլշևիկների ռազմական հեղաշրջումը: Ժամանակավոր կառավարության ձերբակալումը: Խորհուրդների համառուսաստանյան II համագումարը և ընդունած հիմնարար որոշումը: Կենտգործկոմի և միակուսակցական բոլշևիկյան կառավարության կազմավորումը: ***Թեմա 2՝*** Հոկտեմբերյան հեղափոխության քաղաքական հետևանքները: ***Թեմա 3՝*** Խորհրդային իշխանության առաջին դեկրետները: Կառավարման նոր պետական ապարատի կազմավորումը: ***Թեմա 4՝*** Խորհրդային իշխանության հակադեմոկրատական բնույթը: Ա. Խորհուրդների համառուսաստանյան II համագումարի կողմից իշխանությունը խորհուրդներին հանձնելու որոշման դեմ բողոքը: Բ. Սահմանադիր ժողովի հրավիրումը և ցրումը: ***Թեմա 5՝*** Խորհրդային իշխանության արտաքին քաղաքականությունը և Բրեստ-Լիտովսկի խաղաղության պայմանագիրը: ***Թեմա 6՝*** Ռազմական կոմունիզմ-կոմկուսի 8-րդ համագումարի որոշումները: Ռազմական կոմունիզմը գյուղում և քաղաքում: ***Թեմա 7՝*** Սպիտակ շարժում. կամավորական բանակի կազմավորումը: ***Թեմա 8՝*** Քաղաքացիական պատերազմը: ***Թեմա 9՝*** Ռազմական կոմունիզմից-նոր տնտեսական քաղաքականությունը՝ ՆԷՊ: Կրոնշտադի ապստամբությունը: Կոմկուսի 10-րդ համագումարը և որոշումները: ՆԷՊ-ը գյուղում և քաղաքում: ***Թեմա 10՝*** Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը և միջազգային մեկուսացման հաղթահարումը: Անդրֆեդերացիայի ստեղծումը և ԽՍՀՄ-ի կազմավորումը: ***Թեմա 11՝*** Ներկուսակցական նոմենկլատուրա: Տրոցկին և «46-ի պլատֆորմը»: Նոր կուրս: Լենինգրադյան ընդդիմությունը և նրա ջարդը: ***Թեմա 12՝*** Ինդուստրացում և կոլեկտիվացում: ***Թեմա 13՝*** «Դասակարգային պատերազմի» տեսությունը և բռնությունների ալիքը: ***Թեմա 14՝*** Խորհրդա-գերմանական պայմանագրերը: Խորհրդա-ֆիննական պատերազմը: ***Թեմա 15՝*** Խորհրդային Միության հայրենական մեծ պատերազմը: ԽՍՀՄ-ի մասնակցությունը Ճապոնիայի դեմ պատերազմին: ***Թեմա 16՝*** «Մեծ եռյակի» հանդիպումները: ***Թեմա 17՝*** Երկու հակադիր սիստեմները և «Սառը պատերազմը»: ***Թեմա 18՝*** Կյանքը պատերազմից հետո, սպասումներ և իրականություն: ***Թեմա 19՝*** Ստալինի մահը: Իրադրությունը առանց Ստալինի: Կոմկուսի 20-րդ համագումարը և «քաղաքական հալոցքը»: ***Թեմա 20՝*** Միխայիլ Գորբաչովի քաղաքականություն և անկախության հաղթարշավը: Ռուսաստանյան ֆեդերացիայի անկախացումը: ***Թեմա 21՝*** Նոր Օգարյովի համաձայնագիրը:

Արտակարգ դրության պետական կոմիտեն և Անկախ պետությունների համագործակցությունը: ***Թեմա 22՝*** Անկախ Ռուսաստանի 1993թ. Սահմանադրությունը: Ռուսատանի վարչական կառուցվածքը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B50.** ***«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»***

*(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողին համաշխարհային պատմության ուսումնասիրության աղբյուրագիտական հենքի հետ, ցույց տալ աղբյուրների բովանդակությունը և կառուցվածքի առանձնահատկությունները պատմական տարբեր դարաշրջաններում, բացահայտել փաստերից օգտվելու և պատմականորեն շարադրելու ճիշտ մեթոդները:

***Կրթական արդյունքները***.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Սկզբնաղբյուրների բովանդակային և կառուցվածքային առանձնահատկությունների, ինչպես նաև փաստերից օգտվելու և կիրարկելու մասին:
2. կողմնորոշվել համաշխարհային պատմության աղբյուրների տիպաբանության մեջ (արձանագրություններ, տարեգրություններ, հուշագրություններ, պատմագիտական աշխատություններ, կինոֆիլմեր),
3. բացահայտել նրանց արժանահավատության մակարդակը և օգտագործել իր պատմական ուսումնասիրություններում և հետազոտություններում,
4. վերլուծել սկզբնաղբյուրների գիտական աշխատանքների տվյալներն ու օգտագործել դրանք իր իսկ կատարած աշխատանքներում:

**Բովանդակություն.**

***Թեմա 1՝*** Պատմական մտքի և պատմական գիտության զարգացումը Անգլիայում 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարում: ***Թեմա 2՝*** Պատմական գիտության զարգացումը Ֆրանսիայում 18-րդ դարում. ֆրանսիական լուսավորության պատմական միտքը: ***Թեմա 3՝*** Պատմական մտքի զարգացումն Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում 19-րդ դարում: ***Թեմա 4՝*** Պատմական

մտքի զարգացումը ԱՄՆ-ում 18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարում: ***Թեմա 5՝*** Մարքսիստական պատմագրության առաջացումը. Կ.Մարքսի և Ֆ.Էնգելսի պատմական հայացքները: ***Թեմա 6՝*** Պատմական մտքի զարգացումը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ.-սկզբին: ***Թեմա 7՝*** Պատմական մտքի զարգացումը Եվրոպայի և Ամերիկայի երկրներում նորագույն ժամանակաշրջանում:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում(թեստ): Միավորների քայլը 0.5 է:

**0301/B32.** ***«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»*** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *6–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայ բազմադարյան մատենագրության ընթացքին՝ աղբյուրագիտական գիտելիքների ձևավորման, կուտակման և համակարգ դառնալու գործընթացին, ներկայացնել ինչպես աղբյուրագիտական նյութերի նախագրային շրջանի, այնպես էլ հետգրային շրջանի աղբյուրների վերլուծությունն ու դասակարգումը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի ազգային և օտար բոլոր այն հեղինակների երկասիրություններին, որոնցում խոսվում է հայերի և Հայաստանի մասին,
2. կհասկանա հայ իրականության մեջ աղբյուրագիտական գիտելիքների առաջացման, աստիճանական զարգացման և համակարգման սկզբունքները,
3. ձեռք կբերի սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հայկական լեռնաշխարհի համայնական հասարակության պատմության սկզբնաղբյուրները: ***Թեմա 2՝*** Հին Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: ***Թեմա 3՝*** Վաղ միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: ***Թեմա 4՝*** Զարգացած միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: ***Թեմա 5՝*** Ուշ միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: ***Թեմա 6՝*** Հայ ժողովրդի նոր պատմության սկզբնաղբյուրները: ***Թեմա 7՝*** Հայ ժողովրդի նորագույն պատմության սկզբնաղբյուրները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B14.** ***«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** **-6** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *6–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակողմանի և ամբողջական գիտելիքներ հայոց նորագույն պատմության քաղաքական, տնտեսական և մշակութային հիմնախնդիրների վեաբերյալ, ինչպես նաև պարզաբանել պատմագիտության մեջ գոյություն ունեցող իրարամերժ խնդիրները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձեռք կբերի Խորհրդային Հայաստանի և Հայաստանի Երրորդ Հանրապետության հիմնախնդիրների վերաբերյալ,
2. կկարողանա կատարել ճիշտ վերլուծություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ներածական դասախոսություն: ***Թեմա 2՝*** Խորհրդային Հայաստանը 1920–1922 թթ.: Խորհրդային Հայաստանի ներքին և միջազգային դրությունը: ***Թեմա 3՝*** Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ կազմավորումը: ***Թեմա 4՝*** Խորհըրդային Հայաստանը 1922–1941 թթ.: ***Թեմա 5՝*** Խորհրդային Հայաստանի մշակույթը: ***Թեմա 6՝*** Հայկական Սփյուռքը 1920-1941թթ.: ***Թեմա 7՝*** Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին: ***Թեմա 8՝*** Խորհրդային Հայաստանը 1946-1991թթ.: ***Թեմա 9՝*** Սփյուռքը 1941-1991թթ.: ***Թեմա 10՝*** Հայաստանի Երրորդ Հանրապետության հռչակումը և պետականության կայացման գործընթացը: ***Թեմա 11՝*** Հայաստանի Հանրաապետության ներքին դրությունը: ***Թեմա 12՝*** Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը: ***Թեմա 13՝*** Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը: ***Թեմա 14՝*** Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0303/B21.** *«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *6–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժություն գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը գիտական հարացույցների հիմքի վրա և ցույց տալ մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մանկավարժության ժամանակակից տեսությունները, մանկավարժություն գիտության ճյուղերը, ՀՀ կրթության համակարգի կառուցվածքը և արդի բարեփոխումները, ուսուցման նոր տեսակները, ուսուցման կազմակերպման նոր ձևերն ու մեթոդները.
2. կհասկանա մանկավարժության գիտության տեղն ու դերը մարդու անձի ձևավորման ու զարգացման, նրա կրթության ու դաստիարակության գործում՝ սոցիալականացման համատեքստում.
3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում՝ նախ մանկավարժական պրակտիկայում, ապա աշխատանքային գործունեության ժամանակ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Մանկավարժություն գիտության հիմնական հասկացությունները, օրինաչափությունները, առարկան, խնդիրները: ***Թեմա 2՝*** Մանկավարժական գիտությունների համակարգը, ՀՀ կրթության համակարգը և բարեփոխումները: Մանկավարժական մտքի պատմական զարգացումը: ***Թեմա 3՝*** Դիդակտիկայի հիմունքները: ***Թեմա 4՝*** Ուսուցման նպատակները, գործընթացի մեթոդաբանական հիմքերը: Ուսուցման սկզբունքները, մեթոդները, կազմակերպման ձևերը, միջոցները: ***Թեմա 5՝*** Կրթության բովանդակությունը, նպատակը, խնդիրները: ***Թեմա 6՝*** Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացում: ***Թեմա 7՝*** Դաստիարակության հիմունքները, էությունը, սկզբունքները և համակարգը, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, սեռական, իրավական, տնտեսագիտական, գոյապահպանական դաստիարակության մեթոդները, միջոցները, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներ. դպրոցի կառավարում:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

*1-ին ստուգում.* Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում(թեստ): Միավորների քայլը 0.5 է:

**0301/B22.** *«ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»* **-2** *(5կրեդիտ)*
Շաբաթական՝ 5 ժամ *(56 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *6–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ներկայացնել Եվրոպայի և Ամերիկայի երկրների պատմության նոր ժամանակաշրջանի երկրորդ հատվածը 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի սկիզբ: Քննարկել այնպիսի համաշխարհային կարևորության երևույթներ ինչպիսիք են բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունները Եվրոպայում, Գերմանական կայսրության ձևավորումը և քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում: Համաշխարհային գերտերությունների արտաքին քաղաքականության ձևավորումը: Միջազգային իրադրության լարվածությունը, ուժերի նոր դասավորվածությունը և ռազմաքաղաքական դաշինքների ձևավորումը Առաջին Համաշխարհայինից առաջ:

*Կրթական արդյունքները*

5. Գիտելիքներ կունենա Եվրոպայում 19-րդ դարի երկրորդ կեսին տեղի ունեցող ազգային-ազատագրական պայքարի և նոր պետությունների առաջացման պատմական նշանակության վերաբերյալ: Եվրոպայում սկիզբ առած հեղափոխությունների նոր «շքերթի» պատմաքաղաքական նշանակության ու հետևանքների վերաբերյալ:
6. Գիտելիքներ կձևավորի միջազգային հակասությունների նոր փուլի վերաբերյալ, Եվրոպայում և աշխարհում նոր ռազմաքաղաքական դաշինքների ու բաժանարար գծերի առաջացման պատճառների ու հետևանքների մասին, համաշխարհային տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացումների վերաբերյալ և Առաջին աշխարհամարտի պատճառների ու հետևանքների, և որպես արդյունք, միջազգային հարաբերությունների նոր համակարգի հաստատման վերաբերյալ:
7. կկարողանա իր ընկալումների հենքի վրա ըմբռնել արդի համաշխարհային քաղաքականության համատեքստում տեղի ունեցող քաղաքական և հասարակական փոփոխությունների տրամաբանությունը:

**Բովանդակություն.**

***Թեմա 1՝*** Ֆրանսիան 19-րդ դարի 2-րդ կեսին- 20-րդ դարի սկզբին: ***Թեմա 2՝*** 1830թ. հուլիսյան հեղափոխությունը: ***Թեմա 3՝*** 1848թ. հեղափոխությունը: Ֆրանս-պրուսական պատերազմի պատճառներն ու սկիզբը: ***Թեմա 4՝*** 1870 թ. սեպտեմբերի 4-ի հեղափոխությունը: Փարիզի կոմունան: ***Թեմա 5՝*** Երրորդ հանրապետության պետական կարգը և քաղաքական կյանքը: ***Թեմա 6՝*** 1875թ. Սահմանադրությունը: Արտաքին քաղաքականությունը 1870-1890-ական թթ.: Բուլանժեական ճգնաժամը: ***Թեմա 7՝*** Ֆրանս-ռուսական դաշինքը: Գաղութային քաղաքականությունը: «Պանամայի խաբեությունը»: Դրեյֆուսի գործը: Վալդեք Ռուսո-

յի կառավարությունը: «Միլերանի կազուսը»: Ռադիկալների ներքին և արտաքին քաղաքականությունը: ***Թեմա 8՝*** Ժ. Կլեմանսոյի կառավարությունը: Ֆրանսիայի քաղաքական դերն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: ***Թեմա 9՝*** Ա. Բրիանի կառավարությունը: ***Թեմա 10՝*** Ռ. Պուանկարեի իշխանությունը: ***Թեմա 11՝*** Կլեմանսոյի դիկտատորական կառավարության հաստատումը: ***Թեմա 12՝*** Անգլիան 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին: ***Թեմա 13՝*** 1832թ. պառլամենտական բարեփոխումը: Չարտիստական շարժումը: Անգլիայի տնտեսական զարգացումը: Գլադստոնի, Դիզրայելիի, Սոլսբերիի կաբինետները: ***Թեմա 14՝*** Անգլիայի գաղութային քաղաքականությունը: Լիբերալների հաղթանակը 1906թ.: ***Թեմա 15՝*** Լեյբորիստական կուսակցության առաջացումը: Լլոյդջորջիզմ: ***Թեմա 16՝*** Անգլիայի արտաքին քաղաքականությունը 1912-1914թթ., իռլանդական հարցը: ***Թեմա 17՝*** Ամերիկյան գաղութների անկախացումը: ***Թեմա 18՝*** Գերմանական կայսրության կազմավորումը, Գերմանիայի միավորման պատմական անհրաժեշտությունը: ***Թեմա 19՝*** Գերմանիայի միավորման խնդիրը 1850-1860-ական թթ.: Օտտո ֆոն Բիսմարկը և ֆրանս-պրուսական պատերազմը 1870-1871թթ.: ***Թեմա 20՝*** Կայսրության հռչակումը: Գերմանական կայսրությունը 1871-1918թթ.: Կայսրության պետական կարգը և քաղաքական կյանքը: ***Թեմա 21՝*** Քաղաքական կուսակցությունները: Կայսերական կառավարության ներքին ռեֆորմները: «Կուլտուրկամֆ»: ***Թեմա 22՝*** Կապրիվիի կանցլերությունը: Պանգերմանական միությունը: Գերմանիայի պայքարը աշխարհի վերաբաժանման համար: Բյուլովի կանցլերությունը: ***Թեմա 23՝*** Իտալիան 19-րդ դարում և 20-րդ դ. 1848-1849թթ. ազգային հեղափոխությունը: Իտալիայի միավորման սկիզբը: Ջ. Գարիբալդի: ***Թեմա 24՝*** Իտալիայի պետական կարգը և քաղաքական կյանքը: Պապական պետությունը: «Աջի» կառավարում: «Ձախի» կառավարումը: Իտալիայի արտաքին քաղաքականությունը: ***Թեմա 25՝*** Ֆ. Կրիսպիի անցումը իշխանության գլուխ: Ներքաղաքական դրության սրումը: ***Թեմա 26՝*** Ջ. Ջոլիտիի լիբերալ քաղաքականությունը 20-րդ դարի սկզբին: ***Թեմա 27՝*** Իտալո-թուրքական պատերազմը: ***Թեմա 28՝*** ԱՄՆ-ն 19-րդ դարում: ԱՄՆ-ի տնտեսական զարգացումը և տարածքային աճը: ***Թեմա 29՝*** Աբոլիցիոնիզմ: Քաղաքացիական պատերազմը 1861-1865թթ.: Արտաքին քաղաքականությունը: ***Թեմա 30՝*** Ամերիկյան էքսպանսիոնիզմի գաղափարախոսությունը: ***Թեմա 31՝*** «Բաց դռների» դոկտրինան: ***Թեմա 32՝*** Միջազգային հարաբերությունները 1871-1914թթ. Երեք կայսրերի համաձայնությունը: 1875-1878թթ. Արևելյան ճգնաժամը: ***Թեմա 33՝*** Ավստրո-գերմանական դաշինքը /1879թ./: Եռյակ դաշինքը /1882թ./: ***Թեմա 34՝*** Պայքարը Աֆրիկայի և Ասիայի համար: «Ինքնապահովության» պայմանագիրը: ***Թեմա 35՝*** «Փայլուն մեկուսացման» անգլիական քաղաքականությունը: ***Թեմա 36՝*** Ֆրանս-ռուսական դաշինքը /1891-1893թթ./: Մեծ տերությունները և հակասությունների սրումը Հեռավոր Արևելքում: ***Թեմա 37՝*** Աշխարհի բաժանման ավարտը: Միջազգային հարաբերությունների սրումը Առաջին աշխարհամարտի նախօրյակին: ***Թեմա 38՝*** «Բաց դռների» դոկտրինան: Անգլո-գերմանական հակասությունները: Հեռավորարևելյան հարցը: ***Թեմա 39՝*** Անտանտի կազմավորումը: Առաջին մարոկկյան ճգնաժամը /1905-1906թ./: ***Թեմա 40՝*** Ռուս-գերմանական հակասությունները: Անգլո-պրուսական համաձայնությունը: ***Թեմա 41՝*** 1908-1909թթ. Բոսնիական ճգնաժամը: Երկրորդ մարոկկյան ճգնաժամը 1911թ.: ***Թեմա 42՝*** Իտալո-թուրքական, Բալկանյան առաջին և երկրորդ պատերազմները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B28.** *«ԱՍԻԱՅԻ ԵՎ ԱՖՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(72 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *6–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ներկայացնել Ասիայի և Աֆրիկայի երկրների պատմությունը: Ներկայացնել Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների հասարական-քաղաքական և մշակութային զարգացման առանձնահատկությունները միջին և նոր դարերում:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կպատկերացնի ասիական և աֆրիկյան երկրների զարգացման առանձնահատկությունները.
2. կկարողանա ճշգրտորեն գնահատել ասիական և աֆրիկյան ժողովուրդների ունեցած ավանդը համաշխարհային պատմության մեջ:

**Բովանդակություն.**

***Թեմա 1՝*** Ասիայի և Աֆրիկայի երկրների միջին դարերի պատմություն հասկացությունը և նրա տարածաժամանակային սահմանները: ***Թեմա 2՝*** Միջնադարյան քաղաքակրթության ակունքները: Ասիայի և Աֆրիկայի երկրների զարգացման առանձնահատկությունները և պատմական գործընթացներից հետ մնալու պատճառները: ***Թեմա 3՝*** Ավատատիրական հասարակարգի ձևավորման և զարգացման շրջանը Ասիայի և Աֆրիկայի երկրներում Չինաստանը 1-14-րդ դ.դ: ***Թեմա 4՝*** Ճապոնիան 5-17-րդ դ.դ.: ***Թեմա 5՝*** Հնդկաստանը 2-14-րդ դ.դ.: ***Թեմա 6՝*** Արաբական խալիֆայությունը. Ասիայի և Աֆրիկայի արաբական երկրները: ***Թեմա 7՝*** Իսլամի ներթափանցումը Ասիայի և Աֆրիկայի երկրներ: ***Թեմա 8՝*** Մոնղոլական պետության կազմավորումը և նվաճողական արշավանքները: Մոնղոլիան ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանում: ***Թեմա 9՝*** Չինաստանը 15-17-րդ դ.դ.: ***Թեմա 10՝*** Ճապոնիան 15-17-րդ դ.դ.: ***Թեմա 11՝*** Հնդկաստանը 15-17-րդ դ.դ.: ***Թեմա 12՝*** Արաբական երկրները Օսմանյան կայսրության տիրապետության ներքո: ***Թեմա 13՝*** Արևելյան Ասիայի և Աֆրիկայի զարգացման առանձնահատկությունները: ***Թեմա 14՝*** Ասիայի և Աֆրիկայի երկրները նոր պատմության սկզբին: Մեծ Մոնղոլի կայսրության ճգնաժամը և քայքայումը:

***Թեմա 15՝*** Հնդկաստանի գաղութացումը Անգլիայի կողմից: ***Թեմա 16՝*** Օսմանյան կայսրությունը նոր դարաշրջանում: ***Թեմա 17՝*** Չինաստանը Ցին դինաստիայի իշխանության ներքո: ***Թեմա 18՝*** Ճապոնիան Տոկուգավայի սյոգունատի ժամանակաշրջանում: ***Թեմա 19՝*** Հնդկաստանի գաղութային նվաճման ավարտը և գաղութային շահագործումը 19-րդ դ. առաջին կեսին: ***Թեմա 20՝*** Չինաստանի գաղութացման սկիզբը. Տայպինների գյուղացիական պատերազմը Չինաստանում: ***Թեմա 21՝*** Անգլիայի և Ֆրանսիայի գաղութային զավթողական պատերազմները Չինաստանի դեմ: ***Թեմա 22՝*** Օսմանյան կայսրությունը 19-րդ դարի առաջին կեսին: Ասիայի և Աֆրիկայի արաբական երկրները նոր շրջանում: ***Թեմա 23՝*** Եվրոպական տերությունների Հասարակածային և Հարավային Աֆրիկայի գաղութային տիրույթները և պետական կազմավորումները 18-19-րդ դ.դ.: ***Թեմա 24՝*** Անավարտ բուրժուական հեղափոխությունը Ճապոնիայում 1868 թ.: Ասիայի և Աֆրիկայի երկրները 1870-1918 թ.թ.: ***Թեմա 25՝*** Ճապոնիայի վերածումը գաղութային տերության: Ճապոնիայի  զարգացումը 19-րդ դ. վերջին երեսնամյակում : Ճապոնիան 1890-1914 թվականներին.Ասիան և Աֆրիկան 19-րդ դարի վերջին երեսնամյակում և 20-րդ դարի սկզբին: ***Թեմա 26՝*** Հնդկաստանը 19-րդ դ. վերջին երեսնամյակում Հնդկաչինի թերակղզու պետությունները 19-րդ դարի վերջին երեսնամյակին և 20-րդ դարասկզբին /Վիետնամ, Կամբոջա, Լաոս, Սիամ, Բիրմա/: ***Թեմա 27՝*** Կորեան 19-րդ դ. երկրորդ կեսին և  20-րդ դ. սկզբին: ***Թեմա 28՝*** Արաբական երկրները 19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին: Աֆրիկայի բաժանման ավարտը /19-րդ դ. վերջին երեսնամյակ – 20-րդ դ. սկիզբ/ Հարավային Աֆրիկայի գաղութային բաժանման ավարտը: ***Թեմա 29՝*** Արևմտյան Աֆրիկայի և Կոնգո գետի ավազանի իմպերիալիստական բաժանումը. Տերությունների գաղութային քաղաքականությունը Արևելյան Աֆրիկայում: ***Թեմա 30՝*** Չինաստանը 19-րդ դարի վերջին երեսնամյակում.Օսմանյան կայսրությունը 19-րդ դարի վերջին երեսնամյակում ասիական երկրները 1900-1914 թ.թ.: ***Թեմա 31՝*** Ասիայի զարթոնքը. Օսմանյան կայսրությունը 1900 – 1914 թթ. Չինաստանը 1900 –1914 թ.թ.: Հնդկաստանը 20-րդ դարի սկզբին: ***Թեմա 32՝*** Ասիայի և Աֆրիկայի երկրները 20-րդ դարասկզբին: Ճապոնիայի վերածումը գաղութային տերության:  Ճապոնիան 20-րդ դարի առաջին կեսին. Ճապոնիայի գաղութային և տնտեսական հավակնությունները և դրա կրախը: ***Թեմա 33՝*** 1905-1911 թթ. Իրանական հեղափոխությունը, Իրանի զարգացման առանձնահատկությունները: ***Թեմա 34՝*** Հնդկաստանը Բրիտանական կայսրության մաս. Ազգային ազատագրական պայքարի վերելքը. Մ. Գանդի, Ջ. Ներու Ասիայի և Աֆրիկայի երկրների զարգացման հիմնական միտումները 20-րդ դարում: ***Թեմա 35՝*** Հասարակածային և հարավաֆրիկյան երկրները 20-րդ դարի առաջին կեսին: Արաբական երկրների զարգացման հիմնական միտումները 20-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 36՝*** Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքները ասիական և աֆրիկյան երկրների վրա: ***Թեմա 37՝*** Ազգային ազատագրական շարժումների վերելքը Ասիայի և Աֆրիկայի երկրներում: Աֆրիկայի տարին: ***Թեմա 38՝*** Հեռավոր Արևելքի երկրները 20-րդ դարի երկրորդ կեսին: Գաղութատիրական համակարգի ազդեցությունը երրորդ աշխարհի երկրների հասարակական քաղաքական զարգացումների վրա: ***Թեմա 39՝*** Սոցիալիստական և լիբերալ արժեհամակարգերի առանձնահատկությունները երրորդ աշխարհի երկրներում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B29.** *«ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Ազգագրությունը որպես գիտություն Հայաստանում կայացավ 19-րդ դ. 80-90-ական թթ., սակայն Հայաստանին և հայերին վերաբերող ազգագրական վկայությունները գալիս են խոր հնադարից և սփռված են հսկայական տարածության և ժամանակի մեջ: Կուրսի նպատակն է ուսանողին ծանոթացնել հայ ազգագրության ձևավորման փուլերին, հայ և օտար սկզբնաղբյուրներում եղած վկայություններին, որոնք վերաբերում են հայերի տնտեսական, հասարակական-ընտանեկան կենցաղին, նյութական և հոգևոր մշակույթին:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կծանոթանա հայ ազգագրության ձևավորման ու գիտության վերածնվելու պատմությանը.
2. Կծանոթանա հայերի և Հայաստանում ապրող մյուս ժողովուրդների էթնոկենցաղամշակութային համալիրին
3. Կծանոթանա էթնոգենեզին և էթնիկ պատմությանը

**Բովանդակություն.**

***Թեմա 1՝*** Պատմական Հայաստանի պատմազգագրական մարզերն ու շրջանները: Հայ ազգագրության ձևավորման ու զարգացման փուլերի խնդիրը: ***Թեմա 2՝*** Ժայռապատկերները որպես ազգագրական հետազոտությունների սկզբնաղբյուրներ: ***Թեմա 3՝*** Հունա-հռոմեական պատմիչների վկայությունները Հայաստանի և հայերի մասին /Հերոդոտոս, Քսենոփոն, Ստրաբոն, Տակիտոս,Պրոկոպիոս Կեսարացի/: ***Թեմա 4՝*** Հայ պատմագրության մեջ եղած ազգագրական նյութերի ակնարկ: ***Թեմա 5՝*** Արաբ մատենագիրների վկայությունները Հայաստանի և հայերի մասին /IX-XIVդդ./: ***Թեմա 6՝*** Եվրոպայի ճանա-պարհորդների վկայությունները Հայաստանի և հայերի մասին /XIII-XVIII դդ./: ***Թեմա 7՝*** Մխիթարյան միաբանների ազգաբանական գործունեությունը (Ղ. Ինճիճյան, Մ. Բժշկյան, Ղ. Ալիշան, Վ. Հացունի): ***Թեմա 8՝*** Հայ ազգագրությունը XIX դ. առաջին կեսին, /Մ. Թաղիադյան, Խ. Աբովյան/: ***Թեմա 9՝*** Հայ ազգագրությունը XIX դարի II կես –XX դարի սկիզբ/ Գ. Սրվանձտյանց, Գր. Խալաթյանց, Ե. Լալայան/: ***Թեմա***

***10՝*** Ստ. Լիսիցյանի և Խ. Սամվելյանի ազգագրական գործունեությունը: ***Թեմա 11՝*** ՀՀ-ում ազգագրական գիտական հաստատությունների և ազգագրական թանգարանների համառոտ ակնարկ: ***Թեմա 12՝*** Հայերը աշխարհի էթնիկ հանրությունների համակարգում, հայերի էթնոլեզվական, մարդաբանական, խառնվածքային, դավանաբանական, ժողովրդագրական բնութագիրը: ***Թեմա 13՝*** ՀՀ ազգային փոքրամասնությունների ժողովրդագրական և էթնոմշակութային բնութագիրը: ***Թեմա 14՝*** Հայերի ավանդական և ժամանակակից արտադրական մշակույթը. երկրագործական մշակույթ, Հայկական լեռնաշխարհը երկրագործականն մշակույթի կենտրոն: Բրիչային և արորագութանային երկրագործության արտադրատեխնիկան, աշխատանքի կազմակերպման հնավանդ ձևերը: Անասնապահական մշակույթ, ձևերը, համագործակցության և փոխօգնության ավանդական սկզբունքները: Տնայնագործական և արհեստագործական մշակույթ: Համքարական կազմակերպությունները քաղաքներում, դրոշները և սովորույթները: Օժանդակ և յուրացնող տնտեսաձևերը: Ժողովրդական ավանդական փոխադրամիջոցները և կապի միջոցները: ***Թեմա 15՝*** Հայոց կենսապահովման մշակույթը. Գյուղական և քաղաքային ավանդական ու ժամանակակից բնակավայրերի տիպերը, կառուցվածքը, բնորոշ գծերը: Հայ ժողովրդական բնակարանը և ներսույթը՝ ջեռուցման, լուսավորության ավանդական և ժամանակից միջոցները, կահույքը, դրանց գործառույթային բնութագրությունը: Հայոց ավանդական և ժամանակակից տարազային համալիրները, տարածքային առանձնահատկությունները: Հայկական ուտեստն ու ըմպելիքները, հացկերույթները: ***Թեմա 16՝*** Սոցիոնորմատիվ մշակույթ, հայերի ավանդական և ժամանակաից ընտանքը և վավերելակարգը: Հայերի ընտանեկան ծիսակարգը, ամուսնության և հարսանեկան ծիսաշարը, տղաբերքի և մանկատածության, հուղարկավորման և հիշատակման հետ կապված ավանդական և ժամանակակից սովորույթները և ծեսերը: Հայոց ազգակցական համակարգը, տնտեսական, տարածքային և գաղափարական կապերը: Հայերի գյուղական համայքնը XIX-XX դդ.: ***Թեմա 17՝*** Հայոց ավանդական և ժամանակակից հումանիտար մշակույթը. Հնագույն հավատալիքների, պաշտամունքի, բանավոր ստեղծագործությունների, տոների վերաբերյալ պատկերացումների հայոց մեջ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են՝*

***1-ին ստուգում.*** անհատական աշխատանք /փոքրածավալ գրավոր/, քայլը՝ 1 միավոր,

***2-րդ ստուգում.*** բանավոր հարցում, քայլը՝ 0,5 միավոր:

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B35.** *«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապ-մունքներ)*
Կիսամյակը՝ *7-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատմության դասավանդման խնդիրների, կազմակերպման հիմնաձևերի ու մեթոդների, պատմական մտածողության զարգացմանը նպաստող տարբեր հնարների մասին պատշաճ մասնագիտական պատկերացում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա պատմամշակութային գործընթացի, հասարակական առաջադիմության հիմնախնդրի լուսաբանման գործում պատմության դասավանդման դերն ու նշանակությունը,
2. կտիրապետի դասավանդման և հատկապես պատմության դասավանդման հիմնաձևերին ու կարևորագույն մեթոդներին,
3. կկարողանա կատարել պատմության մասին բազմաբնույթ գիտելիքի համակարգում և տեսական վերլուծություն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Դասավանդողի դերը դասավանդման գործընթացում և կրթության համակարգում, ներկայացվող ժամանակակից պահանջները: ***Թեմա 2՝*** Դասավանդման ավանդական և ժամանակակից մոդելների հարաբերակցումը: ***Թեմա 3՝*** «Դաս», «դասարան» հասկացությունները, դասաժամերի քանակը պատմության ուսուցման գործընթացում: ***Թեմա 4՝*** Դասավանդման գործընթացում դասընթացի կարևորագույն հասկացությունների բովանդակության մեկնաբանության և վերլուծության անհրաժեշտությունը: ***Թեմա 5՝*** Համաշխարհային պատմության գիտական պարբերացման հիմնահարցը: ***Թեմա 6՝*** Ազգային պատմության դասավանդումը համաշխարհային պատմության համատեքստում: ***Թեմա 7՝*** Պատմության դասավանդման կազմակերպման հիմնաձևերն ու մեթոդները: ***Թեմա 8՝*** Ուսումնական ծրագրերի և ուսումնական ձեռնարկների վճռորոշ նշանակությունը դասավանդման գործընթացում: ***Թեմա 9՝*** ԽԻԿ համակարգը պատմական մտածողությունը խթանող միջոց:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում(թեստ): Միավորների քայլը 0.5 է:

**0301/B36.** ***«ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապ-մունքներ)*

Կիսամյակը՝ *7–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ճանաչողական, գիտատեսական և քաղաքական դիտանկյունով ներկայացնել Վրաստանի և Ադրբեջանի պատմությունը, լուսաբանել տարաբնույթ վիճահարույց և միմյանց հակադիր տեսակետները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կճանաչի հարևան երկու երկրների պատմությունը,
2. կհասկանա և կվերլուծի այդ ժողովուրդների պատմական զարգացման առանձնահատկությունները, նրանց քաղաքակրթությունների էությունը,
3. կկարողանա կատարել տեսական ընդհանրացումներ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Վրաստանը հնագույն ժամանակներում: ***Թեմա 2՝*** Վրաստանը 4-8-րդ դդ.: ***Թեմա 3՝*** Վրաստանը 9-11-րդ դդ.: ***Թեմա 4՝*** Վրաստանը 13-րդ դ. սկզբներից մինչև 19-րդ դ. սկիզբը: ***Թեմա 5՝*** Վրաստանը 19-20-րդ դ. սկզբին: ***Թեմա 6՝*** Վրաստանը խորհրդային ժամանակաշրջանում: ***Թեմա 7՝*** Վրաստանը ետխորհրդային տարիներին: ***Թեմա 8՝*** Արևելյան Անդրկովկասը 8–16-րդ դդ.: ***Թեմա 9՝*** Արևելյան Անդրկովկասը 16-րդ դ.-19-րդ դ. սկզբին: ***Թեմա 10՝*** Արևելյան Անդրկովկասը ռուսական կայսրության կազմում: ***Թեմա 11՝*** Արևելյան Անդրկովկասը 20-րդ դ. սկզբին: ***Թեմա 12՝*** Ադրբեջանի անկախ հանրապետությունը 1918–1920 թթ.: ***Թեմա 13՝*** Ադրբեջանի խորհրդայնացումը և հարաբերությունները հարևան երկրների հետ: ***Թեմա 14՝*** Ադրբեջանը խորհրդային տարիներին: ***Թեմա 15՝*** Ադրբեջանի հանրապետությունը ետխորհրդային տարիներին:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B23.** *«ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (8 կրեդիտ)*

Շաբաթական՝ 8 ժամ *(64 ժամ դասախոսություն, 32 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *7–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել 20-րդ դարի Եվրոպայի և Ամերիկայի երկրների պատմությունը: Տալ քաղաքակրթության զարգացման տիպաբանությունը 20-րդ դարի ընթացքում ինչպես Եվրոպական աշխարհամա-

սում, այնպես էլ ամերիկյան մայրցամաքում: Ներկայացնել հասարակության զարգացման վերաբերյալ երկու հակադիր գաղափարախոսությունների բախումներն ու տրանսֆորմացիան:

*Կրթական արդյունքները.*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 20-րդ դարի Եվրոպայի և Ամերիկայի երկրների զարգացման առանձնահատկությունները.
2. կհասկանա 20-րդ դարում գերիշխող գաղափարախոսությունների էությունը.
3. կկարողանա գիտելիքները կիրառել համաշխարհային նորագույն քաղաքական զարգացումները հասկանալու համար:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Քաղաքակրթությունների ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 2՝*** Միջազգային հարաբերությունները: Իրադարձությունները և կարևորագույն խնդիրները 1918-1939 թթ.: ***Թեմա 3՝*** Միջազգային հարաբերությունները 1945–1990-ական թթ.: ***Թեմա 4՝*** Սոցիալիստական համակարգը երկբևեռ աշխարհակարգի պայմաններում: ***Թեմա 5՝*** ԱՄՆ-ը և Արևմտյան Եվրոպայի երկրները 1918–1990-ական թթ.: ***Թեմա 6՝*** ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը արդի էտապում: ***Թեմա 7՝*** Էմիգրացիայի խնդիրը ժամանակակից աշխարհում: ***Թեմա 8՝*** Աշխարհը արդի էտապում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B33.** *«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *7–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնարար գիտելիքներ հաղորդել մեր ազգային պատմական գիտության անցած ողջ ուղու մասին՝ սկսած նախագրական շրջանի պատկերացումներից մինչև մեր օրերի պատմագիտական դպրոցները, ուղղությունները, տեսությունները:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կպատկերացնի հայ պատմագրության առանձնահատկությունները, զարգացման իր ուրույն ընթացքի փուլերը,
2. կհասկանա հայ իրականության մեջ պատմական գիտելիքների առաջացման աստիճանական զարգացման և համակարգման ընթացքը,
3. կընկալի հայոց պատմության պատմագրության խնդիրները, գիտելիքներ ձեռք կբերի պատմագիտական հետազոտությունների տիպերի մասին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Պատմական գիտելիքների առաջացումը Հայաստանում: Նախամեսրոպյան շրջանի հայ պատմագրությունը: ***Թեմա 2՝*** Հայ միջնադարյան պատմագրության պարբերացումը: Հայ միջնադարյան պատմագրության բնութագրական գծերը և առանձնահատկությունները: Պատմական երկերի հիմնական տեսակները հայ միջնադարյան պատմագրության մեջ: ***Թեմա 3՝*** Հայ պատմագրության զարգացման պայմանները, ընթացքը, ականավոր ներկայացուցիչները 18-րդ դարի վերջերին-19-րդ դարում: ***Թեմա 4՝*** Հայ պատմագրության առաջընթացը, զարգացման հիմնական միտումները, նշանավոր դեմքերը 20-րդ դարում: ***Թեմա 5՝*** Հայ պատմագրության ներկա վիճակը և հեռանկարները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր::

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2,3,2,3 միավոր: Միավորների քայլը 1 է:

**0301/B47.** ***«ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1–ին, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացն ունի ինչպես իմացաբանական, այնպես էլ մեթոդաբանական նշանակություն: Նպաստել ուսանողի տրամաբանական կարողությունների զարգացմանը, հմտությունների ձեռք բերմանը, նպաստել մասնագիտական առարկաների տեսությունների հիմնական հասկացությունների յուրացմանը, գիտահետազոտական աշխատանքի կատարմանը, ինչպես նաև ինտելեկտուալ անհատականության ձևավորմանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մտքի կառուցվածքը, այն տրամաբանական կանոններն ու օրենքները, որոնք կշռադատության ընթացքում ապահովում են մեր մտքի կանոնավորությունն ու հետևողականությունը, ճշմարիտ եզրակացությունների ստացումը, գիտական գիտելիքների հիմնավորվածությունը,

2. կիրականա տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործառույթների անհրաժեշտությունը գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ,
3. կկարողանա տրամաբանական գիտելիքների և հմտությունների միջոցով բարձրացնել իմացական գործընթացների և հատկապես գիտական հետազոտությունների արդյունավետությունը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Տրամաբանության առարկան և նրա դերն ու նշանակութունը: ***Թեմա 2՝*** Հասկացություն: ***Թեմա 3՝*** Դատողություն: ***Թեմա 4՝*** Տրամաբանության օրենքները: ***Թեմա 5՝*** Մտահանգում: ***Թեմա 6՝*** Ապացուցում և հերքում: ***Թեմա 7՝*** Պարալոգիզմ, Սոփեստություն, սրամտություն, պարադոքս: Հիպոթեզ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 1 է:

**0301/B45.** ***«ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(32 ժամ դասախոսութուն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *8-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել փիլիսոփայական մտքի զարգացման ընթացքին, փիլիսոփայական ուղղություններին ու հոսանքներին, պատմափիլիսոփայական ուսմունքներին:

***Կրթական արդյունքները***.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա փիլիսոփայական մտքի զարգացման օրինաչափությունները, դարաշրջանների առանձնահատկությունները, փիլիսոփայական ուղղությունների կողմից քննարկված հիմնահարցերը, պատմափիլիսոփայական ուսմունքների բովանդակությունը, հումանիտար ու բնագիտական ուսմունքների և փիլիսոփայական տեսությունների միջև առկա փոխհարաբերությունները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Փիլիսոփայության պատմության առարկան: ***Թեմա 2՝*** Հին Արևելքի փիլսոփայությունը: ***Թեմա 3՝***Անտիկ հունական փիլիսոփայություն: ***Թեմա 4՝*** Դասական շրջանի հունական փիլսոփայությունը: ***Թեմա 5՝*** Հելլենիստական դարաշրջանի փիլիսոփայություն: ***Թեմա 6՝*** Միջնադարյան փիլիսոփայություն: ***Թեմա 7՝*** Սխոլաստիկական փիլսոփայություն: ***Թեմա 8՝*** Վերածննդի դարաշրջանի փիլսոփայություն: ***Թեմա 9՝*** Նոր ժամանակի փիլիսոփայությունը: ***Թեմա***

***10՝*** Գերմանական դասական փիլիսոփայություն: ***Թեմա 11՝*** Փիլիսոփայական միտքը 19-րդ դարում: ***Թեմա 12՝*** 20-րդ դարի փիլիսոփայակլան ուղղությունները:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 1 է:

**0202/B32.** *«ՀԱՅ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ*(48 ժամ դասախոսություն,16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *8–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողին հայ և համաշխարհային արվեստի պատմությանը, նրա զարգացման հիմնական փուլերին, կարևոր ստեղծագործություններին: Հաղորդակից դարձնել ուսանողին նախնադարյան, հին քաղաքակրթությունների, դասական՝ հունա-հռոմեական, միջնադարյան մշակույթներին, ինչպես նաև հեղինակավոր արվեստագետների ստեղծագործությունների ուսումնասիրմանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա մշակույթի պատմության օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները,
2. կճանաչի հայ և համաշխարհային մշակույթի կարևոր հուշարձանները, կրդառնա որոշ ստեղծագործությունների անմիջական հաղորդակիցը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ներածություն: Նախնադարյան արվեստ: ***Թեմա 2՝*** Հին քաղաքակրթությունների արվեստների ընդհանուր բնութագիրը և հիմնական հուշարձանները: ***Թեմա 3՝*** Հին Հունաստանի և Հռոմի արվեստի հիմնական շրջաններն ու հուշարձանները: ***Թեմա 4՝*** Միջնադարյան Արևելաքրիս-տոնեական և Արևմտաքրիստոնեական արվեստ: ***Թեմա 5՝*** Վերածննունդի արվեստը: ***Թեմա 6՝*** 17-րդ դարի արվեստի ընդհանուր բնութագիրը, իտալական, ֆլամանդական, հոլանդական, իսպանական դպրոցները: ***Թեմա 7՝*** 18–19-րդ դարերի արվեստի ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 8՝*** Իմպրեսիոնիզմ և պոստիմպրեսիոնիզմ: ***Թեմա 9՝*** Մոդեռնիզմի ուղղությունները: ***Թեմա 10՝*** Հին հայկական և ուրարտական արվեստ: ***Թեմա 11՝*** Միջնադարյան հայ արվեստ: ***Թեմա 12՝*** Հայ կերպարվեստագետները 19-րդ դ. և 20-րդ. 1-ին կեսին: ***Թեմա 13՝*** Խորհրդային շրջանի հայ արվեստը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 1 է:

**0301/B46.** *«ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *8–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել աշխարհաքաղաքականության բազմաթիվ հիմնախնդիրների նկատմամբ մասնագիտական պատկերացումներ, պատշաճ գիտելիքներ աշխարհաքաղաքական բարդ գործընթացների վերաբերյալ:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արդի աշխարհաքաղաքականության հիմունքների տեսական հիմնախնդիրները.
2. կհասկանա աշխարհաքաղաքականության՝ որպես գիտության վերլուծության մեթոդաբանական հիմունքները և պատմական հեռանկարները.
3. կկարողանա տեսական գիտելիքների հիման վրա կատարել անհրաժեշտ վերլուծություն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Աշխարհաքաղաքականությունը որպես գիտություն և նրա ձևավորման ու զարգացման հիմնական փուլերը: ***Թեմա 2՝*** Աշխարհա-քաղաքականության հիմնական դպրոցներն ու ուղղությունները: ***Թեմա 3՝*** Աշխարհի համընդհանրացումը՝գլոբալիզացիա: ***Թեմա 4՝*** Աշխարհաքաղաքականությունը գաղափարախոսության և աշխարհայացքային տեսանկյունից: ***Թեմա 5՝*** Արդի դարաշրջանի աշխարհաքաղաքական պատկերը: ***Թեմա 6՝*** Մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերը Հարավային Կովկասում: ***Թեմա 7՝*** Ռուսաստանի Դաշնության աշխարհաքաղաքական շահերը Հարավային Կովկասում և հայ-ռուսական հարաբերությունները հետխորհրդային շրջանում: ***Թեմա 8՝*** ՀՀ ռազմավարության հիմնահարցերը և ուղղությունները: ***Թեմա 9՝*** Միջազգային հակամարտությունները և դրանց լուծման ուղիները:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

### *4.1.1. Կամընտրական դասընթացներ*

**0301/B37.** ***«ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»***
*(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *4-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ինչպես հայ ավանդական ազգային կուսակցությունների, այնպես էլ հայ մյուս քաղաքական կուսակցությունների ու ժամանակակից հայ քաղաքական կուսակցությունների ձևավորման, ծրագրերի և գործունեության ամբողջական պատմությունը:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ քաղաքական կուսակցությունների ծրագրային հիմնադրույթների և գործունեության ամբողջական պատմությունը.
2. կկարողանա կատարել հայ ավանդական և ժամանակակից քաղաքական կուսակցությունների ծրագրերի, գործունեության մարտավարական առանձնահատկությունների համեմատական վերլուծություն, քննարկում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Արմենական կուսակցության առաջացումը և Արևմտյան Հայաստանի ազատագրման նրա ծրագիրը: ***Թեմա 2՝*** Արմենական կուսակցության գործունեությունը 1890-ական թթ.: 1896թ. Վանի ինքնապաշտպանությունը և Արմենական կուսակցության անկման գործընթացը: ***Թեմա 3՝*** Հնչակյան կուսակցության ձևավորումը և Արևմտյան Հայաստանի ազատագրման նրա ծրագիրը: ***Թեմա 4՝*** Հնչակյան կուսակցության գործունեությունը 1990 - ական թթ. և պառակտումը: ***Թեմա 5՝*** ՀՍՌԿ առաջացումը և նրա ծրագրային դրույթները: ***Թեմա 6՝*** Հ. Յ. Դաշնակցության առաջացումը և Արևմտյան Հայաստանի ազատագրման նրա ծրագիրը: ***Թեմա 7՝*** ՀՅԴ գործունեությունը 19-րդ դարի 90 - ական թթ. և դրա գնահատականը: ***Թեմա 8՝*** Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը 1900 - 08թթ. -ին: Վերաբերմունքը Երիտթուրքական Սահմանադրության նկատմամբ: ***Թեմա 9՝*** 1905 - 6թթ. հայ - թաթարական կռիվները Կովկասում և հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը: ***Թեմա 10՝*** Հայ քաղաքական կուսակցությունները Հայկական Հարցի վերաբացման շրջանում(1912 - 1914թթ): ***Թեմա 11՝*** Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: ***Թեմա 12՝*** Հայ քաղաքական կուսակցությունները Հայաստանի առաջին Հանրապետության գոյության տարիներին: ***Թեմա 13՝*** ՀԿԿ կուսակցության ձևավորումը և գործունեությունը: ***Թեմա 14՝*** Հայաստանի խորհրդայնացումը և հայ քաղաքական կուսակցությունների լիկվիդացիայի գործընթացը: ***Թեմա 15՝*** Հայ քաղաքալկան կուսակցությունների գործնու-

նեությունը Սփյուռքում 1920 - 80 - ական թթ.: ***Թեմա 16՝*** Խորհրդային Միության փլուզումը և հայկական նոր քաղաքական կազմակերպությունների առաջացումը: ՀՀՇ - ի քաղաքական դիրքորոշումները: ***Թեմա 17՝*** Հայ ավանդական և նորաստեղծ կուսակցությունների գործունեությունը 1991 - 1998թթ.: ***Թեմա 18՝*** Հայաստանի Հանրապետական կուսակցության առաջացումը և գործունեությունը 1998 - 2008թթ. - ին: ***Թեմա 19՝*** ՀՀԿ գործունեությունը 2008 - 12թթ. -ին: ***Թեմա 20՝*** ԱԺՄ, Օրինաց Երկիր, Բարգավաճ Հայաստան, Ժառանգություն և այլ զանգվածային կուսակցությունների ձևավորումը և գործունեությունը Հայաստանի 3- րդ Հանրապետության շրջանում: ***Թեմա 21՝*** Հայ քաղաքական կուսակցությունների խորհրդարանական գործունեությունը Հայաստանի 3-րդ Հանրապետության շրջանում:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

**0301/B38.** *«ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ներկայացնել դասային ներկայացուցչական միապետության ձևավորման ժամանակաշրջանը, Եվրոպական երկրների դասային համակարգերը, պետական կարգը և դրանց առաձնահատկությունները, ինչպես նաև ամերիկյան հասարակության մեջ ժողովրդավարական համակարգի ձևավորման հիմքերն ու զարգացման բնութագրիչները:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա դասային համակարգի ձևավորման առանձնահատկությունները.
2. ճշգրիտ պատկերացում կունենա այդ երկրների զարգացման քաղաքացիական հասարակությունների ձևավորման մասին.
3. կկարողանա ճշգրտորեն գնահատել ժողովրդավարական գործընթացների շարժընթացը ամերիկյան և եվրոպական հասարակություններում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ներածություն: ***Թեմա 2՝*** «Դեմոկրատիա» հասկացությունը: ***Թեմա 3՝*** Ժողովրդավարությունն արևմտյան ժողովրդաիշխանության համակարգում: ***Թեմա 4՝*** Ժողովրդաիշխանությունն արևմտյան ժողովրդավարության համակարգում: ***Թեմա 5՝*** Արևմտյան Ժողովրդավարությունների տիպաբանությունը: ***Թեմա 6՝*** Մեծ Բրիտանիա: ***Թեմա 7՝*** Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

***Թեմա 8՝*** Ֆրանսիա: ***Թեմա 9՝*** Իտալիա: ***Թեմա 10՝*** Հունաստան: ***Թեմա 11՝*** Գերմանիա: ***Թեմա 12՝*** Շվեյցարիա: ***Թեմա 13՝*** Իսպանիա: ***Թեմա 14՝*** Եվրոպական միության քաղաքական համակարգը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

**0301/B39.** ***«ԱՐԴԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ»***

*(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակ՝ *4–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համապատասխան գիտելիքներ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ռուսաստանում ձևավորվող քաղաքական կուսակցությունների և նրանց դերակատարության մասին:

***Կրթական արդյունքները***.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա Ռուսաստանի քաղաքական կուսակցությունների ձևավորման գործընթացը,
2. կհասկանա քաղաքական կուսակցությունների ձևավորման պատմական անհրաժեշտությունը և նրանց դերը երկրի քաղաքական կյանքում,
3. կկարողանա տեսական գիտելիքների հիման վրա վերլուծել երկրի քաղաքական կյանքը և անել տեսական ընդհանրացումներ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հեղափոխական նարոդնիկական շարժումը որպես քաղաքական կուսակցությունների ձևավորման նախորդ շրջան: ***Թեմա 2՝*** Մարքսիզմի տարածումը Ռուսաստանում և Գ. Վ. Պլեխանովի «Աշխատանքի ազատագրություն» խումբը: ***Թեմա 3՝*** ՌՍԴԲԿ ստեղծումը, նրա ծրագիրը և գործունեությունը: ***Թեմա 4՝*** Սոցիալիստ հեղափոխականների կուսակցությունը, նրա ծրագիրը և գործունեությունը: ***Թեմա 5՝*** Ռուսական լիբերալ կուսակցությունները. Սահմանադրական-դեմոկրատական կուսակցությունը: ***Թեմա 6՝*** «Հոկտեմբերի 17-ի միությունը» (Օկտյաբրիստներ) կուսակցությունը: ***Թեմա 7՝*** Կառավարական պահպանողական (կոնսերվատիվ) կուսակցությունները: ***Թեմա 8՝*** Տրուդովիկների («Աշխատանքային խումբ») մանրբուրժուական քաղաքական կուսակցությունը: ***Թեմա 9՝*** Բազմակուսակցական համակարգի վերացումը և միակուսակցական համակարգի ձևավորումը Ռուսաստանում: ***Թեմա 10՝*** Այլախոհական շարժումները ԽՍՀՄ-ում 1960–80-ական թթ.: ***Թեմա 11՝*** Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը և անցումը բազմակուսակցական համակարգի: ***Թեմա 12՝***

«Ռուսաստանի համայնքների կոնգրես» հասարակական-քաղաքական շարժումը: ***Թեմա 13՝*** «Միասնական Ռուսաստան» կուսակցությունը: ***Թեմա 14՝*** «Արդարացի Ռուսաստան» կուսակցությունը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

**0301/B40.** ***«ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ԵՎ ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»*** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *7-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների ծանոթացնել Առաջավոր Ասիայի, Կովկասի քաղաքակրթությունների պատմությանը, հոգևոր և նյութական մշակութային էթնիկ գործընթացներին:

***Կրթական արդյունքները***.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արդի քաղաքակրթությունների ծագման տեսական հիմնադրույթները.
2. կհասկանա ուսումնասիրվող հանրությունների քաղաքակրթական տիպաբանական կազմը.
3. կկարողանա կատարել վերլուծական դատողություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հին քաղաքակրթությունները և դրանց բնորոշումը, բաղադրիչ տարրերը: Մշակութային պրոցեսների ուսումնասիրումը և վերակազմությունը: ***Թեմա 2՝*** Վաղ երկրագործական պատմա-մշակութային համալիրները: ***Թեմա 3՝*** Միջագետքի հնագույն մշակույթները: Նեոլիթյան հեղափոխությունը և նրա հետևանքները: ***Թեմա 4՝*** Արևելամիջերկրական և փոքրասիական վաղ երկրագործական և հնագիտական մշակութային օջախները: ***Թեմա 5՝*** Իրանի հին մշակույթը: Փոխառնչությունները Հայկական լեռնաշխարհի վաղ երկրագործական օջախների հետ: ***Թեմա 6՝*** Կովկասի հնագիտական համազարկերը նեոլիթից երկաթի դարյան ժամանակաշրջանում: ***Թեմա 7՝*** Վանի թագավորության ֆենոմենը: Ուրարտական մշակույթի դրսևորումները Հայկական լեռնաշխարհում: Տերունական մշակույթ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/B41. *«ԿՈՎԿԱՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ),*

Կիսամյակը՝ *7–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել կովկասյան տարածաշրջանի քաղաքական և էթնիկ պատմության հիմնական փուլերին ու հիմնախնդիրներին, տարածաշրջանի զարգացումները դիտարկել հայոց պատմության և հայերի հետ փոխահարաբերությունների համատեքստում:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա տարածաշրջանի էթնիկ և քաղաքական պատմության հիմնական փուլերը,
2. ծանոթ կլինի ինչպես ողջ տարածաշրջանի, այնպես էլ վերջինիս առանձին կառուցվածքային միավորների էթնոքաղաքական պատմության հիմնական փուլերին,
3. ծանոթ կլինի տարածաշրջանի հիմնական էթնիկ հակամարտություններին ու կկարողանա տալ վերջիններիս համեմատական վերլուծությունը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Կովկասյան տարածաշրջանի էթնոքաղաքական հիմնական բնութագիրը, հիմնական էթնիկ հանրությունները: ***Թեմա 2՝*** Կովկասյան տա-րածաշրջանի էթնոքաղաքական պատմության հիմնական փուլերը. ըստ խոշոր տարածաշրջանների և էթնիկ հանրությունների: ***Թեմա 3՝*** Կովկասյան տարածաշրջանի հիմնական էթնիկ հակամարտությունները. ձևավորման ընթացքը, զարգացումները, արդի վիճակը: ***Թեմա 4՝*** Տարածաշրջանի արդի էթնոքաղաքական վիճակն ու զարգացման հեռանկարները: ***Թեմա 5՝*** Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանային զարգացումների համատեքստում:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

**0301/B15.** *«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *7–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության առավելապես բանավիճային և քիչ ուսումնասիրված հիմնախնդիրներին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի Հայկական հարցի առաջացման, նրա էության, զարգացման փուլերի շուրջ պատմագիտության մեջ գոյություն ունեցող իրարամերժ կարծիքներին,
2. կկազմի առավել խոր պատկերացում Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների և միջազգային դիվանագիտության դիրքորոշման, Հայկական հարցի ուղղությամբ հայ քաղաքական կուսակցությունների ռազմավարության և մարտավարության փոփոխությունների մասին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հայկական հարցի ծագման և նրա էության շուրջը պատմագրության մեջ գոյություն ունեցող կարծիքները և նշեց քննական վերլուծությունը: ***Թեմա 2՝*** Հայկական հարցի զարգացման փուլերը: ***Թեմա 3՝*** Հայկական հարցը հայ քաղաքական կուսակցությունների ծրագրերում: ***Թեմա 4՝*** Հայկական հարցի միջազգայնացումը: ***Թեմա 5՝*** Հայկական հարցը արդի փուլում, նրա բովանդակությունը և լուծման եղանակները: ***Թեմա 6՝*** Հայոց ցեղասպանության պատճառները: ***Թեմա 7՝*** Ցեղասպանության իրագործման փուլերը: ***Թեմա 8՝*** Հայոց ցեղասպանության դասերն ու հետևանքներ: ***Թեմա 9՝*** Միջազգային իրավունքը և ցեղասպանությունը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 1 է:

**0301/B51.** *«ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»* -1 *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *7–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ներկայացնել ժողովրդավարության որպես հասարակության կառավարման ձևի ծնունդը, զարգացումը և անկումը անտիկ քաղաքակրթության, մասնավորապես պոլիսային համակեցության համատեքստում: Դասընթացի ընթացքում քննության է ենթարկվում անտիկ ժողովրդավարության ինստիտուցիոնալ կառույցը (քաղաքացիության ինստիտուտ, աշխարհաժողով, պետական խորհուրդ, պաշտոնեություն, դատարաններ ևն), գաղափարախոսական հենքը: Դիտարկվում է «ժողովրդավարություն» հասկացության մշակումը, նրա հարաբերակցումը քաղաքական կառավարման մյուս ձևերի հետ անտիկ հասարակական-քաղաքական, իմաստասիրական մտքի ծիրում:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ժողովրդավարության իբրև հասարակության կառավարման ձևի առաջացման պատճառների, Հին Հունաստանում և Հռոմում զարգացման փուլերի մասին: Ինչպես նաև «ժողովրդավարություն» հասկացության տեսական բովանդակությանն անտիկ հասարակական-քաղաքական, իմաստասիրական մտքի մշակումների և առանձնահատկությունների մասին:
2. գնահատել անտիկ ժողովրդավարության իմաստը, բովանդակությունը, առանձնահատկությունները: Կպատկերացնի ժողովրդավարական հաստատությունների գործառույթները, իրավասությունները, դրանց գործառման ընթացակարգը:
3. վերհանել անտիկ ժողովրդավարության զարգացման ընդհանուր միտումներն ու առանձնահակությունները, առավել հիմնավոր կերպով շարունակել «Ժողովրդավարության պատմություն» դասընթացի ուսումնառությունը՝ հետևելով «ժողովրդավարություն» տերմինի, նրա բովանդակության, անտիկ քաղաքակրթության ծիրում մշակված ժողովրդավարական վարչակարգի կառուցակազմիկ բաղադրատարրերի, ժողովրդավարության տեսության կերպափոխմանը հետագա պատմական դարաշրջաններում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** «Ժողովրդավարություն» հասկացությունը, նրա իմաստային և ծագումնաբանական վերլուծությունը: ***Թեմա 2՝*** Քաղաքացիական համայնքն (պոլիս, կիվիտաս) իբրև անտիկ քաղաքակրթության հիմնարար կառույց և դրա կարևորագույն չափորոշիչները: ***Թեմա 3՝*** Պոլիսային համակեցության ձևավորումը Հին Հունաստանում: Ժողովրդավարական կարգի կայացման պատճառները Աթենքում: ***Թեմա 4՝*** Աթենական ժողովրդավարության կայացման փուլերը. Ա.Սոլոնի բարենորոգումները. Բ. Կլիսթենեսի և Պերիկլեսի բարենորոգումները, Գ. Պերիկլեսյան դարաշրջանը: ***Թեմա 5՝*** Ժողովրդավարական հաստատությունները, դրանց համալրման սկզբունքները, գործառույթները, իրավասությունները, գործառումը Հին Հունաստանում. Ա. Քաղաքացիության ինստիտուտ, բ. Աշխարհաժողով (էկլեսիա), գ. Պետական խորհուրդ (500-ի խորհուրդ, բուլե), դ. Արեոպագոս, ե. Դատական իշխանություն (հելիայա), զ.ործադիր իշխանություն (ստրատեգոսների խորհուրդ ևն): ***Թեմա 6՝*** Աթենական ժողովրդավարության ընկերային քաղաքականությունը: «Պերիկլեսի ճառը» և աթենական ժողովրդավարության գաղափարախոսությունը: ***Թեմա 7՝*** Թատրոնը որպես աթենական քա-

ղաքացիների կրթման «դպրոց»: ***Թեմա 8՝*** Պլատոնի հասարակագիտությունը («Պետություն», «Օրենքների մասին» տրամախոսությունները): ***Թեմա 9՝*** Արիստոտելի ուսմունքը մարդու, հասարակական համակեցության և պետության վերաբերյալ («Պոլիտեյա», «Աթենական պոլիտեյա», «Բարոյագիտություն»): ***Թեմա 10՝*** Ժողովրդավարության անկման պատճառները Հին Հունաստանում: Նրա պատմական նշանակությունը: Ժողովրդավարության զարգացման առանձնահատկությունները Հին Հռոմում: ***Թեմա 11՝*** Դասային պայքարը: Հանրապետական կարգի և հռոմեական քաղաքացիական համայնքի ձևավորումը Հին Հռոմում: ***Թեմա 12՝*** Հին Հռոմի պետական-քաղաքական կարգը Ք.ա. V-III դդ..ա. հռոմեական քաղաքացիության ինստիտուտը և նրա էվոլյուցիան, բ. աշխարհաժողով (կոմիտիաներ), գ. պետական խորհուրդ (սենատ), դ. գործադիր իշխանություն (մագիստրատուրաներ): ***Թեմա 13՝*** Ստոիկյան իմաստասիրությունը և հռոմեական «հասարակական ինքնաճանաչողությունը»: ***Թեմա 14՝*** Պոլիբիոսի «Համաշխարհային պատմությունը», խառը պետական կառույցի մասին նրա տեսությունը: Հանրապետական կարգի ճգնաժամի և անկման պատճառները: ***Թեմա 15՝*** Կ. Սալլուստիոսը որպես Հռոմեական Հանրապետության ճգնաժամի տեսաբան («Կատիլինայի դավադրությունը», «Յուգուրթական պատերազմ»): ***Թեմա 16՝*** Մ.Կ. Կիկերոնը և «հանրապետական միապետության» (պրինցիպատ) իմաստասիրական հարացույցի համակողմանի մշակումը («Հանրապետության մասին», «Օրենքների մասին», «Պարտականությունների մասին», «Բարեկամության մասին»): ***Թեմա 17՝*** Հռոմեական ժողովրդավարության պատմական նշանակությունը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 1 է:

**0301/B52. *«ՀՌՈՄԵԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՐՈՒՅԹԸ»*** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *7–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ներկայացնել հռոմեական քաղաքակրթության հիմնական բաղադրատարրերը (լատիներեն լեզու, պետական կառույց, իրավունք, մշակույթ, արտադրական և մտահոգևոր տեխնոլոգիաներ) և նրա ազդեցությունը եվրոպական միջնադարյան, նոր և նորագույն քաղաքակրթության նկարագրի վրա:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. եվրոպական քաղաքակրթության սկզբնավորման և զարգացման շրջափուլերի մասին՝ սկսած հռոմեական դարաշրջանից մինչև մեր օրերը՝ ըստ հիմնաբար պետական, հասարակական կառույցների, տեխնոլոգիաների, մշակութային և կրոնական հարացույցների:
2. եվրոպական քաղաքակրթության տիպաբանության և հիմնական հատկանիշների մասին
3. եվրոպական ինքնության և պատմական տարբեր շրջափուլերում եվրոպական համընդհանրության տարբեր հարացույցների մասին
4. Եվրոպան դիտարկել իբրև միասնական քաղաքակրթական գործընթաց (անցյալ, ներկա, ապագա)
5. ի մի բերել համաշխարհային պատմության դասընթացներում (Անտիկ պատմություն, Միջին դարերի պատմություն, Նոր պատմություն, Նորագույն պատմություն) ձեռք բերած գիտելիքները եվրոպական պատմության վերաբերյալ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հռոմեական քաղաքակրթության ընդհանուր բնութագիրը՝ պետական, հասարակական կառույց, գաղափարախոսություն, իրավունք, արտադրական տեխնոլոգիաներ, մշակույթ, լեզու, կենցաղավարություն են: ***Թեմա 2՝*** Հռոմեական տերության ձևավորումը (Ք. ա. II - Ք. հ. III դդ.): ***Թեմա 3՝*** Հռոմեական խաղաղության հարացույցը: ***Թեմա 4՝*** Հռոմեական կայսրությունը իբրև միջազգային տարասեռ հարաբերությունների միջավայր: ***Թեմա 5՝*** Ռոմանականացման գործընթացը Արևմուտքում՝ քաղաքներ, վարչական ապարատ, տեխնոլոգիաներ, լատիներեն լեզու, մշակույթ, հռոմեական ապրելաձև են: ***Թեմա 6՝*** Ուշ անտիկ դարաշրջան (Ք. ա. 3-7-րդ դդ.): ***Թեմա 7՝*** Բարբարոսական արշավանքները և հռոմեական քաղաքակրթության կերպափոխությունը: ***Թեմա 8՝*** Արևմտաեվրոպական քաղաքակրթությունը իբրև հռոմեական և բարբարոսական աշխարհների համաձուլման միջավայր: ***Թեմա 9՝*** Միջնադարյան քաղաքակրթական կենտրոնները Արևմտյան Եվրոպայում: ***Թեմա 10՝*** Վաղ պետական կազմավորումները և ժողովուրդների ձևավորման գործընթացը: ***Թեմա 11՝*** Եվրոպայի քաղաքական միասնության (կայսրության) գաղափարը (Կարլոս Մեծ, Օտտոն Ա): ***Թեմա 12՝*** Պապականությունը և քրիստոնեական համընդհանրությունը: ***Թեմա 13՝*** Քաղաքական բազմազանությունը և հոգևոր-մշակութային ընդհանրությունը Արևմտյան Եվրոպայում: ***Թեմա 14՝*** Վերածնունդը և եվրոպական համընդհանրության նոր հարացույցը: ***Թեմա 15՝*** Ռեֆորմացիան և եվրոպական համընդհանրության նոր հարացույցը: ***Թեմա 16՝*** Արդյունաբերական քաղաքակրթությունը (17-րդ դ. - 20-րդ դ. սկիզբ) և հռոմեական ժառանգությունը: ***Թեմա 17՝*** Հասարակության նորացումը՝ տեխնոլոգիաներ, պետական կառավարման ձևեր (հեղափոխություններ, լուսավորյալ միապետություն, պառլամենտարիզմ), հասարակական միտք են: ***Թեմա 18՝*** Հետարդյունաբերական քաղաքակրթությունը և հռոմեական ժառանգությունը (20-րդ դ. կեսից մինչև մեր օրերը): ***Թեմա 19՝*** Եվրամիությունը և եվրոպական հանընդհանրության արդի հարացույցը՝ միություն բազմազանության մեջ:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 1 է

**0301/B53.** ***«ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** **-2** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *8–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ներկայացնել ժողովրդավարության որպես հասարակության կառավարման ձև, ավելի քան 2.5 հազ. տարի աշխարհը ծանոթ է այդպիսի երևույթի, ինչպիսին է ժողովրդավարությունը: Այն բավականին տեղական ժամանակընթացքում մարդիկ հնարավորություն ունեին համեմատելու և համադրելու տարբեր կառավարման ձևն ու պետական կառուցվածքները, մարդու և իշխանության փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Արդյունքում արևմտյան քաղաքագիտական միտքն հանգեց այն դատողությանը, որ պետական կառավարման և մարդկային համակեցության արդյունավետ գործունեության համար մարդու կառավարման ձևերից ժողովրդավարությունն ամենա արդյունավետն է և ընդունելի:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա ժողովրդավարությունը զարգացման ինչ փուլերով է անցել ծուրջ 3 հազ. տարվա ընթացքում,
2. կհասկանա անտիկ ռեսպուբլիկայի և դեմոկրատիայի իմաստային տարբերությունը,
3. կկարողանա կիրառել անտիկ և միջնադարյան ռեսպուբլիկանիզմի և դեմոկրատիայի փորձը արդի քաղաքագիտական տեսությունները ուսումնասիրելիս և վերլուծելիս:

**Բովանդակություն.**

***Թեմա 1՝*** Իտալական քաղաք-պետությունները Բարձր միջնադարում: ***Թեմա 2՝*** Ռեսպուբլիկանիզմի նոր փորձառություն: ***Թեմա 3՝*** Միջնադարյան դուբրովնիկ քաղաք-պետության առանձնահատկությունները: ***Թեմա 4՝*** Պարոն Մեծ Նովգորոդի և Սկովի հանրապետությունները 9-16-րդ դդ.: ***Թեմա 5՝*** Անտիկ և միջնադարյան հանրապետությունների համեմատությունն ու համադրությունը: ***Թեմա 6՝*** Արդիականացման գործընթացները Անգլիայում 1688թ. «Փառահեղ հեղափոխությունից» հետո: ***Թեմա 7՝*** Սահմանադրական միապետություն: ***Թեմա 8՝*** Ժամանակակից ժողովրդավարության մեխանիզմների ամրագրումը 18-րդ դարի վերջին Միացյալ Նահանգներում: ***Թեմա 9՝*** Ֆրանսիական բուրժուական հեղափոխությունն և դրա ազդեցությունը 19-րդ դարի Եվրոպայի քաղաքականացման և ժողովրդավարացման հիման վրա: ***Թեմա 10՝*** Արդի ժողովրդավարության տարբերակների կոնսոլիդացումը Ամերիկյան և Ֆրանսիական ժողովրդա-

վարության ձեռքբերումների հիման վրա: ***Թեմա 11՝*** Ժողովրդավարական ինստիտուտները և քաղաքացիական հասարակությունը արդի դարաշրջանում: ***Թեմա 12՝*** Հայաստանը արդի ժողովրդավարության համատեքստում:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

**0301/ B 72. <<ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ>>** (*4 կրեդիտ*)
Շաբաթական՝ 6 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *8–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է դիտարկել անցման / տրանզիտի ազգաբանական /մարդաբանական առումները: Քննարկվում են անցումաբանության/ տրանզիտոլոգիա հիմնական հասկացությունները, տեսություններն ու մեթոդաբանությունը: Տրվում են տարբեր պատմական ժամանակահատվածներում տեղի ունեցած համակարգային անցումների ընդհանուր բնութագիրն ու հասարակական-մշակութային ազդեցություններն ու հետևանքները: Դիտարկվում է հայաստանյան/հայկական հասարակությունը անցումային տարբեր գործընթացներում:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պատկերացում կունենա Անցման / տրանզիտի որպես համակարգային գործընթացի համակարգային հիմքերի ու բաղադրիչների, անցումային շրջանի հասարակությունների հիմնական փոխակերպումների մասին, տարբեր պատմական ժամանակահատվածներում հայաստանյան հասարակության համակարգային անցումների, փոխակերպումների, վերջինիս ազդեցությունների ու հետևանքների մասին:

2.կկարողանա ազգաբանական տեսանկյունից քննարկել ու վերլուծել անցումային հասարակությունները, տալ վերջիններիս համեմատական բնութագիրը,

3. վերլուծելու անցման, տրանզիտի ազգաբանական / մարդաբանական առումները, հասարակական ու մշակութային հիմքերն ու պատճառները վերլուծելու հայաստանյան հասարակությունը անցման տարբեր փուլերում, հասկանալու քաղաքական/քաղաքակրթական փոփոխությունների տրամաբանությունը:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Անցումաբանությունը / տրազիտոլոգիան որպես առանձին գիտակարգ. կայացման ու զարգացման հիմնական փուլերը, խնդիրները:

Տեսություններն ու փոփոխությունները: **Թեմա 2.** Համակարգային անցումների առավել կարևոր փուլերը տարբեր պատմական ժամանակահատվածներում: **Թեմա 3**. Հիմնական համակարգային անցումները 20-րդ դարում. Պատճառներն ու քաղաքակրթական հետևանքները: Հայաստանյան հասարակությունը որպես անցումային հասարակություն տարբեր պատմական ժամանակահատվածներում:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

2 ընթացիկ ստուգում, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով: ***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

**0301/B42.** *«ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝6 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *8–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ներկայացնել Հունաստանի պատմությունը օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում, նրա անկախության վերականգնման և տնտեսական, մշակութային զարգացման հիմնախնդիրները մինչև մեր օրերը:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կպատկերացնի Հունաստանի պատմության՝ վերսկսած օսմանյան տիրապետությունից մինչև 1930թ. անկախության ժամանակաշրջանը,
2. կիմանա Հունաստանի տնտեսական, կրոնական զարգացումները մինչև մեր օրերը,
3. կընկալի հույն ժողովրդի ստեղծած մշակութային արժեքները,
4. ճիշտ կմեկնաբանի նրա տեղն ու դերը արդի աշխարհում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ Բալկանյան թերակղզու և Հունաստանի նվաճումը Հռոմի կողմից: Հունաստանը Հռոմեական տիրապետության ժամանակաշրջանում: ***Թեմա 2***՝ Լոնդոնի կոնֆերանսը և Հունաստանի անկախության ճանաչումը: ***Թեմա 3***՝ Հունաստանի ներքաղաքական դրությունը 60-ական թթ.: ***Թեմա 4***՝ Հունաստանը անգլիական դիվանագիտության ծրագրերում: ***Թեմա 5***՝ Հունաստանի մասնակցությունը Փարիզի հաշտության կոնֆերանսին: ***Թեմա 6***՝ Լոզանի կոնֆերանսի որոշումները Հունաստանի վերաբերյալ: ***Թեմա 7***՝ Հունաստանը երկրորդ աշխարհամարտի և քաղաքացիական պատերազմների հետնախորքում: ***Թեմա 8***՝ Հունաստանի ներքաղաքական կյանքի դեմոկրատացման համար մղված պայքարը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

*1-ին ստուգում.* Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

**0301/B53.** *« ԹՈՒՐՔԻԱՅԻ և ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 6 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *8–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել Թուրքիայի (13-րդ դարից սկսած) և Իրանի (3-րդ դ-ից սկսած) պատմությունը, բացահայտել տարբեր ժամանակաշրջաններում այդ երկրների զարգացման օրինաչափությունները, արտաքին և ներքին քաղաքականությունների միտումները:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա Թուրքիայի և Իրանի պատմության հիմնական խնդիրները,
2. կհասկանա Թուրքիայի և Իրանի պատմական զարգացման օրինաչափությունները՝ տիրապետելով պատմության վերլուծական մեթոդին,
3. ձեռք կբերի ընդհանուր պատկերացումներ Թուրքիայի և Իրանի պատմության վերաբերյալ,
4. կկարողանա կատարել անհրաժեշտ համեմատական եզրահանգումներ,
5. ի վիճակի կլինի մասնակցելու գիտաժողովների և կոնֆերանսների:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Թուրքիա. 1–ին Թուրքական պետական կազմավորումները Փոքր Ասիայում: Օսմանյան պետության կազմավորումը: ***Թեմա 2*** ՝ Օսմանյան կայսրությունը 16–18-րդ դդ.: ***Թեմա 3՝*** Օսմանյան կայսրությունը 19-րդ դդ.: ***Թեմա 4՝*** Օսմանյան կայսրությունը 1900–1918 թթ.: Պանթուրքիզմի քաղաքականությունը և կայսրության կործանումը: ***Թեմա 5՝*** Թուրքիայի Հանրապետությունը (մինչև 1945 թ.): ***Թեմա 6՝*** Թուրքիան 1945–2005 թթ.: ***Թեմա 7*** Իրան. Սասանյան Իրանը 3-7-րդ դդ.: ***Թեմա 8՝*** Արաբական տիրապետությունը Իրանում: ***Թեմա 9՝*** Իրանը 11-15-րդ դդ.: ***Թեմա 10՝*** Սեֆյան Իրանը (Պարսկաստանը) 16-18-րդ դդ.: ***Թեմա 11՝*** Իրանը 19-րդ դ.: ***Թեմա 12՝*** Իրանը 20-րդ դ. 1-ին կեսին: ***Թեմա 13՝*** Իրանը 20-րդ դ. 2-րդ կեսին:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

*1-ին ստուգում.* Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

## 4.2. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն

**0302/B03.** *«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»* -1*(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *1–ին, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի հնչյունական և բառային համակարգերն իրենց տարբեր հատկանիշներով, ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի հնչյունների հատկանիշներն ու դասակարգման սկզբունքները, բառապաշարի ընդհանուր հատկանիշները,
2. կհասկանա հնչյունափոխական առանձնահատկությունները, գրանշանների և հնչյունների փոխհարաբերությունը,
3. կկարողանա կատարել բառերի հնչյունաբանական վերլուծություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում. հայերենի զարգացման փուլերը: ***Թեմա 2՝*** Հայերենի հնչյունական համակարգը. այբուբենի հատկանիշները: ***Թեմա 3՝*** Հնչյուն և հնչույթ. հնչույթ և գրանշան: ***Թեմա 4՝*** Ձայնավորների դասակարգումը. բաղաձայնների դասակարգումը: ***Թեմա 5՝*** Շեշտը հայերենում. վանկ. տողադարձ: ***Թեմա 6՝*** Հնչյունափոխությունը և նրա տեսակները: ***Թեմա 7՝*** Հայերենի ուղղագրության սկզբունքները. ուղղագրական բարեփոխումներ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**0302/B13.** *«ԳՐԱԲԱՐ»* -1*(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(64 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *1–ին, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի հնչյունական և բառային իրողությունները:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրաբարի հնչյունական, ուղղագրական, հնչյունափոխական և բառային հատկանիշները,
2. կհասկանա գրաբար տեքստերը,
3. կկարողանա կատարել գրաբարյան բնագրերի հնչյունաբանական, բառապաշարային վերլուծություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Գրաբարը՝ որպես հայերենի զարգացման շրջան. գրաբարի ընդհանուր առանձնահատկությունները: ***Թեմա 2՝*** Գրաբարի հնչյունական համակարգը. երկբարբառներ և եռաբարբառներ: ***Թեմա 3՝*** Գրաբարի դերբայները: ***Թեմա 4՝*** Գրաբարի խոնարհման համակարգը. սահմանական, ստորադասական և հրամայական եղանակներ: ***Թեմա 5՝*** Գրաբարի անկանոն բայերը: ***Թեմա 6՝*** Գրաբարի պակասավոր բայերը: Պատճառական բայեր. գրաբարի բաղադրյալ ժամանակները:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**0302/B31.** *«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1–ին, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ ժողովրդի բանահյուսությունը, բանահյուսական ստեղծագործությունների ժանրերը, նրանց առանձնահատկությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բանահյուսության և գեղարվեստական գրականության ընդհանրություններն ու տարբերությունները,
2. կհասկանա բանահյուսական ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունները,
3. կկարողանա կատարել բանահյուսական նյութերի ուսումնասիրություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ժողովրդական բանահյուսության առարկան և հատկանիշները: ***Թեմա 2՝*** Բանահյուսության սեռերն ու ժանրերը: ***Թեմա 3.*** Բանագիտական դպրոցները: ***Թեմա 4.*** Հայ բանագիտությունը: ***Թեմա 5.*** Առասպելի ժանրը. վիպականն ու պատմականը հայ հին առասպելներում: «Պարսից պատերազմ»,

«Տարոնի պատերազմ» վեպերը: ***Թեմա 6.*** Հայ ժողովրդական էպոսը. էպոսի ժանրային առանձնահատկությունները. էպոսի պատումները: ***Թեմա 7.*** Հայ ժողովրդական հեքիաթները. հրաշապատում և իրապատում հեքիաթներ. դրանց մշակման եղանակները: Ավանդազրույցներ: ***Թեմա 8.*** Առակ, առած, ասացվածք, հանելուկ: ***Թեմա 9.*** Հայկական վիպական երգեր: ***Թեմա 10.*** Հայ ժողովրդական քնարերգություն. հայ գուսանական երգեր:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4 3, 3 միավոր:

**0303/B57.** *«ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ 1*–ին, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել գրականագիտական հիմնական հարցերը, խնդիրները, գրականության զարգացման օրինաչափությունները:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրականագիտական առարկաների փոխադարձ առնչությունները, գրականագիտական մտքի պատմական զարգացման օրինաչափությունները.
2. կհասկանա գրական ժանրերի, տաղաչափական համակարգերի առանձնահատկությունները, գրականության լեզվաարտահայտչական միջոցները.
3. կկարողանա կատարել գրականագիտական ուսումնասիրություններ, կողմնորոշվել գրականագիտական հարցերում և կատարել գրական տեքստերի վերլուծություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Գրականագիտությունը և նրա բաժինները. գրականությունն արվեստների համակարգում: ***Թեմա 2՝*** Գեղարվեստական պատկեր: ***Թեմա 3՝*** Գրական երկի բովանդակության և ձևի միասնությունը: ***Թեմա 4՝*** Թեմա, թեմատիկա, կառուցվածք, սյուժեյ ֆաբուլա: ***Թեմա 5՝*** Գեղարվեստական լեզվի առանձնահատկությունները: ***Թեմա 6՝*** Չափածո երկի կառուցվածքը. տաղաչափական համակարգեր: ***Թեմա 7՝*** Գրական սեռեր և ժանրեր:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

0302/B04. *«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»* -2 *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի հնչյունական և բառային համակարգերն իրենց տարբեր հատկանիշներով, ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի բառապաշարի հատկանիշները, բառերի ձևաիմաստային խմբերի դասակարգման սկզբունքները, բառակազմական օրինաչափությունները,
2. կհասկանա բառերի ստուգաբանական իմաստները, բառիմաստի պատմական փոփոխությունները, դարձվածների կազմությունն ու գործածության ոճական նպատակը,
3. կկարողանա կատարել բառակազմական վերլուծություններ, ճիշտ կկիրառի ձևաիմաստային տարբեր խմբերի բառերը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Բառագիտություն. նրա ենթաբաժինները: ***Թեմա 2՝*** Բառային մենիմաստություն և բազմիմաստություն. բառիմաստի փոփոխություն. բառերի ձևաիմաստային խմբերը: ***Թեմա 3՝*** Բառապաշար. նրա հատկանիշները: Բառապաշարի շերտերը և դրանց դասակարգումը: ***Թեմա 4՝*** Բառակազմություն: Ձևույթը և նրա տեսակները: ***Թեմա 5՝*** Բարդություններ, նրանց տեսակները: ***Թեմա 6՝*** Դարձվածաբանություն. դարձվածային միավորների հատկանիշները և դասակարգումը: ***Թեմա 7՝*** Բառարանագրություն. բառարանների տիպերը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**0302/B14.** ***«ԳՐԱԲԱՐ» -2****(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(64 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի բառային և ձևաբանական իրողությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրաբարի բառային և ձևաբանական հատկանիշները,
2. կհասկանա գրաբար տեքստերը,
3. կկարողանա կատարել գրաբարյան բնագրերի բառապաշարային և ձևաբանական վերլուծություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Գրաբարի անվանական հոլովումը: Հոլովները և նրանց կազմությունը. հոլովման համակարգի տարբերությունն աշխարհաբարի համեմատությամբ: ***Թեմա 2՝*** Պարզ հոլովումներ. Ա, Ե, Ի, Ո, ՈՒ, հոլովումներ: ***Թեմա 3՝*** Խառը հոլովումներ. Ի-Ա, Ո-Ա հոլովումներ: ***Թեմա 4՝*** Անկանոն հոլովումներ: ***Թեմա 5՝*** Ածական անուն: Ածականների համեմատական աստիճանների կազմությունը: Թվական անուն:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**0302/B18.** *«ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(64 ժամ դասախոսություն, 32 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ հին և միջնադարյան գրավոր գրականությունն իր ծագման և զարգացման սկզբնական դարե-

րում (5–9–րդ դդ.), հայ գրականության պատմության մեջ առանձնացվող վերածննդի և ուշ միջնադարյան շրջանների (10-18–րդ դդ.) գրականությունների առանձնահատկությունները, նրանց գաղափարական տարբերությունները, այդ շրջանների հայտնի ստեղծագործողների կյանքը, ժամանակը, նրանց ստեղծագործությունները և բացահայտել դրանց առանձնահատկությունները:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ հին և միջնադարյան գրականության ծագման և զարգացման պատմությունը 5-9-րդ դդ., հայ միջնադարյան գրականության պատմության մեջ առանձնացվող վերածննդի և ուշ միջնադարյան շրջանների (10-18-րդ դդ.) գրականությունների առանձնահատկությունները,
2. կհասկանա հայ հին և միջնադարյան գրավոր գրականության (5-9-րդ դդ.) ազգային-պատմական, գրական-հասարակական դերն ու նշանակությունը, վերածննդի հայ գրականության և ուշ միջնադարյան շրջանի գրողների ստեղծագործությունների բովանդակության էությունը և վերջինս կապը պատմական ժամանակաշրջանի աշխարհայեցողության հետ,
3. կկարողանա գնահատել հայ հին և միջնադարյան գրականության՝ 5-ից 9-րդ դարերի շրջանը ապահովող ազգային-քաղաքական, կրոնական-մշակութային խնդիրները, վերածննդի և ուշ միջնադարյան շրջանի հեղինակների գործերը, պայմանավորել յուրաքանչյուրի ու նրա ստեղծագործության գաղափարական առնչությունը ժամանակաշրջանի ազգային–հասարակական տրամադրությունների հետ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հայ մշակույթը մինչև 5-րդ դարը. Մեսրոպ Մաշտոցը և գրերի ստեղծումը. գրականության զարգացման հիմնական ուղղությունները: ***Թեմա 2՝*** Ագաթանգեղոս, Փ. Բուզանդ, Մ. Խորենացի, Եղիշե, Ղ. Փարպեցի: ***Թեմա 3՝*** Հայ գրականությունը 6-9-րդ դդ. Սեբեոս, Հ. Մամիկոնյան, Ղևոնդ Երեց, Դ. Քերթող, եկեղեցական բանաստեղծություն: ***Թեմա 4՝*** Հայ գրականությունը 10- 12-րդ դդ. Հ. Դրասխանակերտցի, Թ. Արծրունի, Գ. Նարեկացի, Գ. Մագիստրոս, Հ. Իմաստասեր, Ն. Շնորհալի, Մ. Գոշ: ***Թեմա 5՝*** Հայ գրականությունը 13-16-րդ դդ. Վ. Այգեկցի, Ֆրիկ, Կ. Երզնկացի, Հ. Թլկուրանցի, Մ. Նաղաշ, Գ. Աղթամարցի, Ն. Քուչակ: ***Թեմա 6՝*** Հայ գրականությունը 17-18-րդ դդ. Ն. Հովնաթան, Սայաթ-Նովա:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**0302/B09.** *«ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *2–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել լեզվաբանական ընդհանուր կարգերը. աշխարհի լեզուների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի ընդհանուր առանձնահատկությունները, աշխարհի լեզուներն ու նրանց բաշխումը լեզվաընտանիքներում:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա լեզվական ընդհանուր կարգերը.
2. կհասկանա ցեղակից և ոչ ցեղակից լեզուների նմանություններն ու տարբերությունները.
3. կկարողանա տարբերել տարբեր լեզվաընտանիքների պատկանող լեզուները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Լեզվի բնութագիրը. լեզվի բնորոշումը. լեզվի գոյության ձևերը: ***Թեմա 2՝*** Լեզուների հնչյունական համակարգերի նմանություններն ու տարբերությունները. գրային համակարգեր: ***Թեմա 3՝*** Լեզուների բառային համակարգերը: ***Թեմա 4՝*** Լեզուների ձևաբանական համակարգերը: ***Թեմա 5՝*** Լեզուների շարահյուսական համակարգերը: ***Թեմա 6՝*** Լեզվի ծագումը: ***Թեմա 7՝*** Աշխարհի լեզուների դասակարգումը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3, 3 միավոր:

**0303/B03.** *«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ 2*–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդու հոգեկան երևույթների առանցքային օրինաչափություններին և մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել իրենց ապագա մասնագիտական իրացման մեջ հոգեբանական գիտելիքի կիրառմանը:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեբանության ընդհանուր դրույթները, հոգեկան գործընթացների և վիճակների առանձնահատկությունները և ձևավորման հիմնական օրինաչափությունները,
2. կհասկանա հոգեբանական վերլուծությունները,
3. կկարողանա կիրառել հոգեբանական իմացությունը մասնագիտական և մանկավարժական գործունեության մեջ, ինչպես նաև հասարակական կյանքում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հոգեբանության առարկան, խնդիրները, ոլորտները: Հասկացություն հոգեկանի մասին: Հոգեկանի կառուցվածքը և ֆունկցիաները: ***Թեմա 2՝*** Պերցեպտիվ պրոցեսների հոգեբանություն: ***Թեմա 3՝*** Կոգնիտիվ պրոցեսների հոգեբանություն: ***Թեմա 4՝*** Անձ, անհատ, անհատականություն հասկացությունները հոգեբանության մեջ: ***Թեմա 5՝*** Սոցիալական խմբեր: Առաջնորդություն: Շփում, հաղորդակցում: ***Թեմա 6՝*** Մանկավարժական և տարիքային հոգեբանության առարկան և խնդիրները: Տարիքային պարբերացում և ճգնաժամեր: Կրթության և դաստիարակության հոգեբանական առանձնահատկությունները:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Անհատական առաջադրանք(ռեֆերատ):Միավորների քայլը 0.5 է:

**0302/B20.** ***«19-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** -1*(5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել 19–րդ դարի հայ գրականության գրական ուղղությունները, հայ նոր գրականության ձևավորումը:

*Կրթական արդյունքները.*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-րդ դարի հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ.
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական–հասարակական դերը.
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հայ ժողովրդի քաղաքական կացությունը 19-րդ դարի սկզբին. հայ լուսավորական շարժումը. Մխիթարյաններ. կլասիցիզմը հայ գրականության մեջ. հայ գրականության նոր շրջանի սկզբնավորումը: ***Թեմա 2՝*** Հ. Ալամդարյան, Մ. Թաղիադյան: ***Թեմա 3՝*** Խ. Աբովյան, Ղ. Ալիշան: ***Թեմա 4՝*** Հայ գրականությունը 1850-60-ական թթ. Մ. Նալբանդյան: ***Թեմա 5՝*** Ռ. Պատկանյան, Ս. Շահազիզ: ***Թեմա 6՝*** Մ. Պեշիկթաշլյան, Պ. Դուրյան:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**0302/B15.** *«ԳՐԱԲԱՐ»* -3*(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(64 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի ձևաբանական և շարահյուսական իրողությունները:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրաբարի ձևաբանական և շարահյուսական հատկանիշները,
2. կհասկանա գրաբար տեքստերը,
3. կկարողանա կատարել գրաբարյան բնագրերի ձևաբանական և շարահյուսական վերլուծություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Գրաբարի դերանվանական հոլովումը: Անձնական դերանունները և նրանց հոլովումը: ***Թեմա 2՝*** Ցուցական դերանունները և նրանց հոլովումը: ***Թեմա 3՝*** Ստացական և փոխադարձ դերանուններ: ***Թեմա 4՝*** Հարցահարաբերական և անորոշ դերանուններ: ***Թեմա 5՝*** Մակբայների տեսակներն ու կազմությունը գրաբարում: ***Թեմա 6՝*** Գրաբարի նախդիրները և նախադրությունները: Գրաբարի հոդերը: Գրաբարի շաղկապները:

*Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**0304/B91.** ***«ԱՆՏԻԿ ԵՎ ՎԵՐԱԾՆՆԴԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** *(5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել անտիկ և վերածննդի շրջանի արտասահմանյան գրականության սեռային և ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անտիկ և վերածննդի շրջանի գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ,
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Անտիկ գրականության առարկան, համառոտ պատմական ակնարկ. նախահոմերոսյան Հունաստանը: ***Թեմա 2՝*** Հոմերոսյան հարցի պատմությունը. Հոմերոսի ստեղծագործությունը: ***Թեմա 3՝*** Անտիկ շրջանի պոեմները. բանաստեղծությունը. քնարերգության առաջացումը. հումոր և երգիծանք: ***Թեմա 4՝*** Թատրոնը և դրամայի ծագումը. ողբերգություններ և կատակերգություններ: ***Թեմա 5՝*** Անտիկ աշխարհի կործանումը. քրիստոնեական գրականության սկզբնավորումը: ***Թեմա 6՝*** Միջնադարյան մշակույթի առանձնահատկությունները. աստվածաբանական-փիլիսոփայական երկեր: ***Թեմա 7՝*** Լեգենդներ և վարքագրություններ. հոգևոր դրամա. էպիկական պոեմներ. ասպետական վեպ: ***Թեմա 8՝*** Դանթե. Պետրարկա. Բոկաչիո. Է. Ռոտերդամցի. Ֆ. Վիյոն. Ֆ. Ռաբլե: ***Թեմա 9՝*** Պիկարոյական վեպը. հովվերգական վեպ. պատմական ողբերգութ-յուն-ներ. փիլիսոփայական պիեսներ. քնարերգություն:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0303/B21.** ***«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ»*** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *3–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժություն գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը գիտական հարացույցների հիմքի վրա և ցույց տալ մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մանկավարժության ժամանակակից տեսությունները, մանկավարժություն գիտության ճյուղերը, ՀՀ կրթության համակարգի կառուցվածքը և արդի բարեփոխումները, ուսուցման նոր տեսակները, ուսուցման կազմակերպման նոր ձևերն ու մեթոդները.
2. կհասկանա մանկավարժության գիտության տեղն ու դերը մարդու անձի ձևավորման ու զարգացման, նրա կրթության ու դաստիարակության գործում՝ սոցիալականացման համատեքստում.
3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում՝ նախ մանկավարժական պրակտիկայում, ապա աշխատանքային գործունեության ժամանակ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Մանկավարժություն գիտության հիմնական հասկացությունները, օրինաչափությունները, առարկան, խնդիրները: ***Թեմա 2՝*** Մանկավարժական գիտությունների համակարգը, ՀՀ կրթության համակարգը և բարեփոխումները: Մանկավարժական մտքի պատմական զարգացումը: ***Թեմա 3՝*** Դիդակտիկայի հիմունքները: ***Թեմա 4՝*** Ուսուցման նպատակները, գործընթացի մեթոդաբանական հիմքերը: Ուսուցման սկզբունքները, մեթոդները, կազմակերպման ձևերը, միջոցները: ***Թեմա 5՝*** Կրթության բովանդակությունը, նպատակը, խնդիրները: ***Թեմա 6՝*** Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացում: ***Թեմա 7՝*** Դաստիարակության հիմունքները, էությունը, սկզբունքները և համակարգը, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, սեռական, իրավական, տնտեսագիտական, գոյապահպանական դաստիարակության մեթոդները, միջոցները, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներ. դպրոցի կառավարում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**0302/B05.** ***«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»*** **-1**
*(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *3–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգը, գոյական, ածական, թվական, դերանուն խոսքի մասերի հատկանիշները, ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգի հատկանիշները,
2. կիսականա խոսքի մասերի դասակարգման սկզբունքները, քերականական կարգերի տարբերակման չափանիշները,
3. կկարողանա կատարել ձևաբանական վերլուծություններ, ճիշտ կկիրառի քերականական զուգաձևությունները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ձևաբանությունը՝ որպես լեզվաբանության բաժին. քերականական կարգեր. քերականական ձև, իմաստ և պաշտոն: ***Թեմա 2՝*** Խոսքի մասերի դասակարգման հիմունքները. թեքվող և չթեքվող խոսքի մասեր: ***Թեմա 3՝*** Գոյական. գոյականի թվի, հոլովի, առկայացման կարգերը. իմաստային-քերականական խմբերը: ***Թեմա 4՝*** Ածական. տեսակները և նրանց հատկանիշները: ***Թեմա 5՝*** Թվական. տեսակները և կազմությունը: ***Թեմա 6՝*** Դերանուն. նրա տեսակները և դրանց քերականական հատկանիշները: ***Թեմա 7՝*** Բայ. Բայերի կազմությունը, բայահիմքեր, դերբայներ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**0302/B06.** ***«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»*** **-2**
*(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(32 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *4–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգը, բայ, մակբայ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն խոսքի մասերի հատկանիշները, ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգի հատկանիշները,
2. կիասկանա խոսքի մասերի դասակարգման սկզբունքները, քերականական կարգերի տարբերակման չափանիշները,
3. կկարողանա կատարել ձևաբանական վերլուծություններ, ճիշտ կկիրառի քերականական զուգաձևությունները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Բայ. բայի քերականական կարգերը՝ դեմք, թիվ, ժամանակ, եղանակ, սեռ, կերպ, եղանակային ձևեր: ***Թեմա 2՝*** Մակբայ. նրա տեսակները և կազմությունը: ***Թեմա 3՝*** Կապ. նրա տեսակները. դասակարգման սկըզբունքները: ***Թեմա 4՝*** Շաղկապ. նրա տեսակները: ***Թեմա 5՝*** Վերաբերական. նրա տեսակները: ***Թեմա 6՝*** Ձայնարկություն. նրա տեսակները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**0302/B21.** ***«19–ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** **-2**

*(6 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(64 ժամ դասախոսություն, 32 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել 19-րդ դարի հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

*Կրթական արդյունքները.*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-րդ դարի հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ.

2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը.
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

**Բովանդակությունը**

***Թեմա 1՝*** Հայ հասարակական-քաղաքական կյանքը 19-րդ դարի 70-80-ական թթ. գրական հոսանքներ.: ***Թեմա 2՝*** Ռոմանտիզմը և ռեալիզմը հայ իրականության մեջ: ***Թեմա 3՝*** Պ. Պռոշյան, Ղ. Աղայան: ***Թեմա 4՝*** Գ. Սունդուկյան, Րաֆֆի: ***Թեմա 5՝*** Հ. Պարոնյան, Ծերենց: ***Թեմա 6՝*** Ս. Տյուսաբ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**0302/B12.** *«ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(16 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի դասավանդման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում, ծանոթացնել ուսուցման նոր մեթոդներին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կիմանա հայոց լեզվի բաժինները, նրանց ուսուցման առանձնահատկությունները, դասագրքերի ու ծրագրերի համապատասխանությունը, դասի պլանավորման ձևերը:
2. կհասկանա դասավանդման մեթոդիկայի կարևորությունը, դերն ու նշանակությունը ուսուցման և դաստիարակության ընթացքում, ծանոթ կլինի հայ և համաշխարհային նշանավոր մանկավարժների ուսուցման մեթոդներին:
3. կկարողանա վարել հայոց լեզվի դաս՝ ըստ հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագրերի ու ժամանակակից մեթոդների պահանջների:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հայոց լեզվի մեթոդիկան՝ որպես գիտաճյուղ. ուսուցման մեթոդներ. ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերը: /2/ ***Թեմա 2՝*** Ծրագրեր,

ուսումնական պլաններ, դասագրքեր: Հայոց լեզվի ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ: /2/ ***Թեմա 3՝*** Հնչյունաբանության ուսուցումը: /2/***Թեմա 4՝*** Բառագիտության ուսուցումը:/2/ ***Թեմա 5՝*** Ձևաբանության ուսուցումը:/4/ ***Թեմա 6՝*** Շարահյուսության ուսուցումը:/2/ ***Թեմա 7՝*** Գրավոր աշխատանքների տեսակները:/2/

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**0302/B30.** *«ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(16 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ գրականության դասավանդման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում, ծանոթացնել ուսուցման նոր մեթոդների կիրառմանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ գրականության ուսուցման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում,
2. կհասկանա տեսական նյութի մատուցման ձևերը,
3. կկարողանա վարել հայ գրականության դաս՝ ըստ հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագրերի:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Գրականության դասավանդման մեթոդիկան՝ որպես առարկա, նրա բովանդակությունը, նպատակը, խնդիրները: ***Թեմա 2՝*** Խոսքային, գործնական, զննական մեթոդներ: ***Թեմա 3՝*** Բացատրական ընթերցանություն: ***Թեմա 4՝*** Ընթերցում և վերլուծում: ***Թեմա 5՝*** Տեսական գիտելիքների դերը և դրանց գործնական կիրառությունը: ***Թեմա 6՝*** Գրական երկերի վերլուծության հիմնական ուղիները: ***Թեմա 7՝*** Գրավոր աշխատանքներ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**0304/B92.** ***«17-19-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** *(6 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *4–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ներկայացնել ուսանողներին նշված շրջանների արտասահմանյան գրականության ընդհանուր պատկերը, զարգացման ընթացքը, հիմնական ուղղությունները:

***Կրթական արդյունքները***.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

2. կիմանա 17-19-րդ դարերի արտասահմանյան գրականության ուղղությունները, ժանրերը, զարգացման օրինաչափությունները, գաղափարական և գեղագիտական հիմքերն ու նվաճումները,
3. հասկանա գրական երկերի գաղափարական առանձնահատկությունները, դրանց պատմական-հասարակական դերը,
3. կկարողանա տալ նշված ժամանակաշրջանի հիմնական հեղինակների և նրանց ստեղծագործության նկարագիրը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ Կլասիցիզմի առաջացումը. կլասիցիզմի տեսությունը: ***Թեմա 2***՝ Անգլիական վեպի ձևավորումը և զարգացումը 18-րդ դարում: ***Թեմա 3***՝ Ֆրանսիական լուսավորչական գրականություն. պայքար կլասիցիզմի դեմ: ***Թեմա 4***՝ Ռոմանտիզմի պատմական նախադրյալները. ռոմանտիզմի փիլիսոփայական ակունքները: ***Թեմա 5***՝ Անհատի նշանակության բարձրացումը Գյոթեի փիլիսոփայության մեջ: ***Թեմա 6***՝ Գրականության պատմականության տեսակետը: ***Թեմա 7***՝ Քաղաքական երգիծանքը գրականության մեջ: ***Թեմա 8***՝ Ռոմանտիկական քնարերգություն:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0302/Բ73.** ***«13-18-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ»*** *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *4-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել 13-18-րդ դարերի հայ քնարերգության առանձնահատկություններին և նրա հետագա ավանդներին:

*Կրթական արդյունքները.*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 13-18-րդ դարերի հայ քնարերգության բովանդակային և տաղաչափական առանձնահատկությունները.
2. կհասկանա 13-18-րդ դարերի հայ քնարերգության յուրահատկությունները.
3. կկարողանա համադրել 13-18-րդ դարերի հայ քնարերգության և հետագա դարերի ստեղծագործությունները՝ մեկնաբանելով դրանց առնչությունները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Համառոտ ակնարկ հայ հին քնարերգության վերաբերյալ: ***Թեմա 2՝*** Միջնադարյան հայ քնարերգության ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 3՝*** Միջնադարյան տաղերգուներ: ***Թեմա 4՝*** Ֆրիկ, Հ. Երզնկացի, Կ. Երզնկացի, Թլկուրանցի, Ն. Քուչակ և այլն: ***Թեմա 5՝*** 13-18-րդ դարերի հայ քնարերգության տաղաչափական համակարգերը:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0302/B81. *«ՀԱՅ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *4–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել առասպելներին և նրանց առանձնահատկություններին, առասպելների արտացոլմանը գրականության մեջ:

*Կրթական արդյունքները.*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա առասպելների ծագումնաբանական և կառուցվածքային առանձնահատկությունները.
2. կհասկանա առասպելների զարգացումն ու տրանսֆորմացիայի ուղիները.
3. կկարողանա կատարել առասպելների ուսումնասիրություններ և վերլուծություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ընդհանուր առասպելաբանություն. առասպելաբանական մտածողություն: ***Թեմա 2՝*** Դասական առասպելներ. առասպելների զարգացումը: ***Թեմա 3՝*** Հայ առասպելաբանություն. հայկական դիցարանը: ***Թեմա 4՝*** Հայ առասպելաբանությունը և հայ բանահյուսությունը: ***Թեմա 5՝*** Առասպել և պատմություն: ***Թեմա 6՝*** Առասպել և գրականություն:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում*.** Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում*.** Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**0302/B55.** *«ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ 4*–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի բարբառները, դրանց դասակարգման սկզբունքները, բարբառների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի առանձնահատկությունները:

***Կրթական արդյունքները*.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բարբառների դասակարգման վերաբերյալ եղած տեսությունները.
2. կհասկանա հայերենի բարբառների հնչյունական, բառային և քերականական հատկանիշները.
3. կկարողանա տարբերել բարբառը, ենթաբարբառը, խոսվածքը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ Բարբառագիտությունը՝ որպես գիտաճյուղ: ***Թեմա 2***՝ Բարբառների դասակարգման վերաբերյալ եղած տեսությունները: ***Թեմա 3***՝ Բարբառների հնչյունական համակարգերը: ***Թեմա 4***՝ Բարբառների բառային համակարգերը: ***Թեմա 5***՝ Բարբառների ձևաբանական համակարգերի տարբերությունները. սահմանական ներկան՝ որպես բարբառների ճյուղերի տարբերակման հիմք. ՈՒՄ, ԿԸ, ԵԼ ճյուղերի բարբառներ: ***Թեմա 6***՝ Տարբեր ճյուղերի բարբառների ձևաբանական և շարահյուսական տարբերությունները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**0302/B82.** ***«ԳՐԱԲԱՐԻ ԵՎ ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»*** *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *4–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել գրաբարի և արդի արևելահայերենի հնչյունական, բառային և քերականական համակարգերի զուգադրական քննությանը:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

**0302/Բ79.** ***«ՖՐԱՆՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1920-60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵ-ՐԻՆ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(16 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *8-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել 1920-60-ական թթ. ֆրանսահայ գրականության նշանավոր դեմքերի ստեղծագործություններին:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 1920-60-ական թթ. ֆրանսահայ գրականության նշանավոր երկերը.
2. կհասկանա 1920-60-ական թթ. ֆրանսահայ գրականության զարգացման առանձնահատկությունները.
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ֆրանսահայ գաղթօջախի կազմավորումը, քաղաքական, տնտեսական և հոգևոր կառուցվածքը: ***Թեմա 2՝*** Գաղթօջախի զարգացման միտումները 1920-60-ական թթ.: ***Թեմա 3՝*** Ֆրանսահայ գրական մամուլը: ***Թեմա 4՝*** 1920-60-ական թթ. ֆրանսահայ բանաստեղծությունը: ***Թեմա 5՝*** 1920-60-ական թթ. ֆրանսահայ արձակը. 1970-ական թթ. ֆրանսահայ գրական նոր սերունդը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**0302/Բ80.** ***«ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ՊՈԵՄԸ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(16 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *8-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել նորագույն շրջանի հայ պոեմի կարևոր նմուշներին, բացահայտել նրանց առանձնահատկությունները:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կիմանա նորագույն շրջանի հայ պոեմի առանձնահատկությունները.
2. կհասկանա նորագույն շրջանի հայ պոեմի կարևոր նմուշների գաղափարական շերտերը.
3. կկարողանա կատարել նորագույն շրջանի հայ գրականության պոեմների գրականագիտական վերլուծություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Պոեմի ժանրի համառոտ բնութագիրը: ***Թեմա 2՝*** Պոեմի ժանրը հայ դասական գրականության մեջ: ***Թեմա 3՝*** Հայ պոեմը 1940-50-ական թթ.: ***Թեմա 4՝*** Պոեմի ժանրի վերելքը 1960-ական թթ. ***Թեմա 5՝*** Հայ պոեմը 1970-80-ական թթ.: Ժամանակակից զարգացումները:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում***. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում***. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**0302/B83.** *«ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(16 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *8–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայերենի ուղղագրության պատմությանը, ուղղագրական փոփոխություններին, ժամանակակից հայերենի ուղղագրական և ուղղախոսական նորմերին :

*Կրթական արդյունքները.*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կիմանա հայերենի ուղղագրության հիմնական սկզբունքները և նրանց փոփոխությունները ժամանակի ընթացքում.
2. կհասկանա լեզվի պատմական զարգացման ընթացքում ուղղագրության փոփոխությունների անհրաժեշտությունը.
3. կկարողանա անսխալ ու գրագետ գրավոր խոսք կազմել, բացատրել ուղղագրական կանոնները

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Մ. Մաշտոցը և հայոց գրերի ստեղծումը. ուղղագրության առաջին սկզբունքները: Հայերենի ուղղագրության վիճակը միջնադարում. փոփոխություններ այբուբենում և ուղղագրության մեջ: ***Թեմա 2՝*** 1922 և 1940 թթ. ուղղագրական բարեփոխումները: ***Թեմա 3՝*** Բաղաձայնների ուղղագրությունը: ***Թեմա 4՝*** Ձայնավորների և երկհնչյունների ուղղագրությունը: ***Թեմա 5՝***

Տողադարձ. համառոտագրություններ և հապավումներ. դրանց գրության ձևերը պատմական տարբեր շրջաններում: ***Թեմա 6՝*** Մեծատառեր և փոքրատառեր, հատուկ անունների ուղղագրությունը: ***Թեմա 7՝*** Բառակազմության և ուղղագրության առնչակցությունները; Ուղղագրության վերաբերյալ արդի բանավեճերը: ***Թեմա 8՝*** Տեքստերի ուղղագրական վերլուծություններ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0302/Բ91. *«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(16 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *8-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի կետադրության համակարգը, տեսակները, գործածության դեպքերը:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կետադրության համակարգը գործածության բոլոր դեպքերը.

2. կհասկանա կետադրության ճիշտ գործածության դերն ու կարևորությունը գրավոր և բանավոր խոսքում.

3. կկարողանա անսխալ գործածել կետադրության բոլոր տեսակները կիրառության բոլոր բոլոր ոլորտներում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1.*** Կետադրության ընդհանուր համակարգը, խոսքը կանոնավորող դերը, կիրառության ոլորտները: ***Թեմա 2.*** Հայերենի տրոհության նշանները և գործածության դեպքերը: ա/Ստորակետի գործածությունը, բ/բութի գործածությունը, գ/միջակետի գործածությունը: ***Թեմա 3.*** Առոգանության նշանները և նրանց գործածությունները /հարցական, բացականչական նշաններ, շեշտ/: Բառային և տրամաբանական շեշտի դերը գրավոր և բանավոր խոսքում: ***Թեմա 4.*** Բացահայտության նշաններ /չակերտներ, անջատման գիծ, միության գիծ և ենթամնա, կետ, կախման կետ, բազմակետ, փակագիծ: Նրանց գործածության դեպքերը: ***Թեմա 5.*** Կետադրություն և գեղարվեստական ասմունք: **Թեմա 6.** Խոսքի հետ քերականորեն չկապվող և անկախ գործածվող բառերի, բառակապակցությունների կետադրության գործածությունը և

ուղղագրությունը, գործնական գրությունների, ռեֆերատների, կուրսային և ավարտական աշխատանքների էջերի ձևավորում, մեջբերումների, հղումների ու ծանոթագրությունների կետադրություն:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում*.** Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում*.** Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

## 4.3. «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտություն

**0303/B01.** ***«ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»*** *(4 կրեդիտ)*
Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *1–ին, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժություն գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը՝ գիտական հարացույցների հիմքի վրա և ցույց տալ մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա մանկավարժության ժամանակակից տեսությունները, ճյուղերը, հիմնական հասկացությունները, ուսուցման և դաստիարակության դերը մարդու անձի ձևավորման և զարգացման գործընթացում,
- կհասկանա մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդու անձի սոցիալականացման համատեքստում,
- կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Մանկավարժության առարկա և խնդիրները: **Թեմա 2**՝ Անձի զարգացման ընդհանուր օրինաչափությունները:**Թեմա3**՝ Մանկավարժական գործընթաց: **Թեմա4**՝ Կրթական համակարգը ՀՀ-ում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B02.** *«ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ-1» (6 կրեդիտ)*
Շաբաթական՝ 6 ժամ *(64 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական և 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *1–ին, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդու հոգեկան երևույթների առանցքային օրինաչափություններին և մեխանիզմներին, անձի հոգեկան զարգացմանն ու անհատական առանձնահատկություններին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա հոգեբանության ընդհանուր դրույթները, հոգեկան գործընթացների և վիճակների առանձնահատկությունները և ձևավորման հիմնական օրինաչափությունները,
- կկարողանա կիրառել հոգեբանական իմացությունը իր հետագա գործունեության մեջ, ինչպես նաև հասարակական կյանքում:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Ընդհանուր հոգեբանության առարկան, խնդիրներն ու մեթոդները: **Թեմա 2՝** Հոգեբանության կապը այլ գիտությունների հետ և հիմնական բնագավառները: **Թեմա 3՝** Հոգեբանության զարգացման պատմական փուլերը: **Թեմա 4՝**Հոգեկանի կենսաբանական հիմքերը, հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները: **Թեմա 5՝** Հոգեկանը՝ որպես արտացոլում և ապրում, հոգեկանի կառուցվածքը: **Թեմա 6՝** Հոգեկան ակտիվության մակարդակները:**Թեմա 7՝**Հոգեբանության հիմնական տեսությունները և ժամանակակից ուղղությունները:**Թեմա 8՝**Ուշադրություն: **Թեմա 9՝** Զգայություն: **Թեմա 10՝**Ըմբռնում /ընկալում/: **Թեմա 11՝**Հիշողություն: **Թեմա 12՝**Մտածողություն:**Թեմա 13՝** Լեզու, խոսք և մտածողություն:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B03.** *«ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *1–ին, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է իրազեկել ուսանողին ուսումնական գործունեության առանձնահատկությունների մասին, նպաստել հոգեբանության և մանկավարժության բնագավառում գիտելիքների ձեռքբերմանը և կիրառմանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա մասնագիտության հիմնական նպատակը և խնդիրները, պատկերացում կկազմի մասնագիտական գործունեության բովանդակության և առանձնահատկությունների մասին, կկողմնորոշվի հոգեբանության և մանկավարժության տարբեր բնագավառներում գիտելիքների ձեռք բերման ուղիներում,
- կկարողանա հասկանալ և իմաստավորել իր մասնագիտական առաքելությունը, զգալ ժամանակի շունչը և մասնագիտական պատրաստությանը ներկայացվող պահանջները, հոգեբանորեն նախապատրաստվել անհրաժեշտ գիտելիքների յուրացմանը և պրակտիկ գործունեության մեջ դրանց ներդրմանը,
- կտիրապետի պրակտիկ գործունեության մեթոդներին և հնարներին, մանկավարժական իրադրությունների սոցիալ-հոգեբանական վերլուծության եղանակներին:

**Բովանդակությունը.**

***Թեմա1***՝Մանկավարժա-հոգեբանական մասնագիտության ընդհանուր բնութագիրը:***Թեմա2***՝Մանկավարժ-հոգեբանի անձը և մասնագիտական գործունեությունը: ***Թեմա 3***՝ Պետական կրթական չափորոշիչի ներկայացվող պահանջները մանկավարժ-հոգեբանի անձի և մասնագիտական իրազեկության նկատմամբ: ***Թեմա 4***՝ Մանկավարժ-հոգեբանի նախապատրաստումը, զարգացումը և անձնային մասնագիտական կայացումը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Անհատական առաջադրանք(ռեֆերատ):

**0303/B04.** ***«ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱ»*** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ 2*–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հոգեկան գործընթացների ֆիզիոլոգիական օրինաչափությունների, հոգեֆիզիոլոգիական տարբեր

դպրոցների կողմից ընդունված տեսությունների և հայեցակարգերի մասին լիարժեք մասնագիտական պատկերացումներ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա արդի հոգեֆիզիոլոգիական գիտության տեսական խնդրացանկը,
- կհասկանա հոգեկան գործընթացների ուղեղային ապահովման մեխանիզմները,
- կկարողանա բացատրել հիմնական հոգեկան գործընթացների ձևավորման և զարգացման նյարդաֆիզիոլոգիական հիմքերը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հոգեֆիզիոլոգիայի առարկան, դասակարգումը, մեթոդները: ***Թեմա 2՝*** Ֆունկցիոնալ վիճակների հոգեֆիզիոլոգիա: ***Թեմա 3՝*** Քնի հոգեֆիզիոլոգիա: Քնի տեսություններ: ***Թեմա 4՝*** Ստրեսի հոգեֆիզիոլոգիա: Ընդհանուր ադապտացիոն համախտանիշ: ***Թեմա 5՝*** Պահանջմունքների և մոտիվացիաների հոգեֆիզիոլոգիա: ***Թեմա 6՝*** Հույզերի հոգեֆիզիոլոգիա: ***Թեմա 7՝*** Ուշադրության հոգեֆիզիոլոգիա: ***Թեմա 8՝*** Խոսքի հոգեֆիզիոլոգիա: ***Թեմա 9՝*** Մտածողական գործունեության հոգեֆիզիոլոգիա: ***Թեմա 10՝*** Շարժողական ակտիվության հոգեֆիզիոլոգիա: ***Թեմա 11՝*** Գիտակցությունը որպես հոգեֆիզիոլոգիական ֆենոմեն:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Անհատական առաջադրանք (ռեֆերատ):

**0103/B05.** ***«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ»*** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գաղափարներ և պատկերացումներ ԲՆԳ-ի ֆիզիոլոգիական առանձնահատկությունների մասին, հիմքում ունենալով մարդու հոգեկան գործունեությունը և նրա փոխազդեցությունը շրջակա միջավայրի հետ:

Դասընթացի ավարտին ուսանողը.

*կիմանա՝*

- օրգանիզմի կարգավորող համակարգերը և նրանց փոխազդեցությունը,

- կառուցվածքի և ֆունկցիաների հարաբերակցությունը, դրդիչ և արգելակող պրոցեսների հավասարակշռությունը,
- ԲՆԳ-ի կարգավորման ուղիղ և հետադարձ կապերը,
- պայմանական և ոչ պայմանական ռեֆլեքսները, ռեֆլեքսային աղեղը,
- հիմնական ընկալիչները /ռեցեպտորները/,
- գլխուղեղի բաժինների ֆունկցիանները,
- կեղևում ֆունկցիաների դինամիկ տեղայնացումը,
- գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի գործունեության ինտեգրատիվ մեխանիզմները,
- ներքին և արտաքին արգելակումները,
- հոգեկան պրոցեսների նեյրոֆիզիոլոգիական մեխանիզմները,

*կկարողանա՝*
- տարբերակել ԲՆԳ-ի հիմնական և մասնավոր ձևերը,
- սահմանել մարդու ուղեղի գերակշռող կիսագունդը,
- բացահայտել պայմանական և ոչ պայմանական ռեֆլեքսների բավարար վիճակը,
- գնահատել մտածողության և հիշողության տարբեր ձևերը,
- որոշել անալիզատորների բավարար աշխատանքը,
- սահմանել կեղևի անալիտիկ- սինթետիկական գործունեությունը,
- բացահայտել գերակշռող /դոմինանտ/ պահանջները,
- բացահայտել ԲՆԳ-ի զարգացման ընթացքում խախտումներ և շեղումներ, ԲՆԳ- պաթոլոգիա,

*կտիրապետի՝*
- հոգեֆիզիոլոգիական ուսունասիրությունների մեթոդները.
  - ✓ էլեկտրաուղեղագրություն,
  - ✓ հրահրված պոտենցիամներ,
  - ✓ մագնիսաուղեղագրություն,
  - ✓ ուղեղի քարտեզավորման մեթոդ:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** ԲՆԳ ֆիզիոլոգիայի զարգացման պատմությունը, առարկայի խնդիրները, նպատակը և ուսումնասիրման մեթոդները: **Թեմա 2՝** ԲՆԳ ֆիզիոլոգիայի հիմնական հասկացությունները և սկզբունքները: **Թեմա 3՝** Գլխուղեղի աշխատանքի ուսունասիրման մեթոդները: **Թեմա 4՝** Գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի ֆունկցիոնալ կազմակերպում: **Թեմա 5՝** Պայմանական ռեֆլեքսի գործունեության հիմնական օրինաչափությունները: **Թեմա 6՝** Հիշողության, գիտակցության և մտածողության նեյրոֆիզիոլոգիան: **Թեմա 7՝** Մարդու բարձրագույն նյարդային գործունեության սպեցիֆիկ առանձնահատկությունները: **Թեմա 8՝** Մարդու բարձրագույն նյարդային գործունեության անհատական առանձնահատկությունները: **Թեմա 9՝** Սենսորային համակարգի /զգայական օրգանների/ ֆիզիոլոգիա: **Թեմա 10՝** Մարդու

բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիայի խանգարումներ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***
Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:
*Ստուգման ձևերն են.*
***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:
***2-րդ ստուգում.*** Անհատական առաջադրանք (ռեֆերատ):

**0103/B06.** ***«ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՆԱՏՈՄԻԱ ԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ»*** *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ 2*–րդ, առանց եզրափակիչ գնահատման*
*Նպատակը.*
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացումներ մանկական օրգանիզմի զարգացման ֆիզիոլոգիական առանձնահատկությունների և օրինաչափությունների, օնտոգենեզի տարիքային տարբեր փուլերում կառուցվածքի և ֆունկցիաների փոխհարաբերությունների, առողջության պահպանման ժամանակակից մոտեցումների մասին:

Դասընթացի ավարտին ուսանողը.
*կիմանա՝*
- զարգացող օրգանիզմի տարիքային առանձնահատկությունները ,
- օնտոգենեզի տարբեր փուլերում աճի և զարգացման ընդհանուր օրինաչափությունները,
- մանկական օրգանիզմի ձևավորման մեջ կարգավորիչ համակարգերի դերը,
- մարդու օրգանիզմի և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների առանձնահատկությունները,
- մարդու անհատական զարգացման տարբեր փուլերում հոգեֆիզիոլոգիական և անհատական տիպաբանական առանձնահատկությունները և դրանց հնարավոր փոփոխությունները,
- ուսումնա-դաստիարակչական գործընթացի, օրվա ռեժիմի կազմակերպումը,

*կկարողանա՝*
- կիրառել ստացած գիտելիքները անատոմիայի, ֆիզիոլոգիայի և երեխայի հիգիենայի վերաբերյալ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ,
- կատարել սոցիալական մանկավարժի արհեստավարժ գործունեության հիմնական տեսակները, լուծել հանրակրթական հաստատություններում տիպային արհեստավարժ խնդիրները,

- մանկավարժական ու ուսումնադատիարակչական խնդիրների լուծման ժամանակ կիրառել տարբերակված մոտեցում՝ կախված երեխաների օրգանիզմի անհատական առանձնահատկություններից, նրանց դպրոցական հասունության աստիճանից, առկա շեղումներից՝ երեխայի զարգացման ընթացքում,

*կտիրապետի՝*

- ժամանակակից տեղեկատվական կրթական տեխնոլոգիաները,
- հմտությունների և սոցիալ- մանկավարժական, ուսումնադաստիարակչական, զարգացնող, մշակութա-լուսավորչական, գիտա-մեթոդական, կազմակերպչական-կառավարչական գործունեության մեթոդների:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Մանկական օրգանիզմի աճի և զարգացման օրինաչափությունները: Տարիքային փուլեր: Օրացուցային և կենսաբանական տարիքը, նրանց հարաբերակցությունը օնտոգենեզի տարբեր փուլերում՝ կենսաբանական տարիքի սահմանման չափանիշները: Երեխայի զարգացման կրիտիկական շրջանները: **Թեմա 2՝** Ժառանգականությունը և միջավայրը, նրանց ազդեցությունը մանկական օրգանիզմի զարգացման վրա: **Թեմա 3՝** Կարգավորիչ համակարգերի զարգացում /հումորալ և նյարդային/: **Թեմա 4՝** Տարբեր տարիքային փուլերում ընդերային, շարժողական և զգայական համակարգերի ֆունկցիոնալ փոփոխություն: **Թեմա 5՝** Ջերմակարգավորման և էներգիայի փոխանակման տարիքային առանձնահատկությունները: **Թեմա 6՝** Հենաշարժիչ ապարատի օնտոգենետիկական օրինաչափությունները: **Թեմա 7՝** Ուղեղի հասունացման անատոմա-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: **Թեմա 8՝** Երեխայի վարքագծի հոգեֆիզիոլոգիական ասպեկտները, հաղորդակցման վարքագծի ձևավորումը: Խոսք: **Թեմա 9՝** Երեխայի անհատական տիպաբանական առանձնահատկությունները: **Թեմա 10՝** Երեխայի ֆունկցիոնալ զարգացման մակարդակի ամբողջական ախտորոշում: Պատրաստակամություն ուսուցման նկատմամբ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Անհատական առաջադրանք (ռեֆերատ):

**0303/B07.** *«ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ-2» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ 2*–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդու հոգեկան երևույթների առանցքային օրինաչափություններին և մեխանիզմներին, անձի հոգեկան զարգացմանն ու անհատական առանձնահատկություններին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա հոգեբանության ընդհանուր դրույթները, հոգեկան գործընթացների և վիճակների առանձնահատկությունները և ձևավորման հիմնական օրինաչափությունները,
- կկարողանա կիրառել հոգեբանական իմացությունը իր հետագա գործունեության մեջ, ինչպես նաև հասարակական կյանքում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝Երևակայություն: ***Թեմա 2***՝Հույզեր և զգացմունքներ: ***Թեմա 3***՝ Կամք:***Թեմա 4***՝Գործունեություն: ***Թեմա 5***՝Հաղորդակցում: ***Թեմա 6***՝Անձնավորություն: ***Թեմա 7*** Խառնվածք: ***Թեմա 8*** Բնավորություն:***Թեմա 9***՝ Ինտելեկտ և ընդունակություններ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B08. *«ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժություն գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը՝ գիտական հարացույցների հիմքի վրա և ցույց տալ մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա դաստիարակության ժամանակակից միտումները, կազմակերպման սկզբունքները, մեթոդները, ձևերը և տեխնոլոգիաները, դաստիարակության համակարգի բաղադրամասերը,
- կկարողանա համաձայն նպատակների և խնդիրների՝ընտրել դաստիարակության բովանդակությունը, ձևերը և մեթոդները, նախագծել, իրականացնել, գնահատել և շտկել դաստիարակության գործընթացը, իրականացնել դաստիարակչական ուղղվածությամբ միջոցառումներ մանկավարժական պրակտիկայի ընթացքում,
- կտիրապետի դաստիարակության գործընթացի նախագծման, իրականացման ձևերին, մեթոդներին և տեխնոլոգիաներին, կրթական համակարգում աշակերտի և ուսուցչի ուսումնական փոխներգործության առանձնահատկություններին, մանկավարժական տարաբնույթ իրավիճակներում դաստիարակության խնդիրների լուծման տեսական դրույթներին:

**Բովանդակությունը.**

**Թեմա1՝** Դաստիարակության գործընթացի էությունը: **Թեմա2՝** Դաստիարակության օրինաչափություններն ու սկզբունքները: **Թեմա3՝** Դաստիարակության մեթոդները:**Թեմա4՝** Դաստիարակության տեխնոլոգիաներ: **Թեմա5՝**Մտավոր դաստիարակություն: Սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորումը: **Թեմա6՝**Բարոյական դաստիարակություն: **Թեմա 7՝**Իրավական դաստիարակություն: **Թեմա8՝**Գեղագիտական դաստիարակություն: **Թեմա9՝**Քաղաքացիական դաստիարակություն: **Թեմա 10՝**Աշխատանքային դաստիարակություն: Սովորողների մասնագիտական կողմնորոշումը: **Թեմա11՝** Ֆիզիկական դաստիարակություն: **Թեմա 12՝**Էկոլոգիական դաստիարակություն: **Թեմա 13՝**Դպրոցի, ընտանիքի և հասարակության համատեղ դաստիարակչական աշխատանքը: **Թեմա14՝** Դասղեկի աշխատանքը հանրակրթական դպրոցում: **Թեմա15՝**Հանրակրթական դպրոցի կառավարումը և ղեկավարումը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B09.** *«ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական և 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ 3*–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել անձի հոգեբանության մեթոդաբանական սկզբունքներին, անձի հիմնախնդրի վերաբերյալ տարբեր մեկնաբանություններին:

*Կրթական արդյունքները.*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

կիմանա

• անձնավորության հոգեբանական գիտատեսական հիմքերը,
• զարգացման փուլերը, ակտիվության պատճառներն ու պայմանները,
• ադապտացիայի, սոցիալականացման առանձնահատկությունները,
• անձնային կառույցների զարգացման հոգեբանական մեխանիզմները,

կկարողանա

• կատարել անձնավորության ոչ լայնածավալ ուսումնասիրություններ,
• բացահայտել զարգացման դրական և բացասական միտումները,
• ստեղծել անձնավորության ակտիվության համար բարենպաստ պայմաններ՝ մանկավարժական գործընթացում,

կտիրապետի

• անձնային կառույցների հոգեբանական մեխանիզմների զարգացման, բացասական միտումների կանխարգելման մեթոդներին:

**Բովանդակությունը.**

***Թեմա1*** ՝Անձ: Անձնավորության հիմնական տեսությունները: ***Թեմա2*** ՝Անձի ակտիվության աղբյուրները:***Թեմա3***՝ Անձնավորության հատկություններ:***Թեմա4***՝ <<Ես>>կոնցեպցիա:***Թեմա5*** Անձնավորության սոցիալականացում: ***Թեմա6***՝ Ադապտացիա:***Թեմա7***՝ Անձնավորության սոցիալական ադապտացիա: ***Թեմա8*** ՝Անձնավորության պաշտպանական մեխանիզմներ: ***Թեմա9***՝ Հասուն անձ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B10.** *«ՍՈՑԻՈԼՈԳԻԱ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ 3*–րդ,առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոցիոլոգիական հետազոտությունների անցկացման հմտություններին:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կունենա բավարար գիտելիքներ տնտեսագիտական հետազոտություններում սոցիոլոգիական մեթոդներ կիրառելու համար:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Սոցիոլոգիան որպես գիտություն: ***Թեմա 2՝*** Անձ: ***Թեմա 3՝*** Սոցիալական գործողություն և վարք: ***Թեմա 4՝*** Սոցիալական փոխհարաբերություններ և սոցիալական կառուցվածք: ***Թեմա 5՝*** Սոցիալիզացիա: ***Թեմա 6՝*** Սոցիալական վերահսկողություն: ***Թեմա 7՝*** Մշակույթ և լեզու: ***Թեմա 8՝*** Սոցիալական խմբեր: ***Թեմա 9՝*** Սոցիալական ստրատիֆիկացիա: ***Թեմա 10՝*** Վերնախավ: ***Թեմա 11՝*** Աղքատություն և անհավասարություն: ***Թեմա 12՝*** Սոցիալական մոբիլություն: ***Թեմա 13՝*** Սոցիալական կազմակերպություն և կառավարում: ***Թեմա 14՝*** Տնտեսական սոցիոլոգիա:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Ստուգողական աշխատանք:

***2-րդ ստուգում.*** Ստուգողական աշխատանք:

0303/B11. *«ՄԱՆԿԱՎԱՐԺԱ - ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ 3*–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ինքնուրույն տրամաբանություն, կառուցելու, մեթոդների ընտրության և հոգեբանական և մանկավարժական հետազոտության ճիշտ կատարման կարողություն:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

- կունենա ընդհանուր պատկերացում հետազոտական աշխատանքի էության մասին,
- կապահովի անհրաժեշտ գիտելիքներով մեթոդաբանության մակարդակների, սկզբունքների և մեթոդների առանձնահատկությունների մասին,
- կձևավորվի ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու անհրաժեշտ կարողություններ,

- կձևավորվի դրական վերաբերմունք գիտահետազոտական աշխատանքի հանդեպ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Մանկավարժա-հոգեբանական հետազոտության մեթոդաբանություն և մեթոդիկա առարկայի նպատակը և խնդիրները; ***Թեմա 2՝*** Գիտական հետազոտության համընդհանուր սկզբունքների բնութագիրը: ***Թեմա 3՝*** Գիտական հետազոտության մասնավոր հոգեբանական սկզբունքների բնութագիրը: ***Թեմա 4՝***Հետազոտության տրամաբանական կառուցվածքը: ***Թեմա 5՝*** Հոգեբանական հետազոտության տեսական մեթոդները: ***Թեմա 6՝*** Հոգեբանական հետազոտության էմպիրիկ մեթոդները և մեթոդիկաները: ***Թեմա 7՝***Դիտման և զրույցի մեթոդները: ***Թեմա 8՝***Գիտափորձի առանձնահատկությունը: ***Թեմա 9՝***Թեսթերի բնութագիրը: ***Թեմա 10՝***Հարցարանների ընդհանուր բնութագիրը; ***Թեմա 11՝***Անձի հոգեախտորոշման պրոյեկտիվ մեթոդիկաներ: ***Թեմա 12՝***Միջանձնային հարաբերությունների հոգեախտորոշում: ***Թեմա 13՝***Մեթոդիկաներին ներկայացվող հոգեչափիչ պահանջները: ***Թեմա 14՝***Հետազոտության հուսալիությունը որպես գնահատման ցուցանիշ: ***Թեմա 15՝***Վալիդականություն: ***Թեմա 16՝*** Հոգեբանական հետազոտության տվյալների վիճակագրական մշակում: ***Թեմա 17՝***Մանկավարժական հետազոտության էմպիրիկ մեթոդները: ***Թեմա 18՝*** Մանկավարժական հետազոտությունների տեսական և պատմահամեմատական մեթոդները: ***Թեմա 19՝***Մաթեմատիկական վիճակագրության մեթոդները մանկավարժական հետազոտություններում: ***Թեմա 20՝*** Մանկավարժական հետազոտությունների անցկացման մեթոդիկան: ***Թեմա 21՝***Հետազոտողի մանկավարժական վարպետությունը և մշակույթը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Անհատական առաջադրանք (ռեֆերատ):

**0303/B12.** *«ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՃԱՆԱՉՈՒՄ» (5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեբանության մեջ փորձարարական հետազոտությունների տեսություններին, մեթոդաբանության հիմքերին, կողմնորոշել հոգեբանական հետազոտությունների մեթոդների

համակարգում, ձևավորել գիտելիքներ հոգեբանական գիտափորձերի պլանավորման համար:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա հոգեբանական գիտափորձի կազմակերպման ձևերն ու հետազոտությունների հիմնական ծրագրերը,
- կիասկանա հոգեբանական հետազոտության կազմակերպման տրամաբանությունը,
- կկարողանա ինքնուրույն օգտագործել գիտելիքները գիտափորձերի պլանավորման և այլ էմպիրիկ հետազոտությունների համար:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Փորձարարական հոգեբանության և հոգեճանաչման ձևավորման, զարգացման պատմությունը: ***Թեմա 2՝*** Փորձարարական հոգեբանության մեթոդոլոգիայի հիմնական սկզբունքները: ***Թեմա 3՝*** Հոգեբանական մեթոդների կիրառման պահանջները և դժվարությունները: ***Թեմա 4՝*** Հոգեբանության հետազոտության մեթոդիկաների դասակարգման սկզբունքները և տեսակները: ***Թեմա 5՝*** Ոչ էքսպերիմենտալ մեթոդներ: Փորձարարական հոգեբանության կազմակերպչական մեթոդները: ***Թեմա 6՝*** Ոչ էքսպերիմենտալ մեթոդներ: ***Թեմա 7՝*** Հոգեբանական թեսթ: ***Թեմա 8՝*** Տվյալների հիմնական տիպերը-LTQ: ***Թեմա 9՝*** Վալիդություն, տեսակները, չափման հիմնական սկզբունքները: ***Թեմա 10՝*** Հոգեբանական էքսպերիմենտ: ***Թեմա 11՝*** Էքսպերիմենտալ տվյալների ինտերպրետացիա: ***Թեմա 12՝*** Չափման սանդղակները, տեսակները և կիրառման ոլորտները: ***Թեմա 13՝*** Փոփոխականների միջև կապերի չափումը: ***Թեմա 14՝*** Տվյալների բազմաչափ վերլուծության մեթոդներ: ***Թեմա 15՝*** Դիագնոստիկ մեթոդներով աշխատող անձանց և նրանց մասնագիտական հմտություններին վերաբերող էթիկական պահանջները: Դիագնոստիկայի ենթարկվող անձանց իրավունքների պահպանման հետ կապված էթիկական պահանջները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B13.** *«ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ 3–*րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է մանկավարժ-հոգեբանների գործունեության հիմնական կողմնորոշիչների ձևավորում մարդու էության պատմական վիճակի հայեցակարգերի, նրանց էվոլյուցիայի ժամանակակից փուլի բովանդակության, անձնային-անհատական կազմավորումների ծանոթացման միջոցով, որոնք առաջանում և գործում են մարդկության բնության զարգացման տվյալ փուլում, անհատական-սուբյեկտային հնարավորությունների իրացումը մեր օրերում:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա հոգեբանամանկավարժական մարդաբանության հիմնական հասկացությունները, երեխաների զարգացման առանձնահատկությունները, ժամանակակից մանկավարժ-հոգեբանին ներկայացվող պահանջները,
- կկարողանա համակարգել և միավորել ժամանակակից տեսական գիտելիքները մարդու և երեխայի, նրա զարգացման և դաստիարակության մասին, սահմանել ժամակակից մարդասիրական կրթական գործընթացի կազմակերպման օրենքները, ուղիները, ձևերը և մեթոդները, կանխատեսել հոգեբանամանկավարժական իրադրության զարգացումը գիտական հիմքի վրա,
- կտիրապետի գիտելիքների համակարգին մարդու մասին որպես կրթական գործընթացի սուբյեկտ, նրա տարիքային, անհատական առանձնահատկությունների, սոցիալական գործոնների զարգացման մասին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Հոգեբանամանկավարժական մարդաբանության ներածություն: **Թեմա 2՝** Մարդու հայեցակետը հումանիստական մարդաբանության մեջ:**Թեմա 3՝** Մարդու զարգացման առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Մարդու որպես անձի կայացման պրոցեսում մշակույթի առանձնահատկությունները և դերը: **Թեմա 5՝** Մարդու ստեղծարարության էությունը: **Թեմա 6՝** Անձի ուսումնասիրության խնդիրը զարգացման տարբեր փուլերում: **Թեմա 7՝** Ժամանակակից հերոնտոլոգիայի նվաճումների կիրառությունը հոգեբանամանկավարժական մարդաբանության մեջ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B14.** *«ՌւՍՈՒՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ 3–*րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել դիդակտիկական գիտելիքների համակարգ, ապահովել նրանց կողմից հաստատուն տեսական հիմունքների մասին գիտելիքների յուրացումը՝ ամբողջական կրթական գործընթացի տրամաբանությամբ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա հիմնական դիդակտիկական հասկացությունները և կատեգորիաները, տարբեր տիպի դպրոցներում կրթական գործընթացի էությունը, բովանդակությունը և կառուցվածքը, ամբողջական մանկավարժական գործընթացի օրինաչափությունները, ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների հիմնական դասակարգումները, ուսումնական գործունեության կազմակերպման ձևերը,
- կկարողանա որոշել ուսուցման բնույթը և հիմնավորել մանկավարժական միջոցների արդյունավետ կիրառումը, անցկացնել ժամանակակից դասի դիդակտիկական վերլուծություն, հիմնավորել աշակերտների ճանաչողական գործունեությունը ակտիվացնող ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը, որոշել դպրոցականների ուսուցման արդյունավետության չափանիշները,
- կտիրապետի ուսուցման գործընթացի և առաջադրանքների մանկավարժական ախտորոշմանը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Դիդակտիկան որպես գիտություն ուսուցման մասին:***Թեմա 2՝*** Կրթության բովանդակությունը:***Թեմա 3՝*** Ուսուցման գործընթաց:***Թեմա 4՝*** Ուսուցման օրինաչափություններն ու սկզբունքները:***Թեմա 5՝***Ուսուցման մեթոդներ: ***Թեմա 6՝***Ուսուցման կազմակերպման ձևերը: ***Թեմա 7՝***Աշակերտների ուսումնական գործունեության ստուգում ու գնահատում:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում:

**0303/B15.** *«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *4-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել համաշխարհային մանկավարժական մտքի զարգացման պատմությանը, հայ մանկավարժական մտքի զարգացման պատմությանը, կրթության բովանդակությանը, ուսուցման հիմնական օրենքների, օրինաչափությունների, մեթոդների, սկզբունքների զարգացման պատմությանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա մանկավարժական մտքի զարգացման պատմությունը արտասահմանյան երկրներում,
- կիասկանա հայ մանկավարժական մտքի զարգացման պատմության առանձնահատկությունները,
- կկարողանա տարբերակել արտասահմանյան և հայ մանկավարժության պատմության տարբերություններն ու նմանությունները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ներածություն: Դաստիարակության ծագումը:***Թեմա 2՝***Դաստիարակությունը Հին Հռոմում: ***Թեմա 3՝***Դպրոցը և մանկավարժական միտքը միջնադարում: ***Թեմա 4՝***Վերածննդի դարաշրջանի դպրոցն ու մանկավարժական միտքը: ***Թեմա 5՝***Նոր շրջանի դպրոցն ու մանկավարժական միտքը: ***Թեմա 6՝*** Նորագույն շրջանի արևմտաեվրոպական դպրոցն ու մանկավարժական միտքը: Նոր շրջանի ամերիկյան դպրոցն ու մանկավարժական միտքը: ***Թեմա 7՝*** Խորհրդային դպրոցի ձևավորումն ու զարգացումը, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության համակարգի ձևավորումը:***Թեմա 8՝*** Ժամանակակից հայ մանկավարժներ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B16.** ***«ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿՈՒՄ»*** *(6 կրեդիտ)*
Շաբաթական՝ 6 ժամ *(64 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական և 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեբանության մեթոդներին, հոգեբանական հետազոտման մեթոդոլոգիային, հոգեբանության մեջ չափումներին, հոգեբանի աշխատանքի էթիկական սկզբունքներին, հոգեբանի աշխատանքային գործունեության կազմակերպմանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա հոգեբանական հետազոտման մեթոդներն ու մեթոդոլոգիան, հոգեբանական հետազոտման չափումները, հոգեբանի աշխատանքում գործունեության կազմակերպման, էթիկական սկզբունքներին, այդ թվում նաև անձի հետազոտման կենսագրական և պրոյեկտիվ, մեթոդների գործունեության կազմակերպմանը,
- կկարողանա կազմել անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունների հետազոտման հոգեբանական սխեմաներ՝ համապատասխան հոգեբանության սկզբունքներին և մեթոդներին,
- կտիրապետի հոգեբանական հետազոտությունների արդյունքների ախտորոշմանը ու համեմատական վերլուծությանը:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Հոգեբանամանկավարժական խնդիրների լուծումը, կրթական և մանկավարժական իրադրությունների մոդելավորումը:**Թեմա 2՝** Կրթական գործընթացի կանխատեսումը և նախագծումը: **Թեմա 3՝**Տարբեր տարիքային փուլերում հոգեբանամանկավարժական տեխնոլոգիաները և ախտորոշման մեթոդիկաները: **Թեմա 4՝** Հոգեբանամանկավարժական հետազոտությունների նախագծումը կրթական խնդիրների լուծման նպատակով: **Թեմա 5՝** Հոգեբանամանկավարժական փոխազդեցության ակտիվ ձևերի կազմակերպումը՝ բանավեճ, հոգեբանամանկավարժական կոնսիլիում, դերային խաղեր, կազմակերպչական գործնեական խաղեր, ուսուցանող թրեյնինգներ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B17.** *«ՏԱՐԻՔԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)*
Շաբաթական՝ 6 ժամ *(64 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական և 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ 4–*րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ձևավորել մարդու նկատմամբ անալիտիկ մոտեցում հոգեբանական տարիքի ըմբռնման տեսանկյունից, տարիքային ճգնաժամերի ընթացքում հոգեբանական օգնության արդյունավետ ձևերի կազմակերպմանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա անձի զարգացման տարիքային առանձնահատկությունները,
- կկարողանա լուծել պրոբլեմային իրադրությունները՝ կիրառելով տարիքային հոգեբանական վերլուծություն:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Տարիքային հոգեբանության ընդհանուր հարցեր: **Թեմա 2՝** Հոգեկան զարգացման պայմաններն ու շարժիչ ուժերը: **Թեմա 3՝** Հոգեկան զարգացման պարբերացման հիմնախնդիրները: **Թեմա 4՝** Հոգեկան զարգացման առանձնահատկությունները մինչծննդյան /պրենատալ/ և մանկիկության /նորածնություն, բուն մանկիկություն/ շրջաններում: **Թեմա 5՝** Հոգեկան զարգացման առանձնահատկությունները վաղ տարիքում: Անձնային ոլորտի զարգացում: **Թեմա 6՝** Նախադպրոցականի հոգեկան զարգացումն ու անձնավորության ձևավորումը: **Թեմա 7՝** Դպրոցի նախապատրաստման հիմնախնդիրը: **Թեմա 8՝** Հոգեկան զարգացումն ու անձնավորության ձևավորումը կրտսեր դպրոցական տարիքում: **Թեմա 9՝** Անձնավորության ձևավորման ու զարգացման հոգեբանական առանձնահատկությունները դեռահասության շրջանում: **Թեմա 10՝** Անձնավորության ձևավորման ու զարգացման հոգեբանական առանձնահատկությունները պատանեկան շրջանում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B18.** *«ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 3 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ 4*–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել գիտական մանկավարժության կրթական համակարգի ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին և դրանց կառավարման առանձնահատկությունների հետ, ցույց տալ նրա գիտական հարացույցերը, տեղն ու դերը ժամանակակից մանկավարժության գիտության համակարգում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա կրթական համակարգի կառուցվածքը, զարգացման փուլերը, հիմնական հասկացությունները, կառավարման դերը նոր հասարակական գիտությունների համակարգը, ՀՀ կրթության համակարգի արդի բարեփոխումները.
- կհասկանա կրթության համակարգի զարգացման հիմնական ուղղությունները, դպրոցավարման ժամանակակից եղանակները, ձևերը, մեթոդները,
- կկարողանա տիրապետել մանկավարժական կոլեկտիվի արդյունավետ կառավարման մեխանիզմներին:

***Բովանդակությունը.***

**Թեմա 1՝** Մանկավարժական կառավարման և մենեջմենթ հասկացությունը:**Թեմա 2՝** Կրթության կառավարման պետական – հասարակական համակարգը:**Թեմա 3՝** Մանկավարժական կառավարման հիմնական գործառույթները՝ մանկավարժական վերլուծում, նպատակադրում, պլանավորում, կազմակերպում, կարգավորում և վերահսկում:**Թեմա 4՝** Մանկավարժական համակարգերի կառավարման սկզբունքները:**Թեմա 5՝** Կառավարման հոգեբանական հիմունքներ:**Թեմա 6՝**Դպրոցը որպես մանկավարժական համակարգ և կառավարման օբյեկտ: **Թեմա 7՝** Կառավարման ծառայություն:**Թեմա 8՝** Ղեկավարի կառավարչական կուլտուրան:**Թեմա 9՝**Սոցիալական ինստիտուտների փոխազդեցությունը մանկավարժական համակարգերի կառավարման ընթացքում:**Թեմա 10՝** Դպրոցի աշխատակիցների որակավորման և ատեստավորման բարձրացում:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 9 միավոր առավելագույն արժեքով:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր (ստուգողական աշխատանք):

***2-րդ ստուգում.*** Անհատական առաջադրանք (ռեֆերատ):

**0303/B19.** ***«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»*** *(5 կրեդիտ)*
Շաբաթական՝ 5 ժամ *(64 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *4–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել գիտելիքներ ներխմբային փոխհարաբերությունների, շփման ու հաղորդակցման առանձնահատկությունների, վարքի, անձի բարոյական զարգացման, մտավոր հասունացման հետ նրա ունեցած կապերի և մի շարք այլ երևույթների մասին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա սոցիալական հոգեբանության հիմնական խնդրացանկը,
- ծանոթ կլինի խմբային դինամիկայի օրինաչափություններին,
- կկարողանա բացահայտել սոցիալ-հոգեբանական երևույթները:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Սոցիալ-հոգեբանական գաղափարների ձևավորման պատմությունը: **Թեմա 2՝** Շփման սոցիալ-հոգեբանական բնութագիրը: **Թեմա 3՝** Միջանձնային շփում, դրա տեսակները և գործառույթները: **Թեմա 4՝** Մարդկային հաղորդակցման առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Շփման գործընթացում մարդկանց կողմից միմյանց ճանաչումը և հասկացումը: **Թեմա 6՝** Փոխներգործությունը շփման գործընթացում: **Թեմա 7՝** Խմբի սոցիալական հոգեբանություն: **Թեմա 8՝** Ընդհանուր գաղափար սոցիալական խմբի վերաբերյալ: Սոցիալական խմբերի դասակարգումը: Սոցիալական մեծ խմբերի հոգեբանության ուսումնասիրման սկզբունքները: **Թեմա 9՝** Փոքր խմբի սոցիալական հոգեբանությունը, կառուցվածքային բնութագրերը: **Թեմա 10՝** Փոքր խմբի սոցիալական հոգեբանությունը, դինամիկ բնութագրերը: **Թեմա 11՝** Անձի սոցիալական հոգեբանություն: **Թեմա 12՝** Անձի սոցիալ-հոգեբանական բնութագիրը: **Թեմա 13՝** Մարդու վարքի սոցիալ-հոգեբանական կարգավորիչները:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում:

**0303/B20.** ***«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»*** *(6 կրեդիտ)*
Շաբաթական՝ 5 ժամ *(64 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական և 8 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ուսումնական գործընթացի վերլուծության ժամանակակից մոտեցումներին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ծանոթ կլինի մանկավարժական ներգործության հոգեբանական մեխանիզմներին և
  օրինաչափություններին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Մանկավարժական հոգեբանության առարկան և խնդիրները: **Թեմա 2՝** Ուսումնական գործունեության կառուցվածքը: **Թեմա 3՝** Մանկավարժական հոգեբանության մեթոդները: **Թեմա 4՝** Մանկավարժի անձնային որակների և մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրները: **Թեմա 5՝** Մանկավարժական գործունեության շարժառիթները, մանկավարժական կոլեկտիվի հոգեբանություն: **Թեմա 6՝** Մանկավարժական կարողություններ և հմտություններ: **Թեմա 7՝** Մանկավարժական գործունեության կառուցվածքը: **Թեմա 8՝** Դաստիարակության հոգեբանություն: **Թեմա 9՝** Կրթության հոգեբանություն: **Թեմա 10՝** Ուսուցման հոգեբանություն: **Թեմա 11՝** Ուսուցչի անձի հոգեբանություն:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B21.** ***«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»*** *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի ուսանողներին ծանոթացնելու արդի ուսուցման հոգեբանության հիմունքներին, հիմնական տեսություններին, որոնք ընկած են դպրոցում և բուհում դասավանդման կազմակերպման հիմքում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա ուսուցման հոգեբանության հիմնական տեսությունները,

- կիասկանա դպրոցում և բուհում ուսուցման կազմակերպման հիմնական եղանակները, դրանց հոգեբանական յուրահատկությունները,
- կտիրապետի հոգեբանության տարբեր բնագավառների դասավանդման պահանջներին և հմտություններին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Հոգեբանության դասավանդման մեթոդիկա առարկան, նպատակը, խնդիրները, մեթոդները: **Թեմա 2՝** Ժամանակակից հոգեբանական կրթությունը: **Թեմա 3՝** Հանրակրթական ծրագրեր և հոգեբանության դասավանդումը: **Թեմա 4՝** Ուսուցման հոգեբանության հիմնական տեսությունները: **Թեմա 5՝** Ակտիվ դասավանդման մեթոդները: **Թեմա 6՝** Ուսուցման կազմակերպումը և հոգեբանության ուսուցման տեսակները: **Թեմա 7՝** Հոգեբանության առարկաների դասավանդման իմացության ստուգումն ու գնահատումը: **Թեմա 8՝** Ուսուցիչը որպես ուղղորդող:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում:

**0303/B22.** ***«ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»*** *(6 կրեդիտ)*

Շաբաթական՝ 5 ժամ *(64 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին ստեղծագործական գործընթացի օրինաչափությունների, ստեղծագործական մտածողության, ստեղծագործության հոգեբանական տերմինոլոգիայի, ստեղծագործ անձի որակների, ստեղծագործականության /կրեատիվության/ հետ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա և հնարավորություն ձեռք կբերի ուսումնասիրել ստեղծագործության մեխանիզմներն ու հիմքերը, մոտիվացիան,
- ծանոթ կլինի ստեղծագործության հոգեբանականան վերլուծության ձևերին,
- կկարողանա հասկանալ, թե ինչպես կարելի է ներդաշնակորեն զարգացնել երեխաներին, սեփական հոգևոր կայացման ուղին:

***Բովանդակությունը.***

**Թեմա 1՝** Ստեղծագործական հոգեբանության առարկան, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 2՝** Հոգեկան երևույթների ստեղծագործա-

կան բնույթը: **Թեմա 3՝** Ստեղծագործությունը որպես անձի գործունեություն: **Թեմա 4՝** Ստեղծագործողի անձի հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Արվեստը որպես կատարսիս: **Թեմա 6՝** Անձի ստեղծագործական ընդունակությունների ձևավորման մեթոդաբանություն:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B23.** ***«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ»*** *(6 կրեդիտ)*
Շաբաթական՝ 5 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական և 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ 5*-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդուն՝ որպես սոցիալական միջավայրի արդյունք և մանրամասն ուսումնասիրել երեխային տարբեր սոցիալական միջավայրում, հետազոտել սոցիալականացման հասարակական և մանկավարժական նշանակությունը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա սոցիալական մանկավարժության գիտահետազոտական հիմունքները,
  մարդու սոցիալականացման առանձնահատկությունները,
- կկարողանա կատարել սոցիալական շեղումների մանկավարժական վերլուծությունը,
- կտիրապետի սոցիալական մանկավարժի գործունեության գործնական կիրառությանը:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Սոցիալական մանկավարժության գիտատեսական հիմունքներ: **Թեմա 2՝** Սոցիալական մանկավարժության հիմնական սկզբունքները: **Թեմա 3՝** Սոցիալ-մանկավարժական գործընթաց և նրա կատարելագործման ուղիները: **Թեմա 4՝** Անձի սոցիալական զարգացումը: **Թեմա 5՝** Երեխայի սոցիալական զարգացման մեխանիզմները և շարժիչ ուժերը: **Թեմա 6՝**Գործունեությունը և սոցիալ-մանկավարժական հնարավորությունները: **Թեմա 7՝** Մարդու ադապտացիան, դեզադապտացիան և ռեադապտացիան: **Թեմա 8՝** Սոցիալական դաստիարակություն, էությունը և բովանդակությունը: **Թեմա 9՝** Երեխաների զարգացման և դաստիարակության ընթացքում առաջացած սոցիալական շեղումները: **Թեմա 10՝** Սոցիալական շեղումներ, առաջացման պատճառները, հաղթահարման ուղիները: **Թեմա 11՝** Դժվար դաստիարակվող երեխաներ,

էությունը, առաջացման պատճառները: **Թեմա 12՝** Միջավայրը և անձի ձևավորումը: **Թեմա 13՝** Փողոցը որպես դաստիարակության միջավայր: **Թեմա 14՝** Դժվար իրավիճակներում գտնվող երեխաների կառուցվածքը: **Թեմա 15՝** Պենիտեցիալ հաստատությունների աշխատանքների դաստիարակչական խնդիրները: **Թեմա 16՝** Սոցիալական աշխատակցի մասնագիտական գործունեությունը և անձի դեֆորմացիա: **Թեմա 17՝** Սոցիալական աշխատակցի մանկավարժական վարպետությունը և աշխատանքի կազմակերպման ձևերը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B24.** *«ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՇՏԿՈՒՄ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 3 ժամ *(32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ապագա մանկավարժ-հոգեբաններին ծանոթացնել երեխաների հոգեբանամանկավարժական շտկման մեթոդներին, հոգեշտկողական մեթոդիկաների և տեխնոլոգիաների կիրառման համար գիտելիքների և կարողությունների տիրապետմանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

- կիմանա շտկման հոգեբանական հիմունքների մշակման տեսական մոտեցումները, կրթության համակարգում հոգեբանական շտկման անցկացման և կազմակերպման առանձնահատկությունները, կրթության համակարգում մանկավարժ-հոգեբանի մասնագիտական կարևորագույն անձնային որակների յուրահատկությունները,
- կկարողանա ախտորոշել և վերլուծել անձի անհատական հոգեբանական բնութագիրը, մշակել շտկողական զարգացնող ծրագրեր և հոգեբանամանկավարժական երաշխավորագրեր, կազմել շտկողական օգնության անհատական ծրագրեր,
- կտիրապետի հոգեբանական շտկման ընդհանուր, ընտանեկան հարաբերությունների և անհատական ու խմբային մեթոդներին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Հոգեբանամանկավարժական շտկման տեսական հիմունքները և հիմնական ուղղությունները:**Թեմա 2՝** Հոգեբանամանկավարժական շտկման էությունը, նպատակը և խնդիրները: **Թեմա3՝**Հոգեբանամանկավարժական տեղեկատվության վերլուծությունը և հոգեբանամանկավարժական շտկման

ծրագրի կազմումը:**Թեմա 4՝** Հոգեբանամանկավարժական ազդեցության մեթոդներն ու միջոցները: **Թեմա 5՝** Աշխատանքի խմբային և անհատական ձևերը:**Թեմա 6՝** Հոգեբանամանկավարժական շտկման հիմնական մոտեցումներն ու տեխնոլոգիաները: **Թեմա 7՝** Հոգեկանխարգելումը և նրա հիմնական սկզբունքները:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում:

**0303/B25.** *«ՀՈԳԵԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ» (3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 3 ժամ *(24 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *6–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին գիտելիքներ հաղորդել ժամանակակից հոգեբանական կարգավորման խնդիրների, հիմնական սկզբունքների, առաջատար ուղղությունների և հայեցակարգերի վերաբերյալ, ներկայացնել դրանց կիրառական դաշտը, ծանոթացնել պրակտիկ հոգեկարգավորման մեթոդներին և տեխնիկաներին:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի ավարտին ուսանողը.

- կծանոթանա ժամանակակից հոգեբանական կարգավորման առաջատար ուղղություններին ու հայեցակարգերին, դրանց գործնական հնարավորություններին, ինչպես նաև կիրառման մեթոդներին և տեխնիկաներին,
- կխորացնի հոգեբանության տեսական և կիրառական ոլորտներում լուծվող հիմնահարցերի փոխադարձության վերաբերյալ իր գիտելիքները,
- ձեռք կբերի պրակտիկ հոգեկարգավորման սկզբնական հմտություններ:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Հոգեկարգավորումը և դրա տեսակները: Հոգեկարգավորման նպատակներն ու խնդիրները, հիմնական սկզբունքները: **Թեմա 2՝** Հիմնական ուղղությունները ժամանակակից հոգեբանական կարգավորման պրակտիկայում: **Թեմա 3՝** Պրակտիկ հոգեկարգավորման մեթոդները: **Թեմա 4՝** Անհատական և խմբակային հոգեկարգավորում: **Թեմա 5՝** Հոգեկարգավորման խմբերի տեսակները: **Թեմա 6՝** Երեխա-ծնող կամ ընտանեկան փոխհարաբերությունների հոգեկարգավորում:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում:

**0303/B26.** *«ԷԹՆՈՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 3 ժամ *(24 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *6–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել էթնոհոգեբանական հետազոտությունների հիմնական տեսական ուղղություններին, ներկայացնել անձի ուսումնասիրության էթնոհոգեբանական հիմնախնդիրները և սոցիալական վարքի կարգավորման մշակութային տարբերությունները, ինչպես նաև գիտելիքներ հաղորդել միջէթնիկական հարաբերություններում միջխմբային ընկալման մեխանիզմների և էթնիկական կոնֆլիկտների առաջացման պատճառների վերաբերյալ:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի ավարտին ուսանողը՝

- գիտելիքներ ձեռք կբերի էթնոհոգեբանական հետազոտությունների հիմնական տեսական ուղղությունների, անձի սոցիալականացման էթնոմշակութային տարբերությունների, միջէթնիկական հարաբերությունների և հաղորդակցության սոցիալ-հոգեբանական հիմնահարցերի վերաբերյալ,
- կիմանա սոցիալական վարքի ձևավորման և կարգավորման միջմշակութային տարբերությունները,
- կկարողանա ճիշտ մեկնաբանել և վերլուծել էթնիկական կոնֆլիկտների առաջացման սոցիալ-հոգեբանական պատճառները և կարգավորման մեխանիզմները:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Էթնոհոգեբանությունը որպես գիտելիքի միջառարկայական ոլորտ: **Թեմա 2՝** Էթնոհոգեբանության ձևավորման և զարգացման պատմությունը: **Թեմա 3՝** Էթնոհոգեբանական հետազոտությունների հիմնական տեսական ուղղությունները: **Թեմա 4՝** Սոցիալականացման էթնոմշակութային վարիատիվությունը: **Թեմա 5՝** Անձի ուսումնասիրության էթնոհոգեբանական հիմնահարցերը: **Թեմա 6՝** Սոցիալական վարքի կարգավորման մշակութային տարբերությունները: **Թեմա 7՝** Հաղորդակցության ունիվերսալ և սպեցիֆիկ-մշակութային ասպեկտները: **Թեմա 8՝** Էթնիկական նույնականացման զարգացումը և փոփոխու-

թյունները: **Թեմա 9՝** Միջէթնիկական հարաբերություններում միջխմբային ընկալման մեխանիզմները: **Թեմա 10՝** Էթնիկական կոնֆլիկտներ. առաջացման պատճառները և կարգավորման եղանակները:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում:

**0303/B27.** ***«ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»*** *(5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(48 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *6–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին կողմնորոշել ըմբռնելու աշխատանքի յուրահատուկ հոգեբանական բաղադրիչները, ձևավորել գիտական հասկացությունների մասին պատկերացումներ մարդու՝ որպես աշխատանքի սուբյեկտի ակտիվության բոլոր էական կողմերի վերաբերյալ, օգնել մասնագիտորեն տիրապետելու աշխատանքի հոգեբանության մեթոդներին, ձևավորել աշխատանքի տարբեր տեսակների և տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների նկատմամբ հավասարաչափ հարգանք:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա մարդու աշխատանքային գործունեության հոգեբանական ասպեկտները, մասնագիտական գործունեության ազդեցությունը անձի վրա,
- կկարողանա կիրառել մարդու՝ որպես աշխատանքի սուբյեկտի մասին տեսական գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ,
- կտիրապետի տարբեր աշխատանքային գործընթացների պրակտիկ ուսումնասիրության և վերլուծության, մասնագիտական կողմնորոշման, ընտրության և խորհրդատվության, պրոֆեսիոգրաֆիայի մեթոդներին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Հոգեբանությունը աշխատանքի և մարդու մասին գիտելիքների համակարգում:**Թեմա 2՝** Աշխատանքի հոգեբանության մեթոդաբանական հիմքերը:**Թեմա 3՝**Էրգատիկ համակարգ, էրգատիկ գործառույթներ: **Թեմա 4՝**Մասնագիտական կայացման փուլերը: **Թեմա 5՝**Մասնագիտությունների դասակարգումը:**Թեմա 6՝**Պրոֆեսիոգրամա և պսիխոգրամա:**Թեմա 7՝**Պրոֆեսիոգրաֆիայի մեթոդները: **Թեմա 8՝**Մասնագիտական ճգնաժամերը: **Թեմա 9՝**Մասնագետի անձը և մասնագիտական գործունեությունը: **Թեմա 10՝**Մասնագիտական ինքնորոշման հոգեբանություն:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում:

**0303/B28.** *«ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ» (5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(36 ժամ դասախոսություն, 36 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *6–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին տեղեկություններ հաղորդել հոգեբանի աշխատանքի հիմնական ուղղությունների մասին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ծանոթ կլինի հոգեբանական ծառայության հաջողակ գործունեության ժամանակակից մոդելներին,
- կկարողանա կատարել հոգեկարգավորիչ և կանխարգելիչ աշխատանքներ:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Կրթության բնագավառում հոգեբանական ծառայության դերը: **Թեմա 2՝** ՀՀ և արտերկրների կրթական համակարգերում հոգեբանական ծառայության դերը:**Թեմա 3՝** Կրթական հաստատություններում հոգեբանական ծառայության հայեցակարգը:**Թեմա 4՝** Հոգեբանական ծառայությունը տարբեր տիպերի կրթական հաստատություններում: **Թեմա 5՝** Մանկավարժ-հոգեբանի գործունեության ուղղությունները:**Թեմա 6՝** Մանկավարժ-հոգեբանի գործունեության տարբեր ձևերի կազմակերպումը և զարգացումը: **Թեմա 7՝** Հոգեբանական ծառայության փաստաթղթավարությունը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B29.** *«ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 3 ժամ *(24 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունք-ներ)*
Կիսամյակը՝ *6–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ժամանակակից էտապում ընտանեկան հարաբերությունների հոգեբանության առարկայի և խնդիրների վերաբերյալ համարժեք պատկերացումներ, գիտելիքներ դրանց հիմնական ուղղությունների, հնարավոր կիրառական ներդրումների շուրջ:

Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա ընտանիքի գործառույթների և զարգացման օրինաչափությունները, ընտանիքի հետ հոգեբանական, մանկավարժական աշխատանքի հիմունքները,
- կհասկանա մասնագիտական գործունեության հիմնական կետերը,
- կտիրապետի ընտանիքների հետ համագործակցության համապատասխան միջոցներին և հնարներին:

**Թեմա 1**՝Ընտանիքի հոգեբանության և ընտանեկան խորհրդատվության հիմունքների ներածություն: **Թեմա 2**՝ Ընտանիքի առաջատար գործառույթները: **Թեմա 3**՝ Ընտանիքի տեսակների բնութագիրը: **Թեմա 4**՝ Ժամանակակից ընտանիքի առանձնահատկությունները: **Թեմա 5**՝ Ընտանեկան հարաբերությունների կառուցվածքը և դինամիկան: **Թեմա 6**՝ Ներընտանեկան հաղորդակցման յուրահատկությունները: **Թեմա 7**՝ Ընտանիքի կենսագործունեության խանգարումները: **Թեմա 8**՝ Պրոբլեմային ընտանեկան հարաբերությունների բնութագիրը: **Թեմա 9**՝ Հոգեբանական – մանկավարժական աշխատանքները ընտանիքի հետ: **Թեմա 10**՝ Ընտանեկան խորհրդատվության հիմունքները: **Թեմա 11**՝ Ընտանեկան հոգեախտորոշման մեթոդները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյու-րը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժե-քով:

**0303/B30.** ***«ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»*** *(5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 5 ժամ *(48 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունք- ներ)*
Կիսամյակը՝ 6–*րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության, դաստիարակության ռազմավարական ուղղությունների գիտակցումը ուսանողների կողմից, ներառման սկզբունքների և քաղաքականության մասին գիտելիքների յուրացումը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա ներառական կրթության կազմակերպման սկզբունքները, քաղաքականության հիմնական ուղղությունները, դպրոցի առաքելությունները և բոլոր երեխաներին կրթության մեջ ներառման քաղաքականության իրագործման հոգեբանամանկավարժական , իրավական և բարոյաէթիկական հիմնավորումը,
- կկարողանա ուսումնասիրել և վեր հանել կրթական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացում առկա խնդիրները, դժվարությունները, շեղումները, իրականացնել նրանց ուսուցման և դաստիարակության գործընթացները ժամանակակից դպրոցում,
- կտիրապետի առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դաստիարակության ուսուցման մեթոդներին, տեխնոլոգիաներին, հնարներին և միջոցներին, դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության կազմակերպման ձևերին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Ներառման քաղաքականությունը և սկզբունքները:**Թեմա 2՝**Երեխաների ներառումը կրթության մեջ: **Թեմա 3՝** *ՀՀ* օրենսդրությունը ներառման քաղաքականության մասին:**Թեմա 4՝** Ներառման քաղաքականության իրագործումը *Հ*այաստանում: **Թեմա 5՝**Ներառման քաղաքականության շարունակականության ապահովումը *ՀՀ* կրթական համակարգում: **Թեմա 6՝** Ներառական կրթության ազգային ռազմավարական ծրագրի մշակումը որպես հատուկ և հանրակրթական համակարգի միասնական գործառության ապահովման իրավական հիմք:**Թեմա 7՝** Ներառման քաղաքականության իրականացման մշտադիտարկումը:**Թեմա 8՝**Ներառական կրթության կազմակերպումը: **Թեմա 9՝** Ներառական կրթությունը որպես մանկավարժական հիմնախնդիր:**Թեմա 10՝** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման սկզբունքները:**Թեմա 11՝**Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման մեթոդներն ու կազմակերպման ձևերը: **Թեմա 12՝** Կրթության

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների արդյունավետ ուսուցման տեխնոլոգիաները:**Թեմա 13՝** Դաստիարակության գործընթացի կազմակերպումը ներառական կրթության պայմաններում:**Թեմա 14՝** Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաների դաստիարակության գործում:**Թեմա 15՝** Ուսուցչի շարունակական մանկավարժական կատարելագործումը որպես ներառական կրթության արդյունավետ կազմակերպման միջոց, ներառական կրթության որակի կառավարումը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B31.** *«ԲԺՇԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (8 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(80 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *7–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոմատիկ և հոգեկան հիվանդի հոգեբանության օրինաչափություններին, հոգեկան առողջությունը չափորոշող գործոններին, հոգեբանորեն «գրագետ» մտածելու զգալու և գործելու ձևերին, հիվանդությունները, խանգարումները, շեղվածությունները կանխարգելելու հնարավորություններին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա հոգեկան առողջության տեսական և գործնական հիմնահարցերը,
- ծանոթ կլինի հոգեկան որոշ խանգարումների կանխարգելման ճանապարհներին,
- կհասկանա իր անձի և իր օգնությանը դիմող անձանց հոգեկան առողջությանը վերաբերող խնդիրները:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Բժշկական հոգեբանության առարկան, նպատակը, խնդիրները, ուսումնասիրության առարկան: **Թեմա 2՝** Բժշկական հոգեբանության կայացման տեսական հիմքերը: **Թեմա 3՝** Ֆրոյդիզմի դերը բժշկական հոգեբանության համար: **Թեմա 4՝** Հոգեկան գործունեության առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Հոգեկան ֆունկցիաների ախտաբանական փոփոխությունները: **Թեմա 6՝** Հոգեմարմնական և մարմնահոգեկան փոխազդեցություններ և հիվանդություն: **Թեմա**

**7՝** Հիվանդության արտաքին և ներքին նկարագիր, հիվանդության գիտակցում: **Թեմա 8՝** Բժշկական դեոնտոլոգիա: **Թեմա 9՝** Հոգեհիգիենա, հոգեպրոֆիլակտիկա: **Թեմա 10՝** Հոգեծին հիվանդություններ: **Թեմա 11՝** Հոգեթերապիայի հիմունքները: **Թեմա 12՝** Մարմնական հիվանդի վարքագծային ռեակցիայի տիպերը: **Թեմա 13՝** Անձի ռեակցիայի տիպերը հիվանդության նկատմամբ ըստ Լիչկո-Իվանովի: **Թեմա 14՝** Հոգեմարմնական հիվանդություններ: **Թեմա 15՝** Ներքին հիվանդությունների բժշկահոգեբանական ասպեկտները: **Թեմա 16՝** Հոգեբանական գործոնների դերը վիրաբուժական պրակտիկայում: **Թեմա 17՝** Օնկոլոգիական հիվանդի հոգեբանություն: Կանցերոֆոբիա: **Թեմա 18՝** Հղի կնոջ հոգեբանություն: **Թեմա 19՝** Հիվանդ երեխայի հոգեբանության առանձնահատկությունները: **Թեմա 20՝** Հիվանդի հոգեբանության առանձնահատկություններն ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ: ՁԻԱՀ և հոգեբանություն: **Թեմա 21՝** Զգայարանների արատներով մարդկանց հոգեբանություն: **Թեմա 22՝** Անձի հոգեբանական ռեակցիաները դեմքի վնասվածքների ժամանակ: **Թեմա 23՝** Հիվանդի հոգեբանական ռեակցիաները մաշկային ախտահարումների և մանկական ուղեղային կաթվածի ժամանակ: **Թեմա 24՝** Օլիգոֆրենիայի բժշկահոգեբանական ասպեկտները: **Թեմա 25՝** Հոգեկան առողջության հիմնախնդիրները: **Թեմա 26՝** Ալկոհոլիզմ և բժշկական հոգեբանություն: **Թեմա 27՝** Ծերության հոգեբանական հիմնախնդիրները: **Թեմա 28՝** Շիզոֆրենիայի ժամանակ առաջացող հոգեբանական հիմնախնդիրները: **Թեմա 29՝** Էպիլեպսիայի հոգեբանական հիմնախնդիրները: **Թեմա 30՝** Հոգեբանական բաղադրիչի դերը բժշկական փորձաքննության կառուցվածքում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B32.** ***«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ»*** *(8 կրեդիտ)*
Շաբաթական՝ 6 ժամ *(64 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական և 16 ժամ սեմինար պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *7–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեբանության ժամանակակից հիմնախնդիրներին, հոգեբանության տարբեր ուղղություններում նորագույն ուսումնասիրություններին և հետազոտություններին, ներկայացնել դասական և ժամանակակից տեսությունները, տալ հիմնական հարցադրումների և խնդիրների գիտական բացատրությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա հոգեբանության ժամանակակից հիմնական տեսական մոտեցումները,
- կիասկանա ժամանակակից հոգեբանության ծագումնաբանական հիմնական խնդիրները,
- կկարողանա ճիշտ մեկնաբանել և վերլուծել հոգեբանության ժամանակակից օրինաչափությունները:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրները: Ներածություն: **Թեմա 2՝** Ժամանակակից հոգեբանության մեթոդաբանական հիմնախնդիրները: **Թեմա 3՝** Ժամանակակից հոգեբանության ճգնաժամը: **Թեմա 4՝** Ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրները՝ ըստ հոգեբանության հիմնական բնագավառների: **Թեմա 5՝** Անձի հոգեբանության ժամանակակից հիմնահարցերը: **Թեմա 6՝** Սոցիալական հոգեբանության ժամանակակից հիմնահարցերը: **Թեմա 7՝** Հոգեբանական ներգործության և կառավարման հոգեբանության, արտակարգ իրավիճակների հոգեբանության արդի հիմնահարցերը: **Թեմա 8՝** Ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրները՝ հոգեբանության հիմնական ուղղություններում: **Թեմա 9՝** Ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրները՝ հոգեբանության նորագույն ուղղություններում: **Թեմա 10՝** Հետխորհրդային շրջանի հոգեբանության հարցեր:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B33.** *«ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱ» (5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *7–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին գիտելիքներ հաղորդել ժամանակակից հոգեթերապիայի առաջատար ուղղությունների և հայեցակարգերի վերաբերյալ, ներկայացնել այն գործնական խնդիրները, որոնք հոգեթերապիան լուծում է պրակտիկայում, լուսաբանել ժամանակակից աշխարհում հոգեթերապևտիկ միջամտության անհրաժեշտության և արդյունավետության հիմնահարցերը:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի ավարտին ուսանողը.

- կծանոթանա ժամանակակից հոգեթերապիայի առաջատար ուղղություններին ու հայեցակարգերին, դրանց գործնական

հնարավորություններին, ինչպես նաև կիրառման մեթոդներին և տեխնիկաներին,

- կխորացնի հոգեբանության կիրառական ոլորտներում լուծվող հիմնահարցերի վերաբերյալ իր գիտելիքները,
- ձեռք կբերի հոգեթերապիայի բնագավառի գործնական սկզբնական հմտություններ:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Հոգեդինամիկական թերապիա: **Թեմա 2՝** Հոգեդինամիկական ուսմունքը հոգեկան ախտաբանության մասին: **Թեմա 3՝** Հոգեդինամիկական թերապիայի տեխնիկան: **Թեմա 4՝** Վերլուծական հոգեթերապիա: **Թեմա 5՝** Հոգեթերապիայի տեսությունը անհատական հոգեբանության դաշտում: **Թեմա 6՝** Կենսաէներգետիկական վերլուծություն: **Թեմա 7՝** Առաջնային հոգեթերապիա: **Թեմա 8՝** Հոգեդրամա: **Թեմա 9՝** Էքզիստենցիալ հոգեթերապիա: **Թեմա 10՝** Գեշտալտ թերապիա: **Թեմա 11՝** Այցելուակենտրոն հոգեթերապիա: **Թեմա 12՝** Կոգնիտիվ հոգեթերապիա: **Թեմա 13՝** Ինստրումենտալ մոդելները հոգեթերապիայում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B34.** *«ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ 7*–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել կառավարման հոգեբանության հիմնական խնդիրներին, քննարկել կառավարման գործունեության հոգեբանական առանձնահատկությունները և դրանց կապը տարբեր գործոնների հետ, վերլուծել ղեկավարի անձի հոգեբանական կերպարը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա կառավարման հոգեբանության առարկայի խնդրացանկը,
- ծանոթ կլինի ղեկավարի հոգեբանական առանձնահատկություններին, կառավարման ոճերին և ռազմավարություններին,

- կտիրապետի ղեկավարների փորձագիտական ընթացակարգերին, հոգեբանի աշխատանքի կազմակերպմանը տարբեր կազմակերպություններում:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Կառավարման հոգեբանության առարկան և նրա տեղը գիտությունների համակարգում: **Թեմա 2՝**Կառավարչական գործունեությունը: Ժամանակակից պատկերացումները կազմակերպության և կառավարման մասին: **Թեմա 3՝**Ղեկավարը կազմակերպության մեջ: Կազմակերպության էությունը: **Թեմա 4՝** Ղեկավարը որպես գործունեության սուբյեկտ կազմակերպության ֆորմալ /ձևայնացած/ ենթահամակարգերում:**Թեմա5՝**Պլանավորման գործառույթի իրագործման հոգեբանական առանձնահատկությունները:**Թեմա 6՝** Կազմակերպության գործառույթի իրագործման հոգեբանական առանձնահատկությունները:**Թեմա 7՝**Վերահսկման իրագործման հոգեբանական առանձնահատկությունները կառավարչական գործունեության կառուցվածքում:**Թեմա 8՝**Կարգավորման և մոտիվացման հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 9՝**Կառավարման հոգեբանական մեթոդները կարգավորման մեթոդների կառուցվածքում: **Թեմա 10՝**Կառավարչական որոշումներ և նրանց դասակարգումներ: **Թեմա 11՝**Կոլեկտիվ և կոլեգիալ կառավարչական որոշումների մշակման հոգեբանական առանձնահատկությունները:**Թեմա 12՝**Կառավարչական փոխգործողություն: **Թեմա 13՝**Ղեկավարը որպես կազմակերպության ոչ ֆորմալ/ձևայնացած/ ենթահամակարգի սուբյեկտ: **Թեմա 14՝**Ղեկավարի կառավարման ոճը և կառավարչական հայեցակետը: **Թեմա 15՝**Ղեկավարը որպես կոնֆլիկտային հարաբերությունների սուբյեկտ: **Թեմա 16՝**Կադրերի ընտրության հոգեբանական ասպեկտները: **Թեմա 17՝**Հոգեբանի աշխատանքի կազմակերպումը ձեռնարկությունում:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում:

**0303/B35.** *«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 8 ժամ *(34 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար պարապմունք-ներ)*

Կիսամյակը՝ *8–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ներկայացնել հոգեբանական գաղափարների ընդհանուր տեսության մշակման երկարաձիգ ճանապարհը, սկսած հոգեկանի մասին առաջին գիտական պատկերացումներից մինչև ժամանակակից հոգեբա-նության վերջին նվաճումները:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ձեռք կբերի նոր գիտելիքներ հոգեկան իրականության վերաբերյալ,
- կհասկանա գիտության տրամաբանությունը, որն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական իմաստ,
- կկարողանա կատարել հոգեկանի մասին գիտական պատկերացումների համեմատական վերլուծություն:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Հոգեբանական գիտելիքների զարգացումը հոգու մասին ուսմունքի շրջանակներում: **Թեմա 2՝** Հոգեբանության զարգացումը գիտակցության մասին փիլիսոփայական ուսմունքների շրջանակներում: **Թեմա 3՝** Հոգեբանության՝ որպես գիտակցության մասին գիտության, զարգացումը մինչ փորձարարական հոգեբանության զարգացումը: **Թեմա 4՝** Բնագիտության զարգացումը և բնագիտական նախադրյալների ձևավորումը հոգեբանության՝ որպես գիտության առանձնացման համար: **Թեմա 5՝** Հոգեբանության առանձնացումը որպես առանձին գիտություն և նրա զարգացումը մինչև բաց ճգնաժամը (19-րդ դարի 60-ական թթ. և 20-րդ դարի 10-ական թթ.): **Թեմա 6՝** 20-րդ դարի 10–30-ական թթ. բաց ճգնաժամի շրջանի արտասահմանյան հոգեբանությունը: **Թեմա 7՝** Խորհրդային հոգեբանության ծագումն ու զարգացումը: Ժամանակակից հոգեբանությունը Ռուսաստանում: **Թեմա 8՝** Արտասահմանյան հոգեբանության ժամանակակից դրությունը և զարգացման կարևորագույն միտումները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0303/B36.** *«ԿՈՆՖԼԻԿՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 8 ժամ *(24 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական և 12 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ 8*–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել կոնֆլիկտաբանության առարկային, խնդիրներին, քննարկել կոնֆլիկտի ֆենոմենը ներանձնային, միջանձնային, միջխմբային մակարդակներում, փորձել տալ դրանց լուծման ձևեր և եղանակներ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա կոնֆլիկտի առաջացման ու ընթացքի օրինաչափությունները,
- ծանոթ կլինի կոնֆլիկտը դիտարկող հիմնական տեսություններին,
- կկարողանա հոգեբանորեն վերլուծել կոնֆլիկտային իրադրությունները:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Ներածություն: **Թեմա 2՝** Կոնֆլիկտ հասկացությունը և դրանց տիպաբանությունը: **Թեմա 3՝** Կոնֆլիկտի կառուցվածքը և դինամիկան: **Թեմա 4՝** Ներանձնային կոնֆլիկտ: **Թեմա 5՝** Միջանձնային կոնֆլիկտներ: **Թեմա 6՝** Կոնֆլիկտները կազմակերպություններում: **Թեմա 7՝** Միջխմբային կոնֆլիկտ: **Թեմա 8՝** Կոնֆլիկտների կանխարգելումը և հանգուցալուծումը: **Թեմա 9՝** Բանակցությունները որպես կոնֆլիկտների հանգուցալուծման եղանակ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 9 միավոր առավելագույն արժեքով:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր (ստուգողական աշխատանք):

***2-րդ ստուգում.*** Անհատական առաջադրանք (ռեֆերատ):

0303/B37. *«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 8 ժամ *(34 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *8–րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է նպաստելու ուսանողների կողմից ժամանակակից պահանջներին համապատասխան մանկավարժական տեխնոլոգիաների նախագծման և իրականացման կարողությունների ու հմտությունների տիրապետմանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների բովանդակությունը, ընտրությունը, իրականացումը,
- կհասկանա հիմնական մանկավարժական տեխնոլոգիաները,
- կկարողանա տիրապետել մանկավարժական տեխնոլոգիաներին՝ որպես համակարգված գործողությունների և արդյունքների դիագնոստիկա կրթական գործընթացի փոփոխվող պայմաններում:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** «Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ» առարկայի էությունը և խնդիրները:**Թեմա 2՝** Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաների տեսությունը:**Թեմա 3՝** Մեթոդի տեղն ու դերը մանկավարժական տեխնոլոգիաներում:**Թեմա 4՝** ՈՒսուցման մեթոդները,

եղանակները, հնարները ուսուցման տեխնոլոգիական գործընթացում /կիրառման փորձ/:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

## *4.2.1. Կամընտրական դասընթացներ*

**0303/B38.** *«ԱՆԱԼԻՏԻԿ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական և 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը. 7*–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել անալիտիկ հոգեբանության և հոգեթերապիայի տեսության ու պրակտիկայի վերաբերյալ հիմնական պատկերացումները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կհասկանա անգիտակցականի ըմբռնման և նրա հետ շփման յունգյան մոտեցման ձևավորումը,
- կհասկանա անձի հոգեկան իրողության ուսումնասիրությունը յունգյան հոգեբանական հասկացությունների շրջանակներում և կկարողանա կատարել սեփական վարքի ինտեգրում,
- կկարողանա յուրացնել և իրականացնել անգիտակցականի հետ աշխատանքի հիմնական վերլուծական մեթոդներ:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Անալիտիկ հոգեբանությունը, նրա զարգացումը և հիմնական հասկացությունները: **Թեմա 2՝** Անձի կառուցվածքի հիմնական արխետիպերը: **Թեմա 3՝** Բարդույթների տեսությունը: **Թեմա 4՝** Կոլեկտիվ անգիտակցականի արխետիպերը: **Թեմա 5՝** Ինդիվիդուացիան որպես էգո-ինքնության առանձին կառուցվածք: **Թեմա 6՝** Անձի յունգյան տիպաբանությունը: **Թեմա 7՝** Երազների վերլուծության հիմնական հասկացությունները: **Թեմա 8՝** Անալիտիկ հոգեթերապիայի հիմնական տեսական սկզբունքները:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9

միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական առաջադրանք:

***2-րդ ստուգում.*** Անհատական առաջադրանք:

**0303/B39.** *«ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական և 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ 7*–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել կարևոր տեսական գիտելիքների համակարգեր, որոնք անհրաժեշտ են ապագա մանկավարժներին զարգացման խանգարումներով անձանց խնդիրների էության հասկացման և լուծման ուղիների որոշման համար: Ինչպես նաև նպաստել ուսանողների մոտ համապատասխան մակարդակի մասնագիտական – մանկավարժական իրազեկվածության ձեռքբերմանը, որը հնարավորություն կտա համակարգել մասնագիտական տեսական գիտելիքները, գործնական հմտությունները և մասնագիտական կարևոր որակները:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը.

- կիմանա հատուկ մանկավարժության և հոգեբանության դերը կրթության համակարգում,2
- կկարողանա առաջադրել հիմնախնդիրներ և դրանց լուծումներ կապված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացման հարցերի շուրջ,
- կտիրապետի հատուկ մանկավարժության և հոգեբանության մեթոդներին, կցուցաբերի ժամանակակից մոտեցում սահմանափակ կարողություններով երեխաների դաստիարակության և կրթության հարցում:

Բովանդակությունը

**Թեմա 1.** Հատուկ մանկավարության առարկան, նպատակը, խնդիրները և մեթոդները: **Թեմա 2.** Հատուկ մանկավարժության հիմնական հասկացությունները: **Թեմա 3.** Զարգացման խանգարումներով երեխաների դաստիարակությունը, կրթությունը և զարգացումը որպես անձի և գործունեության ձևավորման նպատակաուղղված գործընթաց: **Թեմա 4.** Սահմանափակ կարողություններով երեխաների դաստիարակության և կրթության բովանդակությունը, սկզբունքները, ձևերը և մեթոդները: **Թեմա 5.**

Շտկման և փոխհատուցման հասկացությունները: **Թեմա 6.**Սոցիալական վերականգնում և սոցիալական հարմարում: **Թեմա 7.** Հատուկ հոգեբանության հիմնական ճյուղերը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական առաջադրանք:

***2-րդ ստուգում.*** Անհատական առաջադրանք:

**0303/B40.** *«ՌԱԶՄԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»* *(4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական և 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ 7*–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է բացահայտել զինծառայողների և զինվորական կոլեկտիվի մարտական վարպետության և այն հատկությունների ձևավորման հոգեբանական օրինաչափությունները, որոնք անհրաժեշտ են մարտական գործողությունների և առօրեական ծառայողական խնդիրների արդյունավետ կերպով կատարման համար, ինչպես նաև մշակել խաղաղ և մարտական իրադրության համար անձնակազմի գործունեության արդյունավետության մեծացման հոգեբանական ուղիներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա զինծառայողի անձի, զինվորական կոլեկտիվի, մարտական գործունեության, ԶՈՒ-ում հոգեբանական աշխատանքի, հոգեբանական պատերազմի վարման և հնարների, տեղեկութահոգեբանական ներգործությանը համարժեք հակազդման մասին մասնագիտական գիտելիքներ,
- կունենա այդ գիտելիքները պրակտիկայում կիրառելու հմտություններ:

**Բովանդակությունը.**

**Թեմա1՝** Զինվորական հոգեբանության առարկան, խնդիրները, մեթոդները:**Թեմա2՝** Մարտական հերթապահության և պահակային ծառայության հոգեբանական ապահովումը՝ որպես գործունեության արդյունավետության նախադրյալ: **Թեմա 3՝** Որոշում ընդունելու ժամանակ հրամանատարի ճանաչողական գործունեության հիմքերը, շարժառիթները: Ճանաչողական գործունեության արդյունավետության մեծացման ուղիները: **Թեմա 4՝** Զինծառայողների հուզակամային կայունությունը որպես ճանաչողական գործունեության արդյունավետության պայման: **Թեմա 5՝** Ոչ մահաբեր զենք. նախանշանակումը և կազմը: **Թեմա 6՝** Զինծառայողների անհատական առանձնահատկությունների հաշվառումը որպես անձնակազմի արդյունավետ հոգեբանական պատրաստման նախադրյալ: **Թեմա**

7՝ Զինվորական կարգապահության հոգեբանությունը: **Թեմա 8՝** Հոգեբանական աշխատանքի էությունը: Հոգեբանական աշխատանքի կազմակերպումը զորամասում;**Թեմա 9՝** Զինծառայողների հոգեբանական պատրաստումը ակտիվ մարտական գործողություններին:**Թեմա10՝** Արտասահմանյան երկրների բանակներում զորքերի բարոյահոգեբանական պատրաստումը:**Թեմա 11՝** ԶՈՒ-ի բարոյահոգեբանական ապահովումը, էությունը: **Թեմա 12՝** Զորքերի բարոյահոգեբանական ապահովման գաղափարական հիմքերը: **Թեմա 13՝** Զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի գնահատումը: **Թեմա14՝** Մարտական գործողությունների բարոյահոգեբանական ապահովման կառավարումը: **Թեմա 15՝** Մարտական գործողությունների բարոյահոգեբանական ապահովման էությունը;**Թեմա 16՝** Հոգեբանական օպերացիա. նպատակները և միջոցները: **Թեմա 17՝** Հոգեբանական ներգործությունը հակառակորդի բանականության վրա: **Թեմա 18՝** Զինծառայողների պաշտպանությունը բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից: **Թեմա 19՝** Տեղեկատվական դաշտի վերահսկողությունը հոգեբանական օպերացիաների տեսանկյունից: **Թեմա 20՝** Հավանական հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից զինծառայողների պաշտպանությունը որպես գերակա խնդիր:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական առաջադրանք:

***2-րդ ստուգում.*** Անհատական առաջադրանք:

**0303/B41.** *«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ – ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ» (4 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(48 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական և 8 ժամ սեմինար պարապմունքներ)*

Կիսամյակը՝ 7*–րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է  ուսումնասիրել կրթական իրավունքը որպես կրթության հիմնարար բաղադրիչ, ՀՀ կրթության համակարգի գործունեության օրենսդրական և նորմատիվ բազա, կրթության կառավարման կառուցվածքի կազմակերպական հիմք, ինչպես նաև ապագա մանկավարժ- հոգեբանների մոտ ձևավորել գիտելիքներ և կարողություններ աշխատելու կրթական-իրավական տարածքում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա կրթական իրավունքի հիմնական հասկացությունները, կրթության բնագավառի հիմնական օրենսդրական նորմատիվ և իրավական ակտերը, կրթական գործընթացի կազմակերպումը կարգավորող նորմատիվ –իրավական ակտերի կառուցվածքը և

տեսակները, երեխայի հիմնական իրավունքները և նրանց իրավական պաշտպանության ձևերը,

- կկարողանա ստացած գիտելիքները կիրառել կրթական պրակտիկայում, լուծել ուսուցման գործընթացի կառավարման խնդիրները կրթական հաստատության և նրա ստորբաժանումների մակարդակով, վերլուծել կրթության բնագավառի նորմատիվ-իրավական ակտերը,
- կկարողանա կիրառել ստացած գիտելիքները երեխային պրակտիկ իրավական օգնություն ցուցաբերելու համար:

**Բովանդակությունը.**

**Թեմա1՝** Կրթությունը ժամանակակից հասարակությունում:**Թեմա2՝** Կրթության բնագավառի հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը: **Թեմա 3՝** ՀՀ օրենսդրության մեջ երեխայի իրավունքը և նրա իրավական պաշտպանության ձևերը:**Թեմա 4՝** Կրթական հաստատության գործունեության նորմատիվ - իրավական և կազմակերպական իրավունքները:**Թեմա 5՝** Կրթական համակարգերի կառավարումը:**Թեմա 6՝** Կրթական հաստատությունների կրթական և գիտական գործունեության պետական և պետական-հասարակական հսկողությունը: **Թեմա** 7՝ Շարունակական կրթության համակարգում կրթական իրավահարաբերությունները:**Թեմա 8՝** Հետբուհական և լրացուցիչ մասնագիտական կրթության նորմատիվ- իրավական ապահովումը:**Թեմա 9՝** Միջազգային կրթական օրենսդրության հիմնական իրավական ակտերը:**Թեմա10՝** Կրթության բնագավառում ՀՀ և արտասահմանյան օրենսդրությունների հարաբերակցությունը: **Թեմա 11՝** ՀՀ մանկավարժական կրթության նորմատիվ-իրավական ապահովման մոդեռնիզացումը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Անհատական առաջադրանք:

***2-րդ ստուգում.*** Անհատական առաջադրանք:

## 4.4 .«Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտություն

**0304/B10.** *«ԼԱՏԻՆԵՐԵՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *( 32 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1-ին, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել համաշխարհային պատմության և ներկայիս մշակույթի համար կարևոր նշանակություն ունեցող

դասական լատիներենը, ցույց տալ նրա գործնական ու տեսական արժեքը նրանց հիմնական մասնագիտության յուրացման հարցում:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա միջազգային հաղորդակցման համար անհրաժեշտ դեր ունեցող լատինական այբուբենը, բոլոր գիտակարգերում կիրառվող տերմինները, քերականական տերմինների ակունքները.
2. կիասկանա մշակութային կյանքի շատ նրբություններ շնորհիվ լատինական բառերի ներքին բովանդակության բացահայտման.
3. կկարողանա խուսափել ժամանակակից լեզուներում, զովազդներում և այլուր շատ հասկացությունների գործածությունից:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Լատիներեն բառը բառարանում ներկայացվելու առանձնահատկությունները: ***Թեմա 2՝*** Հոլովման համակարգը: ***Թեմա 3՝*** Խոնարհման համակարգը: ***Թեմա 4՝*** Ածականների համեմատության աստիճանները և հոլովումը: ***Թեմա 5՝*** Շարահյուսական առանձնահատկությունները:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

**0304/B14.** ***«ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ»*** **-1** *(14 կրեդիտ)*

Շաբաթական՝ 14 ժամ *(224 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *1-ին, եզրափակիչ գնահատումով*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր և գրավոր խոսքի ունակություններ, ուղղախոսական–ուղղագրական հմտություններ, տեքստի հետ ինքնուրույն աշխատելու և ազատ հաղորդակցվելու կարողություններ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճիշտ արտաբերել ֆրանսերենի հնչյունները, ընդհանուր պատկերացում կունենա ֆրանսերենի ուղղախոսական նորմերի մասին,
2. կկարողանա ազատորեն հաղորդակցվել ֆրանսերենով, ընթերցել ադապտացված տեքստեր,
3. կկարողանա ինքնուրույն կերպով կատարել տեքստի ձևաբանական վերլուծություն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ֆրանսերենի հնչյունական համակարգը: Ուղղախոսական–ուղղագրական առանձնահատկությունները: ***Թեմա 2՝*** Ֆրանսերենի քերականության ընդհանուր բնութագիրը և հիմնական առանձնահատկությունները: ***Թեմա 3՝*** Հոդ և հոդառություն: Հոդերի տեսակները և դրանց գործածության առանձնահատկությունները: ***Թեմա 4՝*** Գոյականի քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: Սեռ, թիվ, հոդ: ***Թեմա 5՝*** Ածականի տեսակները: Համեմատության աստիճանների կազմության առանձնահատկությունները: ***Թեմա 6՝*** Դերանունների հիմնական տեսակները և դրանց քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 7՝*** Թվականներ: Թվականների քերականական կարգերը: ***Թեմա 8՝*** Բայ: Ընդհանուր բնութագիրը և բայերի դասակարգման սկզբունքները: ***Թեմա 9՝*** Մակբայների տեսակները և քերականական կարգերը: ***Թեմա 10՝*** Նախադասություն: Նախադասության տեսակները և դրանց ընդհանուր բնութագիրը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

**0302/B61.** *«ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *1-ին, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ,
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկրերի պատմական-հասարակական դերը,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հայ մշակույթը մինչև 5-րդ դար: Մեսրոպ Մաշտոցը և գրերի ստեղծումը. գրականության զարգացման հիմնական ուղղությունները: ***Թեմա 2՝***

Պատմագրություն: ***Թեմա 3՝*** Հայ միջնադարյան գրականությունը: ***Թեմա 4՝*** Հայ նոր գրականությունը: ***Թեմա 5՝*** Հայ նորագույն գրականությունը: ***Թեմա 6՝*** Արդի հայ գրականությունը և նրա զարգացման միտումները:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B40.** ***«ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»*** *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *1-ին, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ պատշաճ գիտելիքներ ձևավորել գրականագիտական հիմնական հասկացությունների, տերմինների, գրական երկի կառուցվածքային առանձնահատկությունների, նրա տարրերի վերաբերյալ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. յուրացրած կլինի արդի գրականագիտության կարևորագույն հասկացությունները.
2. որոշակի պատկերացում կունենա գրական գործընթացի, դրա բաղադրատարրերի մասին.
3. կկարողանա կատարել ցանկացած գրական տեքստի գրականագիտական վերլուծություն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Գրականագիտության հիմնական բաժինները, նրանց կապը: Արվեստի տեսակները, նրանց դասակարգումը: Գրականության տեղը արվեստի տեսակների շարքում: ***Թեմա 2՝*** Գրական պատկերման գլխավոր առարկան: Գրական-գեղարվեստական պատկերի տեսակները: ***Թեմա 3՝*** Գրական երկի թեման և թեմատիկան: Գրական երկի կոմպոզիցիան նրա ձևերն ու միջոցները: Գրական երկի սյուժեն, նրա տարրերը: ***Թեմա 4՝*** Գեղարվեստական լեզվի առանձնահատկությունները: Լեզվի պատկերավորման շարահյուսական և բառային միջոցները: ***Թեմա 5՝*** Տաղաչափական համակարգեր: Բանաստեղծության կայուն ձևեր: ***Թեմա 6՝*** Գրական սեռեր և ժանրեր: Էպիկական, քնարական և դրամատիկական սեռերի առանաձնահատկությունները:Կերպարի կառուցման եղանակները տարբեր սեռերում: Գրական ժանրերի տարբերակման հիմնական սկզբունքները: ***Թեմա 7՝*** Գրական ուղղություններ:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B93.** *«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»* -1 *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *2-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել անտիկ գրականության ժառանգությունը՝ հիմնվելով աղբյուրների և տեսական նյութի վրա:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անտիկ գրականության առանցքային գրական նյութը,
2. կծանոթանա դրա ներքին զարգացումներին և հասկացություններին,
3. կիմանա անտիկ գրականության ավանդական տեսական մոտեցումները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Անտիկ գրականության հասկացությունը, պարբերացումը, «հունական հրաշքի» քննադատությունը: ***Թեմա 2՝*** Հոմերոսի «Իլիականը» և «Ոդիսականը». աստվածներ և մարդիկ, դիցաբանականը և բանաստեղծականը: Հեսիոդոսի «Աշխատանք և օրեր» բարոյախրատական պոեմը: ***Թեմա 3՝*** Հունական քնարերգության ծագումն ու զարգացումը, թեմատիկան, բանաստեղծները: ***Թեմա 4՝*** Հունական թատրոն և դրամա, կատակերգություն և ողբերգություն. (Էսքիլես, Սոփոկ-լես, Եվրիպիդես, Արիստոփանես): ***Թեմա 5՝*** Հելլենիստական գրականության հասկացությունը, հռոմեական գրականության ծագումը, շրջանները: ***Թեմա 6՝*** Հռոմեական կատակերգակներ, հռոմեական «ոսկեդար», Վերգիլիուսի «Էնեականը» և դրա կապը հունական էպոսի հետ: Անտիկ աշխարհի կործանման պատճառները և քրիստոնեական գրականության սկզբնավորումը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 3,3,2,2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B15.** *«ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ»* **-2** *(14 կրեդիտ)*

Շաբաթական՝ 14 ժամ *(224 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *2-րդ, եզրափակիչ գնահատումով*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի խորացնել առաջին կիսամյակում ստացած գիտելիքները, հարստացնել ուսանողի բառապաշարը և զարգացնել նրա ուղղախոսական ունակությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական պատկերացում կունենա ֆրանսերենի հնչյունաբանության, ուղղախոսական–ուղղագրական նորմերի, հիմնական քերականական կառուցվածքի մասին,
2. կկարողանա ազատորեն հաղորդակցվել ֆրանսերենով, ընթերցել միջին բարդության տեքստեր,
3. կկարողանա ինքնուրույն կերպով կատարել տեքստի շարահյուսական վերլուծություն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ածականի տեսակները: Համեմատության աստիճանների կազմության առանձնահատկությունները: ***Թեմա 2՝*** Դերանունների հիմնական տեսակները և դրանց քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 3՝*** Թվականներ: Թվականների քերականական կարգերը: ***Թեմա 4՝*** Բայ: Ընդհանուր բնութագիրը և բայերի դասակարգման սկզբունքները: ***Թեմա 5՝*** Մակբայների տեսակները և քերականական կարգերը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0302/B62.** ***«ՀԱՅ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *2-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել նորագույն շրջանի հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա նորագույն շրջանի հայ գրականության գլխավոր երկերը, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ,
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** 20-րդ դարասկզբի պատմական իրադարձությունների արտացոլումը հայ գրականության մեջ: Գրական-գեղարվեստական ուղղություններ, հոսանքներ: ***Թեմա 2՝*** Հայ գրականությունը 20-30-ական թթ.: Հասարակական-քաղաքական իրադարձությունները, դրանց արտացոլումը գրականության մեջ: ***Թեմա 3՝*** Ե. Չարենց: ***Թեմա 4՝*** Դ. Դեմիրճյան, Ս. Զորյան: ***Թեմա 5՝*** Ա. Բակունց: ***Թեմա 6՝*** Շահան Շահնուր, Կոստան Զարյան: ***Թեմա 7՝*** Հետպատերազմյան շրջանի հայ գրականությունը: ***Թեմա 8՝*** Պ. Սևակ, Հ. Մաթևոսյան:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B94.** ***«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»*** **-2** *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *3-րդ, եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ընդհանուր գիտելիքներ հաղորդել համաշխարհային գրականության պատմության, գրական կարևոր դարաշրջանների և ուղղությունների, գրական խոշորագույն երևույթների և գրական զարգացման ընդհանուր ընթացքի վերաբերյալ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա համաշխարհային գրականության պարբերացման, գրական կարևոր ուղղությունների և ոճերի, գրականության ընթացքի և ներքին զարգացումների օրինաչափությունների մասին.
2. ծանոթ կլինի ծրագրով տրված գրական խոշոր երևույթներին, համաշխարհային գրականության կարևորագույն երկերի բովանդակությանն ու գեղարվեստական արժանիքներին.
3. կկարողանա կողմնորոշվել համաշխարհային գրականության վիթխարի ժառանգության ընդհանուր համապատկերի մեջ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Վերածնության առաջացումը, նրա առանձնահատկությունները: Վերածննդի գրականությունը Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում: Շեքսպիրի ողբերգությունները, Դանտեի «Աստվածային կատակերգություն» պոեմը, Բոկաչչոյի «Դեկամերոնը», Սերվանտեսի «Դոն Կիխոտ» վեպը: ***Թեմա 2՝*** Կլասիցիզմի գեղագիտությունը և գրականությունը: ***Թեմա 3՝*** Լուսավորչական գրականության առաջացումը 18-րդ դարում: Անգլիական վեպի ավանդույթները /Դ. Դեֆո, Ջ. Սվիֆտ, Հ. Ֆիլդինգ/: ***Թեմա 4՝*** Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպը, Շիլլերի «Դոն Կարլոս» դրաման: ***Թեմա 5՝*** Ռոմանտիզմը և նրա գեղարվեստական առանձնահատկությունները: Ռոմանտիզմը Անգլիայում Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B22. *«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ»* -1/ անգլերեն**

*(8 կրեդիտ)*

Շաբաթական՝ 8 ժամ *(128 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3-րդ,առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ծանոթացնել անգլերենի հնչյունական համակարգին, հաղորդել ընդհանուր տարրական գիտելիքներ ձևաբանությունից և շարահյուսությունից, դասընթացի սահմաններում զարգացնել բառապաշարը, հաղորդակցական հմտությունները (ընտանիք, աշխատանքային օր, ամենօրյա գործողություններ, եղանակ):

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կբերի ընդհանուր գիտելիքներ անգլերենի քերականությունից,
2. կյուրացնի հաղորդակցվելու հմտություններ,
3. կիմանա անգլերենի ուղղագրության հիմնական կանոնները /թելադրություն/:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Անգլերենի հնչյունական համակարգը: Հնչյունների դասակարգումը: Բաց և փակ վանկեր: ***Թեմա 2՝*** Բառակազմություն, պրոդուկտիվ ածանցներ: ***Թեմա 3՝*** Անձնական, ստացական, ցուցական դերանուններ: ***Թեմա 4՝*** Գոյականի թիվը. ստացական հոլով: ***Թեմա 5՝*** Ներկա և անցյալ անորոշ և շարունակական, ապառնի անորոշ ժամանակաձևեր: ***Թեմա 6՝*** Ածականի համեմատության աստիճանները: ***Թեմա 7՝*** Մակբայների համեմատության աստիճանները:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B16.** *«ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ»* **-3** *(9 կրեդիտ)*

Շաբաթական՝ 8 ժամ *(128 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները, ուսանողի մոտ ձևավորել ազատ հաղորդակցվելու և գրականությունից օգտվելու կարողություններ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական պատկերացում կունենա ֆրանսերենի ձևաբանության և շարահյուսության մասին,
2. կկարողանա կատարել տեքստի շարահյուսական վերլուծություն,
3. կկարողանա բառարանի օգնությամբ ընթերցել գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ֆրանսերենի բառակազմությունը: Առավել գործածական նախածանց-ներն ու վերջածանցները: ***Թեմա 2՝*** Ֆրանսերենի նախդիրների ընդհանուր բնութագիրը: Առավել գործածական նախդիրները: ***Թեմա 3՝*** Շաղկապների կարգերն ու տեսակները: ***Թեմա 4՝*** Հաստատական և ժխտական մասնիկները և դրանց գործածության առանձնահատկությունները: ***Թեմա 5՝*** Շարահյուսություն: Նախադասության դասակարգման սկզբունքներն ու չափանիշները:

*Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B17.** *«ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ»* **- 4** *(8 կրեդիտ)*

Շաբաթական՝ 8 ժամ *(128 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները, ուսանողի մոտ ձևավորել ֆրանսերեն լեզվով ինքնուրույն աշխատանք գրելու կարողություններ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավարար չափով կտիրապետի ֆրանսերենի ուղղախոսության և ուղղագրության նորմերին, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկություններին,
2. կկարողանա օգտվել մասնագիտական գրականությունից,
3. կկարողանա ինքնուրույն կերպով գրել միջին բարդության մասնագիտական աշխատամք՝ կուրսային աշխատանք, զեկուցում, թեզիս:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Բայի անդեմ ձևերը: Դերբայների դասակարգման սկզբունքները ու չափանիշները: ***Թեմա 2՝*** Հարակատար դերբայի գործածության առանձնահատկությունները: ***Թեմա 3՝*** Դարձված և դարձվածաբանություն: ***Թեմա 4՝*** Շեշտ և հնչերանգ: ***Թեմա 5՝*** Հարցական նախադասությունների կազմության առանձնահատկությունները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B13.** ***«ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *4-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել լեզվի էության, գործառության ու զարգացման հիմնական օրինաչափությունները. աշխարհի լեզուների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի ընդհանուր առանձնահատկությունները, լեզուների դասակարգման հիմնական սկզբունքները, աշխարհի լեզուներն ու նրանց բաշխումը ըստ լեզվաընտանիքների և ըստ կառուցվածքային տիպերի:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա լեզվական ընդհանուր կարգերը,

2. կհասկանա ցեղակից և ոչ ցեղակից լեզուների նմանություններն ու տարբերությունները,
3. կկարողանա տարբերել տարբեր լեզվաընտանիքների պատկանող լեզուները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ Լեզվի բնութագիրը. լեզվի բնորոշումը. լեզվի գոյության ձևերը: ***Թեմա 2***՝ Լեզուների հնչյունական համակարգերի նմանություններն ու տարբերությունները. գրային համակարգեր: ***Թեմա 3***՝ Լեզուների բառային համակարգերը: ***Թեմա 4***՝ Լեզուների ձևաբանական համակարգերը: ***Թեմա 5***՝ Լեզուների շարահյուսական համակարգերը: ***Թեմա 6***՝ Լեզվի ծագումը: ***Թեմա 7***՝ Աշխարհի լեզուների դասակարգումը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B95.** ***«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»*** **-3** *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *4-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիք հաղորդել 19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմության, զարգացման յուրահատկությունների, ոճական, գրական բազմազանության և հարստության վերաբերյալ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պարբերացման, գրական կարևոր ուղղությունների և ոճերի, գրականության զարգացման ընդհանուր ընթացքի մասին.
2. կիմանա ծրագրով տրված հեղինակների կյանքն ու ստեղծագործությունը, կարևոր գրական երկերի ստեղծագործական պատմությունը,
3. կկարողանա վերլուծել ծրագրով տրված ստեղծագործությունները և ցույց տալ դրանց գեղարվեստական արժանիքները

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ Ռեալիստական գրականության ձևավորումը: Սիմվոլիզմ: ***Թեմա 2***՝ 20-րդ դարի սկզբի արտասահմանյան գրականության ընդհանուր բնութագի-

րը: Դարասկզբի գրական ուղղությունները: Սյուրռեալիզմ: ***Թեմա 3՝*** Գերմանական գրականության ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 4՝*** 20-րդ դարի իսպանական պոեզիան և լատինամերիկյան արձակը: ***Թեմա 5՝*** 20-րդ դարի անգլոամերիկյան գրականությունը: ***Թեմա 6՝*** 20-րդ դարի իտալական գրականության զարգացման ուղիները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 3, 3, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B38.** ***«ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ /հիմնական օտար լեզու-ֆրանսերեն/»***

*(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *4-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ամբողջական պատկերացում տալ ֆրանսիական քաղաքակրթության նվաճումների և արդի աշխարհաքաղաքական պայմաններում Ֆրանսիայի դերի և նշանակության մասին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավարար չափով տեղեկություններ կունենա Ֆրանսիայի պատմության, մշակույթի, հասարակական–քաղաքական կյանքի մասին.
2. կկարողանա հասկանալ Ֆրանսիայի պատմական զարգացման առանձնահատկությունները և արդի հիմնախնդիրները.
3. կկարողանա օգտվել մասնագիտական գրականությունից և գրել ֆրանսիական քաղաքակրթության այլևայլ հարցերին վերաբերող ոչ մեծ աշխատանք՝ զեկուցում, թեզիս:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ֆրանսիայի բնական և ժողովրդագրական պայմանների բնութագիրը: ***Թեմա 2՝*** Երկրի (տարածաշրջանի) վարչատարածքային և տնտեսա–աշխարհագրական բաժանումը: ***Թեմա 3՝*** Համառոտ պատմամշակութային ակնարկ: ***Թեմա 4՝*** Ֆրանսիական դասական գրականությունը: ***Թեմա 5՝*** Ֆրանսիական երաժշտությունը, թատրոնը և կինոն:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0303/B03.** *«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *4-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդու հոգեկան երևույթների առանցքային օրինաչափություններին և մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել նրանց ապագա մասնագիտական իրացման մեջ հոգեբանական գիտելիքի կիրառմանը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեբանության ընդհանուր դրույթները, հոգեկան գործընթացների և վիճակների առանձնահատկությունները և ձևավորման հիմնական օրինաչափությունները,
2. կկարողանա կիրառել հոգեբանական իմացությունը մասնագիտական և մանկավարժական գործունեության մեջ, ինչպես նաև հասարակական կյանքում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հոգեբանության առարկան, խնդիրները, ոլորտները: Հասկացություն հոգեկանի մասին: Հոգեկանի կառուցվածքը և ֆունկցիաները: ***Թեմա 2՝*** Պերցեպտիվ պրոցեսների հոգեբանություն: ***Թեմա 3՝*** Կոգնիտիվ պրոցեսների հոգեբանություն: ***Թեմա 4՝*** Անձ, անհատ, անհատականություն հասկացությունները հոգեբանության մեջ: Խառնվածք, բնավորություն, ընդունակություններ: ***Թեմա 5՝*** Սոցիալական խմբեր: Առաջնորդություն: Շփում, հաղորդակցում: ***Թեմա 6՝*** Մանկավարժական և տարիքային հոգեբանության առարկան և խնդիրները: Տարիքային պարբերացում և ճգնաժամեր: Կրթության և դաստիարակության հոգեբանական առանձնահատկությունները:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B23. *«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ»* -2 / անգլերեն**
*(10 կրեդիտ)*
Շաբաթական՝ 10 ժամ *(160 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *4-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Զարգացնել բանավոր և գրավոր խոսքը՝ ներմուծելով ստեղծագործական աշխատանքի տարրեր (փոխադրություն): Հաղորդել հիմնական գիտելիքներ քերականությունից: Հարստացնել բառապաշարը երկրագիտական, լեզվաբանական, պատմական, գեղարվեստական տեքստերի միջոցով:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կբերի ընդհանուր գիտելիքներ անգլերենի քերականությունից,
2. ձեռք կբերի հաղորդակցվելու հմտություններ,
3. կիմանա անգլերենի ուղղագրության հիմնական կանոնները /թելադրություն/:

**Բովանդակություն.**

***Թեմա 1՝*** Խոսքի մասերի դասակարգումը անգլերենում: ***Թեմա 2՝*** Բայի համակարգը, տեսակները: ***Թեմա 3՝*** Սահմանական եղանակի անորոշ ժամանակաձևերը: ***Թեմա 4՝*** Սահմանական եղանակի շարունակական ժամանակաձևերը: ***Թեմա 5՝*** Սահմանական եղանակի վաղակատար ժամանակաձևերը: ***Թեմա 6՝*** Սահմանական եղանակի վաղակատար շարունակական ժամանակաձևերը: ***Թեմա 7՝*** Բայի սեռը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B33. *«ՏԵՍԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»*** *(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *5-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ամբողջական պատկերացում տալ ֆրանսերենի հնչյունական համակարգի ձևավորման և արտասանական առանձնահատկությունների մասին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավարար տեղեկություններ կունենա ֆրանսերենի հնչյունների դասակարգման սկզբունքների տեսակների և արտասանական առանձնահատկությունների մասին,
2. կկարողանա տալ ֆրանսերենի հնչյունների ամբողջական նկարագրությունը,
3. կկարողանա օգտվել մասնագիտական գրականությունից և գրել ֆրանսերենի հնչյունաբանությանը վերաբերող ոչ մեծ աշխատանք՝ զեկուցում, թեզիս:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ընդհանուր տեղեկություններ հնչյունի մասին: ***Թեմա 2՝*** Հնչյունների դասակարգման չափանիշներն ու սկզբունքները: ***Թեմա 3՝*** Հնչյուն և հնչույթ, վանկ: ***Թեմա 4՝*** Հնչյուն–բառ և բառ–նախադասություն փոխհարաբերությունները: ***Թեմա 5՝*** Հնչյունական իմաստի խնդիրը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0303/B21.** *«ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *5-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժություն գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը՝ գիտական հարացույցների հիմքի վրա և ցույց տալ մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մանկավարժության ժամանակակից տեսությունները, ճյուղերը, հիմնական հասկացությունները, ուսուցման և դաստիարակության դերը մարդու անձի ձևավորման և զարգացման գործընթացում, ՀՀ կրթության համակարգի արդի բարեփոխումները, ուսուցման նոր տեսակները (աշակերտակենտրոն և ուսանողակենտրոն), ուսուցման կազմակերպման նոր ձևերն ու մեթոդները, կրթության կառավարման հիմնահարցերը.
2. կհասկանա մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդու անձի սոցիալականացման համատեքստում.
3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Մանկավարժության ընդհանուր հիմունքներ: Մանկավարժական գիտությունների համակարգը, կապն այլ գիտությունների հետ, ուսումնասիրության օբյեկտը, առարկան, հետազոտության մեթոդները: ***Թեմա 2՝*** Մանկավարժական մտքի պատմական զարգացումը, կրթական գործը սփյուռքում: ***Թեմա 3՝*** Դաստիարակության հիմունքներ. անձի ձևավորումը, գործոնները, զարգացումն ու դաստիարակությունը: Դաստիարակության սկզբունքները, մեթոդները, բաղադրիչները: ***Թեմա 4՝*** Դիդակտիկայի հիմունքներ: Կրթության բովանդակությունը, ուսուցման գործընթացի էությունը, սկզբունքները, մեթոդները, կազմակերպման ձևերը: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն ու գնահատումը: ***Թեմա 5՝*** Կրթության կառավարում: ՀՀ կրթության համակարգը, կառավարումը և բարեփոխումները:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Թեստային աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B96.** *«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»* - 4 *(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *5-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Ուսանողներին ցույց տալ ֆրանսիական գրականության էվոլյուցիան 12-15-րդ դարերում:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ֆրանսիական գրականության զարգացման օրինաչափությունները,
2. կհասկանա տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-մշակութային պրոբլեմատիկան,
3. կկարողանա ինքնուրույն վերլուծել գեղարվեստական ստեղծագործութ-յունները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ֆրանսիական միջնադարյան գրականությունը ձևավորման շրջանում. էպոսը, պոեզիան, ասպետական վեպերը («Տրիստանի և Իզոլդայի սիրավեպը»): ***Թեմա 2՝*** Քաղաքային գրականությունը 14-15-րդ դդ.՝ Ֆրանսուա Վիյոն: ***Թեմա 3՝*** Ֆրանսիական Վերածնունդը և Մարգարիտ Նավարացու խմբա-կը: ***Թեմա 4՝*** Ֆրանսուա Ռաբլեն և նրա «Գարգանտյուա և Պանտագրյուել» վեպը: ***Թեմա 5՝*** Վերածննդի հումանիստական պոեզիան 16-րդ դարի երկրորդ կեսում. «Պլեադի» գեղագիտությունը. Պիեռ դե Ռոնսարը և Ժոաշեն դյու Բելեն: ***Թեմա 6՝*** Կլասիցիզմի գեղագիտական և փիլիսոփայական հիմքերը (Ռենե Դեկարտը և Նի-

կոլա Բուալոն): Ֆրանսուա Մալերբի պոեզիան: Ուշ Վերածնունդը և Միշել Մոնտենի «Փորձերը»: ***Թեմա 7՝*** Ֆրանսիական կլասիցիստական ողբերգությունները. Պիեռ Կոռնելի և Ժան Ռասինի ստեղծագործությունները: ***Թեմա 8՝*** Ժան Բատիստ Մոլիերի կատակերգությունները: Ժան Լաֆոնտենի առակները, հեքիաթները, նովելները: ***Թեմա 9՝*** 18-րդ դարի ֆրանսիական մորալիստները. Ֆրանսուա Լարոշֆուկո և Ժան դը Լաբրյուեր:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B24. *«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ»* -3/ անգլերեն**

*(8 կրեդիտ)*

Շաբաթական՝ 8 ժամ *(128 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Հարստացնել ուսանողների բառապաշարը (գնումներ, սպասարկում, երաժշտություն, կրթություն), ներկայացնել անգլերենի հիմնական կառույցները, խորացնել քերականական գիտելիքները ձևաբանությունից:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի լեզվի հիմնական կառույցներին,
2. կիմանա խոսքի մասերը,
3. կզարգացնի հաղորդակցվելու հմտությունները /ձևաբանություն, խոսքի մասեր, հատուկ կառույցներ/:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Մոդալ բայեր: ***Թեմա 2՝*** Ուղիղ և անուղղակի խոսք և ժամանակների համաձայնեցում: ***Թեմա 3՝*** Գոյականի քերականական կարգերը: ***Թեմա 4՝*** Հոդի կիրառությունը: ***Թեմա 5՝*** Դերանվան տեսակները: ***Թեմա 6՝*** Թվականի տեսակները: ***Թեմա 7՝*** Ածական և մակբայ, համեմատության աստիճանները: ***Թեմա 8՝*** Սպասարկու խոսքի մասեր:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B34.** ***«ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** *(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *5-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ ֆրանսերենի պատմության հիմնական փուլերի և զարգացման առանձնահատկությունների մասին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ֆրանսերենի համառոտ պատմությունը,
2. բավարար տեղեկություններ կունենա ֆրանսերենի ծագման, ցեղակցական կապերի և պատմական զարգացման առանձնահատկությունների մասին,
3. կկարողանա օգտվել մասնագիտական գրականությունից և գրել ոչ մեծ աշխատանքներ՝ զեկուցում, թեզիս:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ֆրանսերենի զարգացման հիմնական փուլերը. Հին ֆրանսերեն, միջին ֆրանսերեն և ժամանակակից ֆրանսերեն: ***Թեմա 2՝*** Գրական լեզուն և բարբառները: ***Թեմա 3՝*** Լեզվաբանական ուսմունքների պատմություն: ***Թեմա 4՝*** Հնչյունական համակարգի կրած փոփոխությունները: ***Թեմա 5՝*** Ֆրանսերենի քերականական համակարգի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B18.** ***«ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ»* -5** *(10 կրեդիտ)*
Շաբաթական՝ 10 ժամ *(160 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *5-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները, ուսանողի մոտ ձևավորել ազատ հաղորդակցվելու, գեղարվեստական և մասնագիտական գրականությունից ազատորեն օգտվելու կարողություններ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավարար պատկերացում կունենա ֆրանսերենի բառապաշարի տարբեր շերտերի մասին,
2. կկարողանա ազատ կերպով շարադրել իր մտքերը և զրուցել հասարակական–քաղաքական և մշակութային թեմաներով,
3. կկարողանա կարդալ բնագիր տեքստեր և օգտվել մասնագիտական գրականությունից:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ֆրանսերենի բառապաշարի ընդհանուր բնութագիրը: Հիմնաշերտ և փոխառություններ: ***Թեմա 2՝*** Բառապաշարի հարստացման հիմնական միջոցները:Ներքին հնարավորություններ, փոխառություն և կաղապարում:***Թեմա 3՝*** Հոմանիշություն և հականունություն: Հոմանիշության առանձնահատկությունները: ***Թեմա 4՝*** Համանունության դրսևորման առանձնահատկությունները: ***Թեմա 5՝*** Ֆրանսիական բառարանագրություն:

*Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B82.** ***«ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *6-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ պատկերացում ձևավորել ռուս գրականության պատմական զարգացման, հիմնական գրական ուղղությունների, ինչպես նաև առանձին ռուս դասական գրողների ստեղծագործության մասին:

*Կրթական արդյունքները.*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա պատկերացում ռուս գրականության զարգացման հիմնական փուլերի մասին.
2. կիմանա 18–20-րդ դարերի ռուս գրականության հիմնական ուղղությունների մասին.
3. ծանոթ կլինի ռուս դասականների կարևորագույն ստեղծագործություններին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ռուս գրականության դերը համաշխարհային մշակույթում: Հին ռուս գրականության հիմնական ժանրերն ու նշանավոր հուշարձանները: ***Թեմա***

***2*՝** 18-րդ դարի գրականության հիմնական ուղղությունները: Ռուսական կլասիցիզմ: Ռուսական սենտիմենտալիզմ: Դ. Ֆոնվիզինի, Ն. Կարամզինի ստեղծագործությունը: ***Թեմա 3*՝** Ռուսական ռոմանտիզմ: Ա. Պուշկինը և պուշկինյան դարաշրջանի ռուս գրականությունը: Մ. Լերմոնտովի և Ն. Գոգոլի ստեղծագործությունը: ***Թեմա 4*՝** Ռեալիզմի հետագա զարգացումը ռուս գրականության մեջ: Ի. Գոնչարովի, Ա. Օստրովսկու, Ի. Տուրգենևի ստեղծագործությունը: ***Թեմա 5*՝** Ֆ. Դոստոևսկու, Լ. Տոլստոյի և Ա. Չեխովի ստեղծագործությունը: ***Թեմա 6*՝** Մոդեռնիստական ուղղությունները ռուս գրականության մեջ /սիմվոլիզմ, ակմեիզմ, ֆուտուրիզմ/: ***Թեմա 7*՝** 20-րդ դարի ռուսական ռեալիզմը: Մ. Գորկու, Ի. Բունինի, Մ. Շոլոխովի, Մ. Բուլգակովի ստեղծագործությունը: ***Թեմա 8*՝** 20-րդ դարի 2-րդ կեսի պատմության ուրվագիծ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B35.** ***«ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *6-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ամբողջական պատկերացում տալ ֆրանսերենի բառապաշարի տարբեր շերտերի և զարգացման առանձնահատկությունների մասին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավարար չափով տեղեկություններ կունենա ֆրանսերենի բառապաշարի տարբեր շերտերի և հարստացման ուղիների մասին,
2. կկարողանա տարբերակել իմաստային–թեմատիկ խմբերը,
3. կկարողանա օգտվել մասնագիտական գրականությունից և գրել ֆրանսերենի բառագիտությանը վերաբերող ոչ մեծ աշխատանք՝ զեկուցում, թեզիս:

**Բովանդակությունը.**

*Թեմա 1*՝ Ընդհանուր տեղեկություններ բառի մասին: ***Թեմա 2*՝** Բառը որպես խոսքի նվազագույն տարր: ***Թեմա 3*՝** Հնչյուն–բառ և բառ–նախադասություն փոխհարաբերությունները: ***Թեմա 4*՝** Բառակազմություն: ***Թեմա 5*՝** Հոմանիշներ: Հականիշներ: Իմաստային–թեմատիկ խմբեր:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B98.** ***«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»*** **-5** *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *6-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ներկայացնել 18-րդ դարի ֆրանսիական գրականության զարգացման խնդիրները, գաղափարա-գեղարվեստական ուղղությունները, ժանրային համակարգերը, գեղարվեստական առանձնահատկությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 18-րդ դարի ֆրանսիական գրականության զարգացման առանձնահատկությունները, ինքնատիպությունը և համաեվրոպական նշանակությունը,
2. կհասկանա տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-մշակութային պրոբլեմատիկան
3. կկարողանա ինքնուրույն վերլուծել 18-րդ դարի ֆրանսիական գրականության նշանավոր ստեղծագործությունները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** 18-րդ դարի ֆրանսիական գրականության զարգացման հիմնական ուղղությունները. Ռենե Լըսաժ, Աբբա Պրևո: ***Թեմա 2՝*** Դենի Դիդրոյի գեղագիտական կոնցեպցիան, դրամատուրգիան և արձակ ստեղծագործությունները («Միանձնուհին», «Ռամոյի ազգականը»): ***Թեմա 3՝*** Վոլտերի փիլիսոփայական արձակը («Զադիգ», «Միկրոմեգաս», «Կանդիդ»): Ժան Ժակ Ռուսսո: ***Թեմա 4՝*** Բոմարշեի թատրոնը. (եռերգությունը Ֆիգարոյի մասին): ***Թեմա 5՝*** Ֆրանսիական ռոմանտիզմը. պոեզիան և արձակը: Վիկտոր Հյուգոյի պոեզիան, դրամատուրգիան և վեպերը («Փարիզի Աստվածամոր տաճարը», «Թշվառներ», «Իննսուներեք»): ***Թեմա 6՝*** Պրոսպեր Մերիմեի ռոմանտիզմը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2, 02 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B25.** ***«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ»*** **- 4/ անգլերեն**
*(8 կրեդիտ)*
Շաբաթական՝ 8 ժամ *(128ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *6-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ակտիվացնել ստեղծագործական կարողությունները (շարադրություն և բանավեճեր՝ ընկերություն, գիտական նվաճումներ, պատերազմ և խաղաղություն թեմաներով) և հաղորդել գիտելիքներ շարահյուսությունից:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կստանա քերականական խորը գիտելիքներ ձևաբանությունից և շարահյուսությունից,
2. ձեռք կբերի տեքստը անգլերեն լեզվով վերարտադրելու հմտություններ,
3. կկարողանա նախադասությունը վերլուծել ձևաբանորեն և շարահյուսորեն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Բայի եղանակի քերականական կարգը: ***Թեմա 2՝*** Դերբայներ: ***Թեմա 3՝*** Նախադասության տեսակները, պարզ և բարդ նախադասություններ: ***Թեմա 4՝*** Նախադասության գլխավոր անդամները: ***Թեմա 5՝*** Նախադասության երկրորդական անդամները: ***Թեմա 6՝*** Շարադասություն: ***Թեմա 7՝*** Կետադրություն:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B19.** ***«ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ»*** **-6** *(9 կրեդիտ)*
Շաբաթական՝ 8 ժամ *(128 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *6-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները՝ շեշտը դնելով մասնագիտական տեքստերի վրա:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավարար չափով կտիրապետի ֆրանսերենի լեզվաբանական տերմիններին,
2. կկարողանա գործածել ֆրանսերեն լեզվաբանական տերմինների հայերեն համարժեքները,

3. պատրաստ կլինի գրելու լեզվաբանական թեմայով ավարտական աշխատանք:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ֆրանսերենի լեզվաբանական տերմինաբանության ընդհանուր բնութագիրը: Միայն ֆրանսերենին բնորոշ երևույթները նշանակող տերմիններ: ***Թեմա 2՝*** Լեզվաբանական տերմինների թարգմանության առանձնահատկությունները: Ուղղակի համարժեքներ և նկարագրական տարբերակներ: ***Թեմա 3՝*** Միայն հայերենին բնորոշ երևույթները նշանակող տերմինների ֆրանսերեն թարգմանության առանձնահատկությունները: ***Թեմա 4՝*** Լեզվաբանական տեքստի վերլուծություն և համառոտ վերաշարադրանք: ***Թեմա 5՝*** Լեզվաբանական տեքստի թարգմանության առանձնահատկությունները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B36.** ***«ՏԵՍԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»*** *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *7-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ ֆրանսերենի քերականական կառուցվածքի հիմնական առանձնահատկությունների մասին, նրանց մոտ ձևավորել քերականական երևույթները ճիշտ հասկանալու և մեկնաբանելու ունակություն:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական պատկերացում կունենա ֆրանսերենի քերականական կառուցվածքի հիմնական առանձնահատկությունների մասին.
2. կկարողանա տարբերակել և ինքնուրույն կերպով մեկնաբանել ֆրանսերենին բնորոշ երևույթները.
3. կկարողանա օգտվել տեսական գրականությունից և գրել ոչ մեծ աշխատանքներ՝ զեկուցում, թեզիս:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Խոսքի մասերի դասակարգման սկզբունքները: Խոսքի մասերի փոխակերպումը: ***Թեմա 2՝*** Գոյականի բառաքերականական ենթադասերը: Սեռի և թվի կարգերը: ***Թեմա 3՝*** Առկայացուցիչների ընդհանուր բնութագիրը և իմաս-

տային դասակարգումը: ***Թեմա 4՝*** Դերանունների փոխակերպիչ գործառությունը: Դե-րանունների բառաքերականական ենթախմբերը: ***Թեմա 5՝*** Բայերի ընդհանուր բնութագիրը: Ժամանակի կարգը և կերպաժամանակային ձևերի իմաստութային առանձնահատկությունները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B37.** *«ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *7-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ամբողջական պատկերացում տալ ֆրանսերենի ոճաբանության առանձնահատկությունների և արդի հիմնախնդիրների մասին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական պատկերացում կունենա ֆրանսերենի ոճաբանության առանձնահատկությունների մասին.
2. կտիրապետի ոճաբանության հիմնական ըմբռնումներին և հասկացություններին.
3. կկարողանա օգտվել մասնագիտական գրականությունից և գրել ֆրանսերենի ոճաբանությանը վերաբերող ոչ մեծ աշխատանք՝ զեկուցում, թեզիս:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ընդհանուր տեղեկություններ ոճի մասին: ***Թեմա 2՝*** Ոճաբանության հիմնական ըմբռնումները և հասկացությունները: ***Թեմա 3՝*** Ոճը որպես լեզվի անհատական դրսևորում: ***Թեմա 4՝*** Գրական ոճ, հասարակական–քաղաքական տերմինաբանություն: ***Թեմա 5՝*** Ոճական կաղապարներ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B100.** ***«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»*** **-6** *(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *7-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ծանոթացնել 19-րդ դարի ֆրանսիական գրականության զարգացման առանձնահատկությունները, ուղղությունները (ռոմանտիզմ, ռեալիզմ, նատուրալիզմ, սիմվոլիզմ), վերլուծել դարաշրջանի նշանավոր գրողների ստեղծագործությունները, ցույց տալ նրանց նշանակությունը եվրոպական գրականության զարգացման հետագա ընթացքի համար:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-րդ դարի ֆրանսիական գրականության զարգացման օրինաչափությունները, գրական հոսանքների, ուղղությունների առանձնահատկությունները, գեղարվեստական կոնցեպցիաները,
2. կհասկանա գրական հոսանքների, ուղղությունների անցումների և ձևափոխությունների ներքին օրենքները և սկզբունքները,
3. կկարողանա ինքնուրույն վերլուծել դարաշրջանի մեծ գրողների ստեղծագործությունները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** 19-րդ դարի ֆրանսիական ռեալիզմը (Օնորե դը Բալզակ, Ստենդալ, Գուստավ Ֆլոբեր, Գի դը Մոպասան): ***Թեմա 2՝*** Ժորժ Սանդի հոգեբանական վեպերը: Պառնասականները. Տեոֆիլ Գոթիեի, Լըկոնտ դը Լիլի պոեզիան: ***Թեմա 3՝*** Շառլ Բոդլերի «Չարի ծաղիկներ» ժողովածուի նորարարական նշանակությունը և գեղարվեստական արժեքը. Բոդլերի գեղագիտական հայացքները: ***Թեմա 4՝*** Նատուրալիզմի տեսությունը և Էմիլ Զոլայի փորձարարական վեպը («Ռուգոն Մակկարներ» վիպաշարը): ***Թեմա 5՝*** Ֆրանսիական սիմվոլիստական պոեզիան (Պոլ Վեռլեն, Արթյուր Ռեմբո, Ստեֆան Մալարմե): ***Թեմա 6՝*** Անատոլ Ֆրանսի փիլիսոփայական ստեղծագործությունները («Թաիս»). Ռոմեն Ռոլանի վեպերը («Ժան Քրիստոֆ», «Հմայված հոգին»):

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B26.** ***«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ»*** **-5/ անգլերեն**
*(9 կրեդիտ)*

Շաբաթական՝ 8 ժամ *(128 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *7-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Ամրապնդել քերականական նյութը: Կրկնություն: Ծանոթացնել անգլիական և ամերիկյան գեղարվեստական գրականությանը, որը միտված է ուսանողին հաղորդակից դարձնել ուսումնասիրվող լեզվի մտածելակերպին և մշակութային առանձնահատկություններին: Հասարակական–քաղաքական, գիտական և մշակութային հոդվածների վերարտադրություն և թարգմանություն:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կբերի գրական ճաշակ,
2. կտիրապետի հաղորդակցման հմտություններին,
3. կիմանա ուսումնասիրվող լեզուն կրող մշակույթի առանձնահատկությունները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ Անգլիական և ամերիկյան գրականության նմուշներ: ***Թեմա 2***՝ Քաղաքական համակարգը Հայաստանում, ԱՄՆ–ում և Մեծ Բրիտանիայում, ընտրություններ և քաղաքական կուսակցություններ: ***Թեմա 3***՝ Իրավունք, արդարադատության համակարգը և օրենքը Հայաստանում, ԱՄՆ–ում և Մեծ Բրիտանիայում, հանցագործություն և պատժամիջոցներ: ***Թեմա 4***՝ Բժշկություն, ախտանշաններ, հիվանդություններ, բուժական համակարգ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B31.** ***«ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ»***
*(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *7-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ֆրանսերենի դասավանդման մասնագիտական հմտություններ, նրանց զինել դասավանդման արդի մեթոդներով:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավականաչափ տեղեկություններ կունենա ֆրանսերենի դասավանդման մեթոդիկայի առանձնահատկությունների մասին,

2. կկարողանա գործնական աշխատանքում կիրառել դասավանդման նոր մեթոդներ,
3. կկարողանա օգտվել մասնագիտական գրականությունից և գրել ֆրանսերենի դասավանդման մեթոդիկայի այլևայլ հարցերին վերաբերող ոչ մեծ աշխատանք՝ զեկուցում, թեզիս:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Լեզվի դասավանդման մեթոդաբանությունը որպես գիտակարգ: ***Թեմա 2՝*** Մեթոդիկայի հիմնական ըմբռնումներն ու հասկացությունները: ***Թեմա 3՝*** Կոլեկտիվ մոտեցում և անհատական մոտեցում: ***Թեմա 4՝*** Մայրենի լեզվի առանձնահատկությունների հաշվառումը ֆրանսերենի դասավանդման ժամանակ: ***Թեմա 5՝*** Ֆրանսերենի դասավանդման հաղորդակցական մեթոդը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B20.** ***«ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ»*** **-7** *(6 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(96 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *7-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի խորացնել նախորդ կիսամյակներում ստացված գիտելիքները, ուսանողին հնարավորություն տալ դրանք օգտագործելու ավարտական աշխատանքում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա թարգմանել և մեկնաբանել ֆրանսերեն լեզվաբանական բնագիր տեքստեր,
2. ամբողջական պատկերացում կունենա ֆրանսերեն լեզվի և ֆրանսիական քաղաքակրթության մասին,
3. կկարողանա ինքնուրույն կերպով հաղորդակցվել և առանց բառարանի օգնության շարադրել տարբեր թեմաներով տեքստեր:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ֆրանսերենի հնչյունական համակարգի հիմնական առանձնահատկությունները: ***Թեմա 2՝*** Ֆրանսերենի քերականական համակարգի ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 3՝*** Հոդ և հոդառություն: Առկայացման առանձնահատկությունները: ***Թեմա 4՝*** Գոյականների դասակարգման սկզբունքները ու չափա-

նիշները: ***Թեմա 5***՝ Ածականի տեսակները: Ածական–դերանուն փոխհարաբերության խնդիրը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B39.** ***«ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/2-րդ մասնագիտական օտար լեզու /անգլերեն/»*** *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *7-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է անգլերենն իբրև 2-րդ մասնագիտական օտար լեզու ուսումնասիրող ուսանողներին ներկայացնել ՄԹ/ԱՄՆ երկու հիմնական լեզվակիր երկրների պատմա–աշխարհագրական և էթնոլեզվամշակութային նկարագիրը՝ կարևորելով մեթալեզվի (առարկայի նկարագրության) դերն իբրև անգլերենի յուրացմանը նպաստող և խթանող հիմնական պայման:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կբերի լեզվական հաղորդակցման հմտություն և հաղորդակցումը դյուրացնող իրազեկություն լեզու–մշակույթ անքակտելի բանաձևի համատեքստում,
2. կհասկանա և կկարողանա ընկալել անգլալեզու հեղինակների ստեղծագործություններում արտացոլված իրողությունները, արժեքների համակարգը նյութական և հոգևոր մշակույթի ոլորտում,
3. կտիրապետի և կհաղթահարի ինչպես հատուկ նպատակներով օգտագործվող, այնպես էլ տարբեր ոլորտներում անգլերենի կենցաղավարման բառապաշարի և դարձվածաբանության մակարդակը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ Ընդհանուր տեղեկություններ ՄԹ/ԱՄՆ պետական, վարչատարածքային, ազգային, լեզվական, կրոնական խճանկարի մասին: ***Թեմա 2***՝ Կրթական համակարգ և մշակույթ, ավանդույթ/ժամանակակից մտակեցվածք, ազգային և ժողովրդական տոները մշակութաբանական վերլուծության համատեքստում: ***Թեմա 3***՝ Արդի լեզվական քաղաքականության գործընթացներում անգլերենի դերը այլ օտար լեզուների հետ համեմատության համակարգում:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B102.** ***«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» -7*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(16 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *8-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ցույց տալ 20-րդ դարի ֆրանսիական գրականության զարգացման ուղիները, գաղափարաոճական բազմազանությունը, առանձին հեղինակների փիլիսոփայական-գեղագիտական կոնցեպցիաները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 20-րդ դարի ֆրանսիական գրականության զարգացման առանձնահատկությունները, ինքնատիպությունը, ստեղծագործական սկզբունքները,
2. կիասկանա ֆրանսիական էկզիստենցիալիզմի փիլիսոփայական-գեղագիտական հիմքերը
3. կկարողանա վերլուծել հեղինակների գեղարվեստական երկերը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Մարսել Պրուստի «Կորած ժամանակների որոնումները» վիպաշարը. Մարսել Պրուստը և իմպրեսիոնիզմը: ***Թեմա 2՝*** Անդրե Ժիդի ստեղծագործական կյանքը. «Դրամանենգները» վեպը: ***Թեմա 3՝*** Գիյոմ Ապոլիների պոեզիան: Գիյոմ Ապոլիները և սյուրռեալիզմը: ***Թեմա 4՝*** Տրիստան Ցարան և դադաիզմի առաջացումը: ***Թեմա 5՝*** Ա. Բրետոնի սյուրռեալիստական մանիֆեստները. սյուրռեալիզմի պոեզիան (Լուի Արագոն, Պոլ Էլյուար, Ժակ Պրևեր, Ռոբեր Դեսնոս): ***Թեմա 6՝*** Էկզիստենցիալիստական գրականությունը: Ալբեր Կամյուի և Ժան-Պոլ Սարտրի ստեղծագործությունները (վեպերը, էսսեները, դրամաները): ***Թեմա 7՝*** Սեն-Ժոն Պերսի պոեմները («Անաբասիս», «Ծովեզերքներ», «Անձրևներ»): Աբսուրդի թատրոնը. Արթյուր Ադամովի, Էժեն Իոնեսկոյի և Սամուել Բեքեթի պիեսները: ***Թեմա 8՝*** «Նոր վեպը» և նրա տեսությունը (Միշել Բյուտոր, Նատալի Սարրոտ, Ալեն-Ռոբ Գրիե): Ֆրանսիական վեպի հետագա ճակատագիրը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B27. *«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ»* -6/ անգլերեն**
*(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 6 ժամ *(24 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *8-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Բնագիր տեքստերի միջոցով հարստացնել ուսանողների բառապաշարը բանավոր քննարկումներով, վերարտադրությամբ, ոճական առանձնահատկությունների լուսաբանմամբ: Զարգացնել գրավոր և բանավոր խոսքը՝ շեշտադրելով ոճական հանգուցային երևույթները: Մասնագիտական բառապաշարի հարըստացում՝ բանասիրական տեքստերի վերլուծության միջոցով:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կբերի գրական ճաշակ,
2. կտիրապետի հաղորդակցման հմտություններին,
3. կիմանա ուսումնասիրվող լեզուն կրող մշակույթի առանձնահատկությունները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Շրջակա միջավայր, մթնոլորտի և միջավայրի աղտոտում, բնության պահպանություն: ***Թեմա 2՝*** Գիտություն, հայտնագործություններ, առեղծվածներ, գիտական առաջընթաց: ***Թեմա 3՝*** Սպորտ, մարզաձևեր, մարզական նվաճումներ: ***Թեմա 4՝*** Արվեստ, նշանավոր արվեստագետներ, արվեստի պատմություն, ժամանակակից արվեստ: ***Թեմա 5՝*** Կրթությունը, մասնավոր և պետական դպրոցները և բուհական համակարգը Հայաստանում, ԱՄՆ–ում և Մեծ Բրիտանիայում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B21. *«ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ»* -8** *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 8 ժամ *(32 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *8-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի հանրագումարի բերել նախորդ կիսամյակներում ստացած գիտելիքները՝ դրանք թարմացնելով նոր տվյալներով ու տեղեկություններով:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. լիովին կտիրապետի ֆրանսերենի բանավոր և գրավոր խոսքին,
2. կունենա մասնագիտական խորքային գիտելիքներ,
3. կկարողանա ուսումնասիրել բնագիր մասնագիտական տեքստեր և գրել ավարտական աշխատանք:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Դերանունների հիմնական տեսակները: Շեշտված և անշեշտ դերանուններ: ***Թեմա 2՝*** Թվականներ: Թվականների քանորդական դրությունը և քերականական կարգերը: ***Թեմա 3՝*** Բայ: Ֆրանսերեն բայի դիմա–թվա–ժամանակային առանձնահատկությունները: ***Թեմա 4՝*** Մակբայների տեսակները: Տեղի մակբայների գործածության առանձնահատկությունները: ***Թեմա 5՝*** Նախադասություն: Կրավորական կառույցների առանձնահատկությունները:

*Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B32. *«ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(24 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *8-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների ստացած տեսական գիտելիքները ուղղորդել դեպի թարգմանություն, նրանց մեջ ձևավորել թարգմանական հմտություններ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա թարգմանագիտության հիմնական ընբռնումներն ու հասկացությունները.
2. կկարողանա կատարել բանավոր և գրավոր թարգմանություն.
3. կկարողանա գրել թարգմանագիտության հետ կապված ոչ մեծ աշխատանք, զեկուցում, թեզիս:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Թարգմանությունը որպես միջմշակութային հաղորդակցության կարևոր միջոց: ***Թեմա 2՝*** Ֆրանսերենից հայերեն թարգմանության առանձնահատկությունները: ***Թեմա 3՝*** Հայերենից ֆրանսերեն թարգմանության առանձնա-

հատկությունները: ***Թեմա 4՝*** Հասարակական-քաղաքական տեքստերի թարգմանության առանձնահատկությունները: ***Թեմա 5՝*** Համաժամանակյա թարգմանություն:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

## 4.5 «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտություն

**0304/B10.** *«ԼԱՏԻՆԵՐԵՆ» (2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *( 32 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *1-ին, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել համաշխարհային պատմության և ներկայիս մշակույթի համար կարևոր նշանակություն ունեցող դասական լատիներենը, ցույց տալ նրա գործնական ու տեսական արժեքը նրանց հիմնական մասնագիտության յուրացման հարցում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա միջազգային հաղորդակցման համար անհրաժեշտ դեր ունեցող լատինական այբուբենը, բոլոր գիտակարգերում կիրառվող տերմինները, քերականական տերմինների ակունքները.
2. կհասկանա մշակութային կյանքի շատ նրբություններ շնորհիվ լատինական բառերի ներքին բովանդակության բացահայտման.
3. կկարողանա խուսափել ժամանակակից լեզուներում, զովազդներում և այլուր շատ հասկացությունների գործածությունից:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Լատիներեն բառը բառարանում ներկայացվելու առանձնահատկությունները: ***Թեմա 2՝*** Հոլովման համակարգը: ***Թեմա 3՝*** Խոնարհման համակարգը: ***Թեմա 4՝*** Ածականների համեմատության աստիճանները և հոլովումը: ***Թեմա 5՝*** Շարահյուսական առանձնահատկությունները:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B43.** *«ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ»* -1 *(14 կրեդիտ)*
Շաբաթական՝ 14 ժամ *(224 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *1-ին, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողի արտասանական հմտությունները, նպաստել հնչյունների ճիշտ արտաբերմանը՝ տալով նրանց ոչ միայն գործնական, այլև համառոտ տեսական գիտելիքներ հնչյունաբանությունից: Զուգահեռ կատարվում է նաև գործնական քերականական ամրապնդում ժամանակային ձևերի միջոցով, ինչպես նաև միջնակարգ դպրոցում յուրացված ընդհանուր գործածության բառապաշարի ընդլայնում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի անգլերենի արտասանության օրենքներին,
2. ձեռք կբերի համառոտ և հիմնական գիտելիքներ,
3. կկարողանա գործնականում ճիշտ արտաբերել անգլերենի հնչյունները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Անգլերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունները: Հնչյունների դասակարգումը: ***Թեմա 2՝*** Բաղաձայններ (դասակարգումն ըստ արտաբերման տեղի և ձևի): ***Թեմա 3՝*** Ձայնավորներ (դասակարգումն ըստ լեզվի բարձրության և դիրքի): ***Թեմա 4՝*** Բնագիր ստեղծագործությունների արտալսարանային ընթերցում և վերլուծում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0302/B61.** *«ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *1-ին, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կիմանա հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ,
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկրերի պատմական-հասարակական դերը,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հայ մշակույթը մինչև 5-րդ դար: Մեսրոպ Մաշտոցը և գրերի ստեղծումը. գրականության զարգացման հիմնական ուղղությունները: ***Թեմա 2՝*** Պատմագրություն: ***Թեմա 3՝*** Հայ միջնադարյան գրականությունը: ***Թեմա 4՝*** Հայ նոր գրականությունը: ***Թեմա 5՝*** Հայ նորագույն գրականությունը: ***Թեմա 6՝*** Արդի հայ գրականությունը և նրա զարգացման միտումները:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B40.** *«ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *1-ին, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ պատշաճ գիտելիքներ ձևավորել գրականագիտական հիմնական հասկացությունների, տերմինների, գրական երկի կառուցվածքային առանձնահատկությունների, նրա տարրերի վերաբերյալ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
4. յուրացրած կլինի արդի գրականագիտության կարևորագույն հասկացությունները.
5. որոշակի պատկերացում կունենա գրական գործընթացի, դրա բաղադրատարրերի մասին.
6. կկարողանա կատարել ցանկացած գրական տեքստի գրականագիտական վերլուծություն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Գրականագիտության հիմնական բաժինները, նրանց կապը: Արվեստի տեսակները, նրանց դասակարգումը: Գրականության տեղը արվեստի տեսակների շարքում: ***Թեմա 2՝*** Գրական պատկերման գլխավոր առարկան:

Գրական-գեղարվեստական պատկերի տեսակները: ***Թեմա 3՝*** Գրական երկի թեման և թեմատիկան: Գրական երկի կոմպոզիցիան նրա ձևերն ու միջոցները: Գրական երկի սյուժեն, նրա տարրերը: ***Թեմա 4՝*** Գեղարվեստական լեզվի առանձնահատկությունները: Լեզվի պատկերավորման շարահյուսական և բառային միջոցները: ***Թեմա 5՝*** Տաղաչափական համակարգեր: Բանաստեղծության կայուն ձևեր: ***Թեմա 6՝*** Գրական սեռեր և ժանրեր: Էպիկական, քնարական և դրամատիկական սեռերի առանաձնահատկությունները:Կերպարի կառուցման եղանակները տարբեր սեռերում: Գրական ժանրերի տարբերակման հիմնական սկզբունքները: ***Թեմա 7՝*** Գրական ուղղություններ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B93.** ***«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»*** -1 *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *2-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել անտիկ գրականության ժառանգությունը՝ հիմնվելով աղբյուրների և տեսական նյութի վրա:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անտիկ գրականության առանցքային գրական նյութը,
2. կծանոթանա դրա ներքին զարգացումներին և հասկացություններին,
3. կիմանա անտիկ գրականության ավանդական տեսական մոտեցումները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Անտիկ գրականության հասկացությունը, պարբերացումը, «հունական հրաշքի» քննադատությունը: ***Թեմա 2՝*** Հոմերոսի «Իլիականը» և «Ոդիսականը». աստվածներ և մարդիկ, դիցաբանականը և բանաստեղծականը: Հեսիոդոսի «Աշխատանք և օրեր» բարոյախրատական պոեմը: ***Թեմա 3՝*** Հունական քնարերգության ծագումն ու զարգացումը, թեմատիկան, բանաստեղծները: ***Թեմա 4՝*** Հունական թատրոն և դրամա, կատակերգություն և ողբերգություն. (Էսքիլես, Սոփոկլես, Եվրիպիդես, Արիստոփանես): ***Թեմա 5՝*** Հելլենիստական գրականության հասկացությունը, հռոմեական գրականության ծագումը, շրջանները: ***Թեմա 6՝*** Հռոմեական կատակերգակներ, հռոմեական «ոսկեդար», Վերգիլիուսի «Էնեականը» և դրա կապը հունական էպոսի հետ: Անտիկ աշխարհի կործանման պատճառները և քրիստոնեական գրականության սկզբնավորումը:

*Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 3, 3, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B44.** *«ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ»* **-2** *(14 կրեդիտ)*

Շաբաթական՝ 14 ժամ *(224 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *2-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է խորացնել ուսանողի լեզվական և քերականական գիտելիքները, հարստացնել բառապաշարը և կատարելագործել նրանց հաղորդակցվելու հմտությունները, զարգացնել գրավոր խոսքը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքին.
2. կկարողանա թարգմանել անգլերեն բնագիր տեքստեր, հաղորդակցվել գրավոր և բանավոր խոսքով.
3. ձեռք կբերի գրավոր խոսքը զարգացնելու հմտություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ձևաբանություն (խոսքի մասեր՝ գոյական, ածական, մակբայ, նախդիրներ, թվական, շաղկապ): ***Թեմա 2՝*** Տնային ընթերցանություն (գեղարվեստական ստեղծագործությունների արտալսարանային ընթերցում և վերլուծում): ***Թեմա 3՝*** Գրավոր պրակտիկա (ուղղագրական կանոններ, թելադրություն, փոխադրություն): ***Թեմա 4՝*** Բառապաշար (բազմիմաստություն, նույնանուն և հականիշ միավորներ):

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0302/B62.** *«ՀԱՅ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»* *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *2-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել նորագույն շրջանի հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա նորագույն շրջանի հայ գրականության գլխավոր երկերը, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ,
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** 20-րդ դարասկզբի պատմական իրադարձությունների արտացոլումը հայ գրականության մեջ: Գրական-գեղարվեստական ուղղություններ, հոսանքներ: ***Թեմա 2՝*** Հայ գրականությունը 20-30-ական թթ.: Հասարակական-քաղաքական իրադարձությունները, դրանց արտացոլումը գրականության մեջ: ***Թեմա 3՝*** Ե. Չարենց: ***Թեմա 4՝*** Դ. Դեմիրճյան, Ս. Զորյան: ***Թեմա 5՝*** Ա. Բակունց: ***Թեմա 6՝*** Շահան Շահնուր, Կոստան Զարյան: ***Թեմա 7՝*** Հետպատերազմյան շրջանի հայ գրականությունը: ***Թեմա 8՝*** Պ. Սևակ, Հ. Մաթևոսյան:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B94.** ***«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»*** **-2** *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *3-րդ, եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ընդհանուր գիտելիքներ հաղորդել համաշխարհային գրականության պատմության, գրական կարևոր դարաշրջանների և ուղղությունների, գրական խոշորագույն երևույթների և գրական զարգացման ընդհանուր ընթացքի վերաբերյալ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա համաշխարհային գրականության պարբերացման, գրական կարևոր ուղղությունների և ոճերի, գրականության ընթացքի և ներքին զարգացումների օրինաչափությունների մասին.
2. ծանոթ կլինի ծրագրով տրված գրական խոշոր երևույթներին, համաշխարհային գրականության կարևորագույն երկերի բովանդակությանն ու գեղարվեստական արժանիքներին.
3. կկարողանա կողմնորոշվել համաշխարհային գրականության վիթխարի ժառանգության ընդհանուր համապատկերի մեջ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Վերածնության առաջացումը, նրա առանձնահատկությունները: Վերածննդի գրականությունը Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում: Դանտե Ալիգիերիի «Աստվածային կատակերգություն» պոեմը, Պետրարկայի պոեզիան, Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուել» և Սեր-վանտեսի «Դոն Կիխոտ» վեպերը: ***Թեմա 2՝*** Կլասիցիզմի գեղագիտությունը և գրականությունը: Կոռնել, Ռասին, Մոլիեր: ***Թեմա 3՝*** Լուսավորչական գրակա-նության առաջացումը 18-րդ դարում: ***Թեմա 4՝*** 18-րդ դարի ֆրանսիական փիլիսոփայական վեպը: Վոլտերի «Կանդիդը»: ***Թեմա 5՝*** Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպը, Շիլլերի «Դոն Կարլոս» դրաման: ***Թեմա 6՝*** Ռոմանտիզմը և նրա գեղարվեստական առանձնահատկությունները: Ռոման-տիզմը Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում և ԱՄՆ-ում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B51. *«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ»* -1/ ֆրանսերեն**

*(8 կրեդիտ)*

Շաբաթական՝ 8 ժամ *(128 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *3-րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր և գրավոր խոսքի ունակություններ, ուղղախոսական–ուղղագրական հմտություններ, տեքստի հետ ինքնուրույն աշխատելու և ազատ հաղորդակցվելու կարողություններ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճիշտ արտաբերել ֆրանսերենի հնչյունները, ընդհանուր պատկերացում կունենա ֆրանսերենի ուղղախոսական նորմերի մասին.
2. կկարողանա ազատորեն հաղորդակցվել ֆրանսերենով, ընթերցել ադապտացված տեքստեր.
3. կկարողանա ինքնուրույն կերպով կատարել տեքստի ձևաբանական վերլուծություն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ֆրանսերենի հնչյունական համակարգը: ՈՒղղախոսական–ուղղագրական առանձնահատկությունները: ***Թեմա 2՝*** Ֆրանսերենի քերականության ընդհանուր բնութագիրը և հիմնական առանձնահատկությունները: ***Թեմա 3՝*** Հոդ և հոդառություն: Հոդի տեսակները և դրանց գործածության առանձնահատկությունները: ***Թեմա 4՝*** Գոյականի քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: Սեռ, թիվ, հոդ: ***Թեմա 5՝*** Ածականի տեսակները: Համեմատության աստիճանների կազմության առանձնահատկությունները: ***Թեմա 6՝*** Բայական համակարգի ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 7՝*** Հաստատական և ժխտական նախադասություններ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B45.** ***«ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ»*** **-3** *(9 կրեդիտ)*
Շաբաթական՝ 8 ժամ *(128 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *3-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ընդլայնել ուսանողի ընդհանուր գործածական բառապաշարը, ծանոթացնել անգլիական և ամերիկյան գրականության լավագույն նմուշներին, կազմակերպել քննարկումներ, զարգացնել գրավոր խոսքը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի քերականության ձևաբանություն բաժնի մի մասը,
2. կիմանա ուսումնասիրվող լեզուն կրող ժողովրդի մշակութային առանձնահատկությունները,
3. կընդլայնի ընդհանուր և թեմատիկ բառապաշարը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ձևաբանություն (բայի անդեմ ձևերը. մոդալ բայեր): ***Թեմա 2՝*** Գրավոր պրակտիկա (թելադրություն, թեստ, պարբերություն): ***Թեմա 3՝*** Շարահյուսություն. նախադասության տիպերն ըստ կառուցվածքի և հաղորդակցման

ուղղվածության, բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություն: ***Թեմա 4՝*** Բառապաշարի ոճական տարբերակում (նշութավորված, չնշութավորված միավորներ):

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B46.** *«ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ»* - 4 *(8 կրեդիտ)*

Շաբաթական՝ 8 ժամ *(128 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցվելու ունակությունները: Ուսումնասիրվող տեքստերի բառապաշարի ակտիվ յուրացում: Քերականության շարահյուսության բաժնի հետ աշխատանքի շարունակություն:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի քերականության շարահյուսություն բաժինը,
2. կտիրապետի լեզվի հիմնական կառույցներին,
3. ձեռք կբերի անգլերենով ազատ հաղորդակցվելու հմտություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Բառապաշար (դարձվածային կապակցություններ, բառի ձևաբանական կառուցվածքը, բառակազմության հիմնական միջոցները): ***Թեմա 2՝*** Քերականություն (երկրորդական /օժանդակ/ խոսքի մասեր, հոդեր, նախդիրներ, շաղկապներ, եղանակավորող բառեր, բառ-մասնիկներ): ***Թեմա 3՝*** Շարահյուսություն (երկրորդական նախադասության տիպերը): ***Թեմա 4՝*** Գրավոր պրակտիկա (շարադրություն, պարբերություն):

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B13.** *«ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *4-րդ, եզրափակիչ գնահատմամբ*
*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել լեզվի էության, գործառության ու զարգացման հիմնական օրինաչափությունները. աշխարհի լեզուների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի ընդհանուր առանձնահատկությունները, լեզուների դասակարգման հիմնական սկզբունքները, աշխարհի լեզուներն ու նրանց բաշխումը ըստ լեզվաընտանիքների և ըստ կառուցվածքային տիպերի:

***Կրթական արդյունքները***
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
1. կիմանա լեզվական ընդհանուր կարգերը,
2. կհասկանա ցեղակից և ոչ ցեղակից լեզուների նմանություններն ու տարբերությունները,
3. կկարողանա տարբերել տարբեր լեզվաընտանիքների պատկանող լեզուները:

**Բովանդակություն.**
***Թեմա 1՝*** Լեզվի բնութագիրը. լեզվի բնորոշումը. լեզվի գոյության ձևերը: ***Թեմա 2՝*** Լեզուների հնչյունական համակարգերի նմանություններն ու տարբերությունները. գրային համակարգեր: ***Թեմա 3՝*** Լեզուների բառային համակարգերը: ***Թեմա 4՝*** Լեզուների ձևաբանական համակարգերը: ***Թեմա 5՝*** Լեզուների շարահյուսական համակարգերը: ***Թեմա 6՝*** Լեզվի ծագումը: ***Թեմա 7՝*** Աշխարհի լեզուների դասակարգումը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***
*Ընթացիկ քննություններ*
Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:Միավորների քայլը 0,5 է:
*Եզրափակիչ քննություն*
Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B95.** *«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»* **-3** *(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *4-րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ*
*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիք հաղորդել 19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմության, զարգացման յուրահատկությունների, ոճական, գրական բազմազանության և հարստության վերաբերյալ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պարբերացման, գրական կարևոր ուղղությունների և ոճերի, գրականության զարգացման ընդհանուր ընթացքի մասին.
2. կիմանա ծրագրով տրված հեղինակների կյանքն ու ստեղծագործությունը, կարևոր գրական երկերի ստեղծագործական պատմությունը,
3. կկարողանա վերլուծել ծրագրով տրված ստեղծագործությունները և ցույց տալ դրանց գեղարվեստական արժանիքները

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ռեալիստական գրականության ձևավորումը: Սիմվոլիզմ: ***Թեմա 2՝*** 20-րդ դարի սկզբի արտասահմանյան գրականության ընդհանուր բնութագիրը: Դարասկզբի գրական ուղղությունները: Սյուրռեալիզմ: ***Թեմա 3՝*** Ֆրանսիական գրականությունը 20-րդ դարի կեսերին: Էկզիստենցիալիզմ: ***Թեմա 4՝*** Գերմանական գրականության ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 5՝*** 20-րդ դարի իսպանական պոեզիան և լատինամերիկյան արձակը: ***Թեմա 6՝*** 20-րդ դարի իտալական գրականության զարգացման ուղիները:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B66.** ***«ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/հիմնական օտար լեզու-անգլերեն/»***

*(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *4-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի ընդհանրացնելու, համակարգելու և ճշգրտելու ուսանողների ձեռք բերած գիտելիքները և հաղորդելու նոր երկրագիտական տեղեկություններ: Երկրագիտության դասընթացը անգլերեն լեզվի՝ որպես մասնագիտության դասավանդման ընդհանուր ծրագրի կարևոր բաժիններից է, որը նպատակ ունի ուսանողին ներկայացնել հասկացական և մշակութաբանական բնույթի տեղեկություններ Միացյալ Թագավորության և Ամերիկայի Միացյալ Նահանգների մասին:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կբերի երկու հիմնական լեզվակիր երկրների նյութական և հոգևոր մշակույթի պետաիրավական, կրոնածիսական բազմազանության վերաբերյալ գիտելիք,
2. կկարողանա ոչ միայն ընդհանրացնել և համակարգել ձեռք բերած երկրա-գիտական գիտելիքները, այլև համադրել և մեկնաբանել դրանք անգլերեն լեզվի մշակույթի համատեքստում,
3. կիմանա եվրոպական գլոբալիզացիայի գործընթացներում անգլերենի դերը և նշանակությունը, հատկապես լեզվական գործունեության տարբեր ոլորտներում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Դասընթացի երկու հիմնական մասերի (ՄԹ/ԱՄՆ) հետ առնչվող առարկաների լուսաբանման ներածություն. Երկրագիտությունը և հարակից գիտությունները: ***Թեմա 2՝*** ՄԹ/ԱՄՆ պատմության, աշխարհագրության, պետական կարգի և խորհրդանիշների, վարչատարածքային բաժանումների, ներգաղթի և ժողովրդագրական նկարագրի ուրվագիծ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0303/B03.** *«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդու հոգեկան երևույթների առանցքային օրինաչափություններին և մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել նրանց ապագա մասնագիտական իրացման մեջ հոգեբանական գիտելիքի կիրառմանը:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեբանության ընդհանուր դրույթները, հոգեկան գործընթացների և վիճակների առանձնահատկությունները և ձևավորման հիմնական օրինաչափությունները,

2. կկարողանա կիրառել հոգեբանական իմացությունը մասնագիտական և մանկավարժական գործունեության մեջ, ինչպես նաև հասարակական կյանքում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հոգեբանության առարկան, խնդիրները, ոլորտները: Հասկացություն հոգեկանի մասին: Հոգեկանի կառուցվածքը և ֆունկցիաները: ***Թեմա 2՝*** Պերցեպտիվ պրոցեսների հոգեբանություն: ***Թեմա 3՝*** Կոգնիտիվ պրոցեսների հոգեբանություն: ***Թեմա 4՝*** Անձ, անհատ, անհատականություն հասկացությունները հոգեբանության մեջ: Խառնվածք, բնավորություն, ընդունակություններ: ***Թեմա 5՝*** Սոցիալական խմբեր: Առաջնորդություն: Շփում, հաղորդակցում: ***Թեմա 6՝*** Մանկավարժական և տարիքային հոգեբանության առարկան և խընդիրները: Տարիքային պարբերացում և ճգնաժամեր: Կրթության և դաստիարակության հոգեբանական առանձնահատկությունները:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B52.** ***«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ»* -2 / *ֆրանսերեն***

*(10 կրեդիտ)*

Շաբաթական՝ 10 ժամ *(160 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *4-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի խորացնել նախորդ կիսամյակում ստացած գիտելիքները, հարստացնել ուսանողի բառապաշարը և զարգացնել նրա ուղղախոսական ունակությունները:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական պատկերացում կունենա ֆրանսերենի հնչյունաբանության, ուղղախոսական–ուղղագրական նորմերի, հիմնական քերականական կառուցվածքի մասին,
2. կկարողանա ազատորեն հաղորդակցվել ֆրանսերենով, ընթերցել միջին բարդության տեքստեր,
3. կկարողանա ինքնուրույն կերպով կատարել տեքստի շարահյուսական վերլուծություն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ածականի տեսակները և քերականական կարգերը: ***Թեմա 2՝*** Դերանունների հիմնական տեսակները և դրանց քերականական կարգերի ընդ-

հանուր բնութագիրը: ***Թեմա 3՝*** Թվականներ: Թվականների քերականական կարգերը: ***Թեմա 4՝*** Բայ: Ընդհանուր բնութագիրը և բայերի դասակարգման սկզբունքները: ***Թեմա 5՝*** Մակբայների տեսակները և քերականական կարգերը:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B61.** *«ՏԵՍԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *5-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ուսանողներին ծանոթացնել անգլերենի տեսական հնչյունաբանության հիմնական ուղղություններին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի տեսական հնչյունաբանության հիմնական բաժինները, նրանց ուսումնասիրման առարկան և դրանց առնչվող տեսական խնդիրները,
2. կտիրապետի առարկայի հիմնական տեսական առանձնահատկություններին, որոշակի լսողական հմտությունների,
3. կծանոթանա տեսական հնչյունաբանության բնագավառի վերջին նորություններին և կկարողանա ինքնուրույն կատարել գիտահետազոտական աշխատանք:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հատույթային հնչյունաբանություն: Հնչույթ: Հնչյունների հիմնական և երկրորդական հատկանիշները: Ֆոնոտակտիկա: ***Թեմա 2՝*** Հնչառձաբանություն: ***Թեմա 3՝*** Վերհատույթային հնչյունաբանություն: Հիմնական առոգաբանական միջոցները: Շարահյուսական առոգաբանություն: ***Թեմա 4՝*** Վերշարահյուսական հնչյունաբանություն: Հնչյունների մետասեմիոտիկ գործառույթը: Բառագիտական հնչյունաբանություն և բանասիրական հնչյունաբանություն: ***Թեմա 5՝*** Ռիթմ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները Թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0303/B21.** *«ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *5-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժություն գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը՝ գիտական հարացույցների հիմքի վրա և ցույց տալ մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մանկավարժության ժամանակակից տեսությունները, ճյուղերը, հիմնական հասկացությունները, ուսուցման և դաստիարակության դերը մարդու անձի ձևավորման և զարգացման գործընթացում, ՀՀ կրթության համակարգի արդի բարեփոխումները, ուսուցման նոր տեսակները (աշակերտակենտրոն և ուսանողակենտրոն), ուսուցման կազմակերպման նոր ձևերն ու մեթոդները, կրթության կառավարման հիմնահարցերը.
2. կհասկանա մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդու անձի սոցիալականացման համատեքստում.
3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Մանկավարժության ընդհանուր հիմունքներ: Մանկավարժական գիտությունների համակարգը, կապն այլ գիտությունների հետ, ուսումնասիրության օբյեկտը, առարկան, հետազոտության մեթոդները: ***Թեմա 2՝*** Մանկավարժական մտքի պատմական զարգացումը, կրթական գործը սփյուռքում: ***Թեմա 3՝*** Դաստիարակության հիմունքներ. անձի ձևավորումը, գործոնները, զարգացումն ու դաստիարակությունը: Դաստիարակության սկզբունքները, մեթոդները, բաղադրիչները: ***Թեմա 4՝*** Դիդակտիկայի հիմունքներ: Կրթության բովանդակությունը, ուսուցման գործընթացի էությունը, սկզբունքները, մեթոդները, կազմակերպման ձևերը: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն ու գնահատումը: ***Թեմա 5՝*** Կրթության կառավարում: ՀՀ կրթության համակարգը, կառավարումը և բարեփոխումները:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Թեստային աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B97.** ***«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»*** **- 4** *(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *5-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել անգլիական Վերածննդի յուրահատկությունները, նախաշեքսպիրյան անգլիական դրամատուրգիան, Վ. Շեքսպիրի ստեղծագործությունները և նրանց ազդեցությունը անգլիական և համաշխարհային գրականության վրա:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անգլիական Վերածննդի ձևավորումը և զարգացումը,
2. կհասկանա նախաշեքսպիրյան դրամատուրգիայի առանձնահատկությունները,
3. կկարողանա վերլուծել Վ.Շեքսպիրի և Ջ.Միլտոնի ստեղծագործություն-ները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Միջնադարյան անգլիական էպիկական պոեմները: ***Թեմա 2՝*** Անգլիական թատրոնը 16-րդ դարում: Թեմա 3՝ Նախաշեքսպիրյան անգլիական դրամատուրգիան, ***Թեմա 3՝*** Վ. Շեքսպիրի վաղ շրջանի ստեղծագործությունները (սոնետներ, քրոնիկներ, կատակերգություններ): ***Թեմա 4՝*** Վ. Շեքսպիրի ողբերգությունները («Համլետ», «Օթելլո», «Լիր Արքա», «Մակբեթ» և այլն/: ***Թեմա 5՝*** Շեքսպիրը և անտիկ դրամայի ավանդույթները: ***Թեմա 6՝*** Շեքսպիրի պիեսների փիլիսոփայական-հումանիստական բովանդակությունը: ***Թեմա 7՝*** Կլասիցիզմը անգլիական գրականության մեջ. Ջոն Միլթոնի «Կորուսյալ դրախտի» թեմատիկ և գեղարվեստական առանձնահատկությունները:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B53.** ***«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ»*** **-3 /** ***ֆրանսերեն***
*(8 կրեդիտ)*
Շաբաթական՝ 8 ժամ *(128 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *5-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները, ուսանողի մոտ ձևավորել ազատ հաղորդակցվելու և գրականությունից օգտվելու կարողություններ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական պատկերացում կունենա ֆրանսերենի ձևաբանության և շարահյուսության մասին,
2. կկարողանա կատարել տեքստի շարահյուսական վերլուծություն,
3. կկարողանա բառարանի օգնությամբ ընթերցել գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ֆրանսերենի բառակազմությունը: Առավել գործածական նախածանցներն ու վերջածանցները: ***Թեմա 2՝*** Ֆրանսերենի նախդիրների ընդհանուր բնութագիրը: Առավել գործածական նախդիրները: ***Թեմա 3՝*** Շաղկապների կարգերն ու տեսակները: ***Թեմա 4՝*** Հաստատական և ժխտական մասնիկները և դրանց գործածության առանձնահատկությունները: ***Թեմա 5՝*** Շարահյուսություն: Նախադասության դասակարգման սկզբունքներն ու չափանիշները:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B62.** *«ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *5-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել անգլերենի լեզվական համակարգի ակունքներին, լուսաբանել անգլերենի համակարգին բնորոշ հնչյունական, բառակազմական, քերականական օրինաչափությունների պատմական զարգացումը:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հին, միջին, ժամանակակից անգլերենի հնչյունական, քերականական համակարգին բնորոշ գծերը,
2. ձեռք կբերի անգլերենի զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ տեսական գիտելիքներ,
3. կկարողանա կատարել թարգմանություն՝ հին և միջին անգլերենից ժամանակակից անգլերեն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Անգլերենի զարգացման երեք փուլերը. Դրանց լեզվական առանձնահատկությունների և պատմական ժամանակաշրջանի բնութագիրը: ***Թեմա 2՝*** Հին, միջին, ժամանակակից անգլերենի հնչյունական համակարգի ա-

ռանձնահատկությունները: ***Թեմա 3*՝** Հին, միջին, ժամանակակից անգլերենի քերականական համակարգի բնորոշ գծերը: ***Թեմա 4*՝** Միջլեզվական հարաբերությունների ուսումնասիրությունը լեզվի պատմության շրջանակներում: ***Թեմա 5*՝** Թարգմանություններ հին և միջին անգլերենից ժամանակակից անգլերեն:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1, 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B47.** *«ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ»* **-5** *(10 կրեդիտ)*

Շաբաթական՝ 10 ժամ *(160 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *5-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գործնական հաղորդակցման հմտություններ տարբեր բնագավառներում, օտար երկրում կողմնորոշում, նորությունների հաղորդում, հայտնի մարդկանց մասին տեղեկությունների փոխանակում, ինչպես նաև գրավոր խոսքի զարգացում և ուղղագրական կանոնների ամրապնդում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի որոշակի թեմատիկ բառապաշարի և քերականական կառույցների, որոնք անհրաժեշտ են այս կամ այն արտալեզվական իրավիճակում,
2. կձերբազատվի որոշակի բարդություններից, որոնք հատուկ են օտար լեզու սովորողներին հաղորդակցման ոլորտում,
3. կկարողանա վերլուծաբար վերաբերվել բոլոր լեզվական և արտալեզվական իրավիճակներին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1*՝** Ճանապարհորդական իրավիճակներում հանդիպող որոշակի բառապաշար, հոդերի և նախդիրների օգտագործումը այդ բառապաշարի շրջանակներում: ***Թեմա 2*՝** Դարձվածաբանական միավորներ, հոմանիշների ու հականիշների յուրահատկությունները: ***Թեմա 3*՝** Նախածանցների ու վերջածանցների կառուցվածքային յուրահատկությունները թեմատիկ բառապաշարում: ***Թեմա 4*՝** Ակնարկի ոճի հմտությունների զարգացում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B82.** *«ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *6-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ պատկերացում ձևավորել ռուս գրականության պատմական զարգացման, հիմնական գրական ուղղությունների, ինչպես նաև առանձին ռուս դասական գրողների ստեղծագործության մասին:

***Կրթական արդյունքները***.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա պատկերացում ռուս գրականության զարգացման հիմնական փուլերի մասին.
2. կիմանա 18–20-րդ դարերի ռուս գրականության հիմնական ուղղությունների մասին.
3. ծանոթ կլինի ռուս դասականների կարևորագույն ստեղծագործություններին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ռուս գրականության դերը համաշխարհային մշակույթում: Հին ռուս գրականության հիմնական ժանրերն ու նշանավոր հուշարձանները: ***Թեմա 2՝*** 18-րդ դարի գրականության հիմնական ուղղությունները: Ռուսական կլասիցիզմ: Ռուսական սենտիմենտալիզմ: Դ. Ֆոնվիզինի, Ն. Կարամզինի ստեղծագործությունը: ***Թեմա 3՝*** Ռուսական ռոմանտիզմ: Ա. Պուշկինը և պուշկինյան դարաշրջանի ռուս գրականությունը: Մ. Լերմոնտովի և Ն. Գոգոլի ստեղծագործությունը: ***Թեմա 4՝*** Ռեալիզմի հետագա զարգացումը ռուս գրականության մեջ: Ի. Գոնչարովի, Ա. Օստրովսկու, Ի. Տուրգենևի ստեղծագործությունը: ***Թեմա 5՝*** Ֆ. Դոստոևսկու, Լ. Տոլստոյի և Ա. Չեխովի ստեղծագործությունը: ***Թեմա 6՝*** Մոդեռնիստական ուղղությունները ռուս գրականության մեջ /սիմվոլիզմ, ակմեիզմ, ֆուտուրիզմ/: ***Թեմա 7՝*** 20-րդ դարի ռուսական ռեալիզմը: Մ. Գորկու, Ի. Բունինի, Մ. Շոլոխովի, Մ. Բուլգակովի ստեղծագործությունը: ***Թեմա 8՝*** 20-րդ դարի 2-րդ կեսի պատմության ուրվագիծ:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

*1-ին ստուգում.* Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B63.** ***«ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»*** *(2 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *6-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է դիտարկել բառերի իմաստային կառուցվածքը և կապակցելիությունը, նրանց ձևիմաստային փոխհարաբերությունները, բառակազմական միջոցները և կաղապարները հայերենում և անգլերենում, ինչպես նաև դարձվածքների տեսակները և նրանց թարգմանությանն առնչվող խնդիրների լուծման եղանակները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի անգլերենի և հայերենի բառապաշարային առանձնահատկությունները,
2. կտիրապետի անգլերեն և հայերեն բառերի ձևիմաստային, բառակազմական և այլ տեսակների վերլուծության հմտություններին,
3. կկարողանա գտնել լուծումներ տվյալ լեզուների դարձվածային համակարգի և դարձվածքների թարգմանության հետ կապված խնդիրները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Լեզուների զուգադրական/հանդիպադրական/ ուսումնասիրություն. նրա առնչությունները տիպաբանական ուսումնասիրության հետ: Լեզուների զուգադրական քննության արժեքը, համեմատվող լեզուների տարբերությունների հաղթահարումը թարգմանության ընթացքում: ***Թեմա 2՝*** Բառակազմություն: Բառակազմական կաղապարներ /Բարդ և ածանցավոր բառեր, դրանց տեսակները: Գործուն և ոչ գործուն կաղապարներ: Հայերենի և անգլերենի բառակազմական կաղապարների գործունության և իմաստային արժեքների համեմատությունը/: ***Թեմա 3՝*** Բառիմաստություն:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B99.** ***«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»*** **-5** *(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *6-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել 18-րդ դարի անգլիական գրականությունը:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա գրական ստեղծագործությունները մասնագիտորեն վերլուծելու կարողություն,
2. կըմբռնի 18-րդ դարի անգլիական վեպի ձևավորման և զարգացման օրի-նաչափությունները,
3. ծանոթ կլինի ոչ միայն 18-րդ դարի անգլիացի խոշոր գրողների ստեղծագործություններին, այլև դրանց հիմք հանդիսացող պատմական իրադարձություններին և սկզբնաղբյուրներին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Լուսավորությունը 18-րդ դարի Անգլիայում: ***Թեմա 2՝*** Դ.Դեֆոն որպես եվրոպական նոր ռեալիստական վեպի սկզբնավորող. «բնական մարդու» պրոբլեմը Դ.Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո» վեպում: ***Թեմա 3՝*** Ջ. Սվիֆթի քաղաքական և կրոնական երգիծանքը, անգլիական պետության ծաղրը Ջ.Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունները» վեպում: ***Թեմա 4՝*** Սենտիմենտալիզմի առաջացումը անգլիական գրականության մեջ: ***Թեմա 5՝*** Հ. Ֆիլդինգը նեոկլասիցիզմի ներկայացուցիչ: Թեմա 6՝ 18-րդ դարի կեսերի Անգլիայի սոցիալական իրականության արտացոլումը Թ. Բ. Սմոլետի «Ռոդերիկ Ռենդոմի արկածները» վեպում: ***Թեմա 6՝*** Ջ. Մաքֆերսոնի «Օսիանի երգերը» որպես լիրիկական էպոսի ստեղծման փորձ: ***Թեմա 7՝*** Լ. Սթերնի «Տրիսթրամ Շենդիի կյանքն ու կարծիքները» վեպի նորարարական նշանակությունը: Զգացմունքների աշխարհի պատկերումը և մարդու սուբյեկտիվ ընկալման թեման Լ.Սթերնի «Սենտիմենտալ ճանապարհորդություն» վեպում: ***Թեմա 8՝*** Բարձրաշխարհիկ հասարակության բարքերի պատկերումը Ռ.Շերիդանի «Չարախոսության դպրոցը» պիեսում: ***Թեմա 9՝*** Ռ.Բըրնսի լիրիկան: Ժողովրդական կյանքի և բնության թեմաները նրա պոեզիայում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B54.** ***«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ» - 4 / ֆրանսերեն***

*(8 կրեդիտ)*

Շաբաթական՝ 8 ժամ *(128 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *6-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները, ուսանողի մոտ ձևավորել ֆրանսերեն լեզվով ինքնուրույն աշխատանք գրելու կարողություններ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավարար չափով կտիրապետի ֆրանսերենի ուղղախոսության և ուղղագրության նորմերին, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկություններին,
2. կկարողանա օգտվել մասնագիտական գրականությունից,
3. կկարողանա ինքնուրույն կերպով գրել միջին բարդության մասնագիտական աշխատանք՝ կուրսային աշխատանք, զեկուցում, թեզիս:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Բայի անդեմ ձևերը: Դերբայների դասակարգման սկզբունքներն ու չափանիշները: ***Թեմա 2՝*** Հարակատար դերբայի գործածության առանձնահատկությունները: ***Թեմա 3՝*** Դարձված և դարձվածաբանություն: ***Թեմա 4՝*** Շեշտ և հնչերանգ: ***Թեմա 5՝*** Հարցական նախադասությունների կազմության առանձնահատկությունները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B48.** ***«ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ»*** **-6** *(9 կրեդիտ)*

Շաբաթական՝ 8 ժամ *(128 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *6-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է զարգացնել հասարակական, քաղաքական և երկրագիտական բնույթի տեքստերի հետ աշխատելու հմտություններ, հարըստացնել ուսանողների բառապաշարը վերոհիշյալ ոլորտներում, ուսանողներին սովորեցնել վերլուծել անգլիական և ամերիկյան գեղարվեստական գրականությունների լավագույն նմուշները, նրանցում տեղ գտած լեզվաոճական հնարները, գլխավոր և երկրորդական կերպարները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի դասընթացի սահմաններում նախատեսված բառապաշարը,

2. կկարողանա զրույց վարել հասարակական–քաղաքական թեմաներով,
3. կտիրապետի գեղարվեստական գրականության մեջ լեզվաոճական հնարներին, ձեռք կբերի տարբեր ոլորտներում վերլուծական հմտություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Մամուլի տեսություն (լրագրային նյութերի ընկալում և վերարտադրում): ***Թեմա 2՝*** Գրավոր պրակտիկա (կուրսային աշխատանքների լեզուն և ոճը): ***Թեմա 3՝*** Վերապատումի և կարճ շարադրանքի ոճերի շարադրանքների առանձնահատկությունները: ***Թեմա 4՝*** Ոչ կաղապարային կառուցվածքի ներմուծում և կիրառում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B64. *«ՏԵՍԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *7-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է քննել անգլերենի քերականական միավորների գործառնական առավել կարևոր հարցեր, պաշտպանել դրանց փոխադարձ կապն ու հարաբերակցությունը լեզվի համակարգում, ուսանողներին ծանոթացնել անգլերենի համակարգի ուսումնասիրման տարաբնույթ մեթոդներին, լեզվաբանական տարբեր ուղղություններին ու տեսակետներին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի անգլերենի ձևաբանության և շարահյուսության հիմնախնդիրներին,
2. ձեռք կբերի դրանք ինքնուրույն ընկալելու կարողություն,
3. կզարգացնի ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու հմտությունը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Անգլերենի տեսական քերականության հիմնական հարցեր: Քերականական համակարգի ստեղծման հիմնական պատմական փուլերը: Լեզվի համակարգային բնույթը: Համադրական և հակադրական ձևեր: ***Թեմա 2՝*** Ձևաբանության հիմնահարցեր: Խոսքի մասեր և նրանց կարգերը: Հիմնական և

երկրորդական խոսքի մասեր: ***Թեմա 3՝*** Շարահյուսության հիմնահարցեր: Բառակապակցություններ:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B65.** *«ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *7-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ոճագիտության դասընթացը բակալավրատի մակարդակում նպատակ ունի ուսանողներին ծանոթացնել անգլերենի ոճի հանգուցային հարցերին: Այնպիսի կարևորագույն խնդիրների լուսաբանումը, ինչպիսիք են՝ լեզվաոճական կարգեր, խոսքի գործառույթ և գործառական ոճ, գեղարվեստական գրականության ընկալման ընդհանուր հարցեր և այլն, անխուսափելի անհրաժեշտություն է բանասիրական կրթության շրջանակներում:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի անգլերենի ոճագիտության հիմունքներին,
2. ձեռք կբերի հետևյալ հմտությունները՝ կարդալ, վերլուծել և մեկնաբանել տեքստը,
3. կկարողանա կատարել անգլերեն տեքստի լեզվաոճական վերլուծություն:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Անգլերենի ոճագիտության հիմնահարցեր: ***Թեմա 2՝*** Ոճագիտության հիմնական կատեգորիաները՝ բանադարձում, այլաբերություն, որոնք ներառում են մի շարք ոճական հնարներ: ***Թեմա 3՝*** Անգլերենի ոճագիտության հնչյունաբանական, բառագիտական, ձևաբանական և շարահյուսական հիմնահարցեր: ***Թեմա 4՝*** Անգլերենի ֆունկցիոնալ ոճագիտության հիմնահարցեր:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշներ***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B101.** *«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»* **-6** *(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *7-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Ներկայացնել 19-րդ դարի գրական շարժումները Անգլիայում և Ամերի-կայում, ցույց տալ նրանց ընդհանությունները և տարբերությունները, գաղափարագեղարվեստական առանձնահատկությունները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա անգլիական ռոմանտիզմի սկզբնավորման և զարգացման օրինաչափությունները,
2. կիմանա 19-րդ դարի ամերիկյան գրականության զարգացման գլխավոր ուղիները,
3. ծանոթ կլինի 19-րդ դարի անգլո-ամերիկյան գրականության պատմահասարակական հիմքերի, ինչպես նաև նրա գեղագիտական խնդիրների ու սկզբունքների հետ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ուիլյամ Բլեյքը որպես ռոմանտիզմի նախակարապետ, նրա պոեզիայի առանձնահատկությունները: ***Թեմա 2՝*** Ռոմանտիզմի առաջացումը Անգլիայում. «լճային դպրոցը» (Վորդսվորթ, Քոլրիջ, Սաութի): ***Թեմա 3՝*** Ազատության խնդիրը Բայրոնի պոեզիայում («Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը», «Դոն Ժուան»): ***Թեմա 4՝*** Պ. Բ. Շելլիի ստեղծագործությունները: ***Թեմա 5՝*** Ջոն Քիթսի պոեզիան: ***Թեմա 6՝*** Վ.Սքոթի պատմավեպի առանձնահատկությունները: ***Թեմա 7՝*** Ռեալիզմի ձևավորումը Մեծ Բրիտանիայում: ***Թեմա 8՝*** Մարդու պրոբլեմը Չարլզ Դիքենսի «Օլիվեր Թվիստի արկածները» վեպում: ***Թեմա 9՝*** Ու.Թեքերեյի «Սնափառության տոնավաճառը» վեպը: ***Թեմա 10՝*** Ռոմանտիզմն Ամերիկայում. Էդ. Պոն՝ նովելագիր և բանաստեղծ: ***Թեմա 11՝*** Հ.Մելվիլի «Մոբի Դիկը» որպես այլաբանական ստեղծագործություն: ***Թեմա 12՝*** 19-րդ դարի ամերիկյան պոեզիան (ՈՒ. ՈՒիթմեն, Ռ. Էմերսոն, Է. Դիկկինսոն): ***Թեմա 13՝*** Ամերիկայի պատկերումը Մարկ Տվենի ստեղծագործություններում: ***Թեմա 14՝*** Օսկար Ուայլդի էսթետիզմը: Արվեստի և իրականության թեման «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպում:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B55.** ***«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ» -5/ ֆրանսերեն***
*(9 կրեդիտ)*
Շաբաթական՝ 8 ժամ *(128 ժամ գործնական պարապմունքներ)*
Կիսամյակը՝ *7-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները, ուսանողի մոտ ձևավորել ազատ հաղորդակցվելու, գեղարվեստական և մասնագիտական գրականությունից ազատորեն օգտվելու կարողություններ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավարար պատկերացում կունենա ֆրանսերենի բառապաշարի տարբեր շերտերի մասին,
2. կկարողանա ազատ կերպով շարադրել իր մտքերը և զրուցել հասարակական–քաղաքական և մշակութային թեմաներով,
3. կկարողանա կարդալ բնագիր տեքստեր և օգտվել մասնագիտական գրականությունից:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ֆրանսերենի բառապաշարի ընդհանուր բնութագիրը: Հիմնաշերտ և փոխառություններ: ***Թեմա 2՝*** Բառապաշարի հարստացման հիմնական միջոցները: Ներքին հնարավորություններ, փոխառություն և կաղապարում: ***Թեմա 3՝*** Հոմանիշություն և հականունություն: Հոմանիշության առանձնահատկությունները: ***Թեմա 4՝*** Համանունության դրսևորման առանձնահատկությունները: ***Թեմա 5՝*** Ֆրանսիական բառարանագրություն:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B59.** ***«ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ»***
*(3 կրեդիտ)*
Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*
Կիսամյակը՝ *7-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Ուսանողների՝ որպես անգլերենի ապագա ուսուցիչների, մոտ ստեղծել լայն տեսական մասնագիտական բազա: Ուսանողներին ծանոթացնել անգլերենի ուսուցման առավել կարևոր ժամանակակից մեթոդների և եղանակների հետ: Նրանց մոտ մշակել ուսուցման մեթոդներն ու եղանակները պրակտիկայում արդյունավետ և ստեղծագործաբար կիրառելու հմտություններ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կբերի անգլերենի դասավանդման հմտություններ,
2. կտիրապետի լեզվի նյութի բազային, մատուցման տիրապետմանը և դասավանդման եղանակներին,
3. կկարողանա ճիշտ կառուցել անգլերեն լեզվի անհրաժեշտ նյութի շարադրանք և այն կիրառելու ուսումնառության պրոցեսում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Մեթոդիկայի պատմություն: ***Թեմա 2՝*** Անգլերեն լեզվի ուսուցման մեթոդիկայի տեսական հիմունքներ: ***Թեմա 3՝*** Խոսքային գործունեության հիմնական տեսակների ուսուցում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1, 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B49.** ***«ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ» -7*** *(6 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(96 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *7-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ամրապնդել ուսանողների ստեղծագործական հմտությունները և ակտիվացնել անգլերենով ազատ հաղորդակցումը ամենաբազմազան թեմաներով:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի գեղարվեստական տեքստերի ժանրային և սյուժետային առանձնահատկությունները.
2. կկարողանա ազատ հաղորդակցվել կենցաղային, հասարակական–քաղաքական, գիտական և մասնագիտական թեմաներով.
3. ձեռք կբերի լրագրային նյութը վերարտադրելու հմտություններ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Վերլուծական ընթերցանություն (գեղարվեստական բովանդակության վերլուծություն): ***Թեմա 2՝*** Գրավոր պրակտիկա (հասարակական–քաղաքական և մշակութային տեքստերի թարգմանություն):

*Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B67.** *«ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / երկրորդ մասնագիտական* օտար *լեզու /ֆրանսերեն/»* *(3 կրեդիտ)*

Շաբաթական՝ 2 ժամ *(32 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *7-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին ամբողջական պատկերացում տալ ֆրանսիական քաղաքակրթության նվաճումների և արդի աշխարհաքաղաքական պայմաններում Ֆրանսիայի դերի և նշանակության մասին:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավարար չափով տեղեկություններ կունենա Ֆրանսիայի պատմության, մշակույթի, հասարակական–քաղաքական կյանքի մասին,
2. կկարողանա հասկանալ Ֆրանսիայի պատմական զարգացման առանձնահատկությունները և արդի հիմնախնդիրները,
3. կկարողանա օգտվել մասնագիտական գրականությունից և գրել ֆրանսիական քաղաքակրթության այլևայլ հարցերին վերաբերող ոչ մեծ աշխատանք՝ զեկուցում, թեզիս:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ֆրանսիայի բնական և ժողովրդագրական պայմանների բնութագիրը: ***Թեմա 2՝*** Երկրի (տարածաշրջանի) վարչա–տարածքային և տնտեսա–աշխարհագրական բաժանումը: ***Թեմա 3՝*** Համառոտ պատմա-մշակութային ակնարկ: ***Թեմա 4՝*** Ֆրանսիական դասական գրականությունը: ***Թեմա 5՝*** Ֆրանսիական երաժշտությունը, թատրոնը և կինոն:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B103.** *«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»* **-7** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 4 ժամ *(16 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *8-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Ներկայացնել 20-րդ դարի Անգլիայի և ԱՄՆ-ի գրականությունները, նրանց գեղագիտական-ոճական բազմազանությունը, ինքնատիպությունը, գլխավոր մոտիվներն ու գաղափարները:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա գրական երկը մասնագիտորեն վերլուծելու կարողություն,
2. կզարգացնի ժամանակակից գրականությունն ըմբռնելու և վերլուծելու ունակությունները,
3. կիասկանա 20-րդ դարի ամերիկյան գրականության զարգացման էական գծերն ու առանձնահատկությունները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Մոդեռնիզմի առաջացումը Անգլիայում (Ջ. Ջոյս, Թ. Ս. Էլիոթ, Վ.Վուլֆ): Մոդեռնիզմը որպես արվեստի ուղղություն, աշխարհայացք, մտածողության ձև և կենսակերպ: ***Թեմա 2՝*** Ջ. Ջոյսի «Ուլիսի» նորարական նշանակությունը: Գիտակցականն ու անգիտակցականը «Ուլիս»-ում: ***Թեմա 3՝*** Վ.Վուլֆը մոդեռնիզմի ներկայացուցիչ. գիտակցության հոսքը և ժամանակի ընկալումը: ***Թեմա 4՝*** Քաղաքակիրթ աշխարհը և «բնական մարդը» Դ. Հ. Լոուրենսի «Լեդի Չաթերլիի սիրեկանը» վեպում: ***Թեմա 5՝*** 20-րդ դարի փիլիսոփայական պոեզիան: Թ. Ս. Էլիոթի պոեմները: ***Թեմա 6՝*** Թեոդոր Դրայզերի ռեալիզմը: ***Թեմա 7՝*** Կորուսյալ սերնդի գրականությունը Ամերիկայում (Հեմինգուեյ, Ֆիցջերալդ): ***Թեմա 8՝*** Ամերիկյան մոդեռն վեպը: Գիտակցության հոսքը և մարդկային արժեքների խնդիրը Ուիլյամ Ֆոլքների «Շառաչ և ցասում» վեպում: ***Թեմա 9՝*** Վիլյամ Սարոյանի և Ջ. Դ. Սելինջերի Ամերիկան: Մանուկների «հախճապակյա աշխարհը» տեխնոկրատական Ամերիկայում: Սելինջերը էկզիստենցիալիստ: ***Թեմա 10՝*** Ուիլյամ Գոլդինգի էկզիստենցիալիզմը: Մարդկային էության, չարի և բարու խնդիրը նրա «Ճանճերի տիրակալը» վեպում: ***Թեմա 11՝*** Բիթնիկների պոեզիան:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B56. *«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ»* -6 / *ֆրանսերեն***
*(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(24 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *8-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակ ունի խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները՝ շեշտը դնելով մասնագիտական տեքստերի վրա:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. բավարար չափով կտիրապետի ֆրանսերենի լեզվաբանական տերմիններին,
2. կկարողանա գործածել ֆրանսերեն լեզվաբանական տերմինների հայերեն համարժեքները,
3. պատրաստ կլինի գրելու լեզվաբանական թեմայով ավարտական աշխատանք:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ֆրանսերենի լեզվաբանական տերմինաբանության ընդհանուր բնութագիրը: Միայն ֆրանսերենին բնորոշ երևույթները նշանակող տերմիններ: ***Թեմա 2՝*** Լեզվաբանական տերմինների թարգմանության առանձնահատկությունները: Ոխղղակի համարժեքներ և նկարագրական տարբերակներ: ***Թեմա 3՝*** Միայն հայերենին բնորոշ երևույթները նշանակող տերմինների ֆրանսերեն թարգմանության առանձնահատկությունները: ***Թեմա 4՝*** Լեզվաբանական տեքստի վերլուծություն և համառոտ վերաշարադրանք: ***Թեմա 5՝*** Լեզվաբանական տեքստի թարգմանության առանձնահատկությունները:

*Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները*

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B50.** *«ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ»* **- 8** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 8 ժամ *(32 ժամ գործնական պարապմունքներ)*

Կիսամյակը՝ *8-րդ, եզրափակիչ գնահատմամբ*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների մասնագիտական թեմաներով հաղորդակցվելու հմտությունները և ձեռք բերել տարբեր տիպի հետազոտական աշխատանքներ կատարելու կարողություններ:

*Կրթական արդյունքները*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա հղկված գրավոր և բանավոր խոսք,
2. կկարողանա պատշաճ մակարդակով վարել բազմաբնույթ քննարկումներ,

3. կտիրապետի գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Գիտահետազոտական աշխատանքներ: ***Թեմա 2՝*** Քննարկումներ բազմազան թեմաներով:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

*Ընթացիկ քննություններ*

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**0304/B32.** ***«ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ»*** *(2 կրեդիտ)*

Շաբաթական՝ 6 ժամ *(24 ժամ դասախոսություն)*

Կիսամյակը՝ *8-րդ, առանց եզրափակիչ գնահատման*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել գիտելիքներ թարգմանության պատմության, նրա տիպերի ու սկզբունքների մասին և ներկայացնել թարգմանության դերը ժամանակակից իրականության մեջ:

***Կրթական արդյունքները***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կբերի գեղարվեստական թարգմանության հմտություններ,
2. կյուրացնի թարգմանաբանության կառուցվածքային փոխակերպումները,
3. կիմանա թարգմանության սկզբունքները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Թարգմանաբանական տեսության համառոտ պատմական ակնարկ: ***Թեմա 2՝*** Թարգմանությունը որպես բանասիրական ուսումնասիրության առարկա: Համարժեքության խնդիրը, հավելում և կորուստ, անթարգմանելիություն: ***Թեմա 3՝*** Թարգմանչի անհատականության խնդիրը: ***Թեմա 4՝*** Բացականչությունների, գռեհկաբանությունների թարգմանության խնդիրը:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

*Ստուգման ձևերն են.*

***1-ին ստուգում.*** Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

1. ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՄՈԴՈՒԼՆԵՐ

## 1.1. «Պատմություն» մասնագիտություն

*ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ (2 կրեդիտ)*
*2 շաբաթ տևողությամբ,*
Կիսամյակը՝ *4–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Պրակտիկայի նպատակն է ուսանողների մեջ ձևավորել նախնական գիտելիքներ հնագիտական և ազգագրական բնույթի հուշարձանների, կենցաղային, պաշտամունքային, տնտեսական նյութերի վերաբերյալ:

***Կրթական արդյունքները.***

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճանաչել հնագիտական և ազգագրական հուշարձանների հիմնական տեսականին.
2. կընկալի հնագիտական և ազգագրական նյութը դաշտում ձեռք բերելու պարզագույն սկզբունքները.
3. կկարողանա կատարել տարրական կարգի վերլուծական բնույթի հնագիտական և ազգագրական աշխատանք:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ծանոթություն Երևանի հնագույն ամրոց-բնակավայրերի հետ (Շեն-գավիթ, Էրեբունի, Կարմիր-Բլուր): Դասախոսություն հին Երևանի ժողովրդական կենցաղից: ***Թեմա 2՝*** Երևանից դեպի Ողջաբերդ, Հացավան, Գառնի և Գեղարդ տանող ճանապարհին գտնվող պատմա-ճարտարապետական հուշարձանները. ծանոթություն: Հացավանի և Գառնիի ազգագրությունը: ***Թեմա 3՝*** Հին Արտաշատի, Դվինի հնագիտական հուշարձանները: Արարատի մարզում վերաբնակված պարսկահայերի ազգագրությունը: ***Թեմա 4՝*** Աշտարակի և մերձակայքի վաղ և զարգացած միջնադարի քրիստոնեական պաշտամունքային հուշարձանները: Քաղաքի ազգագրությունը համաձայն Աշտարակի տվյալների:***Թեմա 5՝*** Արուճի և Մաստարայի հնությունները: Այցելություն Սարդարապատի ճակատամարտի հուշահամալիր և Հայաստանի ազգագրության պետական թանգարան:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն նշանակվում է պրակտիկայի ընթացքում կատարած աշխատանքների մասին գրավոր հաշվետվության և բանավոր հարցման հիման վրա:

*ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ (4 կրեդիտ)*
*4 շաբաթ տևողությամբ,*
Կիսամյակը՝ *6–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Պրակտիկայի նպատակն է ուսանողներին ծանոթացնել թանգարանային և արխիվային աշխատանքի բնագավառներին բնորոշ առանձնահատկություններին և Հայաստանի տարբեր արխիվներին, թանգարաններին ու հնավայրերին:

*Կրթական արդյունքները.*

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա հարուստ գիտելիքներ արխիվային ֆոնդերի, թանգարանների գիտաֆոնդային, գիտահետազոտական, հաշվառման, ցուցադրության կազմակերպման վերաբերյալ.
2. կունենա պատկերացում արխիվային նյութերի և թանգարանային առարկաների պահպանության, վերականգնման աշխատանքների մասին.
3. տեղեկություններ կունենա Հայաստանի հնավայրերի և պեղումների ընթացքի վերաբերյալ:

**Բովանդակություն.**

***Թեմա 1՝*** Ծանոթություն արխիվային գործի և թանգարանային (մշտական և ժամանակավոր) ցուցադրության կառուցման մեթոդներին, գիտաֆոնդային աշխատանքներին, պահպանության ձևերին ու խնդիրներին, գիտահետազոտական աշխատանքներին և առանձնահատկություններին, վերականգնողական աշխատանքների ձևերին ու մեթոդներին, գիտական արխիվի կազմակերպման խնդիրներին: ***Թեմա 2՝*** Արխիվային և թանգարանային նյութերի բաժանումը խմբերի ըստ դրանց ֆունկցիաների: ***Թեմա 3՝*** Հաշվառման փուլերը. նախնական հաշվառում, նախնական գիտական մշակում, թանգարանային ֆոնդի սխեմատիկ դասակարգում և գիտական գույքագրում: Նախնական հաշվառման կարգը, ակտավորում և գրանցում հիմնական ֆոնդի գլխավոր գույքամատյանում և այլ մատյաններում, ծածկագրում: ***Թեմա 4՝*** Արխիվային և թանգարանային ֆոնդի սխեմատիկ հաշվառումը: ***Թեմա 5՝*** ՈՒսանողներին դաշտում ծանոթացնել հնագիտական պեղումների և ուսումնասիրությունների մեթոդների հետ:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն նշանակվում է պրակտիկայի ընթացքում կատարած աշխատանքների մասին գրավոր հաշվետվության և բանավոր հարցման հիման վրա:

*ԱՐՏԱԴՐԱԿԱՆ (ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ) ՊՐԱԿՏԻԿԱ (4 կրեդիտ)*

*4 շաբաթ տևողությամբ,*

Կիսամյակը՝ *7–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացը նպատակն է ուսանողներին ծանոթացնել մանկավարժական փորձի հետ: Պրակտիկան անց է կացվում Տավուշի մարզի տարբեր դպրոցներում: Պրակտիկան հնարավորություն է տալիս ուսանողներին 4 շաբաթյա ժամանակահատվածում ուսումնասիրել դասարանային աշխատանքը և զբաղվել կարճաժամկետ մանկավարժական գործունեությամբ բուհական ուսումնառության ընթացքում:

*Կրթական արդյունքները.*

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա տիրապետել մանկավարժական գործնական գիտելիքներին,
2. կունենա գիտելիքներ և փորձառություն մանկավարժական գործի վերաբերյալ,
3. կկարողանա զբաղվել մանկավարժական գործունեությամբ:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Նախապատրաստական սեմինար: ***Թեմա 2՝*** Դպրոցի ընտրություն: ***Թեմա 3՝*** Պասիվ պրակտիկա, այցելություն տվյալ դասաժամերին, դասարանի հետ ծանոթացում: ***Թեմա 4՝*** Ակտիվ պրակտիկա, օրագրերի լրացում, մանկավարժի և հոգեբանի ստուգում: ***Թեմա 5՝*** Դասաժամի ինքնուրույն կազմակերպում: ***Թեմա 6՝*** Դասալսումներ: ***Թեմա 7՝*** Պրակտիկայի ընթացքի ամփոփում:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն նշանակվում է պրակտիկայի ընթացքում կատարած աշխատանքների մասին գրավոր հաշվետվության և բանավոր հարցման հիման վրա:

*ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ (4 կրեդիտ)*
*8–րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (12 կրեդիտ)*
*8–րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

## 1.2. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն

*ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ (4 կրեդիտ)*
*4 շաբաթ տևողությամբ,*
Կիսամյակը՝ *6–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մեջ զարգացնել դասավանդելու հմտություն:

***Կրթական արդյունքները***.

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.
1. ծանոթ կլինի հանրակրթական դպրոցում “Հայոց լեզու” և “Հայ գրականություն” առարկաների դասավանդման հիմնական մեթոդներին և սկզբունքներին.
2. կիմանա հանրակրթական դպրոցում “Հայոց լեզու” և “Հայ գրականություն” առարկաների դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական պլանների ու ծրագրերի կազմության առանձնահատկությունները, դրանց գործնական կիրառությունը դասավանդման գործընթացում.
3. կունենա անհրաժեշտ գիտելիքներ հանրակրթական դպրոցում “Հայոց լեզու” և “Հայ գրականություն” առարկաների դասավանդման համար:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Հանրակրթական դպրոցում “Հայոց լեզու” և “Հայ գրականություն” առարկաների դասավանդման համար տեսական և մեթոդական անհրաժեշտ գիտելիքների գործնական ստուգում և համապատասխան փաստաթղթերի (մանկավարժական պրակտիկայի օրագիր և այլն) լրացման ստուգում:

*ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ (4 կրեդիտ)*
*8–րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (12 կրեդիտ)*
*8–րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

## 1.3. «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտություն

*ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ (4 կրեդիտ)*
*4 շաբաթ տևողությամբ,*
Կիսամյակը՝ *6–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Պրակտիկայի նպատակն է ձեռք բերել ժամանակակից պահանջներին համապատասխան գործնական, մանկավարժական հմտություններ, ուսանողների մոտ ձևավորել հոգեբանության և մանկավարժության դասավանդման հմտություններ, դասընթացի կազմակերպման ունակություն և դասախոսությունների կազմակերպում:

***Կրթական արդյունքները.***

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա դասավանդման մեթոդիկայի սկզբունքներն ու առանձնահատկությունները,
2. կհասկանա կրթության և դաստիարակության մանկավարժական, հոգեբանական գործառույթների դերը ուսուցման գործընթացում,
3. կկարողանա գործնականում կիրառել ձեռք բերած մանկավարժական հըմտությունները:

***Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Ստուգարքն նշանակվում է պրակտիկայի ընթացքում կատարած աշխատանքների մասին գրավոր հաշվետվության և բանավոր հարցման հիման վրա:

*ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ (2 կրեդիտ)*
*2 շաբաթ տևողությամբ,*
Կիսամյակը՝ *8–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Պրակտիկայի նպատակն է ուսանողներին ծանոթացնել էքսպերիմենտալ հետազոտության կատարման հմտություններին, ծանոթացնել էքսպերիմենտալ աշխատանքի իրականացման սկզբունքներին և դրանց ներկայացվող պահանջներին:

*Կրթական արդյունքները.*

*Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.*

1. ձեռք կբերի էքսպերիմենետալ հետազոտություն իրականացնելու հմտություններ,
2. կիմանա էքսպերիմենտալ աշխատանքի սկզբունքներն ու պահանջները,
3. կկարողանա ընդհանրացնել և վերլուծել հետազոտության արդյունքները:

*Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Ստուգարքն նշանակվում է պրակտիկայի ընթացքում կատարած աշխատանքների մասին գրավոր հաշվետվության և բանավոր հարցման հիման վրա:

*ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ (4 կրեդիտ)*
*8–րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (12 կրեդիտ)*
*8–րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

## 1.4. «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտություն

*ԱՐՏԱԴՐԱԿԱՆ (ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ) ՊՐԱԿՏԻԿԱ (4 կրեդիտ)*
*4 շաբաթ տևողությամբ,*
Կիսամյակը՝ *8–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Ձեռք բերել գործնական, մանկավարժական հմտություններ ժամանակակից պահանջներին համապատասխան՝ ֆրանսերենը դասավանդելու համար:

*Կրթական արդյունքները.*

*Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.*

1. կկարողանա իրականացնել մանկավարժի գործունեություն,
2. կկարողանա դասավանդել ֆրանսերեն լեզու:

*Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.*

Հանրակրթական դպրոցում “Ֆրանսերեն” առարկայի դասավանդման համար տեսական և մեթոդական անհրաժեշտ գիտելիքների գործնական ստուգում և համապատասխան փաստաթղթերի (մանկավարժական պրակտիկայի օրագիր և այլն) լրացման ստուգում:

*ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ (4 կրեդիտ)*
*8–րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (12 կրեդիտ)*
*8–րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

## *1.5.* «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտություն

*ԱՐՏԱԴՐԱԿԱՆ (ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ) ՊՐԱԿՏԻԿԱ (4 կրեդիտ)*
*4 շաբաթ տևողությամբ,*
Կիսամյակը՝ *8–րդ, ստուգարք*

*Նպատակը.*

Ձեռք բերել գործնական, մանկավարժական հմտություններ ժամանակակից պահանջներին համապատասխան՝ անգլերենը դասավանդելու համար:

***Կրթական արդյունքները***.

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա իրականացնել մանկավարժի գործունեություն,
2. կկարողանա դասավանդել անգլերեն լեզու:

***Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.***

Հանրակրթական դպրոցում “Անգլերեն” առարկայի դասավանդման համար տեսական և մեթոդական անհրաժեշտ գիտելիքների գործնական ստուգում և համապատասխան փաստաթղթերի (մանկավարժական պրակտիկայի օրագիր և այլն) լրացման ստուգում:

*ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ (4 կրեդիտ)*
*8–րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (12 կրեդիտ)*
*8–րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնական օրացույցը

**2014 / 2015 ուսումնական տարի**

*Աշնանային կիսամյակ*

| **01 սեպտեմբերի 2014թ.–27 հունվարի 2015թ.** | |
|---|---|
| Ուսուցման սկիզբը | 01 սեպտեմբերի |
| 1-ին ընթացիկ ստուգումներ և քննություններ | 13 –25 հոկտեմբերի |
| 2-րդ ընթացիկ ստուգումներ և քննություններ | 08 – 20 դեկտեմբերի |
| Ստուգարքների հանձնում | 15 – 27 դեկտեմբերի |
| Ուսուցման ավարտը | 20 դեկտեմբերի |
| Քննաշրջան | 07 հունվարի – 24 փետրվարի |
| Ձմեռային արձակուրդներ | 26 հունվարի – 07 փետրվարի |

*Գարնանային կիսամյակ*

| **09 փետրվարի 2015թ.–27 հունիսի 2015թ.** | |
|---|---|
| Ուսուցման սկիզբը | 09 փետրվարի |
| 1-ին ընթացիկ ստուգումներ և քննություններ | 23 մարտի– 04 ապրիլի |
| 2-րդ ընթացիկ ստուգումներ և քննություններ | 18–30 մայիսի |
| Կուրսային աշխատանքների և ստուգարքների հանձնում | 25 մայիսի – 01հունիսի |
| Ուսուցման ավարտը | 30 մայիսի |
| Քննաշրջան | 01 – 27 հունիսի |
| Պետական մասնագիտական քննություն և ավարտական աշխատանքի պաշտպանություն | 04 մայիսի – 30 մայիսի |
| Ամառային արձակուրդներ | 29 հունիսի – 31 օգոստոսի |

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱԲԱՆ** .......... **3**
**ԲԱԺԻՆ I. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ** .......... **5**
1. Ընդհանուր դրույթներ .......... 6
2. Կրեդիտային համակարգի ընդհանուր նկարագիրը .......... 6
2.1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները .......... 6
2.2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները .......... 8
2.3. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը .......... 9
3. Դասընթացները և կրթական մոդուլները .......... 9
4. Կրեդիտների հատկացումը .......... 10
5. Կրթական ծրագրերի ավարտական պահանջները .......... 10
5.1. Բակալավրի ծրագիր .......... 10
6. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը .......... 11
6.1. Համակարգի հիմնադրույթները .......... 11
6.2. Գնահատման մեթոդաբանությունը .......... 12
6.3. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը .......... 15
6.4. Գնահատման սանդղակը և նշագրումը .......... 16
6.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը .......... 16
6.6. Ուսման առաջադիմությունը .......... 18
7. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը .......... 18
8. Դասընթացների տեղեկագիրքը .......... 19
9. Կրթական ծրագրերի եզրափակիչ ատեստավորումը .......... 20
9.1. Բակալավրի ծրագիր .......... 20
10. Կրեդիտների փոխանցումը .......... 21
11. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը .......... 22
12. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները .......... 22
13. Եզրափակիչ դրույթներ .......... 23
**Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր** .......... **24**
**ԲԱԺԻՆ II. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ** .......... **31**
*Մաս I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ* .......... 32
1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը .......... 33
2. Ծրագրի բովանդակությունը .......... 35
2.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս .......... 35
2.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս .......... 39
2.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս .......... 41
2.4. Կրթական այլ մոդուլներ .......... 50
***Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ*** .......... ***52***
1. Տեղեկագրքի նպատակը .......... 53
2. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ .......... 54
2.1. Պարտադիր դասընթացներ .......... 54
2.2. Կամընտրական դասընթացներ .......... 64
3. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ .......... 68

3.1. Պարտադիր դասընթացներ ........................................................ 68
3.2. Կամընտրական դասընթացներ ................................................ 71
4. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ ................................. 73
4.1. «Պատմություն» մասնագիտություն ........................................... 73
4.2. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն ..................... 127
4.3. «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտություն ........... 171
4.4. «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտություն .............. 209
4.5. «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտություն ................. 240
5. Կրթական այլ մոդուլներ ......................................................... 271
5.1. «Պատմություն» մասնագիտություն ........................................... 271
5.2. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն ..................... 273
5.3. «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտություն ........... 274
5.4. «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտություն .............. 275
5.5. «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտություն ................. 276
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնական օրացույցը ........................ 277